1322

ԿԻՐԿԻՍ

ԻՍԿԵԼ

3K23
Ի-61

11.3b.

2 5 MAY 2005
4 NOV 2009
3K23
Ի-61

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԻՆՉ ԱՆԵԼ

ՄԵՐ ՇՈՒՐՋՄԱՆ
ՑԱՎՈՑ ՀԱՐՑԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1939

10.09.2013

1322

678
40

В. И. ЛЕНИН

ЧТО ДЕЛАТЬ?

Государственное издательство полит. литературы
Ереван ● 1939

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» գիրքը գրվել է 1901/02 թ. աշնանն ու ձմռանը և առաջին անգամ տպագրվել է սրտասահմանում, Շտուտգարտում, 1902 թվականի մարտին:

Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի մեջ տրված է Լենինի այդ գրքի նշանակության հետևյալ բնութագիրը.

«Ի՞նչ անել»-ի պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ Լենինն իր այդ նշանավոր գրքում՝

1) Մարքսիստական մտքի պատմության մեջ առաջինն եր, որ մինչև սրմատները մերկացրեց ոպորտունիզմի իդեական ակունքները, ցույց տալով, որ նրանք կայանում են ամենից առաջ բանվորական շարժման տարերայնության առջև խոնարհվելու մեջ և բանվորական շարժման մեջ սոցիալիստական գիտակցության դերն ստորացնելու մեջ:

2) Վեր հանեց թեորիայի, գիտակցականության, կուսակցության՝ որպես բանվորական տարերային շարժումը հեղափոխականացնող և ղեկավարող ուժի՝ նշանակությունը:

3) Փայլուն կերպով հիմնավորեց մարքսիստական հիմնական այն դրույթը, որն ասում է, թե մարքսիստական կուսակցությունը բանվորական շարժման միացումն է սոցիալիզմի հետ:

4) Տվեց մարքսիստական կուսակցության իդեոլոգիական հիմքերի հանճարեղ մշակումը:

«Ի՞նչ անել»-ում զարգացված թեորիական դրույթները հետագայում դրվեցին բոլշևիկյան կուսակցության իդեոլոգիայի հիմքում» (Համկ(բ)կ պատմություն: Համառոտ դասընթաց, հայ. հրատ. էջ 52):

«Ի՞նչ անել» գիրքը յերկրորդ հրատարակությամբ լույս տեսավ 1908 թվականին, Վ. Ի. Լենինի հոդվածների «За 12 лет. Том первый. Два направления в русском марксизме и русской социал-демократии» ժողովածուի մեջ, Վլ. Իլյին աղդանունով: Ժողովածուն հրա-

տարակվեց Պետերբուրգում և լույս տեսնելուց հետո անմիջապես բռնագրավվեց ցարական կառավարության կողմից։

Այս հրատարակությունների առթիվ հեղինակը գրել և յերկու առաջաբան։ Դրանք յերկուսն էլ զետեղված են ներկա հրատարակության մեջ։

Բացի այդ, գրքի սկզբից կցված է Լենինի «Ինչի՞ց սկսել» հոդվածը,—«Ի՞նչ անել»-ում զարգացրած գաղափարների առաջին ուրվագիծը, վորն ասես թե այս աշխատության ներածությունը լինի։

Գիրքը տպագրվում է առաջին հրատարակության տեքստով, վոր համեմատված է յերկրորդ հրատարակության հետ։

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջարկվող բրոշյուրն, ըստ հեղինակի սկզբնական պլանի, պետք է նվիրված լիներ այն մտքերի մանրամասն զարգացմանը, որոնք արտահայտված են «С чего начать?» («Ինչի՞ց սկսել») («Искра»[1] № 4, 1901 թ. մայիս)* հոդվածում: Ցեվ մենք ամենից առաջ պետք է ներողություն խնդրենք ընթերցողից՝ այնտեղ տված (և՝ ի պատասխան բազմաթիվ մասնավոր հարցումների ու նամակների՝ կրկնած) խոստումը ուշ կատարելու համար: Այդպիսի ուշացման պատճառներից մեկը արտասահմանյան բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միավորման փորձն եր, որ ձեռնարկվեց անցած տարվա (1901) հունիսին: Բնական է, որ պետք եր սպասել այդ փորձի արդյունքներին, որովհետև նրա հաջողության դեպքում թերևս հարկ լիներ «Искра»-յի կազմակերպական հայացքները շարադրել մի փոքր այլ տեսանկյունից, և համենայն դեպս այդպիսի հաջողությունը կխոստանար շատ արագ վերջ դնել յերկու հոսանքի գոյությանը ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Ինչպես հայտնի յե ընթերցողին, փորձն անհաջողությամբ վերջացավ և, ինչպես կաշխատենք ապացուցել ստորև, չեր կարող այդպես չվերջանալ «Рабочее дело»-յի[2] 10-րդ համարում դեպի եկոնոմիզմը կատարած նոր շրջադարձից հետո: Անպայման անհրաժեշտ դարձավ վճռական պայքարի բռնվելը այդ ճապաղ և նվազորոշ, սակայն, ե՛լ ավելի կայուն և զանազանակերպ ձևերով վերածնվելու ընդունակ ուղղության դեմ: Սրան համապատասխան ձևափոխվեց և խիստ մեծ չափով լայնացավ բրոշյուրի սկզբնական պլանը:

Նրա գլխավոր նյութը պետք է կազմեին «Ինչի՞ց սկսել» հոդվածի մեջ դրված յերեք հարցերը: Այն է՝ մեր քաղաքական ագիտացիայի բնույթի և գլխավոր բովանդակության, մեր կազմակերպական խնդիրների, համառուսական մարտական կազմակերպության՝ զանազան ծայրերից և միաժամանակ՝ կառուցման պլանի հարցերը: Այդ հարցերը վաղուց արդեն հետաքրքրում են հեղինակին, որ փորձ է արել հա-

*) Տե՛ս ներկա հրատարակությունը, էջ 19: Խմբ.:

բուցելու նրանց դեռ «Рабочая газета»-յում[3] վերջինիս վերսկսման անհաջող փորձերից մեկի ժամանակ (տ. V գլուխը)։ Բայց սկզբնական մտադրությունը՝ բրոշյուրում սահմանափակվել միայն այս յերեք հարցերի քննությամբ և շարադրել հայացքները ըստ հնարավորության դրական ձևով, առանց կամ համարյա առանց բանակռվի դիմելու, միանգամայն անիրագործելի դուրս յեկավ յերկու պատճառով։ Մի կողմից՝ եկոնոմիզմը շատ ավելի դիմացկուն դուրս յեկավ, քան մենք յենթադրում եյինք (եկոնոմիզմ բառը մենք գործ ենք ածում լայն իմաստով, ինչպես վոր այն պարզաբանված եր «Искра»-յի 12-րդ համարում (1901 թ. դեկտեմբեր) «Զրույց եկոնոմիզմի պաշտպանների հետ» հոդվածում, վոր ուրվագծել եր ընթերցողին առաջարկվող բրոշյուրի, այսպես ասած, կոնսպեկտը)։ Անտարակուսելի դարձավ, վոր այս յերեք հարցերը վճռելու նկատմամբ տարբեր հայացքները բացատրվում են շատ ավելի մեծ չափով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ գոյություն ունեցող յերկու ուղղության արմատական հակադրությամբ, քան մասնակի խնդիրների վերաբերյալ տարաձայնություններով։ Մյուս կողմից՝ եկոնոմիստների տարակուսանքն այն մասին, վոր «Искра»-յում փաստորեն անց են կացվում մեր հայացքները, ակներև ցույց եր տալիս, վոր մենք հաճախ խոսում ենք տատացիորեն տարբեր լեզուներով, և վոր մենք այդ պատճառով չենք կարող համաձայնության գալ վոչ մի խնդրի վերաբերմամբ, յեթե չսկսենք ab ovo*) և վոր անհրաժեշտ է փորձ անել սիստեմատիկ կերպով «բացատրվելու» բոլոր եկոնոմիստների հետ մեր տարաձայնությունների բոլոր արմատական կետերի վերաբերմամբ՝ ըստ հնարավորության ավելի հանրամատչելի ձևով, ամենարազմաթիվ և կոնկրետ օրինակների պարզաբանությամբ։ Յեվ յես վորոշեցի «բացատրվելու» այդպիսի փորձ անել, միանգամայն գիտակցելով, վոր այդ խիստ կմեծացնի բրոշյուրի ծավալը և կդանդաղեցնի նրա լույս տեսնելը, բայց միևնույն ժամանակ վոչ մի հնարավորություն չգտնելով այլ կերպ կատարելու այն խոստումը, վոր տվել եմ «Ինչի՞ց սկսել» հոդվածումս։ Ուշացման ատթիվ ներողություն խնդրելով, յես հարկադրված եմ ներողություն խնդրել նաև բրոշյուրիս ահագին թերությունների նկատմամբ՝ դրական մշակման տեսակետից.— յես հարկադրված եմ յեղել աշխատելու ծայրահեղ աստիճանի հապնեպ կերպով, ընդսմին՝ ամեն տեսակ այլ գործերի համար ընդհատելով աշխատանքս։

Վերը նշված յերեք հարցերի քննությունը, առաջվա նման, բրոշյուրի գլխավոր թեման և կազմում, բայց յես հարկադրվեցի սկսելու յերկու ավելի ընդհանուր հարցերից. ինչո՞ւ մի այնպիսի «անմեղ» և

*) — սկզբից։ Խմբ.։

«բնական» լոզունգ, վորպիսին «քննադատության ազատությունն» է, մեզ համար խիստ արտատական ազդանշան է հանդիսանում, ինչո՞ւ մենք չենք կարողանում համաձայնության գալ նույնիսկ մի այնպիսի հիմնական հարցի վերաբերմամբ, վորպիսին է մասսայական տարերային շարժման նկատմամբ սոցիալ-դեմոկրատիայի ունեցած դերը։ Այնուհետև, քաղաքական ագիտացիայի բնույթին ու բովանդակությանը վերաբերող հայացքների շարադրանքը դարձավ տրեդ-յունիոնիստական[4] և սոցիալ-դեմոկրատական քաղաքականության միջև յեղած տարբերության բացատրություն, իսկ կազմակերպական խնդիրներին վերաբերող հայացքների շարադրանքը՝ բացատրություն այն տարբերության, վոր գոյություն ունի եկոնոմիստներին բավարարող ոնայնագործականության և՝ մեր տեսակետից անհրաժեշտ՝ հեղափոխականների կազմակերպության միջև։ Հետո, յես ե՛լ ավելի յեմ պնդում համառուսական քաղաքական լրագրի «պլանի» վրա, վորքան նրա դեմ արված առարկություններն ավելի անհիմն եյին և վորքան ավելի քիչ պատասխանեցին ինձ ըստ եության՝ «Ինչի՞ց սկսել» հոդվածումս դրված այն հարցին, թե ինչպես կարող եյինք մենք միաժամանակ բոլոր ծայրերից ձեռնարկել մեզ անհրաժեշտ կազմակերպության կառուցմանը։ Վերջապես, յես հույս ունեմ բրոշյուրիս յեզրափակիչ մասում ցույց տալու, վոր մենք արել ենք այն ամենը, ինչ կախված է մեզնից, վորպեսզի կանխենք վճռական պառակտումը եկոնոմիստների հետ, վորը, սակայն, անխուսափելի դարձավ.—վոր «Рабочее дело»-ն ձեռք բերեց առանձին, յեթե կամենաք, «պատմական» նշանակություն նրանով, վոր ամենից ավելի լրիվ, ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտեց վո՛չ թե հետևողական եկոնոմիզմը, այլ այն խառնաշփոթությունը և այն տատանումները, վորոնք մի ամբողջ ժամանակաշրջանի առանձնահատուկ գիծը կազմեցին ռուսական սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ,—և վոր այդ պատճառով նշանակություն է ստանում նաև՝ առաջին հայացքից չափազանց մանրամասն՝ բանակռիվը «Рабочее дело»-յի դեմ, վորովհետև մենք չենք կարող առաջ գնալ, յեթե վերջնականապես լիկվիդացիայի չենթարկենք այդ ժամանակաշրջանը։

Փետրվար 1902 թ.

«ЗА 12 ЛЕТ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ *)

Հեռևյալ «Ի՞նչ անել» բրոշյուրը լույս տեսավ արտասահմանում 1902 թվականի հենց սկզբին: Այն նվիրված է արդեն վո՛չ թե գրական հոսանքներում, այլ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ գոյություն ունեցող աջ թևի քննադատությանը: 1898 թվականին կայացավ ս.-դ.**) առաջին համագումարը և Ռուսաստանյան Ս.-Դ. Բանվորական Կուսակցության հիմքը դրվեց: Կուսակցության արտասահմանյան կազմակերպություն դարձավ արտասահմանյան «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միությունը», վորը ներառում եր նաև «Աշխատանքի Ազատագրություն» խումբը: Բայց կուսակցության կենտրոնական հիմնարկները վոստիկանության կողմից քարուքանդ արվեցին և չեին կարող վերականգնվել: Փաստորեն չկար կուսակցության միասնություն. այն մնաց սոսկ իդեա, դիրեկտիվ: Գործադուլային շարժումով և տնտեսական պայքարով հրապուրվելն այն ժամանակ ծնեց սոցիալ-դեմոկրատական ոպորտունիզմի մի առանձին ձև, այսպես կոչված «եկոնոմիզմը»: Ցերբ «Искра»-յի խումբը 1900 թվականի հենց վերջին իր գործունեությունն սկսեց արտասահմանում, այս հողի վրա տեղի ունեցած պառակտումն արդեն փաստ եր: Պլեխանովը 1900 թվականի գարնանը դուրս յեկավ արտասահմանյան «Ռուսական ս.-դ. միությունից» և կազմեց առանձին «Սոցիալ-Դեմոկրատ» կազմակերպություն:

«Искра»-ն իր աշխատանքն սկսեց ձևականորեն անկախ յերկու ֆրակցիաներից, ըստ եության—պլեխանովյան խմբի հետ միասին «Միության» դեմ: Զուլելու փորձը (1901 թ. հունիս, «Միության» և «Սոցիալ-Դեմոկրատի» համագումարը Ցյուրիխում) չհաջողվեց: «Ի՞նչ անել» բրոշյուրը սիստեմատիկորեն շարադրում է տարակարծության պատճառները և իսկրայական տակտիկայի ու կազմակերպական գործունեության բնույթը:

---

*) Այստեղ տրվում է առաջաբանի՝ «Ի՞նչ անել» աշխատությանը վերաբերող մասը: Խմբ.:

**) Ս.-դ. — սոցիալ-դեմոկրատներ: Խմբ.:

«Ի՞նչ անել» բրոշյուրը հաճախ հիշատակում են բոլշևիկների այժմյան հակառակորդները, մենշևիկները, նույնպես և բուրժուական-լիբերալ բանակից յելած գրողները (կադետները, «բեղդադլավյականները» (անվերնագրականները»)[6] «Товарищ» լրագրից և այլն)։ Այդ պատճառով յես այն նորից տպագրում եմ ամենափոքրիկ կրճատումներով, բաց թողնելով միայն կազմակերպական հարաբերությունների մանրամասնությունները կամ մանր բանավեճային դիտողությունները։ Այս բրոշյուրի բովանդակության և յության տեսակետից անհրաժեշտ և ժամանակակից ընթերցողի ուշադրությունը դարձնել հետևյալի վրա։

Հիմնական սխալը, որ անում են մարդիկ, որոնք ներկայումս բանակռիվ են մղում «Ի՞նչ անել»-ի դեմ, նրանումն է կայանում, որ այս յերկը բոլորովին պոկում են որոշ պատմական իրադրության, մեր կուսակցության զարգացման որոշ և այժմ վաղուց արդեն անցած ժամանակաշրջանի կապակցությունից։ Այս սխալն ակնառու կերպով դրսևորել է, որինակ, Պարվուսը (ել չեմ խոսում բազմաթիվ մենշևիկների մասին), որը բրոշյուրի լույս տեսնելուց շատ տարիներ հետո գրում էր նրա անճիշտ կամ չափազանցացրած իդեաների մասին՝ պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպության վերաբերմամբ։

Ներկայումս նման հայտարարություններն ուղղակի ծիծաղելի տպավորություն են թողնում. կարծես թե մարդիկ ուզում են ձեռք քաշել մեր կուսակցության զարգացման մի ամբողջ ժամանակաշրջանից, այն նվաճումներից, որոնք իրենց ժամանակին պայքարով են ձեռք բերվել, իսկ այժմ վաղուց արդեն ամրապնդվել են և իրենց գործը կատարել։

Ներկայումս դատել «Искра»-յի կողմից (1901 և 1902 թվականի՞ն) պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպության իդեան չափազանցացնելու մասին, այդ միևնույն է, յեթե ռուս-յապոնական պատերազմից հետո սկսեին յապոնացիներին կշտամբել ռուսական ռազմական ուժերը չափազանցացնելու համար, այս ուժերի դեմ կռվելու հոգացողությունը մինչև պատերազմը չափազանցացնելու համար։ Հաղթություն տանելու համար յապոնացիները պետք է բոլոր ուժերը հավաքեին առավելագույն չափով հնարավոր ռուսական ուժերի դեմ։ Դժբախտաբար շատերը մեր կուսակցության մասին դատում են դրսից, չիմանալով բանը, չտեսնելով այն, որ այժմ պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպության իդեան արդեն լիակատար հաղթություն է տարել։ Իսկ հաղթությունն անհնարին էր առանց այն բանի, որ իր ժամանակին այս իդեան առաջ քաշված չլիներ առաջին պլանի վրա,—առանց այն բանի, որ նա «չափազանցացրած կերպով» չմոցվեր այն մարդկանց գլուխը, որոնք խանգարում էին այս իդեան իրագործելուն։

«Ի՞նչ անել»-ը 1901 և 1902 թվականների իսկրայական տակտիկայի, իսկրայական կազմակերպական քաղաքականության ամփոփումն է։ Հենց «ամփոփում», վոչ ավելի և վոչ պակաս։ Ով նեղություն հանձն կառնի ծանոթանալու 1901 և 1902 թվականների «Искра»-յի հետ, նա սրան անկասկած կհամոզվի*)։ Իսկ ով դատում է այս ամփոփման մասին, ծանոթ չլինելով այն ժամանակ գերակշռող եկոնոմիզմի դեմ մղված իսկրայական պայքարին և չըմբռնելով այդ պայքարը, նա պարզորեն խոսքերը քամուն է տալիս։ «Искра»-ն պայքարում էր պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպություն ստեղծելու համար, առանձնապես յեռանդուն կերպով էր պայքարում 1901 և 1902 թվականներին, հաղթահարեց այն ժամանակ գերակշռող եկոնոմիզմը, 1902 թվականին վերջնականապես ստեղծեց այս կազմակերպությունը, պահեց այս կազմակերպությունը, չնայած իսկրայականների հետադա պառակտման,[7], չնայած փոթորկի և դրոհի դարաշրջանում տեղի ունեցած բոլոր հուզմունքներին, այն պահեց ամբողջ ռուսական հեղափոխության ընթացքում, այն պահեց և պահպանեց 1901—1902-ից մինչև 1907 թվականը։

Յեվ ահա այժմ, յերբ այս կազմակերպության համար մղված կռիվը վաղուց վերջացել է, յերբ ցանքն արված է, հատիկը հասել, հունձն ավարտվել է,—մարդիկ են հանդես գալիս և ազդարարում. «պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպության իդեայի չափազանցո՛ւմ»։ Մի՞թե այս ծիծաղելի չէ։

Վերցրե՛ք ամբողջ նախահեղափոխական ժամանակաշրջանը և հեղափոխության առաջին 2½ տարին (1905—1907 թվականները) ամբողջությամբ։ Համեմատեցե՛ք այս ժամանակում մեր ս.-դ. կուսակցությունն ուրիշ կուսակցությունների հետ նրա համախմբվածության, կազմակերպվածության, հաջորդական ամբողջականության տեսակետից։ Դուք ստիպված կլինեք ընդունելու, որ այս տեսակետից մեր կուսակցության գերազանցությունը բոլոր մնացածների նկատմամբ՝ թե՛ կ.-դ.-ի, թե՛ ս.-հ.-ի[8] և այլն՝ անվիճելի յե։ Մինչև հեղափոխությունը ս.-դ. կուսակցությունն իրեն համար մշակեց բոլոր ս.-դ. կողմից ֆորմալ կերպով ընդունված ծրագիրը և, նրա մեջ փոփոխություններ մտցնելով, ծրագրի պատճառով բաժան-բաժան չեր լինում։ Ս.-դ. կուսակցությունը, չնայած պառակտմանը, 1903-ից մինչև 1907 թվականը (ձևականորեն 1905-ից մինչև 1906 թվականը) իր ներքին դրության մասին հասարակությանը տվել է ամենից շատ տեղեկություններ (յերկրորդ ընդհանուր, III բոլշևիկյան, IV կամ Ստոկհոլմի ընդհա-

*) Ներկա հրատարակության 3-րդ հատորի մեջ կվերատպագրվեն կարևորագույն հոդվածներն այս տարիների «Искра»-յից։

նուր համագումարների արձանագրությունները)։ Ս.-դ. կուսակցությունը, չնայած պառակտմանը, մյուս բոլոր կուսակցություններից ավելի շուտ ոգտվեց ազատության ժամանակավոր լույսի նշույլից՝ իրագործելու համար բացահայտ կազմակերպության իդեալական դեմոկրատական կարգն՝ ընտրական սիստեմով, համագումարներում կուսակցության կազմակերպված անդամների թվի համեմատ ունեցած ներկայացուցչությամբ։ Մինչև այժմ այս չունեն վո՛չ ս.-հ., վո՛չ կ.-դ. այս, համարյա լեգալ, ամենից ավելի լավ կազմակերպված բուրժուական կուսակցությունը, որը, մեզ հետ համեմատած, ունի անչափելիորեն ավելի մեծ ֆինանսական միջոցներ, մամուլից լայնորեն ոգտվելու և բացահայտորեն ապրելու հնարավորություն։ Իսկ II Դումայի ընտրությունները, որոնց մասնակցեցին բոլոր կուսակցությունները, մի՞թե նրանք ակնառու կերպով չապացուցեցին, որ մեր կուսակցության և մեր դումայական ֆրակցիայի կազմակերպական համախմբվածությունն ավելի բարձր է, քան մյուս բոլոր կուսակցություններինը։

Հարց է ծագում, հապա ո՞վ է իրացրել, կյանքի մեջ ո՞վ է մարմնավորել մեր կուսակցության այս ամենամեծ համախմբվածությունը, ամրությունն ու կայունությունը։ Այս արել է պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպությունը, որն ստեղծվել է ամենից ավելի «Искра»-յի մասնակցությամբ։ Ով լավ է իմանում մեր կուսակցության պատմությունը, ով ինքն ապրել է նրա կառուցումը, նրա համար բավական է մի պարզ հայացք գցել վորևե ֆրակցիայի, ասենք՝ Լոնդոնի համագումարի, պատվիրակության կազմի վրա, որպեսզի համոզվի դրանում, որպեսզի միանգամից նկատի այն հին, հիմնական միջուկը, որն, ուրիշներից ավելի յեռանդագին, սնուցում եր կուսակցությանը և սնուցեց կուսակցությանը։ Իհարկե, այս հաջողության հիմնական պայմանն այն եր, որ բանվոր դասակարգը, որի ծաղիկն ստեղծում եր սոցիալ-դեմոկրատիային, օբյեկտիվ տնտեսական պատճառների հետևանքով կապիտալիստական հասարակության բոլոր դասակարգերից տարբերվում է կազմակերպվելու առավելագույն ընդունակությամբ։ Առանց այս պայմանի՝ պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպությունը կլիներ մի խաղալիք, արկածախնդրություն, մի դատարկ ցուցանակ, և «Ի՞նչ անել» բրոշյուրը բազմիցս ընդգծում է, որ «իսկապես հեղափոխական և կռվի համար տարբերանորեն յելնող դասակարգի» հետ կապ պահպանելով միայն իմաստ ունի նրա մեջ պաշտպանվող կազմակերպությունը։ Բայց պրոլետարիատի միավորվելու, դասակարգ դառնալու օբյեկտիվ-առավելագույն ընդունակությունն իրացվում է կենդանի մարդկանցով, իրացվում է վոչ այլ կերպ, քան յեթե կազմակերպության վորոշ ձևերով։ Ցեվ, բացի խիստ գաղտնիությունից, ուրիշ վոչ մի կազմակերպություն մեր

պատմական պայմաններում, 1900—1905 թվականների Ռուսաստանում, չեր կարողանա ստեղծել մի այնպիսի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն, որն ստեղծված է այժմ։ Պրոֆեսիոնալ հեղափոխականը ռուսական պրոլետարական սոցիալիզմի պատմության մեջ իր գործն արել է։ Ցեվ այժմ վոչ մի ուժ չի խորտակի այդ գործը, որը վաղուց դերաճել է 1902—1905 թվականների «խմբակների» նեղ շրջանակները, վոչ մի ուշացած տրտունջ մարտական խնդիրները չտիրապետացնելու առթիվ նրանց կողմից, ովքեր իրենց ժամանակին միայն պայքարով կարող եյին ապահովել այս խնդիրները կատարելու ճիշտ ոկսվածքը, չի սասանեցնի արդեն արված նվաճումների նշանակությունը։

Ցես հենց նոր հիշատակեցի հին «Искра»-յի ժամանակվա խմբակների նեղ շրջանակների մասին (1903 թվականի վերջից, №51-ից, «Искра»-ն շրջվեց մենշևիզմի կողմը և ազդարարեց «հին և նոր «Искра»-յի միջև անդունդ է ընկած»,—Տրոցկու խոսքերն այն բրոշյուրում, որը հավանություն է գտել «Искра»-յի մենշևիկյան խմբագրության կողմից)։ Այս խմբակայնության մասին հարկ կա մի քանի պարզաբանիչ խոսքեր ասելու ժամանակակից ընթերցողին։ Թե՛ «Ի՞նչ անել» բրոշյուրում, թե՛ այնուհետև տպագրվող «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» բրոշյուրում*) ընթերցողն իր առջև տեսնում է արտասահմանյան խմբակների կրքոտ, հաճախ կատաղի, կործանիչ պայքարը։ Անկասկած է, որ այս պայքարն անդուրեկան շատ կողմեր ունի։ Անկասկած է, որ խմբակների այս կռիվը մի յերևույթ է, որը հնարավոր է տվյալ յերկրի բանվորական շարժման միայն դեռ շատ յերիտասարդ, անհասուն դրության պարագայում։ Անկասկած է, որ Ռուսաստանի ժամանակակից բանվորական շարժման ժամանակակից գործիչները պետք է կապերը խզեն խմբակայնական շատ տրադիցիաների հետ, պետք է մոռանան ու դեն շպրտեն խմբակային կյանքի և խմբակային վեճի ու պայքարի բազմաթիվ մանրունքները, որպեսզի ուժգնորեն կատարեն սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները տվյալ դարաշրջանում։ Պրոլետարական տարբերով կուսակցության ընդլայնումը միայն, բացահայտ մասսայական գործունեության կապակցությամբ, կարող է վոչնչացնել անցյալից ժառանգած և ներկայիս խնդիրներին չհամապատասխանող խմբակայնության բոլոր հետքերը։ Ցեվ բանվորական կուսակցության այն անցումը դեպի դեմոկրատական կազմակերպություն, որը բոլշևիկների կողմից հռչակվեց «Новая Жизнь»-ում՝ 1905 թվականի նոյեմբերին, իսկույն ևեթ, հենց վոր պայմաններ ստեղծվեցին բացահայտ գործունեության համար,—այս ան-

*) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ., հ. VI, էջ 155—330։ Խմբ.։

ցումն արդեն, ըստ գործի էության, անդառնալի խզումն էր այն բանի հետ, ինչ վոր հին խմբակայնության մեջ ապրել-պրծել էր...

Այո՛, «այն բանի հետ, ինչ վոր ապրել-պրծել էր», վորովհետև բավական չէ խմբակայնությունը դատապարտել, պետք է կարողանալ ըմբռնել նրա նշանակությունը նախկին դարաշրջանի յուրահատուկ պայմաններում: Իրենց ժամանակին խմբակներն անհրաժեշտ էին և դրական դեր խաղացին: Առհասարակ ինքնակալական մի երկրում— այն պայմաններում, վորոնք ստեղծվել էին առանձնապես ռուսական հեղափոխական շարժման ամբողջ պատմության կողմից, սոցիալիստական բանվորական կուսակցությունը չեր կարող գարգանալ այլ կերպ, քան յեթե խմբակներից: Խմբակներն, այսինքն՝ նեղ, կղզիացած, համարյա միշտ անձնական բարեկամության վրա հիմնված, շատ ակտիվաթիվ անձերի համախմբումները սոցիալիզմի և բանվորական շարժման զարգացման անհրաժեշտ ետապ էին Ռուսաստանում: Այդ շարժման աճմանը զուգընթաց՝ այդ խմբակները միավորելու, նրանց միջև ամուր կապ ստեղծելու, հաջորդականություն հաստատելու հարցն առաջացավ: Այս խնդիրը չեր կարելի լուծել առանց ամուր ոպերացիոն բազա ստեղծելու ինքնակալության «հասանելիության սահմաններից դուրս», այսինքն՝ արտասահմանում: Այսպիսով, արտասահմանյան խմբակներն առաջ յեկան անհրաժեշտության հետևանքով: Նրանց միջև կապ չկար, չկար նրանց վրա ռուսական կուսակցության հեղինակությունը, նրանք ավյալ մոմենտին անխուսափելիորեն տարամիտում էին շարժման հիմնական խնդիրներն ըմբռնելու մեջ, այսինքն՝ այն բանն ըմբռնելու մեջ, թե հպտկապես ինչպես պետք է կառուցել այս կամ այն ոպերացիոն բազան և ինչ ուղղությամբ ոդնել համակուսակցական շինարարությանը: Այսպիսի պայմաններում այս խմբակների միջև պայքարն անխուսափելի յեր: Այժմ, հետ նայելով, մենք պարզ տեսնում ենք, թե իրոք վոր խմբակն ի վիճակի յեր ոպերացիոն բազայի ֆունկցիան կատարելու: Բայց այն ժամանակ, տարբեր խմբակների գործունեության սկզբին, վոչ վոք այս չեր կարող ասել, և միայն պայքարը կարող էր վեճը լուծել: Հետագայում Պարվուսը, հիշում եմ, կշտամբում էր հին «Искра»-յին կործանարար խմբակային պայքարի համար և հետևն թվով հաշտողական քաղաքականություն էր քարոզում: Բայց այս հեշտ է ասել հետևն թվով, և այս ասել՝ նշանակում է յերևան բերել այն ժամանակվա պայմանների անըմբռնողություն: Նախ՝ չկար այս կամ այն խմբակի ուժի ու լիրքության վոչ մի չափանիշ: Կային շատ վիճաբանություններ, վորոնք այժմ մոռացված են, բայց վորոնք իր ժամանակին պայքարով էին կամենում ապացուցել իրենց գոյության իրավունքը: Յերկրորդ՝ խմբակների միջև յեղած տարաձայնությունն այն էր, թե ինչպես ուղղություն

տալ այն ժամանակի համար դեռ նոր աշխատանքին: Յես արդեն այն ժամանակ էլ նշում էի («Ի՞նչ անել»-ում), թե տարաձայնություններն աննշան են թվում, բայց իրականում ահագին նշանակություն ունեն, վորովհետև նոր աշխատանքի սկզբին, սոցիալ-դեմոկրատական շարժման սկզբին՝ այս աշխատանքի և այս շարժման ընդհանուր բնույթի վորոշումն ամենաբյական ձևով կանդրադառնա պրոպագանդայի, ագիտացիայի և կազմակերպման վրա: Բոլոր հետագա վեճերը ս.-դ. միջև վերաբերում էին այն բանին, թե ինչպես դեկավարեն բանվորական կուսակցության քաղաքական գործունեությունն այս կամ այն առանձին դեպքում: Իսկ այն ժամանակ խոսքը վերաբերում էր առհասարակ յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատական քաղաքականության ամենընդհանուր հիմքերն ու արմատական խնդիրները վորոշելուն:

Խմբակայնությունն իր գործը կատարեց և այժմ, իհարկե, իր ժամանակն անց է կացրել: Բայց նա իր ժամանակն անց է կացրել նրա համար և միմիայն նրա համար, վոր խմբակների պայքարն ամենաուժգին կերպով դրեց սոցիալ-դեմոկրատիայի հիմնական հարցերը, նրանք վճռեց անհաշտ հեղափոխական վոգով և դրանով ամուր բազա ստեղծեց կուսակցական լայն աշխատանքի համար:

Այն մասնավոր հարցերից, վոր հարուցել և դրականությունն «Ի՞նչ անել» բրոշյուրի առնչությամբ, կնշեմ միայն հետևյալ յերկուսը: 1904 թվականի «Искра»-յում Պլեխանովը «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» բրոշյուրի լույս տեսնելուց քիչ հետո հայտարարեց տարբերության և գիտակցականության հարցի շուրջը ինձ հետ ունեցած սկզբունքային տարաձայնությունը: Յես չեմ պատասխանում վո՛չ այս հայտարարությանը (յեթե չհաշվենք մի ծանոթագրություն Ժրնեվի «Вперед»[10*]) լրագրում), վո՛չ էլ այս թեմայի մասին մենշևիկյան գրականության բազմաթիվ կրկնություններին, չեմ պատասխանում, վորովհետև պլեխանովյան քննադատությունը դատարկ բծախնդրության ակներև բնույթն էր կրում, հիմնվում էր կապակցությունից շորթած ֆրազների վրա, առանձին արտահայտությունների վրա, վորոնք իմ կողմից ձևակերպված են վոչ լիովին ճարտարորեն կամ վոչ լիովին ճշգրտորեն, ըստվորում անտեսվում էր բրոշյուրի ընդհանուր բովանդակությունը և ամբողջ վոգին: «Ի՞նչ անել»-ը լույս տեսավ 1902 թ. մարտին: Կուսակցական ծրագրի նախագիծը (պլեխանովյանը, «Искра»-յի խմբագրության ուղղումներով) տպագրվել է 1902 թվականի հունիսին կամ հուլիսին: Այս նախագծում տարբերայնի հարաբերությունը գիտակցականին[11] ձևակերպված է «Искра»-յի խմբագրության ընդհանուր համաձայնությամբ (ծրագրի մասին վեճերն իմ և Պլեխա-

*) Տե՛ս Յերկ., առաջ. հրատ., հ. VII, էջ 169: Խմբ.:

նովի միջև տեղի էին ունենում խմբագրության ներսում, բայց վոչ ամենևին այս հարցի շուրջը, այլ խոշորի կողմից մանր արտադրությունը դուրս մղելու հարցերի շուրջը, ըստվորում յես պահանջում էի ավելի վորոշակի ձևակերպում, քան պլեխանովյան ձևակերպումը, և առհասարակ պրոլետարիատի կամ աշխատավոր դասակարգերի տեսակետի տարբերության մասին, ըստվորում յես պնդում էի կուսակցության զուտ պրոլետարական բնույթի ավելի նեղ վորոշման վրա):

Հետևապես, այս հարցի շուրջը ծրագրի նախագծի և «Ի՞նչ անել»-ի միջև վոչ մի սկզբունքային տարբերության մասին խոսք անդամ չեր կարող լինել: Ցերկրորդ համագումարում (1903 թ. ոգոստոսին) Մարտինովը, այն ժամանակվա եկոնոմիստը, սկսեց վիճել տարերայնության ու գիտակցականության նկատմամբ ծրագրում արտահայտված մեր հայացքների դեմ: Մարտինովին առարկում էին բոլոր իսկրայականները, ինչպես յես ընդգծում եմ «Մի քայլ առաջ և այլն» բրոշյուրում: Այստեղից պարզ է, վոր ըստ էության տարաձայնությունն իսկրայականների և եկոնոմիստների միջև եր, վորոնք հարձակվում էին այն բանի վրա, ինչ վոր ընդհանուր եր «Ի՞նչ անել»-ում և ծրագրի նախագծերում: Իսկ հատկապես իմ ձևակերպումները, վորոնք տրված են «Ի՞նչ անել»-ում, յես յերկրորդ համագումարին էլ չէի մտածում բարձրացնել-դարձնել ինչ-վոր «ծրագրային» մի բան, վորն առանձին սկզբունքներ է կազմում: Ընդհակառակը, յես գործ եմ ածել մի արտահայտություն, վորը հետագայում հաճախ մեջ եր բերվում—փայտի կորացման մասին: «Ի՞նչ անել»-ում ուղղվում է այն փայտը, վորը ծռել են եկոնոմիստները, ասել եմ յես (տե՛ս 1903 թ. ՌՍԴԲԿ յերկրորդ համագումարի արձանագրությունները, Ժընև, 1904 թ.), և հենց այն պատճառով, վոր մենք ծռումները յեռանդուն կերպով ուղղում ենք, մեր «փայտը» միշտ ամենից ավելի ուղիղ կլինի:

Այս խոսքերի իմաստը պարզ է. «Ի՞նչ անել»-ն եկոնոմիզմն ուղղում է բանակռվի միջոցով, և նրա բովանդակությունը քննել բրոշյուրի այս խնդրից դուրս՝ սխալ է: Նկատեմ, վոր Պլեխանովի հոդվածն «Ի՞նչ անել»-ի դեմ չի արտատպված նոր «Искра»-յի Ժողովածվում («За два года»), ուստի և այժմ յես չեմ շոշափում Պլեխանովի փաստարկումները, այլ միայն գործի էությունն եմ բացատրում ժամանակակից ընթերցողին, վորն այս հարցի նկատմամբ կարող է վկայակոչումների հանդիպել մենշևիկյան բազմաթիվ յերկերում:

Մյուս դիտողությունը վերաբերում է տնտեսական պայքարի և արհեստակցական միությունների հարցին: Գրականության մեջ իմ հայացքներն այս հարցի շուրջը հաճախ խեղաթյուրված են շարադրվում: Ուստի անհրաժեշտ է ընդգծել, վոր «Ի՞նչ անել»-ի բազմաթիվ էջերը նվիրված են տնտեսական պայքարի և արհեստակցական միու-

թյունների ահագին նշանակությունը պարզաբանելուն: Մասնավորապես, յես այն ժամանակ արտահայտվել եմ արհեստակցական միությունների չեզոքության ոգտին: Այն ժամանակվանից սկսած վո՛չ բրոշյուրներում, վո՛չ լրագրական հոդվածներում յես այլ կերպ չեմ արտահայտվել, հակառակ իմ ընդիմախոսների շատ պնդումներին: Միայն ՌՍԴԲԿ Լոնդոնի համագումարը[12] և Շտուտգարտի միջազգային սոցիալիստական կոնգրեսն[13] ինձ ստիպեցին այն յեզրակացության գալ, վոր արհեստակցական միությունների չեզոքությունը սկզբունքորեն պաշտպանել չի կարելի: Միությունների ամենասերտ մերձեցումը կուսակցության հետ—այս է միակ ճիշտ սկզբունքը: Զգտում՝ մոտեցնել և կապել միությունները կուսակցության հետ—այս պետք է լինի մեր քաղաքականությունը, ըստվորում այն անհրաժեշտ է կիրառել համառորեն և տոկունությամբ մեր ամբողջ պրոպագանդայի, ագիտացիայի մեջ, կազմակերպչական գործունեության մեջ, չընկնելով սոսկական «խոստովանությունների» հետևից և անհամաձայն մտածողներին չվանդելով արհեստակցական միություններից:

ՀՍՍՀ ԳԱ

ԻՆՉԻՆ ՍԿՍԵԼ

«Ի՞նչ անել» հարցը վերջին տարիներս առանձնապես ուժեղ կերպով է ծառանում ռուսական սոցիալ-դեմոկրատների առաջ: Խոսքը վոչ թե ուղի ընտրելու մասին է (ինչպես այդ տեղի ուներ 80-ական թվականի վերջին և 90-ական թվականների սկզբին), այլ այն մասին, թե մենք ինչպիսի գործնական և հատկապես ինչ քայլեր պետք է անենք վորոշ ուղղությամբ: Խոսքը պրակտիկ գործունեության սիստեմի և պլանի մասին է: Ցեվ պետք է խոստովանել, վոր պայքարի բնույթին և միջոցներին վերաբերող՝ պրակտիկ կուսակցության համար հիմնական այդ հարցը մեզ մոտ դեռևս լուծված չէ և դեռևս տարաձայնություններ է առաջացնում, վորոնք մտքի ցավալի անկայունություն և տատանումներ են առաջ բերում: Մեկ կողմից, դեռևս իսպառ չի մեռել «եկոնոմիստական» ուղղությունը, վորն աշխատում է կարճել և սահմանափակել քաղաքական կազմակերպության և ագիտացիայի աշխատանքը: Մյուս կողմից, առաջվա պես պարծենկոտությամբ գլուխ է բարձրացնում անսկզբունք եկլեկտիզմի*) ուղղությունը, վորը հարմարվում է ամեն մի նոր «հոսանքի» և չի կարողանում բոլորովին պահանջները զանազանել ընդհանուր առմամբ շարժման հիմնական ինդիրներից և մշտական կարիքներից: Ինչպես հայտնի է, այդպիսի ուղղությունն իրեն բուն ներ հյուսել «Рабочее Дело»-ում: Նրա վերջին «ծրագրային» հայտարարությունը—«Պատմական չքնաղարձ» ամպագոռ վերնագիր կրող ամպագոռ հոդվածը («Листок «Рабочего Дела»-ի 6-րդ համարը)—առանձնապես ակնագոռ կերպով հաստատում է տրված բնութագրությունը: Դեռ յերեկ մենք խաղ եյինք անում «եկոնոմիզմի» հետ, զայրանում եյինք «Рабочая Мысль»-ի[14] վճռական դատապարտության առթիվ, «մեղմում եյինք» ինքնակալության դեմ պայքարելու պլեխանովյան հարցադրումը,—իսկ այսոր մենք արդեն քաղվածքներ ենք բերում Լիբկնեխտի խոսքերից, թե՝ «Ցեթե հանդամանքները 24 ժամվա

*) Տարբեր և ուղղակի հակադիր տեսակետների միացումն առանց վորևե ներքին կապի: Խմբ.:

մեջ փոխվեն, հարկավոր է տակտիկան նույնպես 24 ժամվա մեջ փոխել», մենք արդեն խոսում ենք «ամուր մարտական կազմակերպության» մասին ինքնակալության վրա գրոհելու, շտուրմի դիմելու համար, «մասսայում ընդարձակ հեղափոխական քաղաքական (ահա թե ինչպես յեռանդուն կերպով՝ և՛ հեղափոխական, և՛ քաղաքական) ագիտացիա մղելու» մասին, «փողոցային բողոքի անդադար կոչ անելու» մասին, «խիստ (sic!)*) քաղաքական բնույթ ունեցող փողոցային ցույցեր կազմակերպելու» մասին և այլն և այլն:

Մենք կարող ենք թերևս գոհունակություն հայտնել այն առթիվ, որ «Рабочее Дело»-ն այդպես չուտափույթ յուրացրել է՝ արդեն «Искра»-յի առաջին համարում ամուր կազմակերպված կուսակցություն ստեղծելու վերաբերյալ մեր կողմից առաջադրված ծրագիրը, այնպիսի մի կուսակցություն, որի նպատակն է ոչ միայն առանձին գիջումներ ձեռք բերելը, այլև ինքնակալության ամբողջը նվաճելը. սակայն այդ յուրացնողների մեջ որևե հաստատուն տեսակետ չլինելն ընդունակ է փչացնելու այդ ամբողջ գոհունակությունը:

Լիբկնեխտի անունը «Рабочее Дело»-ն, իհարկե, անտեղի է գործածում: 24 ժամվա մեջ փոխել կարելի է որևե հատուկ հարցի վերաբերյալ ագիտացիայի տակտիկան, կուսակցական կազմակերպության որևե մանրամասնություն կիրառելու տակտիկան, իսկ ոչ միայն 24 ժամում, այլ թեկուզ նույնիսկ 24 ամսում փոխել իրենց հայացքները այն մասին, թե արդյոք պետք է առհասարակ, մշտապես և անպայմանորեն մարտական կազմակերպություն և քաղաքական ագիտացիա մասսայի մեջ, կարող են միմիայն այն մարդիկ, որոնք զուրկ են որևե հիմքից: Ծիծաղելի է հիմնվել տարբեր պարագաների վրա, ժամանակաշրջանների փոփոխման վրա. մարտական կազմակերպություն ստեղծելու և քաղաքական ագիտացիա մղելու աշխատանք կատարել անշուշտ կարելի է ամեն տեսակի «մռայլ, խաղաղ» պարագաներում, ամեն տեսակի «հեղափոխական վոգու անկման» շրջանում—դեռ ավելին. հենց այդպիսի պարագաներում և այդպիսի շրջաններում մատնանշված աշխատանքն առավել ևս անհրաժեշտ է, որովհետև պայթումների և բունկումների մոմենտներին արդեն դժվար կլինի կազմակերպություն ստեղծել. այդ կազմակերպությունը պետք է պատրաստ լինի, որպեսզի միանգամից ծավալի իր գործունեությունը: «24 ժամվա մեջ տակտիկան փոխե՛լ»: Այո՛, տակտիկան փոխելու համար պետք է նախ ունենալ տակտիկա, իսկ յեթե չկա ամեն տեսակի պարագաներում և ամեն տեսակի ժամանակաշրջաններում քաղաքական պայքարում փորձված և ամուր կազմակերպություն, ապա խոսք անգամ չի կարող

*) — հենց այդպե՛ս: Խմբ.:

լինել՝ սիստեմատիկ, հաստատուն սկզբունքներով լուսաբանված և անշեղ կիրառվող գործունեության այն պլանի մասին, որը և հենց արժանի է տակտիկայի կոչման: Իսկապես նայեցեք. մեզ արդեն ասում են, որ «պատմական մոմենտը» մեր կուսակցության առաջ դրել է «բոլորովին մի նոր» հարց—տեռորի հարցը: Ցերեկ «բոլորովին նոր» եր քաղաքական կազմակերպման և ագիտացիայի վերաբերյալ հարցը, այսորը—տեռորի հարցը: Արդյոք տարորինակ չե՞ լսել, որ այդ ասելիքն ցեղակցությունը մոռացած մարդիկ դատողություն են տալիս տակտիկան արմատապես փոխելու մասին:

Բարեբախտաբար «Рабочее Дело»-ն իրավացի չե: Տեռորի հարցը յերբեք նոր հարց չե, և բավական է, որ համառոտակի հիշեցնենք ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հաստատված հայացքները:

Սկզբունքորեն մենք յերբեք չենք հրաժարվել և չենք կարող հրաժարվել տեռորից: Այդ՝ ռազմական գործողություններից մեկն է, որը կարող է կատարելապես պիտանի և նույնիսկ անհրաժեշտ լինել կռվի որոշ մոմենտում, զորքի որոշ դրության դեպքում և որոշ պայմաններում: Սակայն հենց գործի եությունն այն է, որ ներկայումս տեռորն առաջ է քաշվում ոչ յերբեք իբրև գործող բանակի ռազմագիտաններից մեկը, որը սերտորեն կապված և հարմարեցված է կռվի ամբողջ սիստեմի հետ, այլ իբրև ամեն տեսակի բանակից ինքնուրույն և անկախ՝ առանձին հարձակման միջոց: Այո՛, կենտրոնական կազմակերպության բացակայության և տեղական հեղափոխական կազմակերպությունների թուլության դեպքում տեռորն այլ բան էլ լինել չի կարող: Ահա այդ պատճառով էլ կռվի այդ միջոցը տվյալ հանգամանքներում մենք վճռականորեն հայտարարում ենք իբրև ո՛չ ժամանակակից, անողոքակահարմար մի միջոց, որն ամենաակտիվ մարտիկներին կտրում է իրենց իսկական, ամբողջ շարժման շահերի համար անհրաժեշտ խնդրից և կաղմալուծում է ոչ թե կառավարական, այլ հեղափոխական ուժերը: Հիշեցնենք վերջին դեպքերը[15]. մեր աչքերի առաջ քաղաքային բանվորների և քաղաքային «հասարակ խավի» պատկանող լայն մասսաները պայքարի յեն ձգտում, իսկ հեղափոխականները դեկավարների և կազմակերպիչների շտաբ չունեն: Այդպիսի պայմաններում ամենայեռանդուն հեղափոխականների դեպի տեռոր գնալը չի՞ սպառնում արդյոք թուլացնելու այն մարտական ջոկատներին, որոնց վրա և միմիայն կարելի է լուրջ հույսեր ունենալ: Այդ արդյոք չի՞ սպառնում խզել կապը հեղափոխական կազմակերպությունների և դժգոհ ու բողոքող, պայքարի պատրաստ այն անջատ-անջատ մասսաների միջև, որոնք թույլ են հենց իրենց անջատվածությամբ: Իսկ չի՞ որ մեր հաջողության միակ յերաշխիքը այդ կապի մեջ է: Մենք հեռու յենք առանձին հերոսական հարվածների նշանակությունը ժխտելու

մաքից, սակայն մեր պարտքն է ամբողջ յեռանդով կանխել տեռորով հրապուրվելը և նրան իբրև պայքարի գլխավոր ու հիմնական միջոց ընդունելը,—մի միջոց, որին ներկայումս խիստ կերպով հակված են շատ շատերը: Տեռորը յերբեք չի կարող հասարակ ռազմական գործողություն լինել. լավագույն դեպքում նա պետք է դալիս իբրև ռազմական գրոհի յեղանակներից մ.կը: Հարց է առաջ դալիս, թե կարո՞ղ ենք մենք արդյոք ավյալ մոմենտում այդպիսի գրոհի կոչել: «Рабочее Дело»-ն, ըստ յերևութին, կարծում է, վոր այո՛: Այնուամենայնիվ նա գոչում է՝ «Գրոհի սյուներ կազմեցեք»: Սակայն այդ նույնպես խելացի յեռանդ չէ: Մեր ռազմական ուժերի գլխավոր մասսան կամավորներ և ապստամբներ են: Մեր մշտական զորքը միմիայն մի քանի փոքրիկ ջոկատներ են, այն ել մոբիլիզացիայի չենթարկված, միմյանց հետ չկապված, առհասարակ ռազմական զորամասներ կազմելու անվարժ, ել ո՞ւր մնաց թե գրոհի զորամասներ: Այդպիսի պայմաններում այն ամենքի համար, ովքեր ընդունակ են դիտելու մեր պայքարի ընդհանուր պայմանները,—չմոռանալով այդ պայմանները պատմական ընթացքի յուրաքանչյուր «շրջադարձի» ժամանակ,—պետք է պարզ լինի, վոր ավյալ մոմենտում մեր լոզունգը չպետք է լինի «գրոհի անցնել», այլ պետք է լինի՝ «թշնամու ամրոցի ճիշտ պաշարում սարքել»: Այլ խոսքով՝ մեր կուսակցության անմիջական խնդիրը չի կարող լինել մեր առկա բոլոր ուժերն այժմ ևեթ գրոհի կոչել, այլ պետք է կոչ անել մշակելու հեղափոխական այնպիսի մի կազմակերպություն, վորն ընդունակ լինի միավորելու բոլոր ուժերը և դեկավարելու շարժումը վոչ թե անունով, այլ հենց իրականում, այսինքն՝ մշտապես պատրաստ լինել պաշտպանելու ամեն մի բողոք և ամեն մի բռնկում, ոգտվելով նրանցով՝ բազմապատկելու և ամրացնելու վճռական մարտի համար պիտանի ռազմական ուժերը:

Փետրվարի և մարտի դեպքերի դասն այնպես ներշնչող է, վոր դժվար թե կարելի լինի այդպիսի յեղրակացության դեմ սկզբունքային առարկություններ հանդիպել այժմ: Սակայն ներկայումս մեղանից պահանջվում է հարցի վոչ թե սկզբունքային, այլ գործնական լուծում: Պահանջվում է վոչ միայն պարզաբանել իրեն, թե հատկապես ինչպիսի աշխատանքի համար և հատկապես ինչպիսի կազմակերպություն է անհրաժեշտ, այլ պահանջվում է մշակել կազմակերպության վորոշ պլան, վորպեսզի կարելի լինի այդ կազմակերպության կառուցմանն անցնել ամեն կողմից: Նկատի ունենալով հարցի անհետաձգելի անհրաժեշտությունը, մենք համարձակվում ենք, մեր կողմից, ընկերների ուշադրությանն առաջարկել տպագրության համար պատրաստվող բրոշյուրում մեր կողմից ավելի մանրամասն մշակվող պլանի ուրվագիծը:

Մեր կարծիքով, գործունեության յելակետը, ցանկալի կազմակերպություն ստեղծելու գործնական քայլը, վերջապես, այն հիմնական թելը, վորին հետևելով մենք կկարողանայինք անշեղորեն զարգացնել, խորացնել և ընդարձակել այդ կազմակերպությունը,—պետք է լինի համառուսական քաղաքական լրագիր հիմնելը: Ամենից առաջ մեզ հարկավոր է լրագիր,—առանց դրան անհնարին է սկզբունքորեն կայուն և բազմակողմանի այն պրոպագանդայի և ագիտացիայի մղումը, վոր կազմում է սոցիալ-դեմոկրատիայի մշտական և գլխավոր խնդիրը ընդհանրապես և ներկա մոմենտի կենսական խնդիրը, առանձնապես, յերբ դեպի քաղաքականությունը, դեպի սոցիալիզմի հարցերն ունեցած հետաքրքրությունն արթնացած է բնակչության լայն խավերում: Յեվ յերբեք այնպես խիստ կարիք չի զգացվել, ինչպես այժմ, բաժան-բաժան ագիտացիան լրացնելու անձնական ներգործությամբ, տեղական թերթիկներով, բրոշյուրներով և այլն, և այն հանրայնացված ու կանոնավոր ագիտացիայով, վորը կարելի յե մղել միմիայն պարբերական մամուլի ոգնությամբ: Զափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր թերթի հաճախակի և կանոնավոր լույս տեսնելու (և տարածվելու) աստիճանը կարող է ամենաճիշտ չափանիշը հանդիսանալ այն բանի, թե մեզ մոտ վորքան հաստատուն հիմքերի վրա յե դրված մեր ռազմական գործունեության այդ ամենասկզբնական և ամենակենսական բնագավառը: Ապա, մեզ հարկավոր է հատկապես համառուսական լրագիր: Յեթե մենք չենք կարող և առայժմ չենք կարող մեր ներգործությունը ժողովրդի և կառավարության վրա տպագիր խոսքի միջոցով միացնել,—ցնորք կլինի ներգործության այլ, ավելի բարդ, դժվարին, սակայն և ավելի վճռական միջոցների միացման միտքը: Մեր շարժումը թե՛ դաղափարական, թե՛ գործնական և թե՛ կազմակերպական տեսակետից ամենից շատ տառապում է իր բաժան-բաժանվածությամբ, նրանով, վոր սոցիալ-դեմոկրատների հսկայական մեծամասնությունը համարյա ամբողջովին կլանված է զուտ-տեղական աշխատանքով, վորը սեղմում է թե՛ նրանց շրջահայացը, թե՛ նրանց գործունեության թափը, թե՛ նրանց կոնսպիրատիվ հնարքը և թե՛ պատրաստականությունը: Հենց այդ բաժանվածության մեջ պետք է վորոնել այն անկայունության և այն տատանման ամենախոր արմատները, վորոնց մասին մենք վերը խոսեցինք: Յեվ այդ թերությունից ազատվելու ուղղությամբ, տեղական մի քանի շարժումներ միասնական համառուսական շարժում դարձնելու ուղղությամբ առաջին քայլը պետք է լինի համառուսական լրագիր հաստատելը: Վերջապես, մեզ անպայման հարկավոր է քաղաքական լրագիր: Առանց քաղաքական որգանի անմտություն է ժամանակակից Յեվրոպայում քաղաքական անվան արժանի շարժում: Առանց այդ որգանի բացարձակապես անիրագործելի

յե մեր խնդիրը—համակենտրոնացնել քաղաքականապես դժգոհ և բողոքող բոլոր տարրերին, նրանցով բեղմնավորել պրոլետարիատի շարժումը: Մենք առաջին քայլն արել ենք, մենք բանվոր դասակարգի մեջ «տնտեսական» գործարանային մերկացումների կիրք ենք արթնացրել: Մենք պետք ե անենք հաջորդ քայլը՝ պետք ե ժողովրդի բոլոր քիչ թե շատ գիտակից խավերում արթնացնել քաղաքական մերկացումների կիրք: Չպետք ե շփոթել, թե քաղաքական մերկացուցիչ ձայները ներկայումս այդպես թույլ են, սակավ և յերկչոտ: Դրա պատճառը—բնավ վոստիկանության կամայականության հետ ընդհանուր հաշտությունը չի: Պատճառն այն ե, վոր մերկացումներ անելու ընդունակ և պատրաստ մարդիկ ամբիոն չունեն, վորտեղից նրանք կարողանային խոսել,—չկա հռետորներին հատկացված ունկնդրող և վոգևորող լսարան,—վոր նրանք ժողովրդի մեջ վոչ մի տեղ չեն տեսնում մի այնպիսի ուժ, վորին արժենար դանդատվել «ամենաղոր» ռուսական կառավարության մասին: Ցեվ այժմ այդ ամենը փոփոխվում ե հսկայական արագությամբ: Այդպիսի ուժ կա,—այդ հեղափոխական պրոլետարիատն ե, նա արդեն իր պատրաստակամությունն ապացուցեց վոչ միայն քաղաքական պայքարի կոչը լսելով և պաշտպանելով, այլև համարձակ կերպով պայքարի մեջ նետվելով: Մենք այժմ իվիճակի յենք, և մենք պարտավոր ենք ցարական կառավարության հանրաժողովրդական մերկացման համար ամբիոն ստեղծել. այդպիսի ամբիոն պետք ե լինի սոցիալ-դեմոկրատական լրագիրը: Ռուսական բանվոր դասակարգն ի տարբերություն այլ դասակարգերից և ռուսական հասարակության այլ խավերից մշտապես հետաքրքրություն ե յերևան բերում դեպի քաղաքական գիտությունը, մշտապես (և վոչ թե միայն հատուկ խռովության ժամանակաշրջաններում) անլեգալ գրականության հսկայական պահանջ ե յերևան բերում: Այդպիսի մասսայական պահանջի դեպքում, փորձված հեղափոխական առաջնորդների արդեն պատրաստման դեպքում, բանվոր դասակարգի այն համակենտրոնացման դեպքում, վորը մեծ քաղաքի բանվորական թաղերում, գործարանային ավանում, գործարանային քաղաքամասում նրան փաստական տեր ե դարձնում,—քաղաքական լրագիր հիմնելը պրոլետարիատի ուժերից յերբեք վեր բան չե: Իսկ պրոլետարիատի միջոցով լրագիրը կթափանցի քաղաքային մեշչանականության, գյուղական տնայնագործների և գյուղացիների շարքերը և կդառնա իսկական ժողովրդական քաղաքական լրագիր:

Սակայն լրագրի դերը չի սահմանափակվում միմիայն գաղափարներ տարածելով, միմիայն քաղաքական դաստիարակությամբ և քաղաքական դաշնակիցներ շահելով: Լրագիրը վոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ և կոլեկտիվ ագիտատոր ե, այլև կոլեկտիվ կազմակեր-

պիչ ե: Այդ վերջին տեսակետից նրան կարելի յե համեմատել այն վերյելակների հետ, վորով շրջապատում են կառուցվող շենքը, նշում են շենքի կոնտուրները, դյուրացնում են առանձին շինարարների միջև յեղած հարաբերությունը, ողնում են նրանց՝ աշխատանքի բաշխում կատարելու և դիտելու այն ընդհանուր արդյունքները, վորոնք ձեռք են բերված կազմակերպված աշխատանքով: Լրագրի ողնությամբ և նրա հետ կապված՝ ինքնըստինքյան ստեղծվելու յե մշտական կազմակերպություն, վորն զբաղվում ե վոչ միայն տեղական, այլև կանոնավոր ընդհանուր աշխատանքով, վորն իր անդամներին սովորեցնում ե ուշադրությամբ հետևել քաղաքական դեպքերին, գնահատել նրանց նշանակությունը և նրանց ազդեցությունը բնակչության զանազան խավերի վրա, մշակել հեղափոխական կուսակցության կողմից այդ դեպքերի վրա ազդելու նպատակահարմար յեղանակները: Հենց միմիայն տեխնիկական խնդիրը—թերթին կանոնավոր կերպով նյութեր մատակարարելը և թերթի կանոնավոր տարածումը—ստիպում ե ստեղծել միասնական կուսակցության տեղական գործակալների ցանց, միմյանց հետ կենդանի փոխհարաբերության մեջ գտնվող, գործերի ընդհանուր դրությունը հասկացող, համառուսական աշխատանքի բաժան-բաժան ֆունկցիաները կանոնավոր կատարելուն վարժ, այս կամ այն հեղափոխական գործողությունները կազմակերպելու համար իրենց ուժերը փորձող գործակալներ: Գործակալների*) այդ ցանցը հենց հիմքն ե դինելու այն կազմակերպության, վորը մեզ հարկավոր ե.—բավականաչափ խոշոր մի կազմակերպություն, վորն ընդգրկի ամբողջ յերկիրը. բավականաչափ ընդարձակ և բազմակողմանի կազմակերպություն, վորը կատարի խիստ և մանրամասն աշխատանքի բաժանում. բավականաչափ կուփված կազմակերպություն, վորը կարողանա ամեն պարագաներում, ամեն «չբրջադարձերի» և անակնկալությունների դեպքում անշեղորեն կատարել իր աշխատանքը. բավականաչափ ճկուն մի կազմակերպություն, վորը, մեկ կողմից, կարողանա բաց դաշտում խուսափել թշնամու խիստ գերազանց ուժի դեմ կռվելուց, յերբ վերջինս իր բոլոր ուժերը կենտրոնացրել ե մի կետում, իսկ մյուս կողմից, կարողանա ողտվել այդ թշնամու ծանրաշարժությունից և հարձակում գործի նրա վրա այն-

*) Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդպիսի գործակալները կարող էին հաջող կերպով աշխատել միմիայն այն պայմանով, յեթե չատ մոտիկ հարաբերություն ունենային մեր կուսակցության տեղական կոմիտեների (խմբերի, խմբակների) հետ: Ցեվ առհասարակ մեր կողմից նշվող ամբողջ պլանը, իհարկե, իրագործելի յե միմիայն կոմիտեների ամենաակտիվ աջակցությամբ, վորոնք բազմիցս քայլեր են արել կուսակցությունը միավորելու և վորոնք—մենք հավատացած ենք—այդ միավորումը ձեռք են բերելու յեթե վոչ այսոր, ապա վաղը, յեթե վոչ այս ձևով, ապա ուրեմն մի այլ ձևով:

տեղ և այն ժամանակ, վորտեղից ամենից քիչ հարձակում է սպասվում: Այսոր մեր առաջ ծառացած է համեմատաբար մի թեթև խնդիր՝ պաշտպանել մեծ քաղաքների փողոցներում ցույցեր անող ուսանողներին: Վաղը թերևս ավելի դժվար խնդիր ծառանա,—որինակ, պաշտպանել գործադուրկների շարժումը վորոշ ռայոնում: Վաղը չէ մյուս որը մենք պետք է լինենք մեր պոստում, վորպեսզի դյուղացիական բունտին հեղափոխական մասնակցություն ունենանք: Այսոր մենք պետք է ոգտվենք քաղաքական դրության այն սրվածությամբ, վորն ստեղծել է կառավարությունը՝ արշավանք գործելով զեմստվոյի վրա: Վաղը մենք պետք է պաշտպանենք բնակչության գայրությը ցարական այս կամ այն դուրս պրծած բաշիբոզուկի դեմ և ոգնենք—բոյկոտի, հալածանքի, ցույցի միջոցով և այլն—նրան այնպես դաս տալ, վորպեսզի նա հարկադրված լինի բացարձակ նահանջի: Մարտական պատրաստության այդ աստիճանը կարելի չէ ձեռք բերել կանոնավոր զորքի մշտական գործունեությամբ միայն: Յեվ յեթե մենք մեր ուժերը միացնենք ընդհանուր լրագիր ունենալու, ապա այդպիսի աշխատանքը կպատրաստի և առաջ կքաշի վոչ միայն ամենահմուտ պրոպագանդիստներ, այլև ամենարանիմաց կազմակերպիչներ, կուսակցության ամենատաղանդավոր քաղաքական առաջնորդներ, վորոնք հարկ յեղած րոպեին ընդունակ են վճռական մարտի լոզունգ տալու և ղեկավարելու այդ մարտը:

Իրրև յեզրակացություն՝ մեկ-յերկու խոսք, հնարավոր թյուրիմացությունից խուսափելու համար: Մենք շարունակ խոսել ենք միայն սիստեմատիկ, պլանաչափ պատրաստության մասին, սակայն մենք յերբեք դրանով չենք ուզեցել ասել, թե ինքնակալությունը կարող է ընկնել բացառապես կանոնավոր պաշարումից կամ կազմակերպված զրոհից: Այդպիսի հայացքը կլիներ անհեթեթ դոկտրինյորություն: Ընդհակառակը, միանգամայն հնարավոր է և պատմականորեն շատ ավելի հավանական, վոր ինքնակալությունը կընկնի այն տարերային բունկումներից կամ չնախատեսված քաղաքական բարդություններից մեկի ճնշմամբ, վորոնք շարունակ ամեն կողմից սպառնում են: Սակայն, վոչ մի քաղաքական կուսակցություն, ավանտյուրիզմի մեջ չընկնելով, չի կարող իր գործունեությունը հիմնել այդպիսի բունկումների և բարդությունների վրա: Մենք պետք է ընթանանք մեր ուղիով, անշեղ կերպով կատարենք մեր սիստեմատիկ աշխատանքը, և վորքան քիչ հույս դնենք անակնկալությունների վրա, այնքան ավելի հավանականություն կա, վոր վոչ մի «պատմական շրջադարձ» մեզ հանկարծակիի չի բերի:

«Искра» № 4, մայիս 1901 թ.

Ի՞ՆՉ ԱՆԵԼ

ՄԵՐ ՇԱՐԺՄԱՆ ՑԱՎՈՏ ՀԱՐՑԵՐԸ

... «Կուսակցական պայքարն ուժ ու կենսունակություն է տալիս կուսակցությանը, կուսակցության գուլության ամենամեծ ապացույցը հանդիսանում է նրա նպաստությունը և խստորեն գծված սահմանների բացումը, կուսակցությունն ամրանում է նրանով, վոր զտում է իրեն»...

(Լասսալի՝ Մարքսին գրած նամակից, 1852 թվի հունիսի 24):

I

ԴՈԳՄԱՏԻԶՄԸ ՅԵՎ «ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ»

ա) ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»

«Քննադատության ազատություն»—դա ներկայումս, անտարակույս, ամենից ավելի մոդային լոզունգն է, վոր ամենից ավելի հաճախ գործ է ածվում բոլոր յերկրների սոցիալիստների և դեմոկրատների վիճաբանությունների մեջ: Առաջին հայացքից զարմանալի է յերևակայել ավելի տարորինակ բան, քան վիճաբանող կողմերից մեկի այդ հանդիսավոր վկայակոչությունները քննադատության ազատության մասին: Մի՞թե առաջավոր կուսակցությունների շրջանից ձայներ հնչեցին յեվրոպական յերկրների մեծ մասի այն սահմանադրական որենքի դեմ, վոր ապահովում է գիտության և գիտական ուսումնասիրության ազատությունը: «Այստեղ ինչ-վոր այդպես չե՞»—պետք է ասի իրեն ամեն մի կողմնակի մարդ, վոր լսել է բոլոր անկյուններում կրկնվող մոդային լոզունգը, բայց դեռևս չի թափանցել վիճաբանողների տարաձայնության եությունի մեջ: «Այդ լոզունգը, ակներևորեն, այն պայմանական բառերից մեկն է, վորոնք վորպես կոչանուններ (кличка) որինականություն են ստանում գործածությամբ և գրեթե հասարակ անուններ են դառնում»:

Իրոք, վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր ժամանակակից միջազգային*) սոցիալ-դեմոկրատիայի մեջ յերկու ուղղություն է գոյացել,

*) Ի դեպ: Նորագույն սոցիալիզմի պատմության մեջ գրեթե միակ և յուրատեսակ չափազանց մխիթարական յերևույթն է այս, վոր սոցիալիզմի ներսում գոյություն ունեցող տարբեր ուղղությունների յերկպառակությունն առաջին անգամ ազգայինից վերածվեց ինտերնացիոնալականի: Առաջներում լասսալականների և այդենախականների միջև, գեդիստների և պոսսիբիլիստների միջև, Ֆաբիականների և սոցիալ-դեմոկրատների միջև, նարոդովոլյականների և սոցիալ-դեմոկրատների միջև տեղի ունեցող վեճերը մնում էին զուտ ազգային վեճեր, արտացոլում զուտ ազգա-

վորոնց միջև պայքարը մերթ բորբոքվում և բռնկվում է վառ բոցերով, մերթ հանդարտվում, մարմրում «դինադադարի» ադդու «բանաձևերի» մոխրի տակ: Թե ինչումն է կայանում «նոր» ուղղությունը, վորը «քննադատորեն» է վերաբերվում «հին, դոգմատիկ» մարքսիզմին, այդ բավականաչափ վորոշակիությամբ ասաց Բերնշտայնը և ցույց տվեց Միլյերանը:

Սոցիալ-դեմոկրատիան պետք է սոցիալական հեղափոխության կուսակցությունից վերածվի սոցիալական ռեֆորմների դեմոկրատական կուսակցության: Այս քաղաքական պահանջը Բերնշտայնը շրջապատել է բավականին ներդաշնակ համաձայնեցրած «նոր» փաստարկումների և նկատառումների մի ամբողջ մարտկոցով: Ժխտվում էր սոցիալիզմը գիտականորեն հիմնավորելու և նրա անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը պատմության մատերիալիստական ըմբռնման տեսակետից ապացուցելու հնարավորությունը. ժխտվում էր աճող աղքատության, պրոլետարացման և կապիտալիստական հակասությունների սրման փաստը. անհիմն էր հայտարարվում «վերջնական նպատակի» հասկացողությունն իսկ և անպայման մերժվում էր պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը. ժխտվում էր լիբերալիզմի և սոցիալիզմի սկզբունքային հակադրությունը. ժխտվում էր դասակարգային պայքարի թեորիան, վոր իբր թե անկիրառելի է մեծամասնության կամքի համաձայն կառավարվող խիստ դեմոկրատական հասարակության նկատմամբ և այլն:

Այսպիսով, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայից դեպի բուրժուական սոցիալ-ռեֆորմատորությունը վճռական շրջադարձ կատարելու պահանջին ուղեկցում էր մի վոչ պակաս վճռական շրջադարձ դեպի մարքսիզմի բոլոր հիմնական գաղափարների բուրժուական քննադատությունը: Իսկ քանի վոր այդ վերջին քննադատությունը մարքսիզմի դեմ կատարվում էր արդեն վաղուց իվեր թե՛ քաղաքական տրիբունայից և թե՛ համալսարանական ամբիոնից, թե՛ բազմաթիվ բրոշյուրների մեջ և թե՛ մի շարք գիտական տրակտատներում, քանի վոր կրթված դասակարգերի ամբողջ աճող յերիտասարդությունը տասնյակ

յին առանձնահատկություններ, տեղի եյին ունենում, այսպես ասած, տարբեր մարդկանցի վրա: Ներկայումս (այժմ արդեն պարզ յերևում է այդ), անգլիական ֆաբիականները, ֆրանսական մինիստերիալիստները, գերմանական բերնշտայնականները, ռուսական քննադատները[16],—այդ բոլորը մի ընտանիք է, նրանք բոլորը դողմատիկ մարքսիզմի դեմ: Գուցե այս առաջին իրոք միջազգային դոտեմարտում սոցիալիստական ոպորտունիզմի դեմ՝ միջազգային հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան բավականաչափ ամրանա, վորպեսզի կարողանա վերջ դնել վաղուց արդեն Եվրոպայում իշխող քաղաքական ռեակցիային:

տարիների ընթացքում սիստեմատիկաբար դատարակվել է այդ քննադատությամբ,—ապա զարմանալի չէ, վոր «նոր քննադատական» ուղղությունը սոցիալ-դեմոկրատիայի մեջ ասես միանգամից լույս ընկավ լիովին ավարտված, ինչպես Միներվան Յուպիտերի գլխից: Ըստ իր բովանդակության՝ այդ ուղղությանը հարկ չեր լինում զարգանալ և կազմավորվել. նա ուղղակի բուրժուական գրականությունից փոխադրվեց սոցիալիստականի մեջ:

Այնուհետև: Յեթե Բերնշտայնի թեորիական քննադատությունն ու նրա քաղաքական տեսչերը դեռևս վորևե մեկի համար մութ եյին մնում, ապա ֆրանսացիները հոգ տարան «նոր մեթոդի» ակնառու ցուցադրման մասին: Ֆրանսիան այս անգամ ևս արդարացրեց իր հին հռչակը մի «յերկրի, վորի պատմության մեջ դասակարգերի պայքարը, ավելի քան վորևե այլ տեղ, հասցվում եր վճռական վախճանի» (Ենգելս, Մարքսի «Der 18 Brumaire»*) աշխատության առաջաբանից[17]): Ֆրանսական սոցիալիստներն սկսեցին վո՛չ թե տեսաբանել, այլ ուղղակի գործել. Ֆրանսիայի դեմոկրատական տեսակետից ավելի զարգացած քաղաքական պայմանները թույլ տվին նրանց իսկույն անցնելու «գործնական բերնշտայնականության» իր բոլոր հետևանքներով: Միլյերանը այդ գործնական բերնշտայնականության հիանալի նմուշ տվեց. իզո՞ւր չէ, վոր Միլյերանի պաշտպանության և գովաբանման համար այնպիսի խանդավառությամբ ասպարեզ նետվեցին թե՛ Բերնշտայնը, թե՛ Ֆոլմարը: Իրոք. յեթե սոցիալ-դեմոկրատիան ըստ եյության պարզապես ռեֆորմների կուսակցություն է և պետք է քաջություն ունենա բացահայտորեն ընդունելու այդ,—այն ժամանակ սոցիալիստը վո՛չ միայն իրավունք ունի բուրժուական մինիստրության մեջ մտնելու, այլև պետք է նույնիսկ միշտ ձգտի դրան: Յեթե դեմոկրատիան եյապես դասակարգային դերիշխանության վոչնչացում է նշանակում,—ապա ինչո՞ւ պետք է սոցիալիստական մինիստրը չհմայի ամբողջ բուրժուական աշխարհը դասակարգերի համագործակցությանը նվիրված ճառերով: Ինչո՞ւ պետք է նա չմնա մինիստրության մեջ նույնիսկ այն բանից հետո, յերբ բանվորների սպանությունները ժանդարմների կողմից՝ հարյուրերորդ և հազարերորդ անգամ ցույց տվին դասակարգերի դեմոկրատական համագործակցության խիստ բնույթը: Ինչո՞ւ նա անձամբ չմասնակցի ցարին վողջունելու հանդեսին, վորին ֆրանսական սոցիալիստներն այժմ այլ կերպ չեն անվանում, քան կախաղանի, մտրակի և աքսորի հերոս (knouteur, pendeur et déportateur): Իսկ ի հատուցումն դրան՝ սոցիալիզմի անվերջ ստորացման և ինքնաթքակոծման ամբողջ աշխարհի առջև, բանվորա-

---

*) — «Բրյումերի 18-ը»: Խմբ.:

կան մասսաների սոցիալիստական դիտակցության ապականման,—այն մասսաների, վորոնք կազմում են միակ բազիսը, վորը կարող է ապահովել մեր հաղթանակը,—ի հատուցումն դրան՝ չնչին բարենորոգումների մեծաղղորդ նախագծեր, այն աստիճան չնչին, վոր բուրժուական կառավարություններից հաջողվում եր ավելին ստանալ:

Ով վոր դիտավորյալ կերպով չի փակում իր աչքերը, նա չի կարող չտեսնել, վոր նոր «քննադատական» ուղղությունը սոցիալիզմի մեջ վոչ այլ ինչ է, բայց յեթե ոպորտունիզմի նոր տեսակը: Յեվ յեթե մարդկանց մասին դատենք վոչ այն փայլուն համազգեստով, վոր նրանք իրենք իրենց հագցրել են, վոչ այն եֆեկտավոր կոչանունով, վոր նրանք իրենք յուրացրել են, այլ նրանով, թե ինչպես են վարվում նրանք և ինչ են իրոք քարոզում,—ապա պարզ կլինի, վոր «քննադատության ազատությունը» ոպորտունիստական ուղղության ազատությունն է սոցիալ-դեմոկրատիայի մեջ, սոցիալ-դեմոկրատիան ռեֆորմների դեմոկրատական կուսակցություն դարձնելու ազատություն, սոցիալիզմի մեջ բուրժուական գաղափարներ և բուրժուական տարրեր արմատացնելու ազատություն:

Ազատությունը—մեծ խոսք է, բայց արդյունաբերության ազատության դրոշի տակ մղվել են ամենաավազակային պատերազմներ, աշխատանքի ազատության դրոշի տակ—թալանել են աշխատավորներին: Նույնպիսի ներքին կեղծիք է պարունակվում «քննադատության ազատություն» խոսքի ժամանակակից գործածության մեջ: Մարդիկ, վորոնք իրոք համոզված են, վոր իրենք առաջ են մղել դիտությունը, վո՛չ թե կպահանջեին նոր հայացքների ազատություն հների կողքին, այլ վերջիններիս փոխարինումն առաջիններով: Իսկ ժամանակակից ճիչերը՝ «կեցցե՛ քննադատության ազատությունը»՝ չափազանց հիշեցնում են դատարկ տակառի առակը:

Մենք ստվար խմբով, ամուր բռնած միմյանց ձեռքերից, գնում ենք զառիթափ և դժվար ուղիով: Մենք բոլոր կողմերից շրջապատված ենք թշնամիներով և գրեթե միշտ հարկադրված ենք գնալ նրանց կրակի տակով: Մենք միացել ենք ազատ ընդունած վճռով՝ հենց նրա համար, վոր պայքարենք թշնամիների դեմ և չսայթաքենք—չընկնենք հարևան ճահիճը, վորի բնակիչները հենց սկզբից պախարակում եյին մեզ նրա համար, վոր մենք ջոկվել, առանձին խմբակ ենք կազմել և ընտրել ենք պայքարի ուղին և վոչ թե հաշտեցման ուղին: Յեվ ահա մեզնից վոմանք սկսում են ճչալ՝ գնա՞նք այդ ճահիճը:—Իսկ յերբ նրանց սկսում են ամաչեցնել, նրանք առարկում են. ի՞նչ հետամնաց մարդիկ եք դուք և ինչպե՞ս դուք չեք ամաչում ժխտել մեր ազատությունը՝ կանչելու ձեզ դեպի լավագույն ճանապարհ:—Ո՞, այո՛, պրոններ, դուք ազատ եք վո՛չ միայն կանչելու, այլև գնալու ուր վոր

կամենաք, թեկուզ ճահիճը. մենք նույնիսկ գտնում ենք, վոր ձեր իսկական տեղը հենց ճահիճն է, և մենք պատրաստ ենք ձեզ աջակցություն ցույց տալու մեր ուժերի չափ, վորպեսզի դուք տեղափոխվեք այնտեղ: Բայց միայն թողե՛ք այն ժամանակ մեր ձեռքերը, մի՛ կառչեք մեզ և մի՛ ապականեք ազատություն մեծ խոսքը, վորովհետև չե՞ վոր մենք ևս «ազատ» ենք գնալու, ուր վոր ցանկանում ենք, ազատ ենք կռվելու վո՛չ միայն ճահճի դեմ, այլև նրանց դեմ, ովքեր շուռ են գալիս դեպի ճահիճ:

բ) «ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՆՈՐ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Յեվ ահա այս իսկ լոզունգը («քննադատության ազատություն») հանդիսավոր կերպով առաջադրված է ամենավերջին ժամանակներս արտասահմանյան «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միության» որդան «Рабочее Дело»-յի կողմից (№ 10), առաջադրված է վոչ վորպես թեորիական պոստուլատ*), այլ վորպես քաղաքական պահանջ, վորպես պատասխան այն հարցին, թե «հնարավո՞ր է արդյոք արտասահմանում գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միավորումը»:—«Հաստատուն միավորման համար անհրաժեշտ է քննադատության ազատություն» (էջ 36):

Այս հայտարարությունից ըղխում են յերկու միանգամայն վորոշ յեզրակացություններ. 1) «Рабочее Дело»-ն իր պաշտպանության տակ է առնում ոպորտունիստական ուղղությունը միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ ընդհանրապես. 2) «Рабочее Дело»-ն ոպորտունիզմի ազատություն է պահանջում ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Քննենք այս յեզրակացությունները:

«Рабочее Дело»-յին «առանձնապես» դուր չի գալիս «Искра»-յի և «Заря»-յի[16] հակումը՝ դուշակելու պառակտումը միջազգային սոցիալ-դեմոկրատիայի Լեռան և ժիրոնդայի միջև»**):

---

*) — դրույթ: Խմբ.:

**) Հեղափոխական պրոլետարիատի մեջ գոյություն ունեցող յերկու հոսանքի (հեղափոխական և ոպորտունիստական) համեմատությունը՝ XVIII դարի հեղափոխական բուրժուազիայի մեջ գոյություն ունեցած յերկու հոսանքի հետ (յակոբինականը—«Լեռը»—և ժիրոնդիստականը) արված եր «Искра»-յի 2-րդ համարի առաջնորդողում (1901 թ. փետրվար): Այդ հոդվածի հեղինակը Պլեխանովն է: Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ գոյություն ունեցող «յակոբինականության» մասին մինչև այժմ շատ են սիրում խոսել թե՛ կադետները, թե՛ «անվերնագրականները», թե՛ մենշևիկները: Բայց այն մասին, թե ինչպես Պլեխանովն առաջին անգամ այդ գաղափարն առաջադրեց սոցիալ-դեմոկրատիայի աջակողմյան թևի դեմ,—այդ մասին այժմ զերազասում են լռել կամ... մոռանալ: (Հեղինակի ծանոթագրությունը 1908 թ. հրատարակության առթիվ: Խմբ.):

«Մեզ,—գրում է «Рабочее Дело»-յի խմբագիր Բ. Կրիչևսկին,—առհասարակ մակերեսային պատմական անալոգիա է թվում խոսակցությունը Լեոն և Ժիրոնդայի մասին սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, մի անալոգիա, որ տարորինակ է մարքսիստի գրչի տակ.—Լեոն ու Ժիրոնդան ներկայացնում էին վո՛չ թե տարբեր խառնվածքներ կամ մտավոր հոսանքներ, ինչպես այդ կարող է թվալ պատմության իդեալոգներին, այլ տարբեր դասակարգեր և խավեր—մինչև բուրժուազիան՝ մի կողմից և մանր քաղաքացիությունը պրոլետարիատի հետ՝ մյուս կողմից: Իսկ ժամանակակից սոցիալիստական շարժման մեջ չկա դասակարգային շահերի բաղխում, նա ամբողջովին, իր բոլոր (ընդգծումը Բ. Կր.) տարատեսակություններով, ներառյալ նաև ամենամոլի բերնչտայնականներին, կանգնած է պրոլետարիատի դասակարգային շահերի, նրա դասակարգային պայքարի հողի վրա, պայքար, որ մղվում է հանուն քաղաքական և տնտեսական ազատագրման» (էջ 32—33):

Համարձա՞կ պնդում: Չի՞ լսել արդյոք Բ. Կրիչևսկին այն վաղուց արդեն նկատված փաստի մասին, որ վերջին տարիներում հենց «ակադեմիկների» խավի լայն մասնակցությունը սոցիալիստական շարժմանն ապահովել է բերնչտայնականության այնպիսի արագ տարածումը: Իսկ գլխավորը,—ինչի՞ վրա է հիմնում մեր հեղինակն իր կարծիքը, թե «ամենամոլի բերնչտայնականները» էլ կանգնած են դասակարգային պայքարի հողի վրա, պայքար, որ մղվում է հանուն պրոլետարիատի քաղաքական ու տնտեսական ազատագրման: Հայտնի չէ: Ամենամոլի բերնչտայնականների վճռական պաշտպանությունը չի ամրապնդվում բացարձակապես վո՛չ մի փաստարկով, վո՛չ մի նկատառումով: Հեղինակը կարծում է, յերևի, թե քանի որ նա կրկնում է այն, ինչ որ իրենց մասին ասում են նաև ամենամոլի բերնչտայնականները,—ապա իր պնդումը կարիք էլ չունի ապացույցների: Բայց կարելի՞ է միթե յերևակայել ավելի «մակերեսային» բան, քան այս դատողությունը մի ամբողջ ուղղության մասին այն բանի հիման վրա, ինչ որ իրենք իրենց մասին ասում են այդ ուղղության ներկայացուցիչները: Կարելի՞ է արդյոք յերևակայել ավելի մակերեսային բան, քան հետագա «մորալը» կուսակցական զարգացման յերկու տարբեր և նույնիսկ տրամագծորեն հակադիր տիպերի կամ ճանապարհների մասին («Рабочее Дело»-յի էջ 34—35): Գերմանական սոցիալ-դեմոկրատները—գիտե՞ք ինչ—ընդունում են քննադատության լիակատար ազատություն,—իսկ ֆրանսացիները՝ վոչ, և հենց նրանց որինակն էլ ցույց է տալիս «անհամբերողության» ամբողջ «վնասը»:

Հենց Բ. Կրիչևսկու որինակը,—կպատասխանենք մենք դրան,—ցույց է տալիս, որ յերբեմն իրենց մարքսիստ են անվանում մարդիկ, որոնք պատմությանը նայում են տառացիորեն «ըստ Իլովայսկու»: Վորպեսզի բացատրենք գերմանական սոցիալիստական կուսակցության միասնականությունն ու ֆրանսականի մասնատվածությունը, ամենևին կարիք չկա փորփրելու մեկ և մյուս յերկրի պատմության առանձնահատկությունները, զուգադրելու ռազմական կիսաբսոլուտիզմի և հանրապետական պառլամենտարիզմի պայմանները, քննելու Կոմունայի հետևանքները և սոցիալիստներին վերաբերող բացառիկ որենքի[19] հետևանքները, համեմատելու տնտեսական կենցաղն ու տնտեսական զարգացումը, մտաբերելու այն մասին, թե ինչպես «գերմանական սոցիալ-դեմոկրատիայի» անորինակ աճումը ուղեկցվում եր սոցիալիզմի պատմության մեջ անորինակ պայքարի յեռանդով վո՛չ միայն թեորիական (Մյուլբերգեր, Դյուրինգ*) կաթեդեր-սոցիալիստներ)[20], այլև տակտիկական (Լասսալ) մոլորությունների դեմ և այլն և այլն: Այս ամենն ավելորդ է: Ֆրանսացիները գժտվում են, վորովհետև նրանք անհամբերող են, գերմանացիները միացած են, վորովհետև նրանք խելոք-տղաներ են:

Ցեվ նկատեցեք, որ այս աննման խորիմաստության միջոցով «մերժվում է» այն փաստը, որն ամբողջովին հերքում է բերնչտայնականների պաշտպանությունը: Կանգնա՞ծ են արդյոք նրանք պրոլետարիատի դասակարգային պայքարի հողի վրա, այդ հարցը վերջնականապես և անդառնալի կերպով կարող է վճռվել միայն պատմական փորձով: Հետևապես, ամենակարևոր նշանակություն այս տեսակետից ունի հենց Ֆրանսիայի որինակը, որտեղ բերնչտայնականները փորձեցին ինքնուրույնորեն վոտքի կանգնել, արժանանալով իրենց գերմանացի կոլեգաների (իսկ մասամբ էլ ռուսական ոպորտունիստների. համեմատիր «Рабочее Дело» № 2—3, էջ 83—84) ջերմ հավանությանը: Ֆրանսացիների «անհաջողության» հիշատակումը—իր «պատմական» (նոզդրյովական խմաստով) նշանակու-

*) Ցերը Ենգելսը հարձակվեց Դյուրինգի վրա, վերջինիս հայացքներին հաջում էին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներից բավականին շատերը, և Ենգելսի վերաբերմամբ խստության, անհամբերողության, վոչ-ընկերական բանակռվի և այլ մեղադրանքները տեղում էին նույնիսկ հրապարակով կուսակցության համագումարում: Մոսսն ընկերների հետ առաջարկ մտցրեց (1877 թվականի համագումարում) «Vorwärts»-ից Ենգելսի հոդվածները դուրս գցելու մասին, իբրև «ընթերցողների ահագին մեծամասնության համար հետաքրքրություն չներկայացնող» հոդվածներ, իսկ Վալտայխը (Vahlteich) հայտարարեց, որ այդ հոդվածների զետեղումը մեծ վնաս բերեց կուսակցությանը, որ Դյուրինգն էլ ծառայություններ է մատուցել սոցիալ-դեմոկրատիային. «մենք պետք է բոլորից ոգավենք հանուն կուսակցության շահերի, իսկ յեթե պրոֆեսորները վիճում են, ապա «Vorwärts»-ն ամենևին այդպիսի վեճեր մղելու տեղը չէ» («Vorwärts» 1877, № 65, հունիսի 6): Ինչպես տեսնում եք, այս էլ «քննադատության ազատության» պաշտպանության նմուշ է, և այս նմուշի մասին չեր խանդարի, որ մտածեին մեր լեգալ քննադատներն ու անլեգալ ոպորտունիստները, որոնք այնպե՞ս սիրում են գերմանացիների որինակը հիշատակել:

թյունից զատ—պարզապես դուրս է գալիս՝ բարկացած խոսքերով խիստ անախորժ փաստերը վարագուրելու մի փորձ:

Ասենք՝ գերմանացիներին ել մենք ամենևին դեռևս մտադիր չենք ընծայելու Բ. Կրիչևսկուն և «քննադատության ազատության» այլ բազմաթիվ պաշտպաններին: Յեթե «ամենամոլի բերնչտայնականները» դեռևս հանդուրժելի յեն գերմանական կուսակցության շարքերում, ապա այն չափով միայն, վորչափով նրանք յենթարկվում են թե՛ Հանովերի բանաձևին[21], վոր վճռականորեն մերժեց Բերնչտայնի «ուղղումները», թե Լյուբեկի բանաձևին, վոր իր մեջ պարունակում է (չնայած նրա ամբողջ դիպլոմատիականության) ուղղակի նախազգուշացում Բերնչտայնին: Կարելի յե վիճել, գերմանական կուսակցության շահերի տեսակետից, այն մասին, թե վո՛րքան տեղին եր դիպլոմատիականությունը, արդյոք տվյալ դեպքում վատ խաղաղություն՝ է ավելի լավ, թե բարի դժտությունը, մի խոսքով, կարելի յե տարբեր կարծիքներ ունենալ բերնչտայնականությունը մերժելու այս կամ այն յեղանակի նպատակահարմարության գնահատման խնդրում, բայց չի կարելի չտեսնել այն փաստը, վոր գերմանական կուսակցությունը յերկու անգամ մերժել է բերնչտայնականությունը: Ուստի կարծել, թե գերմանացիների որինակը հաստատում է այս թեզը՝ «ամենամոլի բերնչտայնականները կանգնած են պրոլետարիատի դասակարգային պայքարի հողի վրա՝ հանուն նրա տնտեսական և քաղաքական ազատագրման»—նշանակում է բոլորովին չհասկանալ այն, ինչ վոր կատարվում է բոլորի աչքի առջև*):

*) Պետք է նկատել, վոր գերմանական կուսակցության մեջ յեղած բերնչտայնականության մասին «Р. Дело»-ն միշտ սահմանափակվել է փաստերը սոսկ վերապատմելով, դրանց մասին սեփական գնահատություն տալու լիակատար «ձեռնպահություն» պահպանելով: Տե՛ս, որինակ, № 2—3, եջ 66—Շտուտգարտի համագումարի մասին. բոլոր տարաձայնությունները հանձնված են «տակտիկային» և միայն հավատալում է, վոր հսկայական մեծամասնությունը հավատարիմ է նախկին հեղափոխական տակտիկային: Կամ № 4—5, եջ 25 և հետևյալները՝ Հաննովերի համագումարում արտասանած ճառերի հասարակ վերապատմում, Բեբելի բանաձևի մեջբերմամբ. Բերնչտայնի շարադրանքն ու քննադատությունը դարձյալ հետաձգված են (ինչպես և № 2—3-ում) մինչև «առանձին հոդված» տալը: Տարորինակ է, վոր № 4—5-ի 33-րդ եջում կարդում ենք. «...այն հայացքներին, վոր շարադրեց Բեբելը, կողմնակից է համագումարի հսկայական մեծամասնությունը», իսկ քիչ ներքևում՝ «...Դավիդը պաշտպանում եր Բերնչտայնի հայացքները... Ամենից առաջ նա ջանք եր թափում ցույց տալ, թե... Բերնչտայնը և նրա բարեկամներն այնուամենայնիվ (sic!) կանգնած են դասակարգային պայքարի հողի վրա»... Դա գրվում եր 1899 թվականի դեկտեմբերին, իսկ 1901 թվի սեպտեմբերին «Р. Дело»-ն, ինչպես յերևում է, արդեն տարհամոզվել է Բեբելի արդարացիության մեջ և կրկնո՛ւմ է Դավիդի հայացքը, վորպես իր սեփականը:

Դեռ այդ քիչ է: «Рабочее Дело»-ն, ինչպես մենք նկատեցինք արդեն, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի առջև հանդես է գալիս «քննադատության ազատության» պահանջով և բերնչտայնականության պաշտպանությամբ: Յերևի նա առիթ է ունեցել համոզվելու, վոր մեզանում անարդար կերպով են վիրավորել մեր «քննադատներին» ու բերնչտայնականներին: Այսինքն վո՞ր քննադատներին. ո՞վ. վո՞ր տեղյե՞ր. իսկապես ինչի՞ մեջ է կայացել անարդարությունը:—Այդ մասին «Рабочее Дело»-ն լռում է, վոչ մի անգամ չհիշատակելով վո՛չ մի ռուսական քննադատի և բերնչտայնականի: Մեզ մնում է միայն անել յերկու հնարավոր յենթադրությունից մեկը: Կամ անարդար կերպով վիրավորված կողմ հանդիսանում է վոչ այլ վոք, քան ինքը՝ «Рабочее Дело»-ն (այդ հաստատվում է նրանով, վոր տասերորդ համարի յերկու հոդվածումն ել խոսքը միայն այն վիրավորանքների մասին է, վոր հասցրել են «Заря»-ն ու «Искра»-ն «Рабочее Дело»-յին): Այն ժամանակ ինչո՞վ բացատրել այն տարորինակությունը, վոր «Рабочее Дело»-ն, վորն այնքան համառորեն միշտ հրաժարվել է վորևե համերաշխությունից բերնչտայնականության հետ, չեր կարողանում պաշտպանել իրեն, առանց պաշտպանության մի խոսք ասելու «ամենամոլի բերնչտայնականների» և քննադատության ազատության դեմ: Կամ անիրավացիորեն վիրավորված են ինչ-վոր յերրորդ անձնավորություններ: Այդ դեպքում վորո՞նք կարող են լինել դրանց լռելու շարժառիթները:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր «Рабочее Дело»-ն շարունակում է այն տափկնոցի խաղը, վորով նա զբաղվել է (ինչպես ցույց կտանք ստորև) իր ծագման հենց սկզբից: Իսկ հետո ուշադրություն դարձրեք դրվատված «քննադատության ազատության» այս առաջին փաստական դրդապատճառի վրա: Իրոք նա խիստ ևեթ վերածվեց վո՛չ միայն ամեն մի քննադատության բացակայության, այլև առհասարակ ինքնուրույն դատողության բացակայության: Նույն այն «Рабочее Дело»-ն, վոր լռության է տալիս, ինչպես մի գաղտնի հիմանդություն (Ստարովերի դիպուկ արտահայտությամբ ասած), ռուսական բերնչտայնականությունը, այդ հիվանդության բուժման համար առաջարկում է պարզապես արտագրե՛լ հիվանդության գերմանական տարատեսակության դեմ ստեղծված վերջին գերմանական դեղատոմսը: Քննադատության ազատության փոխարեն—ստրկական... ավելի վատը՝ կապկայի՛ն նմանողականություն: Ժամանակակից միջազգային ոպորտունիզմի միանման սոցիալ-քաղաքական բովանդակությունն արտահայտվում է այս կամ այն տարբեր տարատեսակությամբ՝ ազգային առանձնահատկություններին համապատասխան: Մի յերկրում ոպորտունիստների խմբակը վաղուց ի վեր հանդես եր գալիս առանձին

դրոշակի տակ, մյուսում—ոպորտունիստներն արհամարհում էին թեորիան, գործնականորեն վարելով ռադիկալ-սոցիալիստների քաղաքականություն. երրորդում—հեղափոխական կուսակցության միքանի անդամները փախել են ոպորտունիզմի բանակը և աշխատում են իրենց նպատակներին հասնել վո՛չ թե բացահայտ պայքարով հանուն սկզբունքների և նոր տակտիկայի, այլ աստիճանական, աննկատելի և, եթե կարելի է այսպես արտահայտվել, իրենց կուսակցության անպատժելի՝ ապականմամբ. չորրորդում—հենց նույնպիսի վախտականները գործադրում են նույն յեղանակները քաղաքական սորկության խավարի մեջ և «լեգալ» ու «անլեգալ» գործունեության միանդամայն յուրատեսակ փոխհարաբերությունների պարագայում և այլն: Իսկ սկսել խոսել քննադատության և բերնշտայնականության ազատության մասին, վորպես ռուսական սոցիալ-դեմոկրատների միավորման պայմանի, և ընդամին չտալ այն բանի վերլուծությունը, թե ինչի մեջ է իսկապես արտահայտվել և ինչ առանձին պտուղներ է տվել ռուսական բերնշտայնականությունը,—այդ նշանակում է սկսել խոսել նրա համար, վոր վոչինչ չասես:

Փորձենք մենք ինքներս ասել, թեկուզ միքանի խոսքով, այն, ինչ վոր չկամեցավ ասել (կամ գուցե չկարողացավ ըմբռնել իսկ) «Рабочее Дело»-ն:

գ) ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս տեսակետից Ռուսաստանի հիմնական առանձնահատկությունն այն է, վոր, մի կողմից, բանվորական տարերային շարժման և, մյուս կողմից, առաջավոր հասարակական կարծիքի՝ դեպի մարքսիզմը շրջադարձ անելու հենց սկիզբն արդեն նշանավոր դարձավ բացահայտորեն այլասեռ տարրերի միացումով ընդհանուր դրոշակի տակ և ընդհանուր հակառակորդի (սոցիալ-քաղաքական հնացած աշխարհայացքի) դեմ կռվելու համար[22]: Մենք խոսում ենք «լեգալ մարքսիզմի» մեղրամսի մասին: Ընդհանրապես չափազանց որիգինալ մի յերևույթ եր այդ, վորի հնարավորությանը վոչ վոք չեր կարող նույնիսկ հավատալ 80-ական թվականներին կամ 90-ական թվականների սկզբում: Ինքնակալական մի յերկրում, մամուլի լիակատար սորկության պայմաններում, քաղաքական կատաղի ռեակցիայի դարաշրջանում, ռեակցիա, վոր հալածում եր քաղաքական դժգոհության ու բողոքի ամենաաննշան ծիլերն անդամ,—գրաֆինուրյան յենթակա դրականության մեջ հանկարծ իր համար ճանապարհ և հարթում հեղափոխական մարքսիզմի թեորիան, վոր շարադրվում եր յեզոպոսյան, բայց բոլոր «հետաքրքրվողների» համար հասկանալի լեզվով: Կառավարությունը սովորել եր վտանգավոր համարել միայն (հեղափոխական) նարոդովոլականության թեորիան, ենկատելով, ինչպես սովորաբար լինում է, նրա ներքին եվոլուցիան, ուրախանալով նրա դեմ ուղղված ամեն մի քննադատության առթիվ: Մինչ կառավարությունը կոթափվեր, մինչ գրաքննիչների և ժանդարմների ծանրաշարժ բանակը կլղտներ նոր թշնամուն և նրա վրա կհարձակվեր,—մինչ այդ՝ քիչ ժամանակ չանցավ (մեր ռուսական հաշվով): Իսկ այդ ժամանակի մեկը մյուսի հետևից լույս եյին տեսնում մարքսիստական գրքեր, հիմնվում եյին մարքսիստական ժուռնալներ և թերթեր, բոլորն անխտիր մարքսիստ եյին դառնում, մարքսիստներին չողոքորթում եյին, մարքսիստներին շոյում եյին, հրատարակիչները հիացած եյին մարքսիստական գրքերի արտակարգ արագ սպառումով: Հասկանալի է միանդամայն, վոր այս մոլուցքով չբշաղատված սկսնակ մարքսիստների մեջ գտնվեցին մեկից ավելի «գրողներ, վորոնք մեծամտեցին»...:

Ներկայումս այդ ժամանակաշրջանի մասին կարելի է խոսել հանդիսատ, վորպես անցյալի մասին: Վոչ վոքի համար գաղտնիք չէ, վոր մարքսիզմի կարճատև փթթումը մեր գրականության մակերևույթի վրա առաջ յեկավ ծայրահեղ մարդկանց միությամբ խիստ չափավորների հետ: Եյապես վերջիններս բուրժուական դեմոկրատներ եյին, և այս յեղբակցությունը (ակներևության աստիճան հաստատվեց նրանց հետագա «քննադատական» զարգացմամբ) վոմանք քիչ եր մնում անեյին դեռևս «դաշինքի» ամբողջության ժամանակ*):

Բայց յեթե այդպես է, արդյոք ամենամեծ պատասխանատվությունը հետագա «խռովության» համար չի՞ ընկնում հենց հեղափոխական սոցիալ-դեմոկրատների վրա, վորոնք այդ միության մեջ մտան ապագա «քննադատների»**) հետ: Այսպիսի հարց, նրա գրական պատասխանի հետ միասին, յերբեմն առիթ ենք ունենում լսելու այն մարդկանցից, վորոնք չափազանց ուղղագիծ են նայում գործին: Բայց այդ մարդիկ բոլորովին անարդարացի յեն: Ժամանակավոր դաշինքներից՝ թեկուզ և անհուսալի մարդկանց հետ՝ վախենալ կարող է միայն նա, ով ինքն իր վրա հույս չունի, և վոչ մի քաղաքական կուսակցություն գոյություն ունենալ չեր կարողանա առանց այդպիսի դաշինքների: Իսկ լեգալ մարքսիստների հետ միացումը ռուսական սոցիալ-դեմոկրատիայի՝ իր տեսակի առաջին իսկապես քաղաքական դաշինքն եր: Այդ դաշինքի շնորհիվ գարմանալի կերպով արագ հաղ-

*) Այստեղ նկատի է առնված Կ. Տուլինի հոդվածը Սորովյեի դեմ (տե՛ս Ցերկ., հատ. I, եջ 223. ռուս. հրատ.: Խմբ.)՝ կազմված այն ուֆերատից, վոր կրում եր «Մարքսիզմի արտացոլումը բուրժուական գրականության մեջ» վերնագիրը: (Հեղինակի ծանոթագրությունը 1908 թվի հրատարակության առթիվ: Խմբ.):

**) — այսինքն՝ լեգալ մարքսիստների հետ: Խմբ.:

թանակ տարվեց նարոդնիկության վերաբերմամբ և չափազանց լայն տարածում ստացան մարքսիզմի գաղափարները (թեպետ և դռեհկացրած ձևով)։ Ընդամենը դաշինքը կնքված եր վոչ բոլորովին առանց վորոշ «պայմանների»։ Ապացույց՝ գրաքննության կողմից 1895 թվին այրված մարքսիստական ժողովածուն—«Նյութեր Ռուսաստանի տնտեսական զարգացման հարցի մասին»[23]։ Յեթե լեգալ մարքսիստների հետ գրական համաձայնությունը կարելի յե համեմատել քաղաքական դաշինքի հետ, ապա այդ գիրքը կարելի յե համեմատել քաղաքական պայմանագրի հետ։

Պզումն, իհարկե, նրանից առաջ չեկավ, վոր «դաշնակիցները» բուրժուական դեմոկրատներ դուրս յեկան։ Ընդհակառակը, այս վերջին ուղղության ներկայացուցիչները բնական և ցանկալի դաշնակիցներն են սոցիալ-դեմոկրատիայի, վորչափով վոր հարցը վերաբերում է նրա դեմոկրատական խնդիրներին, վորոնք առաջին պլանն են մղվում Ռուսաստանի ժամանակակից դրությամբ։ Բայց սոցիալիստների համար այսպիսի դաշինքի անհրաժեշտ պայմանը բանվոր դասակարգի առաջ նրա շահերի ու բուրժուազիայի շահերի թշնամական հակադրությունը բացահայտելու լիակատար հնարավորությունն է։ Իսկ այն բերնչտայնականությունն ու «քննադատական» ուղղությունը, դեպի վորն ամբողջությամբ դիմեց լեգալ մարքսիստների մեծամասնությունը, խլում եր այդ հնարավորությունը և ապականում եր սոցիալիստական գիտակցությունը, դռեհկացնելով մարքսիզմը, քարոզելով սոցիալական հակասությունների բթացման թեորիան, անհեթեթություն հայտարարելով սոցիալական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, բանվորական շարժումն ու դասակարգային պայքարը վերածելով նեղ տրեդ-յունիոնիզմի և «ռեալիստական» պայքարի՝ մանր, աստիճանական ռեֆորմների համար։ Այդ միանգամայն հավասարազոր եր սոցիալիզմի ինքնուրույնության իրավունքի ժխտման՝ բուրժուական դեմոկրատիայի կողմից, հետևաբար և նրա գոյության իրավունքի ժխտման. գործնականում այդ նշանակում եր՝ սկսվող բանվորական շարժումը լիբերալների պոչը դարձնելու ձգտում։

Բնական է, վոր այսպիսի պայմաններում խզումն անհրաժեշտ եր։ Բայց Ռուսաստանի «որիգինալ» առանձնահատկությունը յերևան յեկավ նրանով, վոր այդ խզումը նշանակում եր սոցիալ-դեմոկրատների պարզ հեռացում բոլորի համար դյուրամատչելի և լայն տարածված «լեգալ» գրականությունից։ Նրա մեջ ամրացան «նախկին մարքսիստները», վորոնք կանգնեցին «քննադատության նշանի տակ» և գրեթե մոնոպոլիա ստացան մարքսիզմի «մանրածախսով» զբաղվելու։ «Ընդդեմ որթոդոքսության» և «կեցցե քննադատության ազատությունը» կոչերը (վոր այժմ կրկնվում են «Рабочее Дело»-յի կողմից) միանգամից մոդայի բառեր դարձան, և վոր այդ մոդային չդիմացան նաև գրաքննիչները ժանդարմների հետ միասին, այդ յերևում է այնպիսի փաստերից, ինչպես հռչակավոր (Հերոստրատի նման հռչակավոր) Բերնշտայնի գրքի յերեք ռուսական հրատարակությունների հրապարակ գալը կամ ինչպես Բերնշտայնի, պ. Պրոկոպովիչի և այլն գրքերի հանձնարարումը Զուբատովի կողմից («Искра» № 10)։ Այժմ սոցիալ-դեմոկրատների վրա ընկավ ինքնըստինքյան դժվարին ու նաև գուստ արտաքին արգելքներով աներևակայելի կերպով դժվարացած մի խնդիր, նոր հոսանքի դեմ պայքարելու խնդիրը։ Իսկ այդ հոսանքը չսահմանափակվեց գրականության բնագավառով։ Դեպի «քննադատությունը» կատարվող շրջադարձը զուգորդվեց դիմադարձ հակումով պրակտիկ-սոցիալ-դեմոկրատների կողմից դեպի «եկոնոմիզմը»։

Թե ինչպես է ծագել և աճել լեգալ քննադատության և անլեգալ եկոնոմիզմի կապն ու փոխադարձ կախումը, այս հետաքրքրական հարցը կարող եր առանձին հոդվածի առարկա դառնալ։ Մեզ համար բավական է, վոր նշենք այստեղ այդ կապի անտարակուսելի գոյությունը։ Տխրահռչակ «Credo»-ն[24] հենց այն պատճառով էլ այնպիսի արժանի հռչակ ձեռք բերեց, վոր նա անկեղծորեն ձևակերպեց այդ կապը և չաղակրատեց «եկոնոմիզմի» հիմնական քաղաքական տենդենցը՝ թող բանվորները տնտեսական պայքար մղեն (ավելի ճիշտ կլիներ ասել՝ տրեդ-յունիոնիստական պայքար, վորովհետև վերջինս ընդգրկում է նաև բանվորական սպեցիֆիկ քաղաքականությունը), իսկ մարքսիստական ինտելիգենցիան թող ձուլվի լիբերալների հետ քաղաքական «պայքարի» համար։ Տրեդ-յունիոնիստական աշխատանքը «ժողովրդի մեջ» դառնում եր այդ խնդրի առաջին կետի կատարումը, լեգալ քննադատությունը—յերկրորդ կետի։ Այս հայտարարությունն այնպիսի հիանալի զենք եր եկոնոմիզմի դեմ, վոր յեթե չլիներ «Credo»-ն, արժեր հնարել այն։

«Credo»-ն հնարված չեր, բայց այն հրապարակվել եր նրա հեղինակների կամքից անկախ և, թերևս, նույնիսկ նրանց կամքի հակառակ։ Գոնե տողերիս գրողը, վոր մասնակցել է նոր «ծրագիրը»*

*) Խոսքը 17-ի բոդոֆի մասին է «Credo»-յի դեմ։ Սույն տողերի գրողը մասնակցել է այդ բողոքը կազմելուն (1899 թվականի վերջը)։ Բողոքը «Credo»-յի հետ միասին տպագրվել և արտասահմանում 1900 թվականի գարնանը։ (Տե՛ս Ցերկ., հատ. II, ռուս. հրատ., էջ 473։ Խմբ.)։ Ներկայումս տիկին Կուսկովայի հոդվածից (կարծեմ «Былое»-յի մեջ) արդեն հայտնի յե, վոր «Credo»-յի հեղինակն ինքն է յեղել, իսկ այն ժամանակվա արտասահմանյան «եկոնոմիստների» մեջ ամենաաչքի ընկնող դերը խաղում եր պ. Պրոկոպովիչը։ (Այս ծանոթագրությունն ավելացրել է հեղինակը՝ 1908 թվականի հրատարակության առթիվ։ Խմբ.)։

լույս աշխարհ հանելուն, առիթ է ունեցել տրտունջներ և կշտամբանքներ լսելու այն մասին, վոր հեռուներից հայացքների շտապ կերպով կազմված ամփոփումը տարածվել է պատճեններով, ստացել է «Credo» պիտակը և նո՛ւյնիսկ մամուլի էջերն է ընկել բողոքի հետ միասին: Մենք շոշափում ենք այս միջադեպն այն պատճառով, վոր այս դրսևորում է մեր եկոնոմիզմի շատ հետաքրքրաշարժ մի գիծը՝ հրապարակայնության վախը: Այս հենց եկոնոմիզմի գիծն է ընդհանրապես և վոչ թե միայն «Credo»-յի հեղինակների· այդ գիծը յերևան է բերել և՛ «Рабочая Мысль»-ը, եկոնոմիզմի ամենաուղղակի և ամենաազնիվ կողմնակիցը, և՛ «Рабочее Дело»-ն (վրդովվելով «եկոնոմիական» դոկումենտների հրատարակման առթիվ «Vademecum»-ի մեջ)[25], և՛ Կիևի կոմիտեն, վոր մոտ յերկու տարի սրանից առաջ չցանկացավ թույլ տալ հրապարակելու իր profession de foi-ն*) նրա դեմ գրված հերքման հետ միասին**), և՛ եկոնոմիզմի շատ ու շատ առանձին ներկայացուցիչները:

Քննադատության ազատության կողմնակիցների ցուցահանած քննադատության այս վախը չի կարող բացատրվել միմիայն նենգամտությամբ (թեև յերբեմն, անտարակույս, նենգամտությունն էլ է դեր խաղում· ձեռնտու բան չե բանալ նո՛ր ուղղության դեռևս չամբացած ծիլերը հակառակորդների գրոհի համար): Վո՛չ, եկոնոմիստների մեծամասնությունը միանգամայն անկեղծորեն անբարյացակամ և նայում (և, հենց եկոնոմիզմի էության համաձայն, պետք է անբարյացակամ նայի) ամեն տեսակ թեորիական վեճերին, ֆրակցիոն տարաձայնություններին, քաղաքական լայն հարցերին, հեղափոխականներին կազմակերպելու նախագծերին և այլն: «Լա՛վ կլինի այդ ամենն արտասահմանին տալ»—ասաց ինձ մեկ անգամ բավականին հեռուստական եկոնոմիստներից մեկը, և նա դրանով արտահայտեց շատ տարածված (և դարձյալ զուտ տրեդ-յունիոնիստական) մի կարծիք.— մեր գործը բանվորական շարժումն է, այստեղի՛, մե՛ր տեղի բանվորական կազմակերպությունները, իսկ մնացածը դոկտրինյորների հերյուրանք է, «իդեոլոգիայի գերագնահատություն», ինչպես արտահայտվեցին «Искра»-յի 12-րդ համարում տպված նամակի հեղինակները, ներդաշնակ ձայնակցելով «Рабочее Дело»-յի 10-րդ համարին:

Այժմ հարց է ծագում.—նկատի առնելով ռուսական «քննադատության» և ռուսական բերնչտայնականության այդպիսի առանձնահատկությունները, ի՞նչ պետք է լինի նրանց խնդիրը, ովքեր գործով և վոչ թե խոսքով միայն կկամենային ոպորտունիզմի հակառակորդը լինել: Նախ, պետք եր հոգալ այն թեորիական աշխատանքի վերսկսման մասին, վորը նոր-նոր միայն սկսված եր լեռալ մարքսիզմի դարաշրջանով և վորն այժմ դարձյալ ընկնում եր անլեռալ գործիչների ուսերին· առանց այդպիսի աշխատանքի անհնարին եր շարժման հաջող առաջը: Յերկրորդ, անհրաժեշտ եր ակտիվ կերպով պայքարի յելնել լեռալ «քննադատության» դեմ, վոր խիստ ապականություն եր մտցնում մտքերի մեջ: Յերրորդ, պետք եր ակտիվ կերպով հանդես գալ խառնաշփոթության և տատանման դեմ գործնական շարժման մեջ, մերկացնելով և հերքելով ամեն մի փորձ՝ գիտակցաբար թե անգիտակցաբար նվաստացնելու մեր ծրագիրն ու մեր տակտիկան:

Վոր «Рабочее Дело»-ն չի արել վո՛չ մեկը, վո՛չ մյուսը, վո՛չ էլ յերրորդը, հայտնի յե այդ, և ստորև մենք հարկադրված կլինենք մանրամասնորեն պարզաբանելու այդ հայտնի ճշմարտությունը ամենատարբեր կողմերից: Իսկ այժմ մենք կամենում ենք միայն ցույց տալ, թե ինչ աղաղակող հակասության մեջ է գտնվում «քննադատության ազատության» պահանջը մեր հայրենական քննադատության և ռուսական եկոնոմիզմի առանձնահատկությունների նկատմամբ: Իսկապես, նայեցեք այն բանաձևի տեքստին, վորով «Արտասահմանի ռուսական սոցիալ-դեմոկրատների միությունը» հաստատեց «Рабочее Дело»-յի տեսակետը.

«Սոցիալ-դեմոկրատիայի հետագա գաղափարական զարգացման շահերից յելնելով մենք անպայման անհրաժեշտ ենք գտնում սոցիալ-դեմոկրատական թեորիայի քննադատության ազատությունը կուսակցական դրականության մեջ, վորչափով վոր քննադատությունը չի հակասում այդ թեորիայի դասակարգային և հեղափոխական բնույթին («Два с'езда», էջ 10):

Յեվ պատճառաբանությունը,—բանաձևն «իր առաջին մասում համընկնում է լյուբեկյան պարտայտագի բանաձևին Բերնչտայնի առթիվ»··· «Դաշնակիցները» պարզամտորեն չեն էլ նկատում, թե ինչպիսի՛ testimonium paupertatis (չքավորության վկայական) են ստորագրում նրանք իրենց համար այդ ընդորինակումով··· «բայց··· յերկրորդ մասում ավելի նեղ է սահմանափակվում քննադատության ազատությունը, քան այդ արել է լյուբեկյան պարտայտագը»:

Այսպես, ուրեմն, «Միության» բանաձևը ռուսական բերնչտայնականների դե՞մ է ուղղված: Այլապես կատարյալ անհեթեթությո՛ւն կլիներ Լյուբեկի հիշատակումը: Բայց ճիշտ չե այդ, վոր նա «խիստ սահմանափակում է քննադատության ազատությունը»: Գերմանացիներն իրենց հանոովերյան բանաձևով կետ առ կետ մերժեցին հենց այն

*) — «Հավատո հանգանակ»—իրենց քաղաքական համոզմունքների շարադրանքը: Խմբ·:

**) Վորքան մեզ հայտնի յե, Կիևի կոմիտեի կազմն այդ ժամանակվանից փոխվել է:

ուղղումները, վոր անում եր Բերնշտայնը, իսկ լյուբեկյան բանաձևով նախազգուշացում արին Բերնշտայնին անձամբ, նրա անունը տալով բանաձևի մեջ: Մինչդեռ մեր «ազատ» ընդորինակողները վոչ մի հրնչյունով չեն ակնարկում հատուկ ռուսական «քննադատության» և ռուսական եկոնոմիզմի վոչ մի արտահայտություն. լռության տակու այսպիսի պարադայում թեորիայի դասակարգային և հեղափոխական բնույթի սոսկ հիշատակումը կեղծ մեկնաբանություններ շատ ավելի լայն հնարավորություն է թողնում, մանավանդ յեթե «Միությունը» հրաժարվում է ոպորտունիզմի շարքը դասելու «այսպես կոչված եկոնոմիզմը» («Два с'езда», եջ 8, կետ I): Սակայն այս՝ հարևանցիորեն միայն: Իսկ դլխավորն այն է, վոր ոպորտունիստների դիրքերը հեղափոխական սոցիալ-դեմոկրատների վերաբերմամբ որամագծորեն հակադիր են Գերմանիայում և Ռուսաստանում: Գերմանիայում հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, ինչպես հայտնի յե, կողմնակից են յեղածի պահպանման՝ հին ծրագրի և տակտիկայի, վոր բոլորին հայտնի յե և բոլոր մանրամասնություններով պարզաբանված է շատ տասնամյակների փորձով: Իսկ «քննադատները» կամենում են փոփոխություններ մտցնել, և վորովհետև այդ քննադատները չնչին փոքրամասնություն են, իսկ նրանց ռեֆորմիստական ձգտումները խիստ յերկչոտ են, ապա ուրեմն կարելի յե հասկանալ այն շարժառիթները, վորոնցով մեծամասնությունը սահմանափակվում է «նորմուծության» չոր մերժումով: Իսկ մեզանում, Ռուսաստանում, քննադատներն ու եկոնոմիստներն են կողմնակից պահպանելու այն, ինչ վոր կա— «քննադատները» կամենում են, վորպեսզի իրենց շարունակեն մարքսիստ համարել և ապահովեն նրանց համար «քննադատության» այն «ազատությունը», վորից նրանք բոլոր իմաստներով ոգտվում եյին (վորովհետև նրանք եյապես յերբեք չեն ընդունել*) վորևե կուսակցական կապ, ասենք, մեզանում չի եղ յեղել բոլորի վրդմից ընդունված այնպիսի կուսակցական որգան, վորը կարողանար «սահմանափակել» քննադատության ազատության մասին բանաձևեր կազմելու...

*) Կուսակցական բացահայտ կապի և կուսակցական տրադիցիայի այս սոսկ բացակայությունն արդեն այնպիսի հիմնական տարբերություն է կազմում Ռուսաստանի և Գերմանիայի միջև, վորը կարծեք թե պետք է ամեն մի բանական սոցիալիստի նախազգուշացներ կույր նմանողությունից: Իսկ թե ինչ ստոիճանի յե հասնում Ռուսաստանում «քննադատության ազատությունը», ահավասիկ դրա նմուշը: Ռուս քննադատ պ. Բուլգակովն այսպիսի նկատողություն է անում ավստրիական քննադատ Հերցին. «Չնայած իր յեղրակացությունների ամբողջ անկախության, Հերցն այս կետում (կոոպերացիաների մասին), ըստ յերևույթին, այնուամենայնիվ, չափազանց կապված է զգում իրեն իր կուսակցության կարծիքներով և տարաձայնելով մանրամասնությունների նկատմամբ, չի վստահանում հրաժարվել ընդհանուր սկզբունքից» («Капитализм и земледелие», հատ. II, եջ 287): Քաղաքականապես

վել» քննադատության ազատությունը թեկուզ խորհրդով). եկոնոմիստները կամենում են, վոր հեղափոխականներն ընդունեն «չարժման լիակատար լիբերալությունը ներկայումս» («Рабочее Дело» № 10, եջ 25), այսինքն՝ գոյության «որինականությունն» այն բանի, ինչ վոր գոյություն ունի. վորպեսզի «իդեոլոգները» փորձ չանեն «չեղելու» չարժումը այն ուղուց, վոր «վորոշվում է նյութական ելեմենտների և նյութական միջավայրի փոխազդեցությամբ» («Искра»-յի 12-րդ հատորի «նամակը»), վորպեսզի ցանկալի համարեն մղել այն պայքարը, «վոր միայն հնարավորություն ունեն բանվորները մղելու տվյալ հանգամանքներում», իսկ հնարավոր համարել են այն պայքարը, «վոր նրանք իրոք մղում են տվյալ բոպեին» («Рабочая Мысль»-ի առանձին հավելված, եջ 14): Ընդհակառակը, մենք, հեղափոխական սոցիալ-դեմոկրատներս, դժգոհ ենք այս խոնարհումից տարերայնության առաջ, այսինքն՝ այն բանի առաջ, վոր կա «տվյալ բոպեին», մենք պահանջում ենք վերջին տարիներումս գերիշխող տակտիկայի փոփոխություն, մենք հայտարարում ենք, վոր «միավորվելուց առաջ և միավորվելու համար անհրաժեշտ է սկզբից վճռականորեն և վորոշակի կերպով սահմանազծվել» («Искра»-յի հրատարակության մասին արված հայտարարությունից*)): Մի խոսքով, գերմանացիները մնում են տվյալ շրջանակում, մերժելով փոփոխությունները. մենք պահանջում ենք տվյալի փոփոխությունը, մերժելով խոնարհվելն այդ տվյալի առաջ և հաշտությունը նրա հետ:

Այս «փոքրիկ» տարբերությունն է, վոր չե՞ն նկատել գերմանական բանաձևերի մեր «ազատ» ընդորինակողները:

դ) ԵՆԳԵԼՍԸ ԹԵՈՐԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դոգմատիզմ, դոկտրինյորություն», «կուսակցության վոսկրացումը անխուսափելի պատիժ է մտքի բռնի սրկման համար»,—սրանք են այն թշնամիները, վորոնց դեմ ասպետորեն կռվի յեն յելնում «քննադատության ազատության» ջատագովները «Рабочее Дело»-յում: Մենք շատ ուրախ ենք, վոր այս հարցը հերթի յե դրվում, և միայն կառաջարկեյինք լրացնել այն մի այլ հարցով:

սարկացված՝ պետության հպատակը, մի պետության, վորի մեջ բնակչության 999/1000-ը մինչև վոսկրների ծուծն անբարոյականացված է քաղաքական ծառայամտությամբ և կուսակցական պատվի ու կուսակցական կապի լիակատար անբմբռնողությամբ,—մեծամտորեն նկատողություն է անում սահմանադրական պետության քաղաքացուն չափազանց «կապված» լինելու համար կուսակցության կարծիքներով»: Մեր անվերջալ կազմակերպություններին միայն մի գործ է մնում—ձեռնարկել քննադատության ազատության մասին բանաձևեր կազմելու...

*) Տես Ցերկ., ռուս. հրատ. հ. IV, եջ 39: Խմբ.:

Իսկ դատավորնե՞րն ովքեր են։

Մեր առաջն է դրական հրատարակչության յերկու հայտարարություն։ Մեկը—«Ծրագիր ռուսական սոցիալ-դեմոկրատների միության պարբերական որդան «Рабочее Дело»-յի» («Рабочее Дело»-յի առաջին համարից արտատպություն)։ Մյուսը—«Աշխատանքի Ազատագրություն» Խմբի հրատարակությունների վերսկսման հայտարարությունը։ Յերկուսն ել կրում են իրենց վրա մի թվական՝ 1899 թ., յերբ «մարքսիզմի կրիզիսը» վաղուց արդեն սլակարդ եր դարձել։ Յեվ ի՞նչ։ Առաջին յերկում դուք իզուր պիտի փնտռեք ցուցում այդ յերևույթի մասին և վորոշ շարադրանք այն դիրքի, վոր մտադիր է բռնել նոր որդանն այդ հարցի վերաբերմամբ։ Վո՛չ այս ծրագրի մեջ և վո՛չ ել նրան կցված լրացումների մեջ, վոր Միության III համագումարն է ընդունել 1901 թվականին, վոչ մի խոսք չկա թեորիական աշխատանքի և նրա կենսական խնդիրների մասին ներկայումս («Два с'езда», էջ 15—18)։ Այս ամբողջ ժամանակի ընթացքում «Рабочее Дело»-յի խմբագրությունը մի կողմ եր թողնում թեորիական հարցերը, չնայած վոր նրանք հուզում եյին ամբողջ աշխարհի բոլոր սոցիալ-դեմոկրատներին։

Մյուս հայտարարությունն, ընդհակառակը, նախ և առաջ մատնանշում է, վոր վերջին տարիներս թուլացել է հետաքրքրությունը թեորիայի նկատմամբ, յեռանդագին պահանջում է «աշխուրջ ուշադրություն պրոլետարիատի հեղափոխական շարժման թեորիական կողմի վերաբերմամբ» և կոչ է անում «անխնա քննադատել բերնչատյանական և այլ հակահեղափոխական տենդենցները» մեր շարժման մեջ։ «Заря»-յի լույս տեսած համարները ցույց են տալիս, թե ինչպես է իրագործվել այդ ծրագիրը։

Յեվ այսպես, մենք տեսնում ենք, վոր մեծազորդ ֆրազները մտքի վոսկրացման դեմ և այլն՝ վարագուրում են անհոգությունն ու անոգնականությունը թեորիական մտքի զարգացման մեջ։ Ռուսական սոցիալ-դեմոկրատների որինակն առանձնապես ակնառու կերպով լուսաբանում է այն համայնվրոպական յերևույթը (վոր վաղուց արդեն նշված է նաև գերմանական մարքսիստների կողմից), վոր քննադատության տխրահռչակ ազատությունը վո՛չ թե նշանակում է մի թեորիայի փոխարինում մյուսով, այլ ազատություն՝ ամեն մի ամբողջական և մտածված թեորիայից, նշանակում է եկլեկտիզմ և անսկզբունքայնություն։ Ով վոր փոքրիշատե ծանոթ է մեր շարժման փաստական դրությանը, նա չի կարող չտեսնել, վոր մարքսիզմի լայն տարածմանը ուղեկցում եր վորոշ չափով թեորիական մակարդակի ցածրացում։ Շարժմանը, նրա գործնական նշանակության և գործնական հաջողությունների համար, քիչ մարդիկ չեյին հարում, վորոնք թեորիապես շատ քիչ եյին պատրաստված կամ նույնիսկ բոլորովին պատրաստված չեյին։ Դրանով իսկ կարելի յե դատել, թե տակտիկայի վորպիսի բացակայություն է ցուցաբերում «Рабочее Дело»-ն, յերբ հաղթական տեսքով առաջադրում է Մարքսի տուլյը՝ «իրական շարժման ամեն մի քայլ ավելի կարևոր է, քան թե մի դյուժին ծրագրեր»։ Կրկնել այս խոսքերը թեորիական խառնաշփոթության շրջանում, այդ միևնույնն է, թե թաղման թափորի ժամանակ ճչալ՝ «ինչքան տանեք, չի՛ հատնի»։ Բացի դրանից՝ Մարքսի այս խոսքերը վերցված են Գոթայի ծրագրի վերաբերյալ նրա նամակից, վորի մեջ նա խիստ պախարակում է սկզբունքների ձևակերպման մեջ թույլ տրված եկլեկտիզմը. յեթե արդեն անպայման հարկավոր եր միանալ,—գրում եր Մարքսը կուսակցության առաջնորդներին,—ապա պայմանագրեր կնքեցեք շարժման գործնական նպատակների բավարարման համար, բայց թույլ մի՛ տաք սկզբունքներով չարչիություն անել, մի՛ անեք թեորիական «զիջումներ»։ Ահա Մարքսի մտքի եյությունը, իսկ մեզանում գտնվում են մարդիկ, վորոնք, հանուն նրա, աշխատում են թուլացնել թեորիայի նշանակությունը։

Առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել նաև հեղափոխական շարժում։ Չի կարելի բավականաչափ պնդել այս մտքի վրա այնպիսի ժամանակ, յերբ ոպորտունիզմի մոդայական քարոզին դրկախառնվում է պրակտիկ գործունեության ամենանեղ ձևերով տարվելը։ Իսկ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի համար թեորիայի նշանակությունն ուժեղանում է յերեք հանգամանքով ևս, վորոնց մասին հաճախ մոռանում են, այն է, նախ՝ նրանով, վոր մեր կուսակցությունը նոր է միայն կազմավորվում, դեռ նոր է մշակում իր դեմքը և ամենևին դեռ չի մերջացրել իր հաշիվները հեղափոխական մտքի այլ ուղղությունների հետ, վորոնք սպառնում են շեղել շարժումը ճիշտ ուղուց։ Ընդհակառակը, հենց ամենավերջին ժամանակը նշանավոր դարձավ (ինչպես վաղուց արդեն նախազուշակում եր եկոնոմիստներին Ակսելրոդը) վոչ-սոցիալ-դեմոկրատական հեղափոխական ուղղությունների աշխուժացումով[26]։ Այսպիսի պայմաններում առաջին հայացքից «անկարևոր» սխալը կարող է առաջացնել ամենացավալի հետևանքներ, և միայն կարճատես մարդիկ կարող են անժամանակ կամ ավելորդ համարել ֆրակցիոն վեճերն ու յերանգավորումների խիստ տարբերումը։ Այս կամ այն «յերանգավորության» ամրացումից կարող է կախված լինել ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ապագան շատ ու շատ տարիներ։

Յերկրորդ, սոցիալ-դեմոկրատական շարժումը իր եյությամբ իսկ միջազգային է։ Դա միայն այն չի նշանակում, վոր մենք պետք է

պայքարենք ազգային շովինիզմի դեմ: Այդ նշանակում է նմանապես, որ յերիտասարդ յերկրում սկսվող շարժումը կարող է հաջող լինել միայն այն դեպքում, յերբ նա կենսագործում է ուրիշ յերկրների փորձը: Իսկ այդպիսի կենսագործման համար բավական չէ հասարակ ծանոթությունն այդ փորձի, կամ վերջին բանաձևերի սոսկ արտագրումը: Դրա համար անհրաժեշտ է գիտենալ քննադատորեն վերաբերվել այդ փորձին և ինքնուրույնորեն ստուգել այն: Ով որ իրեն պատկերացնի միայն, թե ինչ հսկայական չափերով է աճել և ճյուղավորվել ժամանակակից բանվորական շարժումը, նա կհասկանա, թե թեորիական ուժերի ու քաղաքական (նմանապես և հեղափոխական) փորձի որպիսի պաշար է հարկավոր այդ խնդիրն իրագործելու համար:

Ցերրորդ, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ազգային խնդիրներն այնպիսիք են, որոնք չեն յեղել վոչ մի սոցիալիստական կուսակցության առջև ամբողջ աշխարհում: Մենք ստորև առիթ կունենանք խոսելու քաղաքական և կազմակերպական այն պարտականությունների մասին, որ մեզ վրա յե դնում ամբողջ ժողովրդին ինքնակալության լծից ազատագրելու այդ խնդիրը: Իսկ այժմ մենք միայն կամենում ենք մատնանշել, որ առաջավոր մարտիկի դերը կատարել կարող է միայն այն կուսակցությունը, որ ղեկավարվում է առաջավոր թեորիայով: Իսկ դեթ փոքրիշատե կոնկրետ պատկերացնելու համար իրեն, թե ինչ է նշանակում այդ, թող ընթերցողը մտաբերի ռուսական սոցիալ-դեմոկրատիայի այնպիսի նախակարապետների մասին, ինչպես Հերցենը, Բելինսկին, Չերնիշևսկին և 70-ական թվականների հեղափոխականների վայլուն պլեադան. թող մտածի այն համաշխարհային նշանակության մասին, որ այժմ ձեռք է բերում ռուսական գրականությունը. թող... բայց այս ել բավական է:

Բերենք Ենգելսի նկատողությունները թեորիայի ունեցած նշանակության մասին սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ, որոնք վերաբերում են 1874 թվականին: Ենգելսն ընդունում է սոցիալ-դեմոկրատիայի մեծ պայքարի վո՛չ թե յերկու ձև (քաղաքական և տնտեսական),—ինչպես այդ ընդունված է անել մեզանում,—այլ յերեք, նրանց կողքին դնելով նաև թեորիական պայքարը: Նրա բարեմաղթությունը՝ գործնականորեն և քաղաքականապես ամրացած գերմանական բանվորական շարժմանն այնքան ուսանելի յե ժամանակակից հարցերի և վեճերի տեսակետից, որ ընթերցողը, հուսով ենք, չի տրտնջա մեզ վրա՝ յերկար մեջբերման համար, որ անում ենք «Der deutsche Bauernkrieg»*) բրոշյուրի առաջաբանից, բրոշյուր, որը վաղուց արդեն դարձել է բիբլիոգրաֆիական չափազանց հազվագյուտ մի բան.

«Գերմանական բանվորները յերկու եյական առավելություն ունեն Ցեվրոպայի մնացած բանվորների հանդեպ: Առաջինն այն է, որ նրանք պատկանում են Ցեվրոպայի ամենից ավելի թեորետիկ ժողովրդին և որ նրանք պահպանել են իրենց մեջ այն թեորիական խելահասությունը, որ գրեթե միանգամայն կորցրել են գերմանական այսպես կոչված «կրթված» դասակարգերը: Առանց նրան նախորդող գերմանական փիլիսոփայության, մանավանդ առանց Հեգելի փիլիսոփայության, յերբեք չեր ստեղծվի գերմանական գիտական սոցիալիզմը,—միակ գիտական սոցիալիզմը, որը յերբևիցե գոյություն է ունեցել: Այդ գիտական սոցիալիզմը յերբեք այն առատման բանվորների միս ու արյունը չեր դառնա, ինչպես այդ տեսնում ենք ներկայումս, յեթե նրանք չունենային թեորիական խելահասություն: Իսկ թե որքան անընդդրկելի մեծ է այդ առավելությունը, այդ ցույց է տալիս, մի կողմից, այն անտարբերությունն ամեն մի թեորիայի նկատմամբ, որ գլխավոր պատճառներից մեկն է անգլիական բանվորական շարժման դանդաղ առաջընթացության, չնայած առանձին արհեստների հիանալի կազմակերպությանը,—իսկ, մյուս կողմից, այդ ցույց է տալիս այն խառնափնթորությունն ու այն տատանումները, որ սերմանեց պրուդոնիզմը, իր սկզբնական ձևով ֆրանսացիների և բելգիացիների մոտ և իր ծաղրանկարային—Բակունինի տված—ձևով՝ իսպանացիների և իտալացիների մոտ:

«Յերկրորդ առավելությունը նրանումն է կայանում, որ գերմանացիները գրեթե ամենքից ուշ մասնակից յեղան բանվորական շարժմանը: Ինչպես որ գերմանական թեորիական սոցիալիզմը յերբեք չի մոռանա, որ նա կանգնած է Սեն-Սիմոնի, Ֆուրյեի և Ռուենի ուսերի վրա—յերեք մտածողների, որոնք, չնայած իրենց ուսմունքների ամբողջ ֆանտաստիկականությանն ու ամբողջ ուտոպիզմին, պատկանում են բոլոր ժամանակների մեծագույն մտածողների շարքին և որոնք հանճարեղորեն կանխահայտել են անթիվ քանակությամբ այնպիսի ճշմարտություններ, որոնց ճշտությունը մենք այժմ ապացուցում ենք գիտականորեն, այնպես ել գերմանական պրակտիկ բանվորական շարժումը յերբեք չպետք է մոռանա, որ նա զարգացել է անգլիական և ֆրանսական շարժման ուսերի վրա, որ նա հնարավորություն է ունեցել պարզապես իր ոգտին ծառայեցնելու նրանց թանդ գնված փորձը, խուսափելու այժմ նրանց սխալներից, որոնցից այն ժամանակ մեծ մասամբ չեր կարելի խուսափել: Վո՞ր տեղ կլինեյինք մենք այժմ առանց անգլիական տրեդ-յունիոնների և բանվորների ֆրանսական քաղաքական պայքարի օրինակի, առանց այն հսկայական զարկի, որ տվեց մանավանդ Փարիզի Կոմունան:

«Ի պատիվ գերմանական բանվորների պետք է ասել, որ նրանք հազվադեպ վարպետությամբ ոգտվեցին իրենց դրության նպաստավորությունից: Այն որվանից, յերբ գոյություն ունի բանվորական շարժումը, առաջին անգամն է, որ պայքարը մղվում է պլանաչափ կերպով իր բոլոր յերեք ուղղություններով, որոնք համաձայնեցված և կապակցված են միմյանց հետ—թեորիական, քաղաքական և գործնական-տնտեսական (դիմադրություն կապիտալիստներին): Այս, այսպես ասած, համակենտրոն հարձակման մեջ է հենց գերմանական շարժման ուժն ու անհաղթելիությունը:

«Մի կողմից, իրենց այս նպաստավոր դրության հետևանքով, մյուս կողմից, անգլիական շարժման կղզիական առանձնահատկությունների և ֆրանսական բռնի

*) Dritter Abdruck. Leipzig 1875. Verlag der Genossenschaftsbuchdruckerei. («Գյուղացիական պատերազմը Գերմանիայում»: Յերրորդ հրատարակություն: Լայպցիգ, 1875 թվ.: Ընկերական հրատարակչության հրատարակություն: Խմբ.):

ճնշման հետևանքով, գերմանական բանվորները ավյալ բոպեին պրոլետարական պայքարի գլուխ են կանգնած: Թե դեպքերը վորքան յերկար թույլ կտան նրանց զբաղեցնելու այդ պատվավոր պոստը, այդ չի կարելի գուշակել: Բայց քանի դեռ նրանք կանգնած կլինեն այդ պոստում, նրանք, պետք է հուսալ, վոր կկատարեն, ինչպես վայել է, իրենց վրա դրված պարտականությունները: Դրա համար պահանջվում է պայքարի և ագիտացիայի բոլոր բնագավառներում ուժերի կրկնակի լարում: Մանավանդ առաջնորդների պարտականությունը պետք է լինի այն, վոր ավելի ու ավելի լուսավորեն իրենց՝ բոլոր թեորիական հարցերի մեջ, ավելի ու ավելի ազատագրվեն հին աշխարհայացքին պատկանող տրադիցիոն ֆրազների ազդեցությունից և միշտ նկատի ունենան, վոր սոցիալիզմը, այն որվանից, յերբ այն գիտություն դարձավ, պահանջում է, վոր նրա հետ վարվեն վորպես գիտության հետ, այսինքն՝ ուսումնասիրեն այն: Այս կերպ ձեռք բերած, ավելի ու ավելի պարզվող գիտակցությունն անհրաժեշտ է տարածել բանվորական մասսաների մեջ, ավելի ու ավելի յեռանդով, ավելի ու ավելի ամուր համախմբել կուսակցության կազմակերպությունն ու արհեստակցական միությունների կազմակերպությունը...

«...Եթե գերմանական բանվորները նույնպես առաջ գնալու լինեն, ապա նրանք վո՛չ թե կընթանան շարժման գլուխ անցած—այդ ամենևին էլ շարժման շահերին չի համապատասխանում, վոր մեկ վորևե ազգի բանվորներն ընթանան նրա գլուխ անցած—այլ պատվավոր տեղ կդրավեն մարտիկների գծում. և նրանք կատարելապես զինված կլինեն, յեթե անսպասելի ծանր փորձությունները կամ մեծ դեպքերը պահանջեն նրանցից ավելի բարձր արիություն, ավելի բարձր վճռականություն ու յեռանդ»:

Ենգելսի խոսքերը մարգարեական դուրս յեկան: Միքանի տարի անց գերմանական բանվորներին վիճակվեցին անսպասելի ծանր փորձություններ՝ սոցիալիստների դեմ հրատարակված բացառիկ որենքի ձևով: Յեվ գերմանական բանվորներն իրոք դիմավորեցին նրանց կատարելապես սպառազինված և կարողացան հաղթականորեն դուրս գալ նրանցից:

Ռուսական պրոլետարիատը պետք է յենթարկվի անհամեմատ ե՛լ ավելի ծանր փորձությունների, պետք է տեղի ունենա կռիվ մի հրեշի հետ, վորի համեմատությամբ բացառիկ որենքը սահմանադրական յերկրում իսկական թղուկ է թվում: Պատմությունն այժմ մեր առջև դրել է մերձավորագույն մի խնդիր, վոր ամենահեղափոխականն է հանդիսանում վորևե այլ յերկրի պրոլետարիատի բոլոր մերձավորագույն խնդիրներից: Այդ խնդրի իրականացումը, վո՛չ միայն յեվրոպական, այլ նաև (կարող ենք մենք այժմ ասել) ասիական ռեակցիայի ամենահզոր նեցուկի խորտակումը ռուսական պրոլետարիատին կդարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանգարդ: Յեվ մենք իրավունք ունենք հուսալու, վոր կհասնենք այդ պատվավոր կոչման, վորին արժանացել են արդեն մեր նախորդները, 70-ական թվականների հեղափոխականները, յեթե մենք կարողանանք վոգևորել մեր հաղարապատիկ ավելի լայն ու խոր շարժումը նույնպիսի անձնվեր վճռականությամբ ու յեռանդով:

II

ՄԱՍՍԱՆԵՐԻ ՏԱՐԵՐԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԳԻՏԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ասացինք, վոր մեր շարժումը, վոր շատ ավելի լայն է ու խոր, քան 70-ական թվականների շարժումը, անհրաժեշտ է վոգևորել նույնպիսի անձնվեր վճռականությամբ ու յեռանդով, ինչպես այն ժամանակ: Իրոք, մինչև այժմ, թվում է, դեռևս վոչ վոք չի տարակուսել, վոր ժամանակակից շարժման ուժը մասսաների (և, գլխավորապես, արդյունաբերական պրոլետարիատի) արթնացումն է, իսկ նրա թուլությունը—ղեկավար-հեղափոխականների գիտակցականության և ձևներեցության պակասությունը:

Սակայն ամենավերջին ժամանակս չշմեցնող դյուտ է արվել, վոր սպառնում է գլխիվայր շրջել բոլոր մինչև որս իշխած հայացքները ավյալ հարցի վերաբերյալ: Այդ դյուտն արել է «Рабочее Дело»-ն, վորը, բանակռվելով «Искра»-յի և «Заря»-յի հետ, չսահմանափակվեց սոսկ մասնավոր առարկություններով, այլ փորձեց «ընդհանուր տարաձայնությունը» վերածել ավելի խորը արմատի—այն է՝ «տարերային և գիտակցական «պլանաչափ» եյլեմենտի համեմատական նշանակության տարբեր դնահատության»: «Рабочее Дело»-յի մեղադրական թեզիսն ասում է. «զարգացման ոբյեկտիվ կամ տարերային եյլեմենտի նշանակությանն նվազեցում»*): Մենք կասենք այդ առթիվ. յեթե «Искра»-յի և «Заря»-յի բանակռիվը նույնիսկ բոլորովին չտար վոչ մի այլ արդյունք, բացի նրանից, վոր դրդեց «Рабочее Дело»-յին խելամուտ լինել այս «ընդհանուր տարաձայնությանը», ապա հենց միայն այդ արդյունքը մեզ խիստ կզոհացներ. այն աստիճանի բազմանշանակալից է այդ թեզիսը, այն աստիճանի պայծառ լույս է սփռում նա ռուսական սոցիալ-դեմոկրատների մեջ գոյություն ունեցող ժամանակակից թեորիական և քաղաքական տարաձայնությունների ամբողջ եյության վրա:

Ահա թե ինչու գիտակցականության և տարերայնության հարաբերության հարցը ահագին ընդհանուր հետաքրքրություն է ներկա-

*) «Рабочее Дело» № 10, սեպտ. 1901 թ., եջ 17 և 18: Ընդգծումը «Рабочее Дело»-յինն է:

յացնում, և այդ խնդրի վրա պետք է կանգ առնել ամբողջ մանրամասնությամբ:

ա) ՏԱՐԵՐԱՅԻՆ ՎԵՐԵԼՔԻ ՍԿԻԶԲԸ

Նախընթաց գլխում մենք նշեցինք, որ 90-ական թվականների կեսում ռուսական կրթված յերիտասարդությունը գլխովին տարված եր մարքսիզմի թեորիայով: Նույնպիսի համատարած բնույթ ստացան նույն ժամանակներում բանվորական գործադուլները 1896 թվականի պետերբուրգյան հռչակավոր արդյունաբերական պատերազմից հետո: Նրանց ծավալումն ամբողջ Ռուսաստանում ակներև վկայում եր նորից բարձրացող ժողովրդական շարժման խորության մասին, և յեթե արդեն խոսելու լինենք «տարերային ելեմենտի» մասին, ապա, իհարկե, հենց այդ գործադուլային շարժումն է, որ ստիպված կլինենք նախ և առաջ վորպես տարերային համարելու: Բայց չե՞ որ տարերայնություն ել կա, տարերայնություն ել: Գործադուլներ Ռուսաստանում լինում եյին նաև 70-ական և 60-ական թվականներին (և մինչև անգամ XIX դարի առաջին կեսում), ուղեկցվելով մեքենաների «տարերային» վոչնչացմամբ և այլն: Այդ «բունտերի» համեմատությամբ՝ 90-ական թվականների գործադուլները կարելի յե նույնիսկ «գիտակցական» անվանել—այն աստիճանի նշանակալից է այն քայլառաջը, որ այդ ժամանակամիջոցում արել եր բանվորական շարժումը: Այդ ցույց է տալիս մեզ, որ «տարերային ելեմենտը» ներկայացնում է, եյապես, վոչ այլ ինչ, բայց յեթե գիտակցականության սաղմնային ձևը: Յեվ պրիմիտիվ բունտերն արդեն արտահայտում եյին գիտակցականության վորոշ արթնացում. բանվորները կորցնում եյին վաղեմի հավատը իրենց ճնշող կարգերի անսասանության նկատմամբ, սկսում եյին... չեմ ասի հասկանալ, այլ զգալ կոլեկտիվ դիմադրության անհրաժեշտությունը և վճռականորեն հրաժարվում եյին ստրկական հնազանդությունից իշխանության հանդեպ: Բայց այդ, այնուամենայնիվ, շատ ավելի հուսահատության և վրեժի արտահայտություն եր, քան պայքար: 90-ական թվականների գործադուլները մեզ շատ ավելի գիտակցականության նշույլներ են ցույց տալիս. վորոշակի պահանջներ են առաջադրվում, նախապես հաշվի յե առնվում, թե վոր մոմենտն է ավելի հարմար, քննության են առնվում հայտնի դեպքերը և ուրիշ վայրերի որինակները և այլն: Յեթե բունտերը պարզապես ճնշված մարդկանց ապստամբություններ եյին, ապա սիստեմատիկ գործադուլները դասակարգային պայքարի սաղմերն եյին արտահայտում արդեն, բայց հենց միայն սաղմերը: Ինքնըստինքյան

վերցրած՝ այդ գործադուլները տրեդ-յունիոնիստական պայքար եյին, բայց դեռևս վոչ սոցիալ-դեմոկրատական, նրանք բանվորների և տերերի հակամարտության արթնացման նշան եյին, բայց բանվորները չունեյին և չեյին ել կարող ունենալ այն գիտակցությունը, վոր իրենց շահերն անհաշտորեն հակադիր են ժամանակակից ամբողջ քաղաքական և հասարակական կարգին, այսինքն՝ սոցիալ-դեմոկրատական գիտակցություն: Այդ իմաստով, 90-ական թվականների գործադուլները, չնայած հսկայական առաջադիմությանը՝ համեմատած «բունտերի» հետ, մնում եյին զուտ տարերային շարժում:

Մենք ասացինք, որ սոցիալ-դեմոկրատական գիտակցություն բանվորները չեյին ել կարող ունենալ: Այդ կարող եր բերվել միայն դրսից: Բոլոր յերկրների պատմությունը վկայում է, որ բացառապես իր սեփական ուժերով բանվոր դասակարգն ի վիճակի յե մշակելու միայն տրեդ-յունիոնիստական գիտակցություն, այսինքն՝ համոզմունք, որ անհրաժեշտ է համախմբվել միությունների մեջ, պայքար մղել տերերի դեմ, կառավարությունից պահանջել ու գլուխ բերել բանվորների համար անհրաժեշտ այս կամ այն որենքների հրատարակում և այլն*): Իսկ սոցիալիզմի ուսմունքն աճել է փիլիսոփայական, պատմական, տնտեսական այն թեորիաներից, վորոնք մշակվել են ունևոր դասակարգերի կրթված ներկայացուցիչների, ինտելիգենցիայի կողմից: Արդի գիտական սոցիալիզմի հիմնադիրները, Մարքսն ու Ենգելսը, իրենք ել, իրենց սոցիալական դրությամբ, բուրժուական ինտելիգենցիային եյին պատկանում: Ճիշտ նույնպես և Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատիայի թեորիական ուսմունքը ծագել է բանվորական շարժման տարերային աճումից միանգամայն անկախ, ծագել է, վորպես հեղափոխական-սոցիալիստական ինտելիգենցիայի մտքի զարգացման բնական և անխուսափելի արդյունք: Այդ ժամանակում, վորի մասին խոսվում է, այսինքն՝ 90-ական թվականների կեսում, այդ ուսմունքը «Աշխատանքի Ազատագրություն» խմբի վոչ միայն արդեն լիովին ձևավորված ծրագիրն եր, այլև նա իր կողմն եր նվաճել Ռուսաստանի հեղափոխական յերիտասարդության մեծամասնությունը:

Այսպիսով միաժամանակ գոյություն ունեյին թե՛ բանվորական մասսաների տարերային արթնացումը, արթնացում գիտակցական կյանքի և գիտակցական պայքարի համար, և թե՛ սոցիալ-դեմոկրա-

*) Տրեդ-յունիոնիզմն ամենևին չի բացառում ամեն մի «քաղաքականություն», ինչպես կարծում են յերբեմն: Տրեդ-յունիոնները միշտ մղել են վորոշ (բայց վոչ սոցիալ-դեմոկրատական) քաղաքական ագիտացիա և պայքար: Տրեդ-յունիոնիստական և սոցիալ-դեմոկրատական քաղաքականության տարբերության մասին մենք կասենք հետևյալ գլխում:

տական թեորիայով զինված հեղափոխական յերիտասարդության առկայությունը, վոր ուժեղ կերպով ձգտում եր մոտենալ բանվորներին: Ընդսմին առանձնապես կարևոր է հաստատել այն հաճախ մոռացվող (և համեմատաբար քիչ հայտնի) վիճակը, վոր այդ ժամանակաշրջանի առաջին սոցիալ-դեմոկրատները, յեռանդագին զբաղվելով տնտեսական ագիտացիայով—(և լիովին հաշվի առնելով այն ժամանակ դեռևս ձեռագիր «Ագիտացիայի մասին» բրոշյուրի այս տեսակետից իրոք ողտակար ցուցումները),—վո՛չ միայն իրենց միակ խնդիրը չեին համարում այն, այլ, ընդհակառակը, հենց սկզբից առաջադրում եին թե ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալայն պատմական խնդիրներն ընդհանրապես և թե ինքնակալությունը տապալելու խնդիրն առանձնապես: Այսպես, որինակ, պետերբուրգյան սոցիալ-դեմոկրատների այն խումբը, վոր հիմնել է «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը», դեռևս 1895 թ. վերջում կազմել եր «Рабочее Дело» անունով լրագրի առաջին համարը: Տպագրության համար միանգամայն պատրաստ այդ համարը ժանդարմները բռնեցին խմբի անդամներից մեկի՝ Անատ. Ալեքս. Վանեյեվի*) մոտ 1895 թ. դեկտեմբերի 8-ից լույս 9-ի գիշերվա հարձակման ժամանակ, և առաջին Ֆորմացիայի «Рабочее Дело»-ին չվիճակվեց լույս տեսնել: Այդ լրագրի առաջնորդողը (վոր դուցե մի 30 տարի հետո վոստիկանության դեպարտամենտի արխիվներից դուրս հանի վորևե «Русская Старина») ուրվագծում եր բանվոր դասակարգի պատմական խնդիրները Ռուսաստանում և այդ խնդիրներից գլխավորը համարում եր քաղաքական ազատության նվաճումը: Այնուհետև կար «Ինչի՞ մասին են մտածում մեր մինիստրները» հոդվածը, վոր նվիրված եր Գրագիտության Կոմիտեների ջախջախմանը՝ վոստիկանության կողմից, և մի շարք թղթակցություններ վո՛չ միայն Պետերբուրգից, այլև Ռուսաստանի այլ վայրերից (որինակ, բանվորների ջարդի մասին Յարոսլավլի նահանգում): Այսպիսով 90-ական թվականների ռուսական սոցիալ-դեմոկրատների այս՝ յեթե չենք սխալվում՝ «առաջին փորձը» նեղ-տեղային, առավել ևս «տնտեսական» բնույթ կրող մի լրագիր չեր, վոր ձգտում եր գործադուլային պայքարը միացնել ինքնակալության դեմ ուղղված հեղափոխական շարժման հետ և սոցիալ-դեմոկրատիային ոժանդակելու դրավել ռեակցիոն խավարամտության քաղաքականու-

*) Ա. Ա. Վանեյեվը վախճանվեց 1899 թվականին Արևելյան Սիբիրում, թոքախտից, վոր նա ստացել եր նախնական կալանավայրում մենավոր բանտարկության ժամանակ: Ուստի և մենք հնարավոր համարեցինք հրատարակել տեքստում բերված տեղեկությունները, վորոնց ճշտությունը մենք յերաշխավորում ենք, վորովհետև նրանք ստացված են Ա. Ա. Վանեյեվին անմիջականորեն և մոտիկից ճանաչող անձերից:

թյան կողմից բոլոր ճնշվածներին: Յեվ վոչ վոք, ով գեթ փոքրիշատե ծանոթ է այն ժամանակվա շարժման կացությանը, չի տարակուսի, վոր նման լրագիրը թե՛ մայրաքաղաքի բանվորների, թե՛ հեղափոխական ինտելիգենցիայի լիակատար համակրանքին կհանդիպեր և ամենալայն տարածում կստանար: Իսկ ձեռնարկության անհաջողությունն ապացուցեց միայն, վոր այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատները չկարողացան բավարարել մոմենտի կենսական պահանջը՝ հեղափոխական փորձի և գործնական պատրաստականության պակասության հետևանքով: Նույնը պետք է ասել նաև «С.-Петербургский Рабочий Листок»-ի մասին և մանավանդ «Рабочая Газета»-յի և 1898 թվի գարնանը կազմված Ռուս. ՍԴԲԿ «Манифест»-ի մասին: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մենք չենք եկ մտածում մեղադրելու այն ժամանակվա գործիչներին այդ անպատրաստականության համար: Բայց շարժման փորձից ոգտվելու և այդ փորձից գործնական դասեր հանելու համար անհրաժեշտ է, վոր մեզ լիակատար հաշիվ տանք այս կամ այն պակասության պատճառների և նշանակության մասին: Ուստի խիստ կարևոր է հաստատել, վոր 1895—1898 թ. թ. գործող սոցիալ-դեմոկրատների մի մասը (դուցե և մեծամասնությունը) միանգամայն արդարացի կերպով հնարավոր եին համարում հենց այն ժամանակ, «տարերային» շարժման հենց սկզբին, հանդես գալ ամենալայն ծրագրով և մարտական տակտիկայով*): Իսկ հեղափոխականների մեծամասնության անպատրաստականությունը, միանգամայն բնական յերևույթ լինելով, վոչ մի առանձին վախ ներշնչել չեր կարող: Քանի վոր խնդիրների դրումը ճիշտ եր, քանի վոր յեռանդ կար այդ խնդիրների իրագործման կրկնակի փորձերի համար,—ժամանակավոր

*) Իրենց «նամակում ռուսական սոցիալ-դեմոկրատական որգաններին» («Искра» № 12) եկոնոմիստները հայտարարում են. «Բացասաբար վերաբերվելով 90-ական թվականների վերջի սոցիալ-դեմոկրատների գործունեությանը, «Искра»-ն անգիտանում է, վոր այն ժամանակ պայմաններն այլ աշխատանքի համար բացակայում եին, բացի մանր պահանջների համար մղվող պայքարից»: Տեքստում բերված փաստերն ապացուցում են, վոր «պայմանների բացակայության» մասին արվող այս պնդումը տրամագծորեն հակադիր է ճշմարտության: 90-ական թվականների վո՛չ միայն վերջում, այլև կեսում միանգամայն տակա բոլոր պայմանները կային այլ աշխատանքի համար, բացի հանուն մանր պահանջների պայքարից, բոլոր պայմանները, բացի զեկավարների բավականաչափ պատրաստությունից: Յեվ ահա փոխանակ բացարձակորեն ընդունելու մեր, իդեոլոգներիս, զեկավարներիս պատրաստության այս պակասությունը,—«եկոնոմիստները» կամենում են ամեն ինչ բարդել «պայմանների բացակայության», նյութական միջավայրի ազդեցության վրա, միջավայրի, վոր վորոշում է այն ուղին, վորից շարժումը չի կարող շեղվել վոչ մի իդեոլոգի կողմից: Ի՞նչ է այս, յեթե վոչ սարկամտություն տարերայնության առաջ, յեթե վոչ «իդեոլոգների» սիրահարվածություն իրենց թերությունների վրա:

անհաջողությունները կես-աղետ էին: Հեղափոխական փորձառությունն ու կազմակերպչական ճարպկությունը ձեռք բերելու բաներ են: Միա՛ն թե մարդ փափագ ունենա իր մեջ մշակելու պահանջվող հատկությունները: Միա՛ն թե լինի թերությունների գիտակցություն, որ հեղափոխական գործում հավասարազոր է ուղղման ավելի քան կեսին:

Բայց կես-աղետը իսկական աղետ դարձավ, երբ այդ գիտակցությունն սկսեց խավարել (իսկ այդ շատ կենդանի էր վերը հիշված խմբերի գործիչների մոտ), երբ երևան եկան մարդիկ, և անդամ սոցիալ-դեմոկրատական որդաններ, որոնք պատրաստ էին թերությունը դարձնել առաքինություն, որոնք նույնիսկ փորձ արին թեռրիպես հիմնավորելու իրենց ստրկամտությունն ու խոնարհվելը տաբերայնության առաջ: Ժամանակն ե հանրագումարը տալու այս ուղղության, որի բովանդակությունը շատ անճիշտ ե բնորոշվում նրա արտահայտության համար չափազանց նեղ «եկոնոմիզմ» հասկացողությամբ:

Բ) ՏԱՐԵՐԱՑՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԽՈՆԱՐՀՎԵԼԸ: «РАБОЧАЯ МЫСЛЬ»

Նախքան այդ խոնարհվելու գրական արտահայտություններին անցնելը, նշենք հետևյալ բնորոշ փաստը (որ վերը հիշված աղբյուրն ե հաղորդել մեզ),—որը որոշ լույս ե սփռում այն հանգամանքի վրա, թե ինչպես Պետերբուրգում գործող ընկերների շրջանում ծագում և աճում եր ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ապագա յերկու ուղղությունների յերկպառակությունը: 1897 թվականի սկզբում Ա. Ա. Վանեյեվին և նրա ընկերներից վոմանց վիճակվեց, աքսոր ուղարկվելուց առաջ, մասնակցել մի մասնավոր ժողովի, որտեղ հավաքվել եյին «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միության» «ծեր» և «յերիտասարդ» անդամները: Զրույցը գլխավորապես կազմակերպության մասին եր և մասնավորապես հենց այն «բանվորական դանձարկղի կանոնադրության», որ իր վերջնական ձևով տպագրված ե «Листок Работника»-յի № 9—10-ում (եջ 46): «Ծերունիների» («դեկաբրիստների», ինչպես այն ժամանակ կատակով անվանում եյին նրանց Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատները) և «յերիտասարդներից» վոմանց միջև (որոնք հետագայում մոտ մասնակցություն ունեցին «Рабочая Мысль»-ին) իսկույն ևեթ յերևան յեկավ խիստ տարաձայնություն ու բորբոքվեց տաք բանավեճ: «Յերիտասարդները» պաշտպանում եյին կանոնադրության գլխավոր հիմունքներն այն ձևով, ինչ ձևով որ այն տպագրված ե: «Ծերունիներն» ասում եյին, որ մեզ նախ և առաջ ամենևին այդ չի հարկավոր, այլ «Պայքարի միության» ամրապնդումը որպես հեղափոխականների կազմակերպություն, որին պետք ե յենթարկվեն բանվորական դանձարկղները, ուսանող յերիտասարդության մեջ պրոպագանդա մղող խմբակները և այլն: Ինքնըստինքյան հասկանալի յե, որ վիճաբանողները հեռու եյին այն մտքից, թե այդ տարաձայնությունը սկիզբն ե տարամիտման, այլ, ընդհակառակը, համարում եյին այն յեզակի և պատահական յերևույթ: Բայց այս փաստը ցույց ե տալիս, որ «եկոնոմիզմի» ծագումն ու ծավալումը Ռուսաստանում ևս չի ընթացել առանց պայքարի «ծեր» սոցիալ-դեմոկրատների դեմ (այդ հաճախ մոռանում են այժմյան եկոնոմիստները): Ցեվ յեթե այդ պայքարը մեծ մասամբ չի թողել «դոկումենտային» հետքեր, դրա պատճառն այն և միայն, որ աշխատող խմբակների կազմը փոխվում եր անհամաչափորեն հաճախ, չեր սահմանվում վոչ մի հաջորդականություն, ուստի և տարաձայնությունները վոչ մի դոկումենտում չեյին արձանագրվում:

«Рабочая Мысль»-ի ծագումը լույս աշխարհ հանեց եկոնոմիզմը, բայց նույնպես վոչ միանգամից: Պետք ե կոնկրետ պատկերացնել բազմաթիվ ռուսական խմբակների աշխատանքի պայմաններն ու կյանքի կարճատևությունը (իսկ կոնկրետ պատկերացնել այն կարող ե միայն նա, ով ապրել ե այդ)՝ հասկանալու համար, թե վորքան շատ պատահական հանգամանքներ կային նոր ուղղության հաջողության, թե անհաջողության մեջ տարբեր քաղաքներում և վորքան յերկար ժամանակ այդ «նորի» վո՛չ կոդմնակիցները, վո՛չ հակառակորդները չեյին կարող, տառացի կերպով վո՛չ մի հնարավորություն չունեյին վորոշելու՝ իրո՞ք առանձին ուղղություն ե այդ, թե պարզապես առանձին անձերի անպատրաստվածության արտահայտություն: Որքանակ՝ «Рабочая Мысль»-ի առաջին հեկտոգրաֆած համարները նույնիսկ միանգամայն անհայտ մնացին սոցիալ-դեմոկրատների ահագին մեծամասնությանը, և յեթե մենք այժմ կարողանում ենք հենվել նրա առաջին համարի առաջնորդողի վրա, ապա միայն շնորհիվ այն հանգամանքի, որ այն արտատպել ե իր հոդվածում («Листок Работника», № 9—10, 47 և հետևյալ եջերը) Վ. Ի.-ն, որը, իհարկե, առնթ բաց չթողեց յեռանդով—չափն անցնող յեռանդով—գովաբանելու նոր լրագիրը, որ այնքան խիստ տարբերվում եր վերը մեր հիշած լրագրերից և լրագրերի նախագծերից*): Իսկ այդ առաջնորդողի վրա արժե

*) Ի դեպ, այս գովասանքը «Рабочая Мысль»-ի հասցեին 1898 թ. նոյեմբերին, յերբ եկոնոմիզմը, հատկապես արտասահմանում, լիովին վորոշվեց, ծագում եր հենց

կանգ առնել—այնքան ցայտուն կերպով է նա արտահայտել «Рабочая Мысль»-ի և առհասարակ եկոնոմիզմի ամբողջ վոգին:

Մատնանշելով այն հանգամանքը, վոր կապույտ թևածալ (обшлаг) ունեցող ձեռքը*) բանվորական շարժման զարգացումը չի կարող կասեցնել, առաջնորդողը շարունակում է. «...Այդպիսի կենսունակությունը բանվորական շարժումը պարտական է նրան, վոր բանվորն ինքն է վերջապես ձեռնարկում իր բախտի տնօրինմանը, խլելով այդ բախտը ղեկավարների ձեռքից», և այս հիմնական թեզիսը շարունակում է մանրամասնորեն զարգացվել: Իրոք, ղեկավարները (այսինքն՝ սոցիալ-դեմոկրատները, Պայքարի միության կազմակերպիչները) վոտիկանության կողմից, կարելի յե ասել, խլվեցին բանվորների ձեռքից**),—իսկ բանն այնպես է ներկայացվում, թե իբր բանվորները պայքար են մղել այդ ղեկավարների դեմ և աղատվել նրանց լծի՛ց: Փոխանակ կոչելու առաջ, դեպի հեղափոխական կազմակերպության ամրապնդումն ու քաղաքական գործունեության լայնացումը, սկսեցին կոչել հետ, դեպի սոսկ տրեդ-յունիոնիստական պայքար: Աղղարարեցին, վոր «շարժման տնտեսական հիմքը մթագնվում է՝ քաղաքական իդեալը շարունակ չմոռանալու ձգտումից», վոր բանվորական շարժման դեմքն է—«պայքար տնտեսական դրության համար» (!) կամ, ավելի լավը՝ «բանվորները բանվորների համար». հայտարարվում եր, վոր գործադուլային դանձարկղները «շարժման համար ավելի թանգ են, քան հարյուրյակ ուրիշ կազմակերպություններ» (համեմատեցեք 1897 թվականի հոկտեմբերին վերաբերող այս պնդումը՝ «դեկաբրիստների» և յերիտասարդների միջև 1897 թվականի սկզբում տեղի ունեցած վեճի հետ) և այլն: Այնպիսի խոսքերը, թե հիմք պետք է դարձնել վոչ թե բանվորների «սերուցքը», այլ «միջակ» բանվորին, մասսայական բանվորին, թե «քաղաքականությունը միշտ հնազանդ հետևում է եկոնոմիկային»***) և այլն և այլն, մոդա դարձան և անհաղ-

*) — այսինքն՝ ցարական ժանդարմները: Խմբ.:

**) Վոր այս համեմատությունը ճիշտ է, կարելի յե տեսնել հետևյալ ընդոծ փաստից: Յերբ «դեկաբրիստների» ձերբակալությունից հետո լուր տարածվեց Շլիսսելբուրգի տրակտի բանվորների մեջ, թե բռնվելուն աջակցել է «դեկաբրիստների» հետ չփվող խմբերից մեկին մոտ կանգնած պրովոկատոր Ն. Ն. Միխայլովը (առատնաբույժ), ապա այդ բանվորներն այնքան վրդովված եյին, վոր վճռեցին ոպանել Միխայլովին:

***) «Рабочая Мысль»-ի առաջին համարի նույն այդ առաջնորդողից: Դրանով կարելի յե դատել, թե վորպիսի թեորիական պատրաստություն ունեցին «ռուսական սոցիալ-դեմոկրատիայի այդ Վ. Վ.-ները», վորոնք կրկնում եյին «տնտեսական մատերիալիզմի» կոպիտ դրեհկացումն այն իսկ ժամանակ, յերբ զրպարտության մեջ մարքսիստների պատերազմը տեղի ուներ իսկական Վ. Վ.-ի դեմ, վոր վաղուց է արդեն անվանվել «ռեակցիոն գործերի վարպետ» քաղաքականության ու եկոնոմիկայի հարաբերության նույնպիսի ըմբռնման համար:

*) Գերմանացիները նույնիսկ առանձին բառ ունեն՝ «Nur-Gewerkschaftler», վոր «միայն-պրոֆեսիոնալ» պայքարի կողմնակիցներ է նշանակում:

**) Մենք ընդգծում ենք ժամանակակից բառը նրանց համար, ովքեր փաբլիցիստորեն ուսերը կթոթվեն ու կասեն՝ այժմ հեշտ է «Рабочая Мысль»-ին ջախջախելը, բայց չե՞ վոր այդ արխայի՛զմ է միայն: Mutato nomine de te fabula narratur (ուրիշ անվան տակ հեքիաթը քո մասին է պատմվում: Խմբ.)—կդատապարտենք մենք այդպիսի ժամանակակից փարիսեցիներին, վորոնց կատարյալ տարբերությունը «Рабочая Мысль»-ի դաղափարների կողմից կապացուցվի ստորև:

թելի աղդեցություն ձեռք բերին շարժման մեջ ներդրավվող յերիտասարդական մասսայի վրա, վոր մեծ մասամբ մարքսիզմի փշրանքներին եր միայն ծանոթ՝ սրա լեգալ շարադրանքով:

Սա դիտակցականության լիակատար ճնշումն եր տարերայնության կողմից, այն «սոցիալ-դեմոկրատների» տարերայնության, վորոնք կրկնում եյին պ. Վ. Վ.-ի «դաղափարները», այն բանվորների տարերայնության, վորոնք յենթարկվում եյին այն փաստարկին, թե ռուբլուն մի կոպեկի հավելումն ավելի մոտ է ու ավելի թանգ, քան ամեն մի սոցիալիզմ և ամեն մի քաղաքականություն, վոր նրանք պետք է պայքար մղեն, «դիտենալով, վոր պայքարում են վո՛չ թե ինչ-վոր ապագա սերունդների համար, այլ իրենց և իրենց յերեխաների համար» («Рабочая Мысль»-ի առաջին համարի առաջնորդողը): Նման ֆրազները միշտ սիրված զենք են յեղել այն արևմտա-յեվրոպական բուրժուաների, վորոնք, ատելով սոցիալիզմը, իրենք իսկ աշխատում եյին (գերմանական «սոցիալ-քաղաքագետ» Հիրշի նման) փոխադրել անդլիական տրեդ-յունիոնիզմը մայրենի հողի վրա, ասելով բանվորներին, վոր միայն պրոֆեսիոնալ պայքարն է*) հենց պայքար իրենց և իրենց յերեխաների համար, և վոչ թե ինչ-վոր ապագա սերունդների, ինչ-վոր ապագա սոցիալիզմի համար,—և այժմ «ռուսական սոցիալ-դեմոկրատիայի Վ. Վ.-ները» սկսել են կրկնել այդ բուրժուական ֆրազները: Այստեղ կարևոր է շեշտել յերեք հանգամանք, վորոնք մեզ շատ պետք կգան ժամանակակից տարաձայնությունների հետագա քննության ժամանակ**):

Նախ, մեր նշած դիտակցականության ճնշումը տարերայնության կողմից կատարվել է նույնպես տարերային ուղիով: Սա բառախաղ է թվում, բայց ավա՛ղ, դառը ճշմարտություն է այդ: Այդ կատարվել է վո՛չ թե յերկու միանդամայն տարբեր հայացքների բաց-

*) Գերմանացիները նույնիսկ առանձին բառ ունեն՝ «Nur-Gewerkschaftler», վոր «միայն-պրոֆեսիոնալ» պայքարի կողմնակիցներ է նշանակում:

**) Մենք ընդգծում ենք ժամանակակից բառը նրանց համար, ովքեր փաբլիցիստորեն ուսերը կթոթվեն ու կասեն՝ այժմ հեշտ է «Рабочая Мысль»-ին ջախջախելը, բայց չե՞ վոր այդ արխայի՛զմ է միայն: Mutato nomine de te fabula narratur (ուրիշ անվան տակ հեքիաթը քո մասին է պատմվում: Խմբ.)—կդատապարտենք մենք այդպիսի ժամանակակից փարիսեցիներին, վորոնց կատարյալ տարբերությունը «Рабочая Мысль»-ի դաղափարների կողմից կապացուցվի ստորև:

հայտ պայքարի և մեկի հաղթանակի միջոցով մյուսի վերաբերմամբ, այլ նրանով, վոր ժանդարմներն ավելի ու ավելի յեն «կորզել» «ծերունի» հեղափոխականներին, այլև նրանով, վոր «ռուսական սոցիալ-դեմոկրատիայի յերիտասարդ Վ. Վ.-ներն» ավելի ու ավելի յեն ասպարեզ իջել: Ամեն վոք, ով—չեմ ասի՝ մասնակցել է ժամանակակից ռուսական շարժմանը, այլ՝ թեկուզ գոնե հոտոտել է նրա ոդը, հիանալի գիտե, վոր բանը հենց այդպես է յեղել: Յեվ յեթե մենք, այնուամենայնիվ, առանձնապես պնդում ենք, վոր ընթերցողը միանգամայն պարզի իր համար այս հանրահայտ փաստը, յեթե մենք, այսպես ասած, ակնառու դարձնելու համար տվյալներ ենք բերում առաջին Ֆորմացիայի «Рабочее Дело»-յի մասին և 1897 թվականի սկզբին «ծերունիների» ու «յերիտասարդների» միջև տեղի ունեցած վիճաբանության մասին,—ապա այդ մենք անում ենք այն պատճառով, վոր իրենց «դեմոկրատիզմով» պարծեցող մարդիկ չարաշահում են այդ փաստը չգիտենալը լայն հասարակության (կամ բոլորովին պատանի յերիտասարդության) կողմից: Մենք դեռևս կդառնանք դրան ստորև:

Յերկրորդ, եկոնոմիզմի առաջին դրական արտահայտության մեջ արդեն մենք կարող ենք դիտել այն վերին աստիճանի յուրօրինակ յերևույթը, վոր չափազանց բնորոշ է ժամանակակից սոցիալ-դեմոկրատների շրջանում գոյություն ունեցող բոլոր տարաձայնություններն ըմբռնելու համար,—այն, վոր «զուտ բանվորական շարժման» կողմնակիցները, պրոլետարական պայքարի հետ պահպանելիք ամենաստեր ու ամենա«օրգանական» («Рабочее Дело»-յի արտահայտությունը) կապի յերկրպագուները, ամեն մի վոչ-բանվորական ինտելիգենցիայի հակառակորդները (թեկուզ այդ լինի և սոցիալիստական ինտելիգենցիան) հարկադրված են իրենց դիրքը պաշտպանելու համար դիմել բուրժուական «միայն արհ-յունիոնիստների» պատճառաբանություններին: Այդ ցույց է տալիս մեզ, վոր «Рабочая Мысль»-ը հենց իր սկզբնավորությունից սկսել է—իր համար անգիտակցաբար—իրագործել «Credo»-յի ծրագիրը: Այդ ցույց է տալիս,—(մի բան, վոր վոչ մի կերպ հասկանալ չի կարողանում «Рабочее Дело»-ն),—վոր ամեն մի խոնարհում բանվորական շարժման տարերայնության առաջ, «գիտակցական տարրի» դերի, սոցիալ-դեմոկրատիայի դերի ամեն մի նվազեցում նշանակում է ինքնին,—միանգամայն անկախ նրանից, ցանկանո՞ւմ է արդյոք նվազեցնողն այդ, թե վոչ,—բուրժուական իդեոլոգիայի ազդեցությանն ուժեղացում բանվորների վրա: Ամեն վոք, ով խոսում է «իդեոլոգիայի դերազնահատության»*) մասին, գիտակցական տարրի դերի չափազանցման մասին*) և այլն, յերևակայում է, թե զուտբանվորական շարժումն ինքնըստինքյան կարող է մշակել և մշակում է իր համար ինքնուրույն իդեոլոգիա, միայն թե բանվորները «դուրս կորզեն դեկավարների ձեռքից իրենց բախտը»: Բայց այդ խորը սխալ է: Ի լրումն վերն ասածի՝ բերենք նաև Կ. Կաուցկու հետևյալ խորապես արդարացի և կարևոր խոսքերը, վոր նա ասել է ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության նոր ծրագրի առթիվ**):

«Մեր ռևիզիոնիստական քննադատներից շատերը կարծում են, թե իբր Մարքսը պնդում էր, վոր տնտեսական զարգացումը և դասակարգային պայքարն ստեղծում են վո՛չ միայն սոցիալիստական արտադրության պայմաններ, այլ նաև անմիջականորեն ծնում են նրա անհրաժեշտության գիտակցություն (ընդգծումը Կ. Կ.-ունն է): Յեվ ահա այդ քննադատներն առարկում են, վոր կապիտալիստական ամենարագ զարգացման յերկրի, Անգլիայի համար ամենից շատ է խորթ այդ գիտակցությունը: Նախագծի հիման վրա կարելի յեր կարծել, թե հանձնաժողովն էլ, վոր մշակել է ավստրիական ծրագիրը, բաժանում է այդ իբր որթոդոքս-մարքսիստական հայացքը, վոր հերքվում է նշված յեղանակով: Նախագծում ասված է. «Վորքան ավելի յե կապիտալիստական զարգացումն ավելացնում պրոլետարիատին, այնքան ավելի յե վերջինս հարկադրվում և հնարավորություն ստանում պայքար մղելու կապիտալիզմի դեմ: Պրոլետարիատը դալիս է այն գիտակցության», վոր հնարավոր է ու անհրաժեշտ սոցիալիզմը: Այս կապակցությամբ սոցիալիստական գիտակցությունը պատկերանում է վորպես պրոլետարական դասակարգային պայքարի անհրաժեշտ անմիջական արդյունք: Իսկ այդ միանգամայն սխալ է: Հարկավ, սոցիալիզմը, վորպես ուսմունք, նույնքան իր արմատներն ունի ժամանակակից տնտեսական հարաբերությունների մեջ, վորքան և պրոլետարիատի դասակարգային պայքարը, նույնչափ, ինչպես և այդ վերջինը, բղխում է մասսաների՝ կապիտալիզմի ծնած չքավորության ու աղքատության դեմ մղվող պայքարից, բայց սոցիալիզմն ու դասակարգային պայքարն առաջանում են մեկը մյուսի կողքին, և վոչ թե մեկը մյուսից, առաջանում են տարբեր նախադրյալների ժամանակ: Ժամանակակից սոցիալիստական գիտակցությունը կարող է առաջանալ միայն գիտական խորն իմացության հիման վրա: Իրոք, ժամանակակից տնտեսագիտությունը նույնչափ և հանդիսանում սոցիալիստական արտադրության պայման, վորչափ, ասենք, ժամանակակից տեխնիկան, իսկ պրոլետարիատը, վորքան էլ ցանկանա, չի կարող ստեղծել վո՛չ մեկը, վոչ էլ մյուսը. նրանք յերկուսն էլ ծագում են ժամանակակից հասարակական պրոցեսից: Իսկ գիտության կրողը վո՛չ թե պրոլետարիատն է, այլ բուրժուական ինտելիգենցիան (ընդգծումը Կ. Կ.-ունն է): Զե՞ վոր այդ խավի առանձին անդամների գլուխներում ծագել է նաև ժամանակակից սոցիալիզմը, և նրանց կողմից արդեն հաղորդվել է իրենց մտավոր զարգացմամբ աչքի ընկնող պրոլետարներին, վորոնք այնուհետև այդ մտցնում են պրոլետարիատի դասակարգային պայքարի մեջ այնտեղ, վորտեղ պայմանները թույլ են տալիս այդ: Այսպիսով, սոցիալիստական գիտակցությունը մի բան է, վոր դրսից է մտցված (von

*) «Եկոնոմիստների» նամակը «Искра»-յի 12-րդ համարում:

*) «Рабочее Дело» № 10:

**) «Neue Zeit»—1901—1902, XX, I, № 3, էջ 79: Հանձնաժողովի այն նախագիծը, վորի մասին խոսում է Կ. Կաուցկին, ընդունված է Վիեննայի համագումարի կողմից (անցյալ տարվա վերջում) վորոշ չափով փոփոխված ձևով:

Aussen Hineingetragenes) պրոլետարիատի դասակարգային պայքարի մեջ, և վոչ թե տարերայնորեն (urwüchsig) նրանից ծագած մի բան: Դրան համապատասխան՝ հին հայնֆելդյան ծրագիրն էլ միանգամայն իրավացիորեն ասում էր, վոր սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն է՝ պրոլետարիատի մեջ մտցնել (բառացի՝ պրոլետարիատի մեջ լցնել) նրա դրության գիտակցությունը և նրա անելիքի գիտակցությունը: Դրա կարիքը չէր լինի, յեթե այդ գիտակցությունն ինքնըստինքյան դասակարգային պայքարից ըլլեր: Իսկ նոր նախագիծը հին ծրագրից վերցրել է այդ դրությունը և այն կապակցել է վերը բերված դրությունն: Բայց այդ միանգամայն ընդհատել է մաքի ընթացքը...»:

Քանի վոր չի կարող խոսք լինել ինքնուրույն, հենց իրենց՝ բանվորական մասսաների կողմից նրանց շարժման ընթացքում մշակվող իդեոլոգիայի մասին*), ապա հարցը դրվում է միայն այսպես. բուրժուական՝ թե սոցիալիստական իդեոլոգիա: Միջինը չկա այստեղ (վորովհետև մարդկությունը վոչ մի «յերրորդ» իդեոլոգիա չի ստեղծել, բացի դրանից, դասակարգային հակասություններից պառակտվող հասարակության մեջ առհասարակ չի եղ կարող լինել յերբեք ապադասակարգային կամ վերդասակարգային իդեոլոգիա): Ուստի սոցիալիստական իդեոլոգիայի ամեն մի նվաստացում, ամեն մի խուսափում նրանից՝ ինքնին նշանակում է բուրժուական իդեոլոգիայի ուժեղացում: Տարերայնության մասին են խոսում: Բայց բանվորական շարժման տարերային զարգացումն ընթանում է հենց դեպի նրա յենթարկումը բուրժուական իդեոլոգիային, ընթանում է հենց «Credo»-յի ծրագրով, վորովհետև բանվորական տարերային շարժումը տրեդ-յունիոնիզմ է, Nur-Gewerkchaftlerei, իսկ տրեդ-յունիոնիզմն ուղղակի նշանակում է բանվորների դաղափարային սարկացում բուրժուազիայի կողմից: Ուստի մեր խնդիրը,

*) Այդ, իհարկե, չի նշանակում, թե բանվորները չեն մասնակցում այդ մշակմանը: Բայց նրանք մասնակցում են վո՛չ թե. վորպես բանվորներ, այլ վորպես սոցիալիզմի թեորետիկներ, վորպես Պրուդոններ և Վայտլինգներ, այլ խոսքով, մասնակցում են միայն այն ժամանակ և այնքան, վորքան նրանց հաջողվում է ավելի կամ պակաս չափով տիրապետել իրենց դարի գիտությանը և առաջ մղել այդ գիտությունը: Իսկ վորպեսզի այդ ավելի հաճախ հաջողվի բանվորներին, դրա համար անհրաժեշտ և վորքան կարելի յե ավելի հոգալ բանվորների գիտակցականության մակարդակի բարձրացման մասին ընդհանրապես, դրա համար անհրաժեշտ է, վոր բանվորները չպարփակվեն «բանվորների համար գրականության» աբհեստականորեն նեղացրած շրջանակներում, այլ սովորեն ավելի ու ավելի տիրապետել ընդհանուր գրականությանը: Նույնիսկ ավելի ճիշտ կլինեք, յեթե «չպարփակվեն» ասելու փոխարեն ասեինք՝ չենթարկվեն պարփակման, վորովհետև իրենք բանվորները կարդում և ցանկանում են կարդալ այն ամենը, ինչ վոր գրվում է նաև ինտելիգենցիայի համար, և ինտելիգենտներից միայն վոմանք (վատերն) են կարծում, թե բավական է, յեթե «բանվորների համար» պատմես ֆաբրիկային կարգերի մասին և վորոճաս այն, ինչ վոր վաղուց հայտնի յե:

սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն այն է, վոր պայքարենք տարերայնության դեմ, այն է, վոր հանենք բանվորական շարժումը տրեդ-յունիոնիզմի այդ տարերային ձգտումից՝ բուրժուազիայի թևերի տակ մտնելու ձգտումից, և դրավենք նրան հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի թևերի տակ: «Искра»-յի 12-րդ համարում տպագրված «Տնտեսական» նամակի հեղինակների ֆրազն այն մասին, թե ամենավոգևորված իդեոլոգների վոչ մի ջանք չի կարող շեղել բանվորական շարժումն այն ուղուց, վոր վորոշվում է նյութական տարրերի և նյութական միջավայրի փոխազդեցությամբ, ուստի և միանգամայն հավասարազոր է սոցիալիզմից հրաժարվելուն, և յեթե այդ հեղինակներն ընդունակ լինեին խորը մտածելու իրենց ասածի մասին, մինչև վերջն աներկյուղ ու հետևողականորեն, ինչպես պետք է խորը մտածի ամեն վոք, ով գրական և հասարակական գործունեության ասպարեզ է մտնում, ապա նրանց այլ բան չեր մնա, քան «իրենց անպետք ձեռքերը ծալել դատարկ կրծքերի վրա» և... և գործողության դաշտը թողնել պ. պ. Ստրուվեներին ու Պրոկոպովիչներին, վորոնք բանվորական շարժումը քաշում են «նվաղադույն դիմադրության գծով», այսինքն՝ բուրժուական տրեդ-յունիոնիզմի գծով, կամ պ. պ. Զուբատովներին, վորոնք այն քաշում են տերտերական-ժանդարմական «իդեոլոգիայի» գծով:

Մտաբերեցեք Գերմանիայի որինակը: Ինչո՞ւմն եր կայանում Լասսալի պատմական յերախտիքը գերմանական բանվորական շարժման հանդեպ: Նրանում, վոր Լասսալը հանեց այդ շարժումը պրոդրեսիստական տրեդ-յունիոնիզմի և կոոպերատիվիզմի այն ճանապարհից, դեպի վորը տարերայնորեն ուղղվում եր այդ (Շուլցե-Դելիչների և նրանց նմանների բարեհաճ մասնակցությամբ): Այդ խնդրի իրագործման համար հարկավոր եր մի բան, վոր ամենևին նման չեր տարերային ելեմենտի թերաղնահատության, տակտիկա-պրոցեսի, ելեմենտների և միջավայրի փոխազդեցության վերաբերյալ խոսակցություններին և այլն: Դրա համար կատաղի պայքար եր հարկավոր տարերայնության դեմ, և միայն այդպիսի յերկար-յերկար տարիներ մղված պայքարի հետևանքով եր ձեռք բերվել, որինակ, այն, վոր Բեբելինի բանվոր բնակչությունը պրոդրեսիստական կուսակցության հենարանից դարձավ սոցիալ-դեմոկրատիայի լավագույն ամրոցներից մեկը: Յեվ այդ պայքարն ամենևին չի վերջացած մինչև այժմ էլ (ինչպես կարող եր թվալ այն մարդկանց, վորոնք գերմանական շարժման պատմությունն ուսումնասիրում են ըստ Պրոկոպովիչի, իսկ նրա փիլիսոփայությունը՝ ըստ Ստրուվեի): Այժմ էլ գերմանական բանվոր դասակարգը, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, մասնատված է

միջանկյալ իդեոլոգիաների միջև. բանվորների մի մասը միավորված է կաթոլիկական և միապետական բանվորական միությունների մեջ, մյուսը—անգլիական տրեդ-յունիոնիզմի բուրժուական ղեկավարների հիմնած հերշ-դունկերյան միությունների մեջ, երրորդը—սոցիալ-դեմոկրատական միությունների մեջ: Վերջին մասը մնացած բոլորից անչափ ավելի մեծ է, բայց այդ գերիշխանությանը սոցիալ-դեմոկրատական իդեոլոգիան կարող էր հասնել և այդ գերիշխանությունը նա կկարողանա պահպանել միայն անշեղ պայքար մղելով ընդդեմ մնացած բոլոր իդեոլոգիաների:

Բայց ինչո՞ւ,—կհարցնի ընթերցողը,—տարերային շարժումը, նվազագույն դիմադրության գծով ընթացող շարժումը հենց դեպի բուրժուական իդեոլոգիայի տիրապետությունն է գնում: Այն պարզ պատճառով, որ բուրժուական իդեոլոգիան իր ծագումով շատ ավելի հին է, քան սոցիալիստականը, որ այն ավելի բազմակողմանի է մշակված, որ այն տարածվելու անչափ ավելի միջոցներ ունի*): Եվ որքան ավելի ղեկավարող է և որևէ ղեկավարում սոցիալիստական շարժումը, այնքան ավելի դեռանդուն պետք է լինի պայքարը վոչ-սոցիալիստական իդեոլոգիան ամբողջովին բոլոր փորձերի դեմ, այնքան ավելի վճռականորեն պետք է նախազգուշացնել բանվորներին այն վատ խորհրդատուներից, որոնք ճչում են «գիտակցական տարրի չափազանցման» դեմ և այլն: Զայնակցելով «Рабочее Дело»-յին, եկոնոմիական նամակի հեղինակները խիստ մտրակում են անհանդուրժողությունը, որ հատուկ է շարժման մանկական շրջանին: Մենք կպատասխանենք դրան.—այո՛, մեր շարժումն իրոք դանվում է մանուկ վիճակում և որպեսզի ավելի շուտ հասունանա, հենց այն պետք է վարակվի անհանդուրժողությամբ այն մարդկանց նկատմամբ, որոնք խափանում են նրա աճումը, խոնարհվելով տարերայնության առաջ: Ավելի ծիծաղելի և ավելի վնասակար բան չկա, քան այն, որ մարդիկ իրենց ձևացնում են ծերունիներ, որոնք վաղո՛ւց արդեն ապրել-անցել են պայքարի բոլոր վճռական եպիզոդները:

Ցերրորդ, «Рабочая Мысль»-ի առաջին համարը ցույց է տալիս մեզ, որ «եկոնոմիզմ» անունը (որից մենք, հարկավ, չենք ուզում հրաժարվել, որովհետև այսպես թե այնպես այդ մականունը հաստատվել է) բավականաչափ ճիշտ չի հաղորդում նոր ուղղության էությունը: «Рабочая Мысль»-ը բոլորովին չի ժխտում քաղաքական պայքարը. դանձարկղի այն կանոնադրության մեջ, որ տպված է «Рабочая Мысль»-ի № 1-ում, խոսվում է կառավարության դեմ պայքար մղելու մասին: «Рабочая Мысль»-ը միայն կարծում է, թե «քաղաքականությունը հնազանդորեն միշտ հետևում է եկոնոմիկային» (իսկ «Рабочее Дело»-ն հոլովում է այդ թեզիսը, իր ծրագրում հավատացնելով, թե «Ռուսաստանում ավելի, քան որևէ այլ երկրում, տնտեսական պայքարն անխզելի է քաղաքականից»): «Рабочая Мысль»-ի և «Рабочее Дело»-յի այս դրույթները միանգամայն սխալ են, յեթե քաղաքականության անվան տակ հասկանանք տրեդ-յունիոնիստական քաղաքականությունը, այսինքն՝ բոլոր բանվորների ընդհանուր ձգտումն՝ իրենց ոգտին կորզելու կառավարությունից այս կամ այն ձեռնարկումները՝ ուղղված ընդդեմ այն թշվառությունների, որոնք հատուկ են նրանց դրության, որոնք սակայն դեռևս չեն վերացնում այդ դրությունը, այսինքն՝ չեն վոչնչացնում աշխատանքի յենթարկումը կապիտալին: Այդ ձգտումն ընդհանուր և իրոք թե՛ սոցիալիզմին թշնամաբար վերաբերվող անգլիական տրեդ-յունիոնիստներին, թե՛ կաթոլիկ բանվորներին, թե՛ «զուբատովյան» բանվորներին և այլն: Քաղաքականություն էլ կա, քաղաքականություն էլ: Այսպիսով մենք տեսնում ենք, որ քաղաքական պայքարի նկատմամբ էլ «Рабочая Мысль»-ը ցուցահանում է վոչ այնքան նրա բացասումը, որքան խոնարհումը նրա տարերայնության առաջ, նրա անգիտակցականության առաջ: Միանգամայն ընդունելով հենց բանվորական շարժումից տարերայնորեն ծնվող քաղաքական պայքարը (ավելի ճիշտ՝ բանվորների քաղաքական ցանկությունները ու պահանջները), նա բոլորովին հրաժարվում է սպեցիֆիկ սոցիալ-դեմոկրատական այն քաղաքականությունից-ինքնուրույն մշակումից, որը համապատասխանում է սոցիալիզմի ընդհանուր խնդիրներին և ժամանակակից ռուսական պայմաններին:

*) Հաճախ ասում են՝ բանվոր դասակարգը տարերայնորեն հակվում է սոցիալիզմին: Այդ միանգամայն արդարացի է այն իմաստով, որ սոցիալիստական թեորիան ամենից խորն ու ամենից ճիշտ է վորոշում բանվոր դասակարգի թշվառությունների պատճառները, ուստի և բանվորներն այնպես հեշտ կերպով յուրացնում են այն, յեթե միայն այդ թեորիան ինքը չի ընկրկում տարերայնության առաջ, յեթե միայն այն իրեն է յենթարկում տարերայնությունը: Սովորաբար ինքնաբերաբար հասկացվում է այս, բայց «Рабочее Дело»-ն հենց մոռանում և աղավաղում է այդ հասկանալին: Բանվոր դասակարգը տարերայնորեն հակվում է սոցիալիզմին, բայց ամենատարածված (և չարունակ ամենազանազան ձևերով հարություն առնող) բուրժուական իդեոլոգիան այնուամենայնիվ տարերայնորեն ամենից շատ և փաթաթվում բանվորի վզին:

Ստորև մենք ցույց կտանք, վոր այդպես է նաև «Рабочее Дело»-յի սխալը:

գ) «ԻՆՔՆԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԽՈՒՄԲԸ» ՅԵՎ «РАБОЧЕЕ ДЕЛО»-Ն

Մենք այսպես մանրամասն քննեցինք «Рабочая Мысль»-ի առաջին համարի ներկայումս քիչ հայտնի և գրեթե մոռացված առաջնորդողը, վորովհետև նա ամենից առաջ և ամենից ցայտուն կերպով է արտահայտել այն ընդհանուր հոսանքը, վոր հետո լույս աշխարհ յեկավ անթիվ մանր հոսանքների ձևով: Վ. Ի.-նը արդարացի յեր մխանգամայն, յերբ գրվատելով «Рабочая Мысль»-ի առաջին համարն ու առաջնորդողը, ասաց, վոր նա գրված է «խիստ, տաքարյուն» («Листок Работника» № 9—10, եջ 49): Իր կարծիքին համոզված ամեն մի մարդ, վոր կարծում է, թե վորևե նոր բան է տալիս, գրում է «տաքարյուն» և գրում է այնպես, վոր ցայտուն կերպով է արտահայտում իր հայացքները: Միայն այն մարդիկ ամենևին չունեն «տաքարյունություն», վորոնք սովոր են նստել յերկու աթոռի արանքում, միայն այդպիսի մարդիկ են ընդունակ՝ յերեկ գովելով «Рабочая Мысль»-ի տաքարյունությունը, այսոր հարձակվելու նրա հակառակորդների վրա «բանավեճային տաքարյունության» համար:

Կանգ չառնելով «Рабочая Мысль»-ի «Առանձին հավելվածի» վրա (մենք ստորև հարկադրված կլինենք տարբեր առիթներով հիշատակել այդ գրվածքը, վոր ամենից ավելի հետևողական կերպով է արտահայտում եկոնոմիստների գաղափարները), մենք միայն համառոտակի կնշենք «բանվորների ինքնազատագրման խմբի կոչը» (1899 թ. մարտ, արտատպված է Լոնդոնի «Накануне»-յի 7-րդ համարում, հունիս 1899 թիվ): Այդ կոչի հեղինակները շատ արդարացի ասում են, վոր «բանվորական Ռուսաստանը դեռ նոր է արթնանում, նոր է իր շուրջը աչք ածում և բնազդաբար կառչում է պայքարի առաջին հանդիպած միջոցներին», բայց սրանից անում են այն նույն սխալ յեզրակացությունը, ինչ վոր և «Рабочая Мысль»-ը, մոռանալով, վոր բնազդականությունը հենց անգիտակցականությունն է (տարերայնությունը), վորին ոգնության պետք է դան սոցիալիստները, և վոր պայքարի «առաջին հանդիպած» միջոցներ ժամանակակից հասարակության մեջ միշտ կլինեն պայքարի տրեդ-յունիոնիստական միջոցները, իսկ «առաջին հանդիպած» իդեոլոգիա՝ բուրժուական (տրեդ-յունիոնիստական) իդեոլոգիան: Ճիշտ նույնպես չեն «ժխտում» այդ հիդինակները նաև քաղաքականությունը, այլ ասում են միայն (միայ՛ն), պ. Վ. Վ.-ին հետևելով, վոր քաղաքականությունը վերնաշենք է, ուստի և «քաղաքական ազիտացիան անտեսական պայքարի ոգտին մղվող ազիտացիայի վերնաշենքը պետք է լինի, այդ պայքարի հողի վրա պետք է աճի և դնա նրա հետևից»:

Ինչ վերաբերում է «Рабочее Дело»-յին, նա իր գործունեությունն սկսեց ուղղակի եկոնոմիստների «պաշտպանությունից»: Իր առաջին իսկ համարում, ուղղակի սուտ ասելով (№ 1, եջ 141—142), թե իբր նա «չդիտե, թե ինչ յերիտասարդ ընկերների մասին եր Ակսելրոդի խոսքը», վորն իր հայտնի բրոշյուրում*) նախաղդուշացնում եր եկոնոմիստներին, «Рабочее Дело»-ն այդ ստի առթիվ Ակսելրոդի և Պլեխանովի հետ բորբոքված բանակռվի մեջ ստիպված եր ընդունել, վոր նա «տարակուսանքի ձևով կամենում եր պաշտպանել արտատահմանյան բոլոր ավելի յերիտասարդ սոցիալ-դեմոկրատներին այդ անարդարացի մեղադրանքից» (Ակսելրոդի կողմից եկոնոմիստներին սահմանափակության մեջ մեղադրելը): Իրոք այդ մեղադրանքը միանգամայն արդարացի յեր, և «Рабочее Дело»-ն հիանալի գիտեր, վոր մեղադրանքը ընկնում եր ի միջի այլոց նաև նրա խմբագրության անդամ Վ. Ի.-ի վրա: Նկատեմ ի դեպ, վոր նշված բանավեճում Ակսելրոդը միանգամայն իրավացի յեր և «Рабочее Дело»-ն միանգամայն անիրավացի իմ՝ «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները»**) բրոշյուրի մեկնաբանության մեջ: Այդ բրոշյուրը գրված է 1897 թ.՝ դեռևս «Рабочая Мысль»-ի հրապարակ գալուց առաջ, յերբ յես գերիշխող եյի համարում և իրավունք ունեյի համարելու ՍՊԲ «Պայքարի միության» սկզբնական ուղղությունը, վոր յես բնորոշել եմ վերը: Ցեվ գոնե մինչև 1898 թվի՝ կեսը այդ ուղղությունն իրոք գերիշխող եր: Ուստի ի հերքումն եկոնոմիզմի գոյության և վտանգի՝ հիշատակել մի բրոշյուր, վոր շարադրում եր Ս.-Պետերբուրգում «եկոնոմիական» հայացքների կողմից 1897—1898 թ. թ. վտարված հայացքներ, «Рабочее Дело»-ն նվազագույն իրավունք անդամ չուներ***):

---

*) «К вопросу о современных задачах и тактике русских социал-демократов», Ժընեվ, 1898: 1897 թվականին գրված յերկու նամակ «Рабочая Газета»-յին:

**) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ. հ. II, եջ 171—187: Խմբ.:

***) Իր առաջին սուտը («մենք չդիտենք, թե ինչ յերիտասարդ ընկերների մասին եր խոսում Գ. Բ. Ակսելրոդը») «Р. Дело»-ն, պաշտպանվելով, լրացրեց յերկրորդ ստով, յերբ «Պատասխանում» գրում եր. «Այն ժամանակվանից, յերբ գրված է «Задачи» աշխատության գրախոսականը, ռուսական սոցիալ-դեմոկրատներից վոմանց չլքանում առաջացել կամ ավելի կամ նվազ չափով պարզորոշվել են դեպի անտեսական միակողմանիություն տանող տենդենցներ, վորոնք նշանակում են մի քայլ հետ մեր շարժման այն վիճակի համեմատությամբ, վոր պատկերացված է «Задачи» աշխատության մեջ» (եջ 9): Այսպես է ասում «Պատասխանը», վոր լույս է տեսել 1900 թվականին: Իսկ «Р. Д.»-ն առաջին համարը (գրախոսականով) լույս

Բայց «Рабочее Дело»-ն վո՛չ միայն «պաշտպանում էր» եկոնոմիստներին, այլ նաև ինքն էլ շարունակ ընկնում էր նրանց հիմնական մոլորությունների մեջ։ Այդ սայթաքումների աղբյուրը «Рабочее Дело»-յի ծրագրի հետևյալ թեզիսի յերկիմաստ ըմբռնումն էր—«Ռուսական կյանքի կարևորագույն յերևույթը, վոր գլխավորապես պետք է վորոշի (ընդգծումն մերն է) «Մուրթյան» խնդիրներն ու զրական գործունեության բնույթը, մենք համարում ենք վերջին տարիներս առաջացած բանվորական մասսայական շարժումը» (ընդգծումը «Рабочее Дело»-յինն է)։ Վոր մասսայական շարժումը կարևորագույն յերևույթ է, այդ մասին վեճ լինել չի կարող։ Բայց ամբողջ հարցն այն է, թե ինչպես հասկանանք «խնդիրների վորոշումը» այդ մասսայական շարժման կողմից։ Այդ կարելի յե հասկանալ յերկու կերպ. կա՛մ այն իմաստով, վոր խոնարհվենք այդ շարժման տարերայնության առաջ, այսինքն՝ սոցիալ-դեմոկրատիայի դերը վերածենք հասարակ ծառայամտության հանդեպ բանվորական շարժման վորպես այդպիսին («Рабочая Мысль»-ի՝, «ինքնաստատման խմբի» և այլ եկոնոմիստների ըմբռնումը). կա՛մ թե ձյն իմաստով, վոր մասսայական շարժումը մեր առջև դնում է թեորիական, քաղաքական, կազմակերպական նոր խնդիրներ, շատ ավելի բարդ, քան այն խնդիրները, վորոնցով բավարարվել կարելի յեր մինչև մասսայական շարժման ծագումն ընկնող ժամանակաշրջանը։ «Рабочее Дело»-ն հակվում էր և հակվում է հենց առաջին ըմբռնմանը, վորովհետև նա վոչ մի նոր խնդրի մասին վոչ մի վորոշ բան չեր ասում, այլ շարունակ դատում էր հենց այնպես, վորպես թե այդ «մասսայական շարժումն» ազատում է մեզ նրա առաջադրած խնդիրները պարզ դիտակցելու ու լուծելու անհրաժեշտությունից։ Բավական է հիշատակել այն, վոր «Рабочее Дело»-ն անհնարին էր համարում բանվորական մասսայական շարժման առաջին խնդիրը դարձնել—ինքնակալության տապալումը, նվաստացնելով այդ խնդիրը (հանուն մասսայական շարժման) մինչև մերձավորագույն քաղաքական պահանջների համար մղվող պայքարի խնդրի աստիճանը («Պատասխան», էջ 25)։

Մի կողմ թողնելով «Рабочее Дело»-յի խմբագիր Բ. Կրիչևսկու «Տնտեսական և քաղաքական պայքարը ռուսական շարժման մեջ» հոդվածը 7-րդ համարում, վոր կրկնում է միևնույն սխալները*), ուղղակի անցնենք «Рабочее Дело»-յի 10-րդ համարին։ Մենք, իհարկե, քննության չենք յենթարկի Բ. Կրիչևսկու և Մարտինովի՝ «Заря»-յի ու «Искра»-յի դեմ ուղղած առանձին առարկությունները։ Մեզ այստեղ հետաքրքրում է միայն այն սկզբունքային դիրքը, վոր 10-րդ համարում բռնել է «Рабочее Дело»-ն։ Մենք, որինակի համար, չենք քննի այն կուրյոզը, վոր «Рабочее Дело»-ն «տրամաբանական հակասություն» է նկատել հետևյալ դրույթների միջև.

«Սոցիալ-դեմոկրատիան չի կապում իր ձեռքերը, չի նեղացնում իր գործունեությունը մեկ վորևե նախապես մտածված ծրագրով կամ քաղաքական պայքարի յեղանակով,—նա ընդունում է պայքարի բոլոր միջոցները, միայն թե նրանք համապատասխանեն կուսակցության ռակա ուժերին և այլն։ («Искра», № 1)**)։

և ապա՝

«Յեթե չկա ամեն տեսակի պարագաներում և ամեն տեսակի ժամանակաշրջաններում քաղաքական պայքարում փորձված ամուր կազմակերպություն, ապա խոսք անգամ չի կարող լինել՝ սիստեմատիկ, հաստատուն սկզբունքներով լուսաբանված և

---

*) «Մատղիանների թեորիան» կամ «յերկչոտ զիգզագի» թեորիան քաղաքական պայքարի մեջ այս հոդվածում, որինակ, այսպես է արտահայտվում. «Իրենց բնույթով ամբողջ Ռուսաստանի համար ընդհանուր քաղաքական պահանջները պետք է սակայն սկզբում» (այս գրված է 1900 թ. ոգոստոսի՛ն) «համապատասխանեն բանվորների տվյալ խավի (sic!) տնտեսական պայքարից քաղած փորձին։ Միայն (!) այդ փորձի հիման վրա կարելի յե և պետք է ձևակերպել քաղաքական «ագիտացիային» և այլն (էջ 11)։ 4-րդ էջում հեղինակը բողոքելով իր կարծիքով միանգամայն անհիմն մեղադրանքների դեմ՝ տնտեսական հերետիկոսության համար՝ պաթետիկ կերպով բացականչում է. «Իսկ վո՞ր սոցիալ-դեմոկրատը չգիտե, վոր Մարքսի ու Ենգելսի ուսմունքի համաձայն առանձին դասակարգերի տնտեսական շահերը վճռողական դեր են խաղում պատմության մեջ և, հետևաբար, պրոլետարիատի պայքարը հանուն իր տնտեսական շահերի մասնավորապես պետք է առաջնակարգ նշանակություն ունենա նրա դասակարգային զարգացման և ազատագրական պայքարի համար» (ընդգծումը մերն է)։ Այս «հետևաբարը» միանգամայն անտեղի յե։ Այն բանից, վոր տնտեսական շահերը վճռողական դեր են խաղում, ամենևին էլ չի հետևում տնտեսական (= պրոֆեսիոնալ) պայքարի առաջնակարգ նշանակություն, վորովհետև դասակարգերի ամենաէական, «վճռողական» շահերը բավարարվել կարող են միայն արմատական քաղաքական վերափոխումներով ընդհանրապես. մասնավորապես, պրոլետարիատի հիմնական տնտեսական շահը բավարարվել կարող է միայն քաղաքական հեղափոխության միջոցով, վոր բուրժուազիայի դիկտատուրան փոխարինում է պրոլետարիատի դիկտատուրայով։ Բ. Կրիչևսկին կրկնում է «ռուսական սոցիալ-դեմոկրատիայի Վ. Վ.-ների» (—քաղաքականությունը հետևում է եկոնոմիկային և այլն) և դերմանական սոցիալ-դեմոկրատիայի բերնչացնականների դատողությունը (Վոլտմանն, որինակ, հենց այդպիսի դատողությամբ էր ապացուցում, վոր բանվորներն ամենից առաջ «տնտեսական ուժ» պետք է ձեռք բերեն, նախքան քաղաքական հեղափոխության մասին մտածելը)։

**) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ., հ. IV, էջ 58—59։ Խմբ.։

տեսավ 1899 թվականի ապրիլին։ Մի՞թե միայն 1899 թվականին առաջացավ եկոնոմիզմը։ Վո՛չ, 1899 թվականին առաջին անգամ հնչեց ռուսական սոցիալ-դեմոկրատների բողոքն ընդդեմ եկոնոմիզմի (բողոքն ընդդեմ «Credo»-յի)։ Իսկ եկոնոմիզմն առաջացավ 1897 թվականին, ինչպես այդ շատ լավ գիտե «Р. Дело»-ն, քանի վոր Վ. Ի.-ն արդեն 1898 թվականի նոյեմբերին («Лист. Раб.», № 9—10) զրավարանում էր «Рабочая Мысль»-ին։

անշեղ կիրառվող գործունեության այն պլանի մասին, որը և հենց արժանի է տակտիկայի կոչման» («Искра» № 4*)։

Պայքարի բոլոր միջոցները, բոլոր պլանները և յեղանակները սկզբունքորեն ընդունելը, միայն թե նրանք լինեն նպատակահարմար, չփոթել այն պահանջի հետ, որի թելադրանքով ավյալ քաղաքական մոմենտին պետք է ղեկավարվել անշեղորեն կիրառվող պլանով, յեթե ուզում ես տակտիկայի մասին խոսել,—այդ կնշանակեր միևնույն է թե չփոթել բժշկականության կողմից բուժման ամեն տեսակ սիստեմների ընդունումը այն պահանջի հետ, որ թելադրում է ավյալ հիվանդության բուժման ժամանակ հետևել մի որոշ սիստեմի։ Բանն էլ հենց այս է, որ «Рабочее Дело»-ն, ինքը տառապելով այն հիվանդությամբ, որ մենք անվանեցինք խոնարհումն տարերայնության առաջ, չի ուզում ճանաչել այդ հիվանդության վոչ մի «բուժման սիստեմ»։ Ուստի նա յերևելի դյուտ արեց, թե «տակտիկա-պլանը հակասում է մարքսիզմի հիմնական վոգուն» (№ 10, էջ 18), թե տակտիկան «կուսակցության հետ միատեղ աճող կուսակցական խնդիրների աճման մի պրոցես է» (էջ 11, ընդգծումը «Рабочее Дело»-յինն է)։ Այս վերջին տուությունը բոլոր շանսերն ունի հոչակավոր տուության դառնալու, «Рабочее Дело»-յի «ուղղության» անխորտակելի կոթողը դառնալու։ Այն հարցին, թե «n°ur գնանք»,—ղեկավար որդանը պատասխան է տալիս. շարժումը իր յելակետի և հետագա կետերի միջև յեղած տարաձության փոփոխման պրոցեսն է։ Այս անհամեմատելի խորամտությունը, սակայն, վո՛չ միայն կուրյոզ է (այն ժամանակ չէր արժենա առանձնապես կանգ առնել նրա վրա), այլև ամբողջ ուղղության ծրագիր, հենց այն ծրագիրը, որ Р. М.-ը («Рабочая Мысль»-ի առանձին հավելվածում») արտահայտել է այսպիսի բառերով.—ցանկալի է՝ այն պայքարը, որը հնարավոր է, իսկ հնարավոր է այն պայքարը, որը ավյալ րոպեին տեղի ունի։ Դա հենց անսահման օպորտունիզմի ուղղությունն է, որը պասսիվորեն հարմարվում է տարերայնությանը։

«Տակտիկա-պլանը հակասո՞ւմ է մարքսիզմի հիմնական վոգուն»։ Ձե՞ որ այս գրպարտությունն է մարքսիզմի հասցեին, նրա փոխարկումն այն ծաղրանկարին, որը հակադրում էին մեզ նարոդնիկները մեր դեմ պատերազմելիս։ Այս հենց զիտակից գործիչների նախաձեռնության և յեռանդի նվաստացումն է, մինչդեռ մարքսիզմն, ընդհակառակը, հսկայական զարկ է տալիս սոցիալ-դեմոկրատի նախաձեռնությանն ու յեռանդին, նրա առջև ամենալայն հեռանկարներ բանալով, նրա տրամադրության տակ դնելով (յեթե կարելի է այսպես ասել) «տարերայնորեն» պայքարի յելնող բանվոր դասակարգի միլիոնների ու միլիոնների հզո՛ր ուժերը։ Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ պատմությունը լի է պլաններով, որը առաջադրվում էին մերթ այս, մերթ մյուս քաղաքական առաջնորդի կողմից, արդարացնելով մեկի հեռատեսությունն ու քաղաքական, կազմակերպական հայացքների ճշտությունը, հայտաբերելով մյուսի կարճատեսությունն ու քաղաքական սխալները։ Յերբ Գերմանիան ապրեց պատմական մեծագույն բեկումներից մեկի—կայսրության կազմակերպումը, ռայխստագի բացումը, ընդհանուր ընտրական իրավունքի շնորհումը—Լիբկնեխտը սոցիալ-դեմոկրատական քաղաքականության ու աշխատանքի մի պլան ուներ ընդհանրապես, Շվայցերը՝ մի այլ պլան։ Յերբ գերմանական սոցիալիստների գլխին պայթեց բացառիկ որենքը,—Մոստն ու Հասելմանը՝ պատրաստ լինելով պարզապես բռնության ու տեռորի կոչեր անելու՝ մեկ պլան ունեին, Հյոխբերգը, Շրամն ու (մասամբ) Բերնշտայնը՝ մեկ պլան։ Նրանք քարոզել սկսեցին սոցիալ-դեմոկրատներին, որ վերջիններս իրենց անխոհեմ խստությամբ և հեղափոխականությամբ առաջացրին որենքը և այժմ պետք է որինակելի վարքով արժանի դառնան ներման։ Յերրորդ պլանը նրանցն էր, ովքեր նախապատրաստում էին և իրագործում անլեգալ որդանի հրատարակությունը։ Շատ տարիներ անցնելուց հետո, յերբ պայքարն ավարտված է ուղղության հարցի վերաբերյալ և պատմությունն ասել է իր վերջին ճիշտը ընտրած ուղղության մասին,—հետ նայելով հիմա, զարմանալի չէ, իհարկե, խորամտություն ցուցաբերել, ասելով, թե կուսակցության աճման հետ միասին աճում են կուսակցական խնդիրները։ Բայց չփոթության վայրկյանին*), յերբ ռուսական «քննադատներն» ու եկոնոմիստները նվաստացնում են սոցիալ-դեմոկրատիան մինչև տրեդյունիոնիզմի աստիճանը, իսկ տեռորիստները յեռանդուն կերպով քարոզում ընդունել «տակտիկա-պլանը», որը կրկնում է հին սխալները, այդպիսի վայրկյանին նման խորիմաստությամբ սահմանափակվելը նշանակում է «աղքատության վկայական» տալ ինքն իրեն։ Այն վայրկյանին, յերբ շատ ռուսական սոցիալ-դեմոկրատներ տառապում են հենց նախաձեռնության ու յեռանդի պակասությունից, «քաղաքական պրոպագանդայի, ագիտացիայի և կազմակերպության թափի»**) պակասությունից, հեղափոխական աշխատանքի ավելի լայն ծավալման «պլանից»,

*) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ., հ. IV, էջ 108։ Խմբ.։

*) Ein Jahr der Verwirrung (չփոթության տարին)—այսպես է Մերինգը վերնագրել իր «Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատմության» այն պարագրաֆը, որի մեջ նա նկարագրում է այն տատանումներն ու անվճռականությունը, որ ցուցաբերվել են սոցիալիստների կողմից նոր պայմաններին համապատասխանող «տակտիկա-պլան» ընտրելիս։

**) «Искра»-յի առաջին համարի առաջնորդող հոդվածից։ (Տե՛ս Ցերկ., հ. IV, ռուս. հրատ., էջ 57։ Խմբ.)։

ների» պակասությունից,—այդպիսի վայրկյանին ասել՝ «տակտիկա-պլանը հակասում է մարքսիզմի հիմնական վոդուն»—նշանակում է վո՛չ միայն թեորիապես դեհհկացնել մարքսիզմը, այլև գործնականորեն դեպի հետ քաշ տալ կուսակցությունը:

«Սոցիալ-դեմոկրատ հեղափոխականի խնդիրն է—ուսուցանում է մեզ այնուհետև «Рабочее Дело»-ն—իր գիտակցական աշխատանքով միայն արագացնել օբյեկտիվ զարգացումը, և վոչ թե վերացնել այն կամ փոխարինել այն սուբյեկտիվ պլաններով: «Искра»-ն այդ ամենը գիտե թեորիայում: Բայց այն ահագին նշանակությունը, վոր մարքսիզմի կողմից արդարացի կերպով տրվում է գիտակցական հեղափոխական աշխատանքին,—տակտիկայի վերաբերմամբ ունեցած իր դոկտրինյորական հայացքի շնորհիվ գործնականում դրավում է նրան դեպի զարգացման օբյեկտիվ կամ տարերային էլեմենտի նշանակության նվազեցումը» (էջ 18):

Դարձյալ թեորիական ամենամեծ չփոթ, վոր արժանի է պ. Վ. Վ.-ին ու իր նմաններին: Մենք հարց կտայինք մեր փիլիսոփային՝ ինչո՞վ կարող է արտահայտվել օբյեկտիվ զարգացման «նվազեցումը» սուբյեկտիվ պլաններ կազմողի կողմից: Ցերևի նրանով, վոր նա անտես կառնի այն հանգամանքը, վոր այդ օբյեկտիվ զարգացումը ստեղծում կամ ամրացնում է, կործանում կամ թուլացնում է այս-ինչ դասակարգերը, խավերը, խմբերը, այս-ինչ ազգերը, ազգերի խմբերը և այլն, դրանով պայմանավորելով ուժերի այս-ինչ ու այն-ինչ միջազգային ու քաղաքական խմբավորումը, հեղափոխական կուսակցությունների դիրքը և այլն: Բայց այդ դեպքում նմանորինակ կազմողի մեղքը վոչ թե տարերային էլեմենտի նվազեցումը կլինի, այլ ընդհակառակը, գիտակցական էլեմենտի նվազեցումը, վորովհետև նա բավականաչափ «գիտակցականություն» չի ունենա, վորպեսզի ճիշտ հասկանա օբյեկտիվ զարգացումը: Ուստի հենց միայն խոսակցությունը տարերայնության և գիտակցականության «համեմատական (ընդգծումը «Рабочее Дело»-յինն է) նշանակության գնահատման» մասին ցուցահանում է «գիտակցականության» լիակատար բացակայություն: Եթե վորոշ «զարգացման տարերային էլեմենտներ» առհասարակ մատչելի չեն մարդկային գիտակցությանը, ապա նրանց սխալ գնահատումը հավասարազոր կլինի «գիտակցական էլեմենտի նվազեցմանը»: Իսկ եթե նրանք մատչելի չեն գիտակցությանը, ապա մենք չգիտենք նրանց և նրանց մասին խոսել չենք կարող: Ուրեմն ինչի՞ մասին է դատում Բ. Կրիչևսկին: Եթե նա սխալ է համարում «Искра»-յի «սուբյեկտիվ պլանները» (իսկ նա հենց սրանք է սխալական հայտարարում), ապա նա պետք է ցույց տար, թե հատկապես ինչ օբյեկտիվ փաստեր են անտեսվում այդ պլանների մեջ, և մեղադրեր «Искра»-յին այդ անտեսման համար՝ գիտակցականության պակասության մեջ, նրա լեզվով արտահայտած՝ «գիտակցական էլեմենտի նվազեցման» մեջ: Իսկ եթե

նա՝ սուբյեկտիվ պլաններից դժգոհ, այլ պատճառաբանություններ չունի բացի «տարերային էլեմենտի նվազեցման» (!!) հիշատակումը, ապա նա դրանով ապացուցում է միայն, վոր նա (1) թեորիապես՝ մարքսիզմն ըմբռնում է à la Կարեյեվներ և Միխայլովսկիներ, վորոնք բավականաչափ ծաղրվել են Բելտովի կողմից, (2) գործնականապես՝ միանգամայն գոհ է այն «զարգացման տարերային էլեմենտներից», վորոնք մղում էին մեր լեգալ մարքսիստներին բերնչտայնականության դիրքը, իսկ մեր սոցիալ-դեմոկրատներին՝ եկոնոմիզմի դիրքը, և վոր նա «հույժ բարկացած է» այն մարդկանց վրա, վորոնք վճռականություն ունեն ինչպես էլ վոր լինի հանելու ռուսական սոցիալ-դեմոկրատիան «տարերային» զարգացման ուղուց:

Իսկ հետո արդեն բոլորովին զվարճալի բաներ են գալիս: «Ճիշտ այնպես, ինչպես մարդիկ, չնայած բնական գիտությունների բոլոր հաջողություններին, կրազմանան հին-պապենական յեղանակով,—նույնպես էլ նոր հասարակակարգի յերևան գալը, չնայած հասարակական գիտությունների բոլոր հաջողություններին և գիտակից մարտիկների աճմանը, այսուհետև էլ առավելապես տարերային պրոթկումների արդյունք կհանդիսանան» (19): Ճիշտ այնպես, ինչպես հին-պապենական իմաստությունն ասում է—յերեխա ունենալու համար ո՞վ խելք չունի, այնպես էլ «նորագույն սոցիալիստների (à la Նարցիս Տուպոռիով) իմաստությունն ասում է. վորպեսզի նոր հասարակական կարգերի տարերայնորեն լույս աշխարհ գալուն մասնակցեն, յուրաքանչյուրին էլ խելքը հերիք կանի: Մենք էլ ենք կարծում, վոր յուրաքանչյուրին էլ հերիք կանի: Այսպիսի մասնակցության համար բավական է յենթարկվել եկոնոմիզմին, յերբ թագավորում է եկոնոմիզմը, տեռորիզմին, յերբ առաջացել է տեռորիզմը: Այսպես, «Рабочее Дело»-ն այս տարի գարնանը, յերբ այնքան կարևոր էր նախագդուշացնել տեռորով տարվելուց, տարակուսանքով կանգնած էր իր համար «նոր» հարցի առաջ: Իսկ այժմ, կես տարի անց, յերբ հարցը դադարել է այնպիսի որվա չարիք լինելուց, նա միաժամանակ հրամցնում է մեզ և հետևյալ հայտարարությունը—«մենք կարծում ենք, վոր սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը չի կարող և չպիտի լինի տեռորիստական տրամադրությունների վերելքին հակադրելը» («Р. Д.» № 10, էջ 23), և համագումարի բանաձևը—«Սիստեմատիկ հարձակողական տեռորը համագումարն անժամանակ է համարում» («Два с'езда», էջ 18): Ինչպե՞ս սա զարմանալիորեն պարզ ու կապակցված է: Զենք հակադրում,—բայց համարում ենք, վոր անժամանակ է, ըստվորում հայտարարում ենք այնպես, թե վոչ-սիստեմատիկ և պաշտպանողական տեռորը «բանաձևով» չի ընդդրկվում: Պետք է խոստովանել, վոր այսպիսի բանաձևը շատ անվտանգ է և միանգամայն ապահովված է սխա-

գականությունից, ինչպես ազատված է սխալներից այն մարդը, որը խոսում էր, որպեսզի վոչինչ չասի՞: Ցեվ այդպիսի բանաձև կազմելու համար միայն մի՛ բան է պետք՝ շարժման պոչից գնալ կարողանալ: Ցերը «Искра»-ն ծիծաղում էր այն բանի վրա, որ «Рабочее Дело»-ն տեսորի հարցը նոր հարց է հայտարարել*), այնժամանակ «Рабочее Дело»-ն բարկացած մեղադրում է «Искра»-յին «կուսակցական կազմակերպության վզին տակտիկական հարցերի այնպիսի լուծում փաթաթելու ուղղակի անհավատալի հավակնության մեջ, որ ավել է եմիգրանտ-դրողների մի խումբ ավելի քան 15 տարի սրանից առաջ» (էջ 24): Իսկապես ինչպիսի՞ հավակնոտություն և դիտակցական տարրի ինչպիսի՞ չափազանցություն—թեորիապես նախորոք լուծել հարցերը, որպեսզի հետո համոզել թե՛ կազմակերպությանը, թե՛ կուսակցությանը, թե՛ մասսային այդ լուծման ճշմարտության մեջ**): Ի՞նչ եմ ասում՝ պարզապես հինը կրկնես և, վոչ վոքի վզին վոչինչ «չփաթաթելով», յենթարկվես յուրաքանչյուր «չրջադարձին» թե՛ դեպի եկոնոմիզմը, թե՛ դեպի տեսորիզմը: «Рабочее Дело»-ն նույնիսկ ընդհանրացնում է առորյա իմաստության այս մեծ պատգամը, մեղադրելով «Искра»-յին և «Заря»-յին նրա համար, որ «իրենց ծրագիրը հակադրում են շարժմանը, որպես մի վոդու, որ սավառնում է անձև քաոսի վրա» (էջ 29): Ապա ինչո՞ւմն է կայանում սոցիալ-դեմոկրատիայի դերը, յեթե վոչ նրանում, որ նա «վոգի» լինի, որ վո՛չ միայն սավառնում է տարերային շարժման վրա, այլև բարձրացնում է այդ վերջինը մինչև «իր ծրագիրը»: Հո այն չէ՞ նրա դերը, որ քարշ գա շարժման պոչից· լավագույն դեպքում այդ անոդուտ է շարժման համար, վատագույն դեպքում՝ շատ ու շատ վնասակար: Իսկ «Рабочее Дело»-ն վո՛չ միայն հետևում է այդ «տակտիկա-պրոցեսին», այլև սկզբունք է դարձնում այն, այնպես որ ավելի ճիշտ կլիներ նրա ուղղությունը անվանել վո՛չ թե ոպորտունիզմ, այլ (պոչ բառից) պոչականություն: Ցեվ չի կարելի չխոստովանել, որ մարդիկ, որոնք հաստատ կերպով վճռել են միշտ գնալ շարժման հետևից, իբրև նրա պոչը, ընդմիշտ և բացարձակորեն ազատված են «զարգացման տարերային ելեմենտի նվազեցումից»:

* * *

Այսպես ուրեմն, մենք համոզվեցինք, որ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ յերևան յեկած «նոր ուղղության» հիմնական

*) Տե՛ս ներկա հրատարակությունը, էջ 21: Խմբ·:

**) Զգեցք է մոռանալ նաև այն, որ «թեորիապես» լուծելով տեսորի հարցը, «Осв. Тр.» խումբն ընդհանրացրել է նախորդ հեղափոխական շարժման փորձը:

գլխավոր այն է, որ նա խոնարհվում է տարերայնության առաջ, չի ըմբռնում այն, որ մասսայի տարերայնությունը պահանջում է մեզանից, սոցիալ-դեմոկրատներից, ահագին դիտակցականություն: Որքան ավելի մեծ է մասսաների տարերային վերելքը, որքան ավելի յե յայնանում շարժումը, այնքան ավելի ևս անհամեմատ արագ է աճում սոցիալ-դեմոկրատիայի թե՛ թեորիական, թե՛ քաղաքական, թե՛ կազմակերպական աշխատանքում դիտակցականության պահանջը:

Ռուսաստանում մասսաների տարերային վերելքը կատարվել է (և շարունակում է կատարվել) այնպիսի արագությամբ, որ սոցիալ-դեմոկրատական յերիտասարդությունը անպատրաստ հանդիպացավ այդ հսկայական խնդիրների իրագործման համար: Այդ անպատրաստվածությունը մեր ընդհանուր դժբախտությունն է, բոլոր ռուսական սոցիալ-դեմոկրատների դժբախտությունը: Մասսաների վերելքն ընթանում և յայնանում էր անընդհատ և հաջորդաբար, վո՛չ միայն չդադարելով այնտեղ, որտեղ նա սկիզբն էր առել, այլև գրավելով նոր վայրեր և բնակչության նոր խավեր (բանվորական շարժման ազդեցության տակ աշխուժացավ ուսանող յերիտասարդության, ընդհանրապես ինտելիգենցիայի, նույնիսկ նաև գյուղացիության խմորումը): Իսկ հեղափոխականները հետ յային մնում այդ վերելքից թե՛ իրենց «թեորիաներում» և թե՛ իրենց գործունեության մեջ, նրանց չեր հաջողվում ստեղծել անընդհատ և հաջորդական կազմակերպություն, որ ընդունակ լիներ ղեկավարել ամբողջ շարժումը:

Առաջին գլխում մենք հավաստեցինք մեր թեորիական խնդիրների նվաստացումը «Рабочее Дело»-յի կողմից և մոդա դարձած «քննադատության ազատություն» կոչի «տարերային» կրկնումը· կրկնողները չունեցան բավականաչափ «դիտակցականություն»՝ ըմբռնելու համար «քննադատ»-ոպորտունիստների և հեղափոխականների դիրքերի տրամագծային հակադրությունը Գերմանիայում և Ռուսաստանում:

Հաջորդ գլուխներում մենք կքննենք, թե ինչպես եր արտահայտվում այդ խոնարհումը տարերայնության առաջ սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական խնդիրների և կազմակերպական աշխատանքի բնագավառում:

III

ՏՐԵԴ-ՅՈՒՆԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դարձյալ սկսենք «Рабочее Дело»-յի գովքից: Իր հոդվածը («Рабочее Дело»-յի 10-րդ համարում) «Искра»-յի հետ ունեցած տարաձայնությունների մասին Մարտինովն այսպես է վերնագրել—«Մերկացնող

գրականությունը և պրոլետարական պայքարը»։ «Մենք չենք կարող սահմանափակվել նրա (բանվորական կուսակցության) զարգացման ուղու վրա կանգնած կարգերի մերկացումով միայն։ Մենք պետք է նույնպես արձագանգենք պրոլետարիատի մերձավորագույն և ընթացիկ շահերին» (եջ 63)—այսպես է ձևակերպել նա այդ տարաձայնությունների էությունը։ «... «Искра»-ն... փաստորեն հեղափոխական ոգեշնչիչի որդան է, որ մերկացնում է մեր կարգերը և—առավելապես քաղաքական կարգերը... Իսկ մենք աշխատում ենք և աշխատելու ենք բանվորական գործի համար՝ որդանական սերտ կապ պահպանելով պրոլետարական պայքարի հետ» (նույն տեղը)։ Չի կարելի չնորհակալ չլինել Մարտինովից այս ձևակերպման համար։ Նա ընդհանուր խոշոր հետաքրքրություն և ձեռք բերում, որովհետև եյապես ընդգրկում է ոչ միայն մեր և «Рабочее Дело»-յի տարաձայնությունները մենակ, այլև առհասարակ բոլոր տարաձայնությունները, որ գոյություն ունեն մեր և «եկոնոմիստների» միջև քաղաքական պայքարի հարցի վերաբերյալ։ Մենք արդեն ցույց տվինք, որ «եկոնոմիստներն» անպայմանորեն չեն ժխտում «քաղաքականությունը», այլ միայն շարունակ քաղաքականության սոցիալ-դեմոկրատական ըմբռնումից չեղվում են դեպի տրեդ-յունիոնիստականը։ Ճիշտ նույնպես չեղվում է նաև Մարտինովը, ուստի և մենք համաձայն ենք հենց նրան վերցնել որպես տնտեսական մոլորությունների նմուշ՝ տվյալ խնդրի վերաբերմամբ։ Այսպիսի ընտրության համար—մենք կաշխատենք այդ ցույց տալ—իրավունք չեն ունենա արտնջալու մեզ վրա ո՛չ «Рабочая Мысль»-ի «Առանձին հավելվածի» հեղինակները, ո՛չ «Ինքնազատագրման խմբի» պրոկլամացիայի հեղինակները, ո՛չ Искра»-յի 12-րդ համարում զետեղված եկոնոմիական նամակի հեղինակները։

ա) ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՆԵՂԱՑՈՒՄՆ ԵԿՈՆՈՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ամենքին հայտնի է, որ ռուսական բանվորների տնտեսական*) պայքարի լայն տարածումն ու ամրապնդումն ընթացել է ձեռքձեռքի տված տնտեսական (գործարանային և պրոֆեսիոնալ) մերկացումներ

*) Թյուրիմացություններից խուսափելու համար նկատենք, որ հետագա շարադրման մեջ մենք ամենուրեք տնտեսական պայքար ասելով հասկանում ենք (մեզանում հաստատված բառագործածության համաձայն) այն «գործնական-տնտեսական պայքարը», որ ենթադրվում է բերված քաղվածքի մեջ անվանել է «դիմադրություն կապիտալիստներին» և որ ազատ յերկրներում կոչվում է պրոֆեսիոնալ, սինդիկալ կամ տրեդ-յունիոնիստական պայքար։

ների «գրականության» ստեղծման հետ։ «Թերթիկների» գլխավոր բովանդակությունը գործարանային կարգերի մերկացումներն եյին, և բանվորների մեջ չուտով բռնկվեց մերկացումների իսկական կիրք։ Հենց որ բանվորները տեսան, որ սոցիալ-դեմոկրատների խմբակները ցանկանում և կարողանում են հասցնել նրանց նոր տեսակի թերթիկներ, որոնք ամբողջ ճշմարտությունն են ասում նրանց թշվառ կյանքի, չափից դուրս աշխատանքի և իրավազուրկ դրության մասին,—նրանք, կարելի յե ասել, սկսեցին անհամար թղթակցություններ տեղալ ֆաբրիկաներից և գործարաններից։ Այդ «մերկացնող գրականությունն» ահագին սենսացիա յեր առաջացնում վո՛չ միայն այն գործարանում, որի կարգերը խարազանում եր տվյալ թերթիկը, այլև բոլոր այն գործարաններում, որտեղ որևե բան լսել եյին մերկացված փաստերի մասին։ Իսկ որովհետև զանազան գործատների և զանազան պրոֆեսիոնալ բանվորների կարիքներն ու աղետները շատ ընդհանուր բան ունեն, ապա «ճշմարտությունը բանվորական կյանքի մասին» հիացնում եր ամենքին։ Ամենահետամնաց բանվորների մեջ զարգացավ իսկական կիրք «տպագրելու»—աղնիվ կիրք զեպի պատերազմի այս սաղմային ձևը ընդդեմ ժամանակակից ամբողջ հասարակակարգի, որը կառուցված է կողոպուտի ու ճնշման վրա։ Յեվ «թերթիկները» մեծ մասամբ իրոք պատերազմի հայտարարություններ եյին, որովհետև մերկացումը սոսկալի դրգռող ազդեցություն եր գործում, բանվորների կողմից առաջացնում եր ընդհանուր պահանջ՝ ամենաաղաղակող այլանդակությունները վերացնելու, և պատրաստակամություն՝ այդ պահանջները գործադուլներով պաշտպանելու։ Իրենք գործարանատերերը վերջիվերջո այն աստիճանի հարկադրված եյին ընդունել այդ թերթիկների նշանակությունը, որպես պատերազմի հայտարարություն, որ շատ հաճախ չեյին կամենում նույնիսկ սպասել պատերազմին։ Մերկացումներն, ինչպես և միշտ, իրենց յերևան գալու հենց փաստով արդեն ուժեղ դարձան, ձեռք բերին բարոյական հզոր ճնշման նշանակություն։ Հաճախ պատահում եր, որ թերթիկի սոսկ յերևան գալը բավական եր լինում բոլոր պահանջների կամ նրանց մի մասի բավարարման համար։ Մի խոսքով՝ տնտեսական (գործարանային) մերկացումները յեղել են և այժմ ել մնում են տնտեսական պայքարի կարևոր լծակ։ Յեվ նրանց այդ նշանակությունը կպահպանվի, քանի դեռ գոյություն կունենա կապիտալիզմը, որ անհրաժեշտորեն ծնում է բանվորների ինքնապաշտպանությունը։ Յեվրոպական ամենաառաջավոր յերկրներում կարելի յե դիտել նաև այժմ, թե ինչպես վորևե հետամնաց վայրի «արհեստագործության» կամ տնային աշխատանքի վորևե բոլորից մոռացված ճյուղի այլանդակությունների մերկացումը յելակետ

և ծառայում դասակարգային գիտակցության արթնացման, պրոֆեսիոնալ պայքարի սկզբնավորության և սոցիալիզմի տարածման*)։

Վերջին ժամանակի ռուսական սոցիալ-դեմոկրատների գերակշռող մեծամասնությունը գրեթե բոլորովին կլանված է յեղել գործարանային մերկացումների կազմակերպման այդ աշխատանքով։ Բավական է մտաբերել «Рабочая Мысль»-ը, վորպեսզի տեսնենք, թե ինչ աստիճանի յեր հասնում այդ կլանումը, թե ինչպես ընդամին մոռացվում եր, վոր այդ ինքնատիպության եյապես դեռևս սոցիալ-դեմոկրատական գործունեություն չե, այլ միայն տրեդ-յունիոնիստական։ Մերկացումներն եյապես ընդդրկում եյին միայն տվյալ պրոֆեսիայի բանվորների հարաբերությունները դեպի իրենց տերերը և միայն ձեռք եյին բերում այն, վոր բանուժ վաճառողները սովորում եյին ավելի ձեռնտու վաճառել այդ «ապրանքը» և պայքարել գնողի դեմ զուտ առևտրային գործարքի հողի վրա։ Այդ մերկացումները կարող եյին դառնալ (պայմանով, վոր վորոշ կերպ նրանք ոգտագործվեյին հեղափոխականների կազմակերպության կողմից) սոցիալ-դեմոկրատական գործունեության սկիզբն ու բաղկացուցիչ մասը, բայց կարող եյին նմանապես տանել (իսկ տարերայնության առաջ խոնարհվելու դեպքում պետք և տանեյին) դեպի «միայն պրոֆեսիոնալ» պայքարը և դեպի վոչ-սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժումը։ Սոցիալ-դեմոկրատիան ղեկավարում է բանվոր դասակարգի պայքարը վո՛չ միայն հանուն բանվորական ուժի վաճառման նպաստավոր պայմանների, այլև հանուն այն հասարակակարգի վոչնչացման, վորը հարկադրում է չունևորներին վաճառվել հարուստներին։ Սոցիալ-դեմոկրատիան բանվոր դասակարգը ներկայացնում է վո՛չ թե միայն ձեռնարկուների տվյալ խմբակի նկատմամբ նրա ունեցած հարաբերությունների մեջ, այլ ժամանակակից հասարակության բոլոր դասակարգերի, պետության (վորպես կազմակերպված քաղաքական ուժի) նկատմամբ նրա ունեցած հարաբերությունների մեջ։ Այստեղից հասկանալի յե, վոր սոցիալ-դեմոկրատները վո՛չ միայն չեն կարող սահմանափակվել տնտեսական պայքարով, այլև չեն կարող թույլ տալ, վոր տնտեսական մերկացումների կազմակերպումը նրանց գերակշռող գործունեությունը կազմի։ Մենք պետք է ակտիվ կերպով ձեռնարկենք բանվոր դասակարգի քաղաքական դաստիարակության, նրա քաղաքական գիտակցության զարգացման գործին։ Այս բանին այժմ, ելնելով մոնոմիզմի դեմ «Заря»-յի և «Искра»-յի կատարած առաջին գրոհից հետո, «բոլորը համաձայն են» (թեև վոմանք խոսքով միայն, ինչպես հիմա կտեսնենք)։

Հարց է ծագում՝ ինչո՞ւմ պետք է կայանա քաղաքական դաստիարակությունը։ Կարելի՞ յե արդյոք բավականանալ այդ գաղափարի պրոպագանդայով, թե բանվոր դասակարգը թշնամի յե ինքնակալության։ Իհարկե վոչ։ Բավական չե բանվորների քաղաքական ճնշումը բացատրելը (ինչպես բավական չեր նրանց բացատրել իրենց շահերի հակադրությունը տերերի շահերի վերաբերմամբ)։ Անհրաժեշտ է ագիտացիա մղել այդ ճնշման ամեն մի կոնկրետ արտահայտության առթիվ (ինչպես վոր մենք սկսեցինք ագիտացիա մղել տնտեսական ճնշման կոնկրետ արտահայտությունների առթիվ)։ Իսկ քանի վոր այդ ճնշումն ընկնում է հասարակության ամենատարբեր դասակարգերի վրա, քանի վոր նա արտահայտվում է կյանքի և գործունեության ամենատարբեր բնագավառներում՝ թե՛ պրոֆեսիոնալ գործունեության, թե՛ ընդհանուր քաղաքացիական, թե՛ անձնական, թե՛ ընտանեկան, թե՛ կրոնական, թե՛ գիտական և այլն և այլն, ապա ակներև չե՞ մթթե, վոր մենք չենք կատարի բանվորների քաղաքական գիտակցությունը զարգացնելու մեր խնդիրը, յեթե մեզ վրա չվերցնենք ինքնակալության բազմակողմանի քաղաքական մերկացման կազմակերպումը։ Չե՞ վոր ճնշման կոնկրետ արտահայտությունների առթիվ ագիտացիա մղելու համար պետք է մերկացնենք այդ արտահայտությունները (ինչպես վոր պետք եր մերկացնել գործարանային չարաբարկությունները՝ տնտեսական ագիտացիա մղելու համար)։

Թվում է, թե պա՞րզ է այս։ Բայց հենց այստեղ ել դուրս է գալիս, վոր քաղաքական գիտակցությունը բազմակողմանի զարգացնելու անհրաժեշտությանը «բոլորը» համաձայն են միայն խոսքով։ Հենց այստեղ ել դուրս է գալիս, վոր, որինակ, «Рабочее Дело»-ն վո՛չ միայն իր վրա չի վերցրել բազմակողմանի քաղաքական մերկացումների կազմակերպումը (կամ կազմակերպման նախաձեռնությունը՝,

*) Ներկա գլխում մենք խոսում ենք միայն քաղաքական պայքարի մասին, նրա ավելի լայն կամ ավելի նեղ ըմբռնման մասին։ Ուստի միայն հարևանցիորեն նշենք, պարզապես վորպես կուրյոզ, «Рабочее Дело»-յի մեղադրելն «Искра»-յին այն բանում, վոր վերջինս «ավելորդ ժուժկալությամբ» և վերաբերվում տնտեսական պայքարին («Два съезда», էջ 27, ծամծմված է Մարտինովի կողմից նրա «Սոցիալ-դեմոկրատական և բանվոր դասակարգը» բրոշյուրում)։ Ցեթե վոր պ. պ. մեղադրողներն արտահայտեին թեկուզ մեթերով կամ ապագրական թերթերով (ինչպես նրանք սիրում են անել այդ) տնտեսական պայքարի բաժինն «Искра»-յում մի տարվա ընթացքում և համեմատեին «Рабочее Дело»-յի և «Рабочая Мысль»-ի համապատասխան բաժինների հետ, յերկուսը միասին վերցրած, ապա նրանք հեշտությամբ կտեսնեին, վոր նրանք հետ են մնում նույնիսկ այդ տեսակետից։ Ցեբեի, այս պարզ ճշմարտության գիտակցությունն և հարկադրում նրանց դիմելու այնպիսի փաստարկների, վորոնք պարզ ցույց են տալիս նրանց չփոթմունքը։ «Искра»-ն,—գրում են նրանք,—«կամա թե ակամա (!) հարկադրված է (!) հաշվի առնել կյանքի հրամայական պահանջները և բանվորական շարժման մասին գեթ (!!) թղթակցություններ գետեղել» («Два съезда», էջ 27)։ Ա՛յ արդեն իսկապես մեղ վոչնչացնող արդումենտ։

այլ սկսել է հետ քաշ տալ նաև «Искра»-յին, վոր ձեռնարկեց այդ խնդրի իրագործման։ Լսեցե՛ք. «Բանվոր դասակարգի քաղաքական պայքարը տնտեսական պայքարի սոսկ» (հենց վոչ սոսկ) «առավել զարգացած, լայն և իրական ձևն է» («Рабочее Дело»-յի ծրագիրը, «Рабочее Дело» № 1, էջ 3)։ «Այժմ սոցիալ-դեմոկրատների առջև կանգնած է մի խնդիր—ինչպես ըստ հնարավորության քաղաքական քնույթ տալ հենց տնտեսական պայքարին»։ (Մարտինով, 10-րդ համարում, էջ 42)։ «Տնտեսական պայքարը մասսային ակտիվ քաղաքական պայքարի մեջ ներգրավելու ամենալայն կիրառելի միջոցն է» (Միության համագումարի բանաձևն ու «ուղղումները». «Два с'езда», էջ 11 և 17)։ Այս բոլոր դրույթներն, ինչպես տեսնում է ընթերցողը, տոգորում են «Рабочее Дело»-յին հենց իր ծագման որից ընդհուպ մինչև վերջին «խմբագրության հրահանգները», և դրանք բոլորն էլ, ակներև է, վոր մի հայացք են արտահայտում քաղաքական ագիտացիայի և պայքարի վերաբերմամբ։ Ապա մեկ ուշադրությամբ քննեցեք այդ հայացքը բոլոր եկոնոմիստների մեջ դերիշխող այն կարծիքի տեսակետից, թե քաղաքական ագիտացիան պետք է հետևի տնտեսականին։ Ճի՞շտ է արդյոք այդ, վոր տնտեսական պայքարն առհասարակ*) «ամենալայն կիրառելի միջոցն է» մասսային քաղաքական պայքարի մեջ ներգրավելու համար։ Ամենևին էլ ճիշտ չէ։ Այդպիսի «ներգրավման» համար վոչ պակաս «լայն կիրառելի» միջոցներ են վոստիկանական ճնշման և ինքնակալական կամայականության բոլոր և ամեն տեսակի արտահայտությունները, և վոչ թե միայն այնպիսի արտահայտությունները, վորոնք կապված են տնտեսական պայքարի հետ։ Զեմստվային նաչալնիկները և գյուղացիների մարմնական պատիժը, չինովնիկների կաշառակերությունն ու վոստիկանության վարվելակերպը քաղաքի «հասարակ ժողովրդի» հետ, պայքարը սովյալների դեմ և ժողովրդի՝ դեպի լույսն ու դիտությունն ունեցած ձգտման խափանումը, տուրքերի բռնի գանձումն ու աղանդավորների հալածումը, զինվորների բիրտ դաստիարակությունը և գռեհիկ զինվորական վերաբերմունքն ուսանողների ու լիբերալ ինտելիգենցիայի նկատմամբ,—ինչո՞ւ ճնշման այս բոլոր և նման ուրիշ հազարավոր արտահայտություններ, վոր անմիջականորեն կապված չեն «տնտեսական» պայքարի հետ, առհասարակ ներկայացնում են քաղաքական ագիտացիայի և մասսան քաղաքական կռվի մեջ ներգրավելու պակաս «լայն կիրառելի» միջոցներ և առիթներ։ Ճիշտ հակառակը, կենսական դեպքերի այն ընդհանուր գումարի մեջ, յերբ բանվորը տուժում է (իր, թե իր մերձավոր մարդկանց համար) անիրավ անարդարությունից, կամայականությունից ու բռնությունից, վոստիկանական ճնշման դեպքերը, անտարակույս, միայն աննշան փոքրամասնությունն են կազմում հենց արհեստակցական պայքարի մեջ։ Եվ ի՞նչ միտք ունի նախապես քաղաքական ագիտացիայի թափը նեղացնելը, միջոցներից մեկը միայն հայտարարելով «ամենալայն կերպով կիրառելի», վորի կողքին սոցիալ-դեմոկրատի համար պետք է կանգնեն այլ՝ ընդհանրապես ասած՝ վոչ պակաս «լայն կիրառելի» միջոցներ։

Վաղուց, վաղուց անցած ժամանակներում (մի տարի առա՛ջ...) «Рабочее Дело»-ն գրում էր. «Մերձավորագույն քաղաքական պահանջները մասսայի համար մատչելի կդառնան մեկ կամ, ծայրահեղ դեպքում, մի քանի գործադուլներից հետո, հենց վոր կառավարությունը գործի դնի վոստիկանությունն ու ժանդարմերիան» (№ 7, էջ 15, ոգոստոս 1900 թիվ)։ Ստագիաների այս ոպորտունիստական թեորիան այժմ արդեն մերժել է Միությունը, վորը մեզ դիջում է անում հայտարարելով—«վոչ մի անհրաժեշտություն չկա հենց սկզբից քաղաքական ագիտացիա մղելու միայն տնտեսական հողի վրա» («Два с'езда», էջ 11)։ Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ապագա պատմաբանը Միության կողմից իր հին մոլորությունների մի մասի միայն այս բացասումից, քան ամեն տեսակ յերկար դատողություններից, ավելի լավ կտեսնի, թե ի՞նչպիսի ստորացման ելին հասցնում սոցիալիզմը մեր եկոնոմիստները։ Բայց ինչպիսի՞ միամտություն եր այն, վոր Միությունը յերևակայում եր, թե քաղաքականության նեղացման մի ձևից հրաժարվելու գնով մեզ կարելի յե դրդել համաձայնելու նեղացման մի այլ ձևին։ Ավելի արամաբանական չե՞ր լինի արդյոք, վոր հենց այստեղ էլ ասվեր, թե տնտեսական պայքարը պետք է մղել ինչքան կարելի յե լայն կերպով, վոր այն շարունակ պետք է ոգտագործել քաղաքական ագիտացիայի համար, բայց «վոչ մի անհրաժեշտություն չկա տնտեսական պայքարը համարելու մասսային քաղաքական ակտիվ պայքարի մեջ ներգրավելու ամենից ավելի լայն կիրառելի միջոցը։

*) Մենք ասում ենք «առհասարակ», վորովհետև «Рабочее Дело»-յի մեջ խոսքն ամբողջ կուսակցության հենց ընդհանուր սկզբունքների և ընդհանուր խնդիրների մասին է։ Անտարակույս է, վոր գործնականում լինում են դեպքեր, յերբ քաղաքականությունն իրոք պետք է հետևի եկոնոմիկային,—բայց այդ մասին խոսել մի բանաձևի մեջ, վոր նախանշանակված է ամբողջ Ռուսաստանի համար, կարող են միայն եկոնոմիստները։ Չե՞ վոր այնպիսի դեպքեր են լինում, յերբ «հենց սկզբից» կարելի յե քաղաքական ագիտացիա մղել «միայն տնտեսական հողի վրա»,—և այնուամենայնիվ, «Рабочее Дело»-ն վերջիվերջո հասել է այն մտքին, թե դրա «վոչ մի անհրաժեշտությունը չկա» («Два съезда», էջ 11)։ Հետևյալ դլխում մենք ցույց կտանք, վոր «պոլիտիկների» և հեղափոխականների տակտիկան վո՛չ միայն չի անգիտանում սոցիալ-դեմոկրատիայի տրեդ-յունիոնիստական խնդիրները, այլ, ընդհակառակը, միայն նա յե, վոր ապահովում է այդ խնդիրների հետևողական իրագործումը։

Միութիւնը նշանակութիւն է տալիս այն բանին, որ նա «լավագույն միջոց» արտահայտութիւնը (կա Հրեական Բանվորական Միության (Բունդի) IV համագումարի համապատասխան բանաձևում) փոխարինել է «ամենից ավելի լայնորեն կիրառելի միջոց» արտահայտությամբ: Մենք, իսկապես, կդժվարանայինք ասել, թե այդ բանաձևերից որն է լավ. մեր կարծիքով, յերկուսն ել վատթար են: Թե՛ Միությունը, թե՛ Բունդը այստեղ շեղվում են (մասամբ դուցե նույնիսկ անգիտակցաբար, տրադիցիայի ազդեցության տակ) դեպի քաղաքականության տնտեսական, տրեդ-յունիոնիստական մեկնաբանություն: Բանն ըստ էության ամենևին չի փոխվում նրանից՝ այդ արվում է արդյոք «լավագույն» բառի միջոցով, թե՞ «ամենից ավելի լայնորեն կիրառելի» բառերի միջոցով: Յեթե Միությունն ասեր, թե «քաղաքական ագիտացիան տնտեսական հողի վրա» ամենից ավելի լայնորեն կիրառվող (և վոչ թե «կիրառելի») միջոցն է, ապա նա արդարացի կլիներ մեր սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացման վորոշ ժամանակաշրջանի վերաբերմամբ: Հատկապես նա արդարացի կլիներ 1898—1901 թ. թ. եկոնոմիստների վերաբերմամբ, շատ պրակտիկների վերաբերմամբ (յեթե վոչ նրանց մեծամասնության), վորովհետև այդ պրակտիկ եկոնոմիստներն, իրոք, քաղաքական ագիտացիան կիրառում եյին (վորշափով վոր նրանք առհասարակ կիրառո՛ւմ եյին) գրեթե բացառապես տնտեսական հողի վրա: Այդպիսի քաղաքական ագիտացիան ընդունում եյին և նույնիսկ հանձնարարում, ինչպես տեսանք, թե՛ «Рабочая Мысль»-ը և թե՛ «ինքնազատագրմա՛ն խումբը»: «Рабочее Дело»-ն պետք է վճռականորեն դատապարտեր այն, վոր տնտեսական ագիտացիայի ոգտակար գործին ուղեկցում եր քաղաքական պայքարի վնասակար նեղացումը, իսկ նա դրա փոխարեն ամենից ավելի լայնորեն կիրառվող (եկոնոմիստների կողմից) միջոցը հայտարարում է ամենից ավելի լայնորեն կիրառելի՛ միջոց: Զարմանալի չէ, վոր յերբ մենք այս մարդկանց եկոնոմիստ ենք անվանում, ել նրանց վոչինչ չի մնում, քան մեզ ամեն կարգի հայհոյանք՝ տալը—և՛ «միստիֆիկատորներ», և՛ «կազմալուծիչներ», և՛ «պապական նունցիուսներ», և՛ «զրպարտիչներ»*), քան ամենքի և յուրաքանչյուրի առաջ լաց լինելը, թե իրենց ծանր վիրավորանք են հասցրել, քան մինչև իսկ յերդվելով հայտարարելը, թե «եկոնոմիզմի մեջ այժմ վճռական նապես սոցիալ-դեմոկրատական վոչ մի կազմակերպություն հանցավոր չե»**): Ա՛խ այդ զրպարտիչները, չար քաղաքաղեանե՛ը: Դիտմամբ

*) «Два съезда» բրոշյուրի խոսքերն արտահայտությունները. եջ 31, 32, 28 և 30:

**) «Два съезда», եջ 32:

չե՞ք արդյոք, վոր նրանք հնարեցին այս ամբողջ եկոնոմիզմը, վորպեսզի մարդկանց ծանր վիրավորանք հասցնեն միմիայն իրենց մարդատյացության պատճառով:

Ի՞նչ կոնկրետ, իրական իմաստ ունի Մարտինովի շուրթերում սոցիալ-դեմոկրատիայի առջև խնդիր դնելը—«տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ տալ»: Տնտեսական պայքարը բանվորների կոլեկտիվ պայքարն է տերերի դեմ՝ բանուժի վաճառման նպաստավոր պայմանների համար, բանվորների աշխատանքի և կյանքի պայմանների բարելավման համար: Այդ պայքարն անհրաժեշտորեն պրոֆեսիոնալ պայքար է, վորովհետև աշխատանքի պայմանները խիստ զանազանակերպ են տարբեր պրոֆեսիաների մեջ և, հետևապես, այդ պայմանների բարելավման համար մղվող պայքարը չի կարող չմղվել ըստ պրոֆեսիաների (պրոֆեսիոնալ միությունների միջոցով Սբևմուտքում, պրոֆեսիոնալ ժամանակավոր միավորումների և թերթիկների միջոցով Ռուսաստանում և այլն): «Տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ» տալը նշանակում է, հետևապես, ձգտել հենց նույն պրոֆեսիոնալ պահանջների իրագործմանը, աշխատանքի պայմանների հենց նույն պրոֆեսիոնալ բարելավմանը «որենդրական և վարչական ձեռնարկումների» միջոցով (ինչպես Մարտինովն է արտահայտում իր հոդվածի հաջորդ, 43-րդ եջում): Հենց այդ են անում և միշտ անում եյին բոլոր պրոֆեսիոնալ բանվորական միությունները: Վերցրեք հիմնավոր գիտնականներ (և «հիմնավոր» ոպորտունիստներ) Վեբ ամուսինների գրվածքը, և դուք կտեսնեք, վոր անգլիական բանվորական միությունները շատ վաղուց են գիտակցել և իրագործում են «տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ տալու» խնդիրը, շատ վաղուց են պայքարում գործադուլների ազատության համար, կոոպերատիվ և պրոֆեսիոնալ շարժման դեմ հարուցվող բոլոր և ամեն տեսակ իրական արգելքների վերացման համար, կանանց և մանուկներին պաշտպանելու նպատակով որենքներ հրատարակելու համար, աշխատանքի պայմանների բարելավման համար՝ սանիտարական և գործարանային որենդրության միջոցով և այլն:

Այսպիսով «տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ տալ» շքեղ ֆրազի հետևը,—վոր «սարսափելի» խորիմաստ և հեղափոխական որեն է հնչում,—եյապես թաղնվում է սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը տրեդ-յունիոնիստական քաղաքականության աստիճանի՛ ստորացնելու ամենդական ձգտումը: «Искра»-յի միակողմանիությունը շտկելու պատրվակով, վորը («Искра»-ն) իբր թե «զոգմայի հեղափոխականացումը բարձր է դասում կյանքի հեղափոխականացու-

մից»*), մեզ հրամցնում են վորպես նոր բան՝ պայքար տնտեսական ռեֆորմների համար: Իրոք, «տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ տալ» ֆրազի մեջ ամենևին այլ բան չի պարունակվում, քան պայքարը տնտեսական ռեֆորմների համար: Յեվ Մարտինովն ինքը կարող եր հասնել այս պարզիմաստ յեղրակացության, յեթե լավ թափանցեր իր սեփական խոսքերի նշանակության մեջ: «Մեր կուսակցությունն,—ասում է նա, իր ամենածանր թնդանոթն առաջ մղելով «Искра»-յի դեմ,—կարող եր և պետք է կառավարության առաջ դներ որենսդրական և վարչական ձեռնարկումների կոնկրետ պահանջներ, ձեռնարկումներ ընդդեմ տնտեսական շահագործման, ընդդեմ դործազրկության, ընդդեմ սովի և այլն» (եջ 42—43 «Рабочее Дело»-յի № 10): Ձեռնարկումների կոնկրետ պահանջներ—մի՞թե սոցիալական ռեֆորմների պահանջ չե այս: Յեվ մենք մի անդամ ևս հարցնում ենք անաչառ ընթերցողներին. զրպարտո՞ւմ ենք արդյոք մենք ռաբոչեդելականներին (թող ներվի՛ ինձ այդ տարածված անհոռնի խոսքը), անվանելով նրանց ծպտյալ բերնշտայնականներ, յերբ նրանք առաջադրում են, վորպես իրենց տարաձայնություն «Искра»-յի հետ, տնտեսական ռեֆորմների համար մղելիք պայքարի անհրաժեշտության թեզիսը:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան միշտ մատնում եր և մատնում է իր գործունեության մեջ պայքարը ռեֆորմների համար: Բայց «տնտեսական» ագիտացիայից նա ոգտվում է կառավարությանը ներկայացնելու համար վո՛չ միայն ամեն տեսակ ձեռնարկումների պահանջ, այլ նաև (և ամենից առաջ) պահանջ՝ դադարել ինքնակալ կառավարություն լինելուց: Բացի դրանից, նա իր պարտականությունն է համարում ներկայացնել կառավարությանն այդ պահանջը վո՛չ միայն տնտեսական պայքարի հողի վրա, այլև ընդհանրապես հասարակական-քաղաքական կյանքի բոլոր արտահայտությունների հողի վրա: Մի խոսքով, նա ռեֆորմների համար մղվող պայքարը՝ վորպես ամբողջության մի մասը՝ յենթարկում է հանուն ազատության և հանուն սոցիալիզմի մղվող հեղափոխական պայքարին: Իսկ Մարտինովն այլ ձևով վերակենդանացնում է ստադիաների թեորիան, աշխատելով քաղաքական պայքարի այսպես ասած՝ անպայման տնտեսական զարգացման ուղի նախանշել: Հեղափոխական վերելքի վայրկյանին հրապարակ դալով իբրև թե ռեֆորմների համար մղվող պայքարի հատուկ «ինդրով», նա դրանով հետ է քաշում կուսակցությունը և գորավիդ հանդիսանում թե՛ «եկոնոմիական», թե՛ լիբերալ ոպորտունիզմին:

Այնուհետև: Ամոթխածորեն թաղցնելով ռեֆորմների համար մղվող պայքարը «տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ տալ» փքուն թեզիսի տակ, Մարտինովն առաջադրեց ինչ-վոր հատուկ մի բան, լոկ միմիայն տնտեսական (և նույնիսկ լոկ միմիայն գործարանային) ռեֆորմներ: Ինչու նա այդ արեց, մենք չդիտենք: Գուցե թերատեսությունի՞ց: Բայց յեթե նա նկատի ունենար վոչ միայն «գործարանային» ռեֆորմները, ապա այն ժամանակ հենց նոր մեր հիշատակած նրա ամբողջ թեզիսը կկորցներ ամեն մի իմաստ: Գուցե այն պատճառով, վոր նա հնարավոր և հավանական է համարում «զիջումներ» կառավարության կողմից միայն տնտեսակա՞ն բնագավառում*): Յեթե այո, ապա այդ տարորինակ մոլորություն է. զիջումներ հնարավոր են և լինում են նաև դանակոծության վերաբերյալ, անցագրերի վերաբերյալ, փրկանավճարների, ազատդավորության, գրաքննության վերաբերյալ որենսդրության և այլն և այլն բնագավառում: «Տնտեսական» զիջումները (կամ կեղծ-զիջումները) կառավարության համար, հարկավ, ամենից ավելի եժան են և ամենից ավելի շահավետ, վորովհետև նա դրանով հույս ունի իր նկատմամբ վստահություն ներշնչելու բանվորական մասսաներին: Բայց հենց այդ պատճառով ել մենք, սոցիալ-դեմոկրատներս, չպետք է վոչ մի կերպ և բացարձակապես վոչնչով տեղ տանք այն կարծիքին (կամ թյուրիմացությանը), թե իբր մեզ համար տնտեսական ռեֆորմներն ավելի թանդ են. թե իբր մենք հենց դրանք համարում ենք առանձնապես կարևոր և այլն: «Այդպիսի պահանջները,—ասում է Մարտինովը որենսդրական և վարչական ձեռնարկումների իր վերը առաջադրած կոնկրետ պահանջների մասին,—չեյին լինի զատարկ հնչյուն, վորովհետև, վորոշ չոշափելի արդյունքներ խոստանալով, նրանք կարող կլինեյին բանվորական մասսայի կողմից ակտիվ պաշտպանություն դտնել»... Մենք եկոնոմիստներ չենք, ո՛, վոչ: Մենք միայն նույնպես ստրկորեն սոդում ենք կոնկրետ արդյունքների «չոշափելիության» առաջ, ինչպես պարոնայք Բերնշտայնները, Պրոկոպովիչները, Ստրուվեները, Ռ. Մ.-ները և tutti quanti**): Մենք միայն հասկանալ ենք տալիս (Նարցիս Տուպորելովի հետ միասին), վոր այն ամենը, ինչ վոր չի «խոստանում չոշափելի

*) «Рабочее Дело», № 10, եջ 60: Սա Մարտինովյան վարիանտն է՝ մեր շարժման ժամանակակից, քաոսային վիճակի վերաբերմամբ այն թեզիսի կիրառման, թե «իրական շարժման ամեն մի քայլն ավելի կարևոր է, քան մի դյուժին ծրագրերը», մի կիրառում, վոր մենք արդեն բնութագրեցինք վերևում: Եյապես այս միայն ռուսերեն թարգմանությունն է Բերնշտայնի ախրահուչակ ֆրազի—«շարժումն ամեն ինչ է, վերջնական նպատակը՝ վոչինչ»:

*) եջ 43. «Իհարկե, յեթե մենք հանձնարարում ենք բանվորներին վորոշ տնտեսական պահանջներ ներկայացնել կառավարությանը, մենք այդ այն պատճառով ենք անում, վոր տնտեսական բնագավառում ինքնակալական կառավարությունը կարիքից դրդված պատրաստ է վորոշ զիջումներ անելու»:

**) — և նրանց նմանները: Խմբ.:

արդյունքներ»—«դատարկ հնչյո՛ւն» է: Մենք միայն այնպես ենք արտահայտվում, կարծես թե բանվորական մասսան անընդունակ է (և դեռ չի ապացուցել՝ հակառակ նրանց, ովքեր նրան են վերագրում իրենց ֆիլիստերությունը, իրենց ընդունակությունը) ակտիվ կերպով պաշտպանելու ինքնակալության դեմ կազմակերպվող ամեն մի բողոք, վոր նույնիսկ բացարձակապես վո՛չ մի շոշափելի արդյունք չի խոստանում նրան:

Վերցրե՛ք թեկուզ նույն, հենց իր՝ Մարտինովի բերած որինակները դործադրկության և սովի դեմ «միջոցառումների» մասին: Մինչդեռ «Рабочее Дело»-ն զբաղվում է, նրա տված խոստումից դատելով, «որենսդրական և վարչական միջոցառումների այնպիսի կոնկրետ (որինագծերի՞ ձևով) պահանջների» պատրաստմամբ և մշակմամբ, վորոնք «շոշափելի արդյունքներ են խոստանում»,—այդ ժամանակ «Искра»-ն, վոր «դոդմայի հեղափոխականացումը կյանքի հեղափոխականացումից անխուսափելի կերպով բարձր է դասում», աշխատում եր բացատրել, թե դործադրկությունն անքակտելիորեն կապված է կապիտալիստական ամբողջ հասարակակարգի հետ, նախադդուշացնում եր, թե «սովը դալիս է», մերկացնում եր «սովյալների դեմ վոստիկանական պայքարը» և վրդովեցուցիչ «ժամանակավոր-տաժանակիր կանոնները»: այդ ժամանակ «Заря»-ն բաց եր թողնում առանձին արտատպումով, վորպես ապիտացիոն բրոշյուր, «ներքին տեսության»՝ սովին նվիրված մասը: Բայց, ասված իմ, վորքա՛ն «միակողմանի» եյին այդ ժամանակ անուղղելի-նեղ որթոդոքսները, «բուն իսկ կյանքի» հրամանների հանդեպ խուլ դոդմատիկները: Նրանց հոդվածներից վոչ մեկում չկար, վոհ սարսա՛փ, վոչ մի, կարող ենք յերևակայել, վճռականապես վոչ մի այնպիսի «կոնկրետ պահանջ», վոր «շոշափելի արդյունքներ խոստանար»: Դժբա՛խտ դոդմատիկներ: Պետք է նրանց սովորելու ուղարկել Կրիչևսկիների և Մարտինովների մոտ՝ այն բանում համոզվելու համար, թե տակտիկան ամման պրոցես է, վոր աճում է և այլն և թե պետք է բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալ:

«Բանվորների տնտեսական պայքարը տերերի և կառավարության դեմ («տնտեսական պայքար կառավարությա՛ն դեմ»), բացի իր անմիջական հեղափոխական նշանակությունից ունի նաև այն նշանակությունը, վոր այն անընդհատ հրում է բանվորներին դեպի իրենց քաղաքական իրավազրկության հարցը» (Մարտինով, եջ 44): Մենք այս մեջբերումն արինք վոչ նրա համար, վոր կրկնենք հարյուրերորդ և հազարերորդ անդամ այն, ինչ վոր արդեն ասված է վերը, այլ նրա համար, վոր առանձին շնորհակալություն հայտնենք Մարտինովին այս նոր ու հիանալի ձևակերպման համար—«Բանվորների տնտեսական պայքարը տերերի և կառավարության դեմ»: Ի՞նչ հիանալի բան: Վորպիսի՛ աննման տաղանդով, եկոնոմիստների միջև յեղած բոլոր մասնավոր տարաձայնությունների և տարբերությունների նրբությունների վորպիսի՛ վարպետական վերացումով է արտահայտված այստեղ պարզ ու հակիրճ դրության մեջ՝ եկոնոմիզմի ամբողջ եյությունը, սկսած՝ բանվորներին «քաղաքական պայքարի կոչելուց, վոր նրանք մղում են հանուն ընդհանուր շահերի, նկատի ունենալով բոլոր բանվորների դրության բարելավումը»*), շարունակած ստադիաների թեորիայով, և վերջացրած՝ համագումարի «ամենից ավելի լայն կերպարիությամբ, և վերջացրած՝ համագումարի «ամենից ավելի լայն կերպարիությամբ» վերաբերյալ բանաձևով և այլն: «Տնտեսական պայքարը կառավարության դեմ» հենց տրեդ-յունիոնիստական քաղաքականություն է, վորից մինչև սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը դեռևս շատ և շատ հեռու յե:

բ) ՊԱՏՄԱԾՔ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՐՏԻՆՈՎԸ ԽՈՐԱՅՐԵՑ ՊԼԵԽԱՆՈՎԻՆ

«Վերջերս մեզանում ինչքա՛ն շատ սոցիալ-դեմոկրատական Լոմոնոսովներ յերևան յեկան», նկատեց մի անգամ մի ընկեր, նկատի ունենալով եկոնոմիզմի կողմը հակված անձերից շատերի այն զարմանալի հակումը, վոր անպայման «իրենց խելքով» մեծ ճշմարտությունների հասնեն (ինչպիսին է այն, թե տնտեսական պայքարը բանվորներին հրում է դեպի իրավազրկության հարցը), և ընդամենն անտեսել, հանճարեղ բնածին հոյակապ արհամարհանքով, ա՛յն ամենը, ինչ ավել է արդեն հեղափոխական մտքի և հեղափոխական շարժման նախորդ զարդացումը: Հենց մի այսպիսի բնածին է Լոմոնոսով-Մարտինովը: Աչքի անցկացրեք նրա «Очередные вопросы» հոդվածը, և դուք կտեսնեք, թե ինչպես նա «իր խելքով» մոտենում է այն բանին, ինչ վաղուց արդեն ասել է Ակսելրոդը (վորի մասին մեր Լոմոնոսովն, իհարկե, լիակատար լռություն է պահպանում), թե ինչպես նա սկսում է, որինակ, հասկանալ, վոր մենք չենք կարող անտեսել բուրժուազիայի այս կամ այն խավի ազդեցիկ լինելը («Р. Д.» № 9, եջ 61, 62, 71—համեմատի՛ր «Р. Д.»-յի խմբագրության՝ Ակսելրոդին ուղղած «Ответ»-ի հետ, եջ 22, 23—24) և այլն: Բայց ավա՛ղ, միայն «մոտենում է» և միայն «սկսում է», դրանից վոչ ավելի, վորովհետև Ակսելրոդի մտքերը նա համենայն դեպս դեռ այնքան չի հասկացել, վոր խոսում է «տերերի և կառավարության դեմ տնտեսա-

*) «Рабочая Мысль», «Առանձին հավելված», եջ 14:

կան պայքար մղելու» մասին: Յերեք տարվա ընթացքում (1898—1901) «Рабочее Дело»-ն ուժերը հավաքում եր, վոր հասկանա Ակսելրոդին, և—և այնուամենայնիվ նրան չհասկացա՛վ: Կարելի յե, դա առաջ է գալիս նույնպես նրանից, վոր սոցիալ-դեմոկրատիան, «մարդկության նման», միշտ իրեն միայն իրագործելի խնդիրնե՞ր է առաջադրում:

Բայց Լոմոնոսովները աչքի յեն ընկնում վո՛չ միայն նրանով, վոր շատ բան չգիտեն (դա դեռ այնքան էլ դժբախտություն չեր լինի), այլ նաև նրանով, վոր նրանք չեն գիտակցում իրենց տգիտությունը: Սա արդեն իսկական դժբախտություն է, և այս դժբախտությունը դրդում է նրանց միանգամից ձեռնարկել Պլեխանովի «խորացման» գործին:

«Այն ժամանակից, յերբ Պլեխանովը գրել է հիշված գրքույկը («О задачах социалистов в борьбе с голодом в России»), շատ ջուր է հոսել»,—պատմում է Լոմոնոսով-Մարտինովը.—«Սոցիալ-դեմոկրատները, վոր ղեկավարում եյին 10 տարվա ընթացքում բանվոր դասակարգի տնտեսական պայքարը... չկարողացան դեռևս տալ կուսակցական տակտիկայի լայն թեորիական հիմնավորումը: Այժմ այդ հարցը հասունացել է, և յեթե մենք կամենայինք տալ այդպիսի թեորիական հիմնավորում, մենք, անտարակույս, պետք է զգալիորեն խորացնեյինք տակտիկայի այն սկզբունքները, վոր յերբեմն զարգացնում եր Պլեխանովը... Մենք պետք է այժմ վորոշեյինք պրոպագանդայի և ագիտացիայի տարբերությունն այլ կերպ, քան այդ արել է Պլեխանովը» (Մարտինովը հենց նոր բերեց Պլեխանովի այս խոսքերը՝ «պրոպագանդիստը շատ դաղափարներ է տալիս մի անձի կամ միքանի անձերի, իսկ ագիտատորը տալիս է միայն մեկ կամ միայն միքանի դաղափարներ, սակայն նա տալիս է դրանք բազմաթիվ անձերի»): «Պրոպագանդա բառի տակ մենք կհասկանայինք ներկա ամբողջ իրավիճակի կամ նրա մասնավոր արտահայտությունների հեղափոխական լուսաբանությունը, միևնույն է՝ արվում է այդ արդյոք անհատների համար մատչելի ձևով, թե լայն մասսայի համար: Ագիտացիա բառի տակ, բառիս խիստ իմաստով (sic!), մենք կհասկանայինք մասսային վորոշ կոնկրետ գործողությունների կոչելը, աջակցություն պրոլետարիատի անմիջական հեղափոխական միջամտությանը հասարակական կյանքին»:

Շնորհավորում ենք ռուսական—և նմանապես միջազգային—սոցիալ-դեմոկրատիային նոր մարտինովյան ավելի խիստ և ավելի խորը տերմինոլոգիայի առթիվ: Մինչև այժմ մենք կարծում եյինք (Պլեխանովի, այլև միջազգային բանվորական շարժման բոլոր առաջնորդների հետ միասին), վոր պրոպագանդիստը, յեթե նա վերցնում է, որինակի համար, գործազրկության նույն այդ հարցը, պետք է պարզաբանի ճգնաժամերի կապիտալիստական բնույթը, ցույց տա նրանց անխուսափելիության պատճառը ժամանակակից հասարակության մեջ, ուրվագծի նրա՝ սոցիալիստական հասարակությունով փոխակերպվելու անհրաժեշտությունը և այլն: Մի խոսքով՝ նա պետք է «շատ դաղափարներ» տա, այնքան շատ, վոր միանդամից այդ բոլոր դաղափարներն, իրենց ամբողջ կապակցությամբ, կյուրացվեն միայն (համեմատաբար) փոքրաթիվ անձերի կողմից: Իսկ ագիտատորը, խոսելով նույն այդ հարցի մասին, կվերցնի իր բոլոր լսողներին ամենահայտնի և ամենաաչքի ընկնող որինակը—ասենք թե՝ գործազուրկ ընտանիքի մահը քաղցից, աղքատության ուժեղացումը և այլն—և իր բոլոր ջանքերին այնպիսի ուղղություն կտա, վորպեսզի ոգտվելով ամենքին և ամեն մեկին ծանոթ այդ փաստից, տա «մասսային» մեկ գաղափար՝ հարստության աճման և աղքատության աճման միջև յեղած հակասության անխմաստության վերաբերյալ դաղափարը, կաշխատի մասսայի մեջ դժգոհություն և վրդովմունք հարուցել՝ այդ աղաղակող անարդարության վերաբերմամբ, այդ հակասության լիակատար բացատրությունը թողնելով պրոպագանդիստին: Ուստի պրոպագանդիստը գործում է գլխավորապես տպագիր խոսքով, ագիտատորը—կենդանի խոսքով: Պրոպագանդիստից պահանջվում են վոչ այն հատկությունները, ինչ վոր ագիտատորից: Որինակ, Կաուցկուն ու Լաֆարգին մենք կանվանենք պրոպագանդիստներ, Բեբելին ու Գեդին—ագիտատորներ: Իսկ առանձնացնել պրակտիկ գործունեության յերբորդ բնագավառ կամ յերբորդ ֆունկցիա, այդ ֆունկցիան համարելով «մասսային վորոշ կոնկրետ գործողությունների կոչելը»—մեծագույն անհեթեթություն է, վորովհետև «կոչելը», վորպես յեղակի ակտ, կա՛մ բնականաբար և անխուսափելիորեն իրենով լրացնում է թե՛ թեորիական տրակտատը, թե՛ պրոպագանդիստական բրոշյուրը, թե՛ ագիտացիոն ճառը, կա՛մ զուտ գործադիր ֆունկցիա յե կազմում: Իրոք, վերցրեք, որինակ, գերմանական սոցիալ-դեմոկրատների այժմյան պայքարը հացի մաքսերի դեմ: Թեորետիկները հետազոտություններ են դրում մաքսային քաղաքականության մասին, «կոչ անելով», ասենք, պայքարելու առևտրական պայմանագրերի համար և առևտրի ազատության համար. պրոպագանդիստը նույնն-ե անում ժուռնալում, ագիտատորը—հրապարակային ճառերում: Մասսաների «կոնկրետ գործողությունները»—հացի մաքսերը չբարձրացնելու վերաբերյալ ռայխստագին ներկայացվելիք պետիցիան ստորագրելն է տվյալ մոմենտում: Այդ գործողությունները կատարելու կոչը միջնորդաբար բղխում է թեորետիկներից, պրոպագանդիստներից և ագիտատորներից, անմիջականորեն այն բանվորներից, վորոնք տարածում են գործարաններում և ամեն տեսակ մասնավոր բնակարաններում ստորագրման թերթիկները: Ըստ «մարտինովյան տերմինոլոգիայի» դուրս է գալիս, վոր Կաուցկին ու Բեբելը—յերկուսն էլ պրոպագանդիստներ են, իսկ ստորագրման թերթիկների ցրիչները—ագիտատորներ, այդպես չե՞:

Գերմանացիների որինակը հիշեցրեց ինձ գերմանական Verballhornung խոսքը—ռուսերեն տառացի՝ обалгорнивание, բալհորնացում: Յոհանն Բալհորնը Լայպցիգի հրատարակիչ եր XVI դարում. նա այբ-

բենարան եր հրատարակել, ընդամին, սովորության համաձայն, դեռևդել եր նաև աքաղաղ պատկերող մի նկար, բայց աքաղաղին փոխանակ պատկերելու վոտքերին յեղած սովորական խթաններով, աքաղաղին նա պատկերել եր առանց խթանների, բայց կողքին մի գուլդ ձու: Իսկ այբբենարանի շապկի վրա ավելացրել եր՝ «Յոհաննն Բալհորնի ուղղած հրատարակություն»: Ահա այդ որվանից ել գերմանացիները Verballhornung ասում են այնպիսի «ուղղման» մասին, վոր իրոք վատթարացումն է: Յեվ ակամա մտաբերում ես Բալհորնին, յերբ տեսնում ես, թե ինչպես են Մարտինովները «խորացնում» Պլեխանովին...

Ինչի՞ համար է մեր Լոմոնոսովը «հնարել» այս խառնաշփոթությունը: Լուսաբանելու համար այն, վոր «Искра»-ն «ուշադրություն է դարձնում գործի միայն մի կողմի վրա, այնպես, ինչպես Պլեխանովն անում եր այդ դեռևս մեկուկես տասնյակ տարի սրանից առաջ» (եջ 39): ««Искра»-յի մոտ, դոնե ներկա ժամանակի վերաբերմամբ, պրոպագանդայի խնդիրները հետին տեղն են մղում ագիտացիայի խնդիրները» (52): Յեթե այս վերջին դրությունը մարտինովյան լեզվից թարգմանենք համամարդկային լեզվով (վորովհետև մարդկությունը դեռևս չի կարողացել ընդունել նոր հայտնագործած տերմինոլոգիան), ապա կստանանք հետևյալը.—«Искра»-յի մոտ քաղաքական պրոպագանդայի և քաղաքական ագիտացիայի խնդիրները հետին տեղն են մղում «կառավարության առաջ դնել օրենսդրական և վարչական ձեռնարկումների կոնկրետ պահանջների» խնդիրը, այն ձեռնարկումների, վորոնք «վորոշ չոչափելի արդյունքներ են խոստանում» (կամ սոցիալական ռեֆորմների պահանջների, յեթե գեթ մի անգամ ել թույլատրվում է գործածել հին մարդկության հին տերմինոլոգիան, վոր դեռևս չի հասունացել մինչև Մարտինովի աստիճանը): Առաջարկում ենք ընթերցողին համեմատել այս թեզիսի հետ հետևյալ տիրադան.

«Այդ ծրագրերի մեջ մեղ խիստ զարմացնում է» (հեղափոխական սոցիալ-դեմոկրատների ծրագրերի մեջ) «և այն, վոր նրանք միշտ առաջին պլանի վրա չեն դնում (մեզանում գոյություն չունեցող) պառլամենտում բանվորների ուսենալիք գործունեության առավելությունները, ըստ վորում նրանք միանգամայն անդիտանում են (չնայելով իրենց հեղափոխական նիհիլիզմի*) բանվորների մասնակցության կարևորությունը մեզանում գոյություն ունեցող՝ գործարանային գործերի համար ստեղծված գործարանատերերի օրենսդրական ժողովներում... կամ թեկուզ բանվորների մասնակցության կարևորությունը քաղաքային ինքնավարության մեջ»:

Այս տիրադայի հեղինակը մի փոքր ավելի շիտակ, պարզ և անկեղծ է արտահայտում հենց այն իսկ միտքը, վորին իր խելքով հասել է Լոմոնոսով-Մարտինովը: Իսկ այդ հեղինակը՝ Ռ. Մ.-ն է «Рабочая Мысль»-ի «Առանձին հավելվածի» մեջ (եջ 15):

*) Նիհիլիզմ—վորևե տրադիցիայի և սկզբունքի մերկ բացառում: Խմբ.:

գ) ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ»

Առաջադրելով «Искра»-յի դեմ «բանվոր մասսայի ակտիվությունը բարձրացնելու» իր «թեորիան»՝ Մարտինովն իրոք յերևան հանեց այդ ակտիվությունը նվաստացնելու ձգտումը, վորովհետև արթնացման գերադասելի, առանձնապես կարևոր, «ամենից ավելի լայնորեն կիրառելի» միջոց և այդ ակտիվության ասպարեզ նա հայտարարեց նույն տնտեսական պայքարը, վորի առաջ սողում եյին նաև բոլոր եկոնոմիստները: Դրա համար ել բնորոշ է այդ մոլորությունը, վոր այն հատուկ է ամենևին վոչ միայն Մարտինովին: Իսկ իրոք «բանվոր մասսայի ակտիվության բարձրացմանը» կարելի յե հասնել միայն այն պայմանի դեպքում, յեթե մենք չսահմանափակվենք «քաղաքական ագիտացիայով տնտեսական հողի վրա»: Իսկ քաղաքական ագիտացիայի անհրաժեշտ լայնացման հիմնական պայմաններից մեկը քաղաքական բազմակողմանի մերկացումների կազմակերպումն է: Այլ կերպ, քան այդ մերկացումներով, չի կարող դաստիարակվել մասսաների քաղաքական գիտակցությունն ու հեղափոխական ակտիվությունը: Ուստի այդ կարգի գործունեությունը կազմում է ամբողջ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի կարևորագույն ֆունկցիաներից մեկը, վորովհետև քաղաքական ազատությունը ևս ամենևին չի վերացնում, այլ միայն մի քիչ տեղաշարժում է այդ մերկացումների ուղղության վոլորտը: Որինակ, գերմանական կուսակցությունն առանձնապես ամբացնում է իր դիրքերը և ծավալում իր ազդեցությունը չնորհիվ հենց իր քաղաքական մերկացնող կամպանիայի անդուլ յեռանդի: Բանվոր դասակարգի գիտակցությունը չի կարող լինել ճշմարտապես քաղաքական գիտակցություն, յեթե բանվորները սովորած չեն արձագանգ տալու կամայականության և ճնշման, բռնության և չարարկության բոլոր և ամեն տեսակի դեպքերին, թեկուզ ինչ դասակարգերի ել վերաբերելիս լինեն այդ դեպքերը.—և ընդամին արձագանգ տալու հենց սոցիալ-դեմոկրատական և վոչ թե վորևե այլ տեսակետից: Բանվորական մասսաների գիտակցությունը չի կարող լինել ճշմարտապես դասակարգային գիտակցություն, յեթե բանվորները չսովորեն կոնկրետ և ընդամին անպատճառ հրատապ (ակտուալ) քաղաքական փաստերի և դեպքերի հիման վրա դիտել մյուս հասարակական դասակարգերից յուրաքանչյուրին այդ դասակարգերի մտավոր, բարոյական և քաղաքական կյանքի բոլոր արտահայտություններով, չսովորեն գործնականում կիրառել բնակչության բոլոր դասակարգերի, խավերի և խմբերի կյանքի և գործունեության բոլոր կողմերի մատերիալիստական վերլուծությունը և մատերիալիստական գնահատումը: Ով վոր բանվոր դասակար-

դի ուշադրությունը, դիտողականությունն ու դիտակցությունն ուղղում է բացառապես կամ թեկուզ առավելապես հենց նրա՝ այդ դասակարգի վրա,—նա սոցիալ-դեմոկրատ չէ, վորովհետև բանվոր դասակարգի ինքնաճանաչողությունն անխզելի կերպով կապված է վո՛չ միայն թեորիական... ավելի ճիշտ է նույնիսկ ասել՝ վոչ այնքան թեորիական, վորքան ժամանակակից հասարակության բոլոր դասակարգերի փոխհարաբերության վերաբերյալ քաղաքական կյանքի փորձով մշակված պատկերացումների լիակատար պարզորոշության հետ: Ահա թե ինչու այնքան խորապես վնասակար և իր գործնական նշանակությամբ այնքան խորապես ռեակցիոն է մեր եկոնոմիստների քարոզը, թե տնտեսական պայքարն ամենից ավելի լայնորեն կիրառելի միջոցն է մասսաներին քաղաքական շարժման մեջ քաշելու համար: Սոցիալ-դեմոկրատ դառնալու համար բանվորը պետք է իրեն պարզ պատկերացնի կալվածատիրոջ և տերտերի, բարձրաստիճան պաշտոնյայի և գյուղացու, ուսանողի և բոսյակի տնտեսական էությունը և սոցիալ-քաղաքական դեմքը, պետք է գիտենա նրանց ուժեղ և թույլ կողմերը, կարողանա գլուխ հանել այն տարածված ֆրազներից և ամեն տեսակ սոֆիզմներից, վորոնցով ամեն մի դասակարգ և ամեն մի խավ վարագուրում է իր յուրատիրական հակումներն ու իր իսկական «ներքուստը», կարողանա ըմբռնել, թե ինչ հաստատություններ ու օրենքներ են արտացոլում և վորոշակի ինչպես են արտացոլում այս կամ այն շահերը: Իսկ այդ «պարզ պատկերացումը» չես քաղի վոչ մի դրքույկից. այդ կարող են տալ միայն կենդանի պատկերները ու թարմ հետքերով կազմված մերկացումները այն ամենի, ինչ վոր կատարվում է մեր շուրջը տվյալ վայրկյանին, ինչի մասին խոսում կամ թեկուզ չշնջում են միմյանց հետ իրենց ըմբռնման համաձայն ամենքն ու ամեն մեկը, ինչ արտահայտվում է այս-ինչ անցքերում, այս-ինչ թվերի մեջ, և այլն և այլն և այլն: Այդ բազմակողմանի քաղաքական մերկացումները մասսաների հեղափոխական ակտիվության դաստիարակման անհրաժեշտ և հիմնական պայմանն են հանդիսանում:

Ինչո՞ւ ռուսական բանվորը դեռևս քիչ է արտահայտում իր հեղափոխական ակտիվությունն այն առթիվ, վոր վոստիկանությունը զանազան վարվեցողություն ունի ժողովրդի հետ, աղանդավորների հալածանքի առթիվ, գյուղացիների դանակոծության, դրաքննության այլանդակությունների առթիվ, զինվորների խոշտանգման, կուլտուրական ամենաանմեղ ձեռնարկումների հալածման առթիվ և այլն: Այն պատճառով չե՞ մթթե, վոր տնտեսական պայքարը նրան չի «հրում» դեպի այդ ակտիվությունը, վոր նրան այդ քիչ է «խոստանում» «չոչափելի արդյունքներ», քիչ է տալիս «դրական բան»: Վո՛չ, այդպիսի

կարծիքը, կրկնում ենք, վոչ այլ ինչ է, բայց յեթե մի փորձ՝ մեղքն ուրիշի վրա գցելու, իր սեփական ֆիլիստերությունը (նույնն և բերնշտայնականությունը) վերագրելու բանվոր մասսային: Մենք պետք է մեղադրենք մեզ, մեր հետամնացությունը մասսաների շարժումից, վոր մենք դեռ չենք կարողացել կազմակերպել այդ բոլոր նողկալի յերևույթների բավականաչափ լայն, ցայտուն, արագ մերկացումները: Յեթե մենք անենք այդ (իսկ մենք պետք է անենք այդ և կարող ենք անել),—այն ժամանակ ամենադոբրն բանվորն ել կըմբռնի կամ կզգա, վոր ուսանողին ու աղանդավորին, մուժիկին ու գրողին անարգում և նրանց նկատմամբ կամայականություն է կատարում հենց այն մութ ուժը, վոր այնպես ճնշում ու սղմում է նրան իր կյանքի ամեն մի քայլափոխում, իսկ զգալով այդ, նա կցանկանա, անզուսպ կերպով կցանկանա ինքը ևս արձագանգ տալ, նա այն ժամանակ կկարողանա՝ այսոր կատվային համերգ սարքել գրաքննիչների հասցեին, վաղը ցույց կատարել գյուղացիական բունտը ճնշած նահանգապետի տան առաջ, հետևյալ որը պատժել այն ֆարաջավոր ժանդարմներին, վորոնք սուրբ ինկվիզիցիայի աշխատանք են կատարում և այլն: Մենք դեռևս շատ քիչ բան ենք արել, գրեթե վոչինչ չենք արել բանվորական մասսաների մեջ բազմակողմանի և թարմ մերկացումներ նետելու համար: Մեզանից շատերը չեն ել գիտակցում դեռևս իրենց այդ պարտականությունը, այլ տարերայնորեն քարշ են գալիս «ընթացիկ գործ պայքարի» հետևից գործարանային կենցաղի նեղ շրջանակներում: Գործերի այսպիսի դրության ժամանակ ասել, թե «Искра»-ն տենդենց ունի նվաստացնելու ընթացիկ գործ պայքարի առաջխաղացման ընթացքի նշանակությունը փայլուն և լիակատար գաղափարների պրոպագանդայի համեմատությամբ» (Մարտինով, եջ 61),—նշանակում է կուսակցությունը դեպի հետ քաշել, նշանակում է պաշտպանել և փառաբանել մեր անպատրաստվածությունը, հետամնացությունը:

Իսկ ինչ վերաբերում է մասսային գործողության կոչելուն, այդ ինքնըստինքյան դուրս կգա, քանի վոր գոյություն ունեն քաղաքական յեռանդուն ագիտացիա, կենդանի և ցայտուն մերկացումներ: Բռնել վորևե մեկին հանցանքի վայրում և նշավակել ամենուրեք և բոլորի առաջ հենց իսկույն—այդ ինքնըստինքյան ամեն մի «կոչից» լավ է ազդում, հաճախ այդ այնպես է ազդում, վոր հետո չի ել կարելի լինի վորոշել, թե ո՛վ է իսկապես «կոչել» ամբոխին և ով է իսկապես ցույցի այս կամ այն ծրագիրն առաջադրել և այլն: Կոչել—բառիս վո՛չ թե ընդհանուր, այլ կոնկրետ իմաստով—կարելի է միայն գործողության վայրում, կոչել կարող է միայն նա, ով ինքն այժմ ել գնում է: Իսկ մեր գործը, սոցիալ-դեմոկրատական հրապարակախոսներիս գործն է

խորացնել, լայնացնել և ուժեղացնել քաղաքական մերկացումներն ու քաղաքական ագիտացիան:

Ի դեպ՝ «կոչերի» մասին: Միակ որգանը, վոր մինչև դարձան դեպքերը կոչ արեց բանվորներին ակտիվ կերպով միջամտելու այնպիսի մի հարցի, ինչպիսին ուսանողներին զինվոր ուղարկելն է (այնպիսի հարցի, վոր չի խոստանում բանվորին վճռականորեն վոչ մի շոշափելի արդյունք), —«Искра»-ն էր: «183 ուսանող՝ զինվոր ուղարկելու» վերաբերմամբ հունվարի 11-ին հրապարակված կարգադրությունից անմիջապես հետո «Искра»-ն հոդված գետեղեց այդ մասին (№ 2, փետրվար) և ցույցերի վորևե սկզբնավորությունից առաջ ուղղակի կոչում էր «բանվորին ոգնության գնալ ուսանողին», կոչում էր «ժողովրդին» բացահայտ կերպով պատասխանելու կառավարության հանդուգն մարտահրավերին: Մենք հարց ենք տալիս ամենքին և ամեն մեկին, ինչպե՞ս և ինչո՞վ բացատրել այն աչքի ընկնող հանգամանքը, վոր այնքան շատ խոսելով «կոչերի» մասին, վեր հանելով նույնիսկ այդ «կոչերը» վորպես գործունեության առանձին մի տեսակ, Մարտինովը մի խոսքով անգամ չհիշատակեց այդ կոչը: Ցեվ արդյո՞ք դրանից հետո Ֆիլիստերություն չի հանդիսանում մարտինովյան հայտարարությունը, թե «Искра»-ն միակողմանի յե, վորովհետև նա բավական չափով «կոչ» չի անում պայքարելու այն պահանջների համար, վորոնք «շոշափելի արդյունքներ են խոստանում»:

Մեր եկոնոմիստները, նրանց թվում նաև «Рабочее Дело»-ն, հաջողություն ունեցին շնորհիվ այն հանգամանքի, վոր համակերպվում էին անդարգացած բանվորներին: Բայց բանվոր-սոցիալ-դեմոկրատը, բանվոր-հեղափոխականը (իսկ այդպիսի բանվորների թիվը շարունակ աճում է) զայրույթով կմերժի այդ բոլոր դատողությունները՝ «շոշափելի արդյունքներ խոստացող» պահանջների համար մղվելիք պայքարի վերաբերյալ և այլն, վորովհետև նա կհասկանա, վոր դրանք միայն հին յերգի վարիանտներն են՝ ռուբլուն մեկ կոպեկ հավելում ստանալու վերաբերյալ: Այդպիսի բանվորը կասի «Рабочая Мысль»-ից և «Рабочее Дело»-յից դուրս յեկած իր խորհրդատուներին. իսկ դուք եք անհանգստանում, պարոննե՛ր, չափազանց ջանասիրությամբ խառնվելով այն գործին, վորից մենք ինքներս էլ կարողանում ենք գլուխ հանել, և խուսափելով ձեր իսկական պարտականությունների կատարումից: Ձե՞ վոր ամենևին խելացի բան չե այդ, յերբ ասում եք, թե սոցիալ-դեմոկրատների խնդիրն է բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալ. այդ միայն սկիզբն է, և դրանում չե սոցիալ-դեմոկրատների գլխավոր խնդիրը, վորովհետև ամբողջ աշխարհում, և այդ

*) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ. հ. IV, էջ 69: Խմբ.:

թվում նաև Ռուսաստանում, վոստիկանությունը հանախ ինքն է սկսում քաղաքական բնույթ տալ տնտեսական պայքարին, բանվորներն իրենք են սովորում հասկանալ, թե ում կողմն է կառավարությունը*): Ձե՞ վոր «բանվորների այն տնտեսական պայքարը տերերի և կառավարության դեմ», վոր դուք, կարծես, ձեր կողմից հայտագործված մի Ամերիկա յեք համարում ու նշում շարունակ,—մղվում է բազմաթիվ ռուսական խուլ անկյուններում հենց իրենց՝ բանվորների կողմից, վորոնք լսել են գործադուլների մասին, բայց սոցիալիզմի մասին համարյա թե վոչինչ էլ չեն լսել: Ձե՞ վոր մեր, բանվորներիս, այն «ակտիվությունը», վորին դուք շարունակ կամենում եք աջակցել, առաջադրելով շոշափելի արդյունքներ խոստացող կոնկրետ պահանջներ, մեր մեջ կա արդեն, և մենք ինքներս, մեր առորյա, պրոֆեսիոնալ, մանր աշխատանքի մեջ առաջադրում ենք այդ կոնկրետ պահանջները հանախ առանց ինտելիգենտների վորևե ոգնության: Բայց մեզ համար քիչ է այդպիսի ակտիվությունը. մենք յերեխաներ չենք, վորոնց կարելի յե կերակրել սոսկ «տնտեսական» քաղաքականության շիլոթով. մենք կամենում ենք իմանալ այն ամենը, ինչ վոր գիտեն նաև ուրիշները, մենք կամենում ենք մանրամասնորեն ծանոթանալ քաղաքական կյանքի բոլոր կողմերին և ակտիվ կերպով մասնակցել ամեն ինչում և ամեն մի քաղաքական դեպքի: Դրա համար հարկավոր է, վոր ինտելիգենտներն ավելի քիչ պնդեն այն, ինչ վոր մենք ինքներս էլ գիտենք**), և ավելի

*) «Տնտեսական պայքարին իսկ քաղաքական բնույթ տալու» պահանջը քաղաքական գործունեության բնագավառում ամենացայտուն կերպով արտահայտում է տարերայնության առաջ խոնարհվելը: Տնտեսական պայքարը քաղաքական բնույթ և ընդունում միշտ և ամենուրեք տարերայնորեն, այսինքն՝ առանց «հեղափոխական բացիլի—ինտելիգենցիայի» միջամտության, առանց զիտակից սոցիալ-դեմոկրատների միջամտության: Քաղաքական բնույթ ստացավ, օրինակ, նաև բանվորների տնտեսական պայքարն Անգլիայում՝ առանց սոցիալիստների վորևե մասնակցության: Իսկ սոցիալ-դեմոկրատների խնդիրը չի սպառվում քաղաքական ագիտացիայով տնտեսական հողի վրա. նրանց խնդիրն է—այդ արդյունինիստական քաղաքականությունը փոխարկել սոցիալ-դեմոկրատական քաղաքական պայքարի,—ոգտվել քաղաքական զիտակցության այն նշույլներից, վոր տնտեսական պայքարը դցել է բանվորների մեջ՝ բանվորներին սոցիալ-դեմոկրատական քաղաքական զիտակցության աստիճանին բարձրացնելու համար: Իսկ Մարտինովները փոխանակ բարձրացնելու և առաջ հրելու տարերայնորեն արթնացող քաղաքական զիտակցությունը, ծունկ են չոքում տարերայնության առաջ և պնդում են, պնդում սիրտ խառնելու չափ հանաս, թե տնտեսական պայքարը «հրում է» բանվորներին դեպի իրենց քաղաքական իրավազրկության հարցը: Վատն այն է, պարոննե՛ր, վոր արդյունինիստական քաղաքական զիտակցության այդ տարերային արթնացումը ձեզ չի «հրում» դեպի ձեր սոցիալ-դեմոկրատական խնդիրների հարցը:

**) Ի հաստատումն այն բանի, վոր բանվորների կողմից եկոնոմիստներին ուղղված այս ամբողջ ճառը մենք իզուր չենք հնարել, կհիշատակենք յերկու վկա, վո-

չատ տան մեզ այն, ինչ վոր մենք դեռևս չգիտենք, և ինչ վոր մենք ինքներս մեր գործարանային և «տնտեսական» փորձից յերբեք չենք ել կարող իմանալ, այն ե՝ քաղաքական դիտելիքներ: Այդ դիտելիքները դուք, ինտելիգենտներդ, կարող եք ձեռք բերել ձեզ համար, և դուք պարտավոր եք տալ մեզ այդ դիտությունը հարյուրապատիկ և հազարապատիկ ավելի, քան դուք արել եք այդ մինչև այժմ, և ընդամին տալ վո՛չ միայն դատողությունների, բրոշյուրների և հոդվածների ձևով (վորոնք հաճախ լինում են—ներեցե՛ք մեր անկեղծությանը—մի քիչ ձանձրալի), այլ անպատճառ կենդանի մերկացումների ձևով, մերկացումներ այն ամենի, ինչ վոր ավյալ ժամանակ անում են մեր կառավարությունը և մեր իշխող դասակարգերը կյանքի բոլոր բնագավառներում: Հապա ավելի յեռանդուն կատարեցեք ձեր այս պարտականությունը և ավելի քիչ խոսեցեք «բանվոր մասսայի ակտիվության բարձրացման» մասին: Մենք չատ ավելի ակտիվություն ունենք, քան թե դուք կարծում եք, և մենք ընդունակ ենք պաշտպանելու բացահայտ հրապարակային պայքարով նույնիսկ այն պահանջները, վորոնք չեն խոստանում վոչ մի «չոշափելի արդյունք»: Ցեվ դուք չեք, վոր պետք ե «բարձրացնեք» մեր ակտիվությունը, վորովհետև հենց ակտիվությունն ե, վոր պակասում ե ձեզ մոտ: Ավելի քիչ խոնարհ-

---

բոնք անտարակույս անմիջականորեն ծանոթ են բանվորական շարժմանը և ամենից քիչ են հակված աչառու լինելու մեր, «դոգմատիկներիս», վերաբերմամբ, վորովհետև մի վկան եկոնոմիստ ե (նույնիսկ «Рабочее Дело»-ն քաղաքակա՛ն արդյան համարող), մյուսը—տեռորիստ: Առաջին վկան իր չնտակությամբ ու աշխուժությամբ՝ «Պետերբուրգի բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիայի դաշնական խնդիրները» հիանալի հոդվածի (Рабочее Дело», № 6) հեղինակն ե: Նա բաժանում ե բանվորներին· 1) դիտակից հեղափոխականների, 2) միջակա խավի և 3) մնացած մասսայի: Ցեվ ահավասիկ միջակա խավը «հաճախ ավելի քաղաքական կյանքի խնդիրներով ե հետաքրքրվում, քան իր մերձավորագույն տնտեսական շահերով, վորոնց կապակցությունն ընդհանուր սոցիալական պայմանների հետ վաղուց ե հասկացված··· «Մեծ քննադատում են» «Рабочая Мысль»-ը· «չարուվազուց ե հասկացված և հասկացված··· «Մեծ քննադատում են» «Рабочая Мысль»-ը· «չարունակ միևնույն բանը վաղուց ե հայտնի, վաղուց ենք կարդացել», «քաղաքական տեսության մեջ դարձյալ վոչինչ չկա» (եջ 30—31): Բայց նույնիսկ յերբորդ խավն ել՝ «ավելի զգայուն, ավելի ջահել, գինետան և յեկեղեցու կողմից ավելի քիչ այլասերված բանվորական մասսան, դրեթե յերբեք հնարավորություն չունենալով քաղաքական բովանդակությամբ դիրք ձեռք բերելու, ծուռումուռ կերպով մեկնաբանում ե քաղաքական կյանքի յերևույթները, խորհել սկսելով ուսանողների բունտերի վերաբերյալ հատուկտոր տեղեկությունների վրա» և այլն: Իսկ տեռորիստը դրում ե՝ «···Մեկ-յերկու անգամ կկարդան գործարանային կյանքի մանր-մունր յերևույթների մասին զանազան, վոչ իրենց քաղաքներում, իսկ հետո կդադարեն··· Ձանձրալի ե··· Զխոսել բանվորական լրագրում պետության մասին, նշանակում ե նայել բանվորների վրա, վորպես փոքրիկ մանկիկի վրա··· Բանվորը մանկիկ չե» («Свобода», հրատարակություն հեղափոխական-սոցիալիստական խմբի, եջ 69 և 70):

վեցեք տարերայնության առաջ և ավելի չատ մտածեցեք ձեր ակտիվությունը բարձրացնելու մասին, պարոննե՛ր:

դ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՈՆՋ ԿԱ ԵԿՈՆՈՄԻԶՄԻ ՅԵՎ ՏԵՌՈՐԻԶՄԻ ՄԻՋԵՎ

Վերև, ծանոթագրության մեջ, մենք զուգադրեցինք եկոնոմիստին և վոչ-սոցիալ-դեմոկրատ-տեռորիստին, վորոնք պատահաբար համերաշխ դուրս յեկան: Բայց, ընդհանրապես ասած, մեկի և մյուսի միջև կա վո՛չ թե պատահական, այլ անհրաժեշտ ներքին կապ, վորի մասին մենք ստորև առիթ կունենանք խոսելու և վորն անհրաժեշտ ե չոշափել հենց հեղափոխական ակտիվության դաստիարակման հարցի շուրջը խոսելիս: Եկոնոմիստներն ու ժամանակակից տեռորիստները մի ընդհանուր արմատ ունեն· այդ հենց այն խոնարհվելն ե տարերայնության առաջ, վորի մասին մենք խոսեցինք նախընթաց գլխում, վորպես ընդհանուր յերևույթի մասին, և վոր մենք այժմ քննում ենք այն ազդեցության տեսակետից, վոր նա անում ե քաղաքական գործունեության և քաղաքական պայքարի բնագավառի վրա: Մեր պընդումն առաջին հայացքից պարադոքս*) կարող ե թվալ· այն աստիճանի մեծ ե, ըստ յերևույթին, տարբերությունն այն մարդկանց միջև, վորոնք չեչտում են «ընթացիկ գործ պայքարը», և այն մարդկանց, վորոնք առանձին անձերի ամենաանձնվեր կռվի կոչ են անում: Բայց պարադոքս չե սա: Եկոնոմիստներն ու տեռորիստները խոնարհվում են տարերային հոսանքի տարբեր բևեռների առաջ· եկոնոմիստները—«զուտ-բանվորական շարժման» տարերայնության առաջ, տեռորիստները—ինտելիգենտների, ամենայեռանդագին վրդովմունքի տարերայնության առաջ, այն ինտելիգենտների, վորոնք չեն կարողանում կամ հնարավորություն չունեն հեղափոխական աշխատանքը վորպես մի ամբողջություն կապելու բանվորական շարժման հետ: Ով վոր կորցրել ե իր հավատն այդ հնարավորության նկատմամբ կամ յերբեք չի հավատացել դրան, նրա համար իրոք վոր չատ դժվար ե այլ յելք գտնել իր վրդովված զգացմունքի և իր հեղափոխական յեռանդի համար, բացի տեռորից: Այսպիսով, տարերայնության առաջ խոնարհվելը մեր նշած յերկու ուղղությամբ ել վոչ այլ ինչ ե, բայց յեթե «Credo»-յի հռչակավոր ծրագրի իրագործման սկիզբը·—բանվորներն իրենց համար մղում են իրենց «տնտեսական պայքարը տերերի և կառավարության դեմ» (թող ների՛ մեզ «Credo»-յի հեղինակը, վոր մենք նրա մտքերն արտահայտում ենք Մարտինովի բառերով: Մենք գտնում ենք,

---

*) Պարադոքս—կարծիք կամ դրույթ, վորը հակառակ ե գնում հանրաճանաչ հայացքներին: Խմբ·:

վոր իրավունք ունենք անելու այդ, վորովհետև «Credo»-յի մեջ ևս խոսվում է այն մասին, թե ինչպես բանվորները տնտեսական պայքարում «զարնվում են քաղաքական ռեժիմին»),—իսկ ինտելիգենտները իրենց ուժերով իրենց համար մղում են քաղաքական պայքար, բնականաբար, տեռորի՛ միջոցով: Միանգամայն տրամաբանական և անխուսափելի յեզրակացություն է այս, վորի վրա չի կարելի չսղնդել, թեկուզ և նրանք, ովքեր սկսում են իրագործել այդ ծրագիրը, իրենք չգիտակցեն ել նրա անխուսափելիությունը: Քաղաքական գործունեությունն իր տրամաբանությունն ունի, վոր կախված չէ այն մարդկանց գիտակցությունից, վորոնք ամենալավ դիտավորություններով կամ տեռորի յեն կոչում, կա՛մ հենց բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալուն: Բարի դիտավորություններով է սալահատակված դժոխքը, և ներկա դեպքում բարի դիտավորությունները դեռևս չեն փրկում տարերային մղումից «նվազագույն դիմադրության գծով», «Credo»-յի զուտ բուրժուական ծրագրի գծով: Պատահական հո չե նաև այն հանգամանքը, վոր ռուսական լիբերալներից շատերը—թե բացահայտ լիբերալները և թե մարքսիստական դիմակ կրողները—ամբողջ հոգով համակրում են տեռորին և աշխատում են պաշտպանել տվյալ մոմենտին տեռորիստական տրամադրությունների վերելքը:

Ցեվ ահա, յերբ առաջ յեկավ «Ազատություն հեղափոխական սոցիալիստական խումբը», վորն իրեն նպատակ եր դրել հենց բազմակողմանի աջակցություն ցույց տալ բանվորական շարժմանը, բայց ծրագրի մեջ մտցրել եր տեռորը և այսպես ասած՝ ազատագրել իրեն սոցիալ-դեմոկրատիայից,—ապա այս փաստը կրկին և կրկին հաստատեց Պ. Բ. Ակսելրոդի յերևելի կանխատեսությունը, վոր նա տառացի կերպով գուշակել եր սոցիալ-դեմոկրատական տատանումների այդ արդյունքները դեռևս 1897 թվականի վերջում («К вопросу о современных задачах и тактике») և ուրվագրել իր հռչակավոր «յերկու հեռանկարը» («две перспективы»): Ռուսական սոցիալ-դեմոկրատների մեջ յերևան յեկած բոլոր հետագա վեճերն ու տարաձայնությունները պարունակվում են արդեն, վորպես բույսը սերմի մեջ, այս յերկու հեռանկարում*):

*) Մարտինովը «պատկերացնում է ուրիշ, ավելի իրական (?) դիլեմմա» («Социал-демократия и рабочий класс», 19): «Կա՛մ սոցիալ-դեմոկրատիան իր վրա յե վերցնում պրոլետարիատի տնտեսական պայքարի անմիջական ղեկավարությունն ու դրանով (!) այն փոխարկում է հեղափոխական դասակարգային պայքարի»... «Դրանով», այսինքն, յերևի, տնտեսական պայքարն անմիջականորեն ղեկավարելով: Թող ցույց տա մեզ Մարտինովը, թե այդ վո՞րտեղ և տեսնված, վոր միմիայն

Նշված տեսակետից հասկանալի յե դառնում և այն, վոր «Рабочее Дело»-ն, չդիմանալով եկոնոմիզմի տարերայնությանը, չդիմացավ նմանապես տեռորիզմի տարերայնությանը: Շատ հետաքրքրական է այստեղ նշել այն առանձնահատուկ պատճառաբանությունն ի պաշտպանություն տեռորի, վոր առաջադրել է «Свобода»-ն: Նա «միանգամայն բացատրում է» տեռորի ահաբեկող նշանակությունը («Возрождение революционизма», էջ 64), բայց դրա փոխարեն առաջադրում է նրա «ագիտատիվ (գրգռիչ) նշանակությունը»: Այս բնորոշ է, նախ, վորպես քայքայման և անկման աստիճաններից մեկն այն տրադիցիոն (մինչ-սոցիալ-դեմոկրատական) դաղափարների չրջանի, վոր սիրում եր կոչել տեռորին: Ընդունել, վոր այժմ չի կարելի տեռորով կառավարությունն «ահաբեկել»—հետևապես և կազմալուծել այն,—նշանակում է եյապես միանգամայն դատապարտել տեռորը, վորպես պայքարի սիստեմ, վորպես ծրագրով սրբագործված գործունեության վորոշում: Ցերկրորդ, ե՛լ ավելի բնորոշ է այդ, վորպես նմուշ «մասսաների հեղափոխական ակտիվության դաստիարակման» գործում ունեցած մեր կենսական խնդիրների անըմբռնողության: «Свобода»-ն քարոզում է տեռորը վորպես բանվորական շարժումը «գրգռելու», նրան «ուժեղ զարկ» տալու միջոց: Դժվա՛ր է յերևակայել մի պատճառաբանություն, վորն ավելի ակնառու կերպով հերքեր ինքն իրեն: Հարց է ծագում, մի՞թե ռուսական կյանքում քիչ են դեռևս այնպիսի այլանդակություններ, վոր հարկավոր է առանձին «գրգռիչ» միջոցներ հնարել: Ցեվ, մյուս կողմից, յեթե վորևե մեկը չի գրգռվում և անգրգռելի յե նույնիսկ ռուսական կամայականությունից, ապա ակներև չե՞ մի թե, վոր կառավարության մենամարտությանը մի բուռ տեռորիստների դեմ նա նույնպես կնայի «քիթը քչփորելով»: Բանն ել հենց այն է, վոր բանվորական մասսաները շատ են գրգռվում ռուսական կյանքի նողկալի յերևույթներից, բայց մենք չենք կարողանում հավաքել, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, և համակենտրոնացնել ժողովրդական հուզման այն բոլոր կաթիլներն ու չիթերը, վոր գալիս է դեպի ռուսական կյանքն անչափ ավելի մեծ քանակությամբ, քան

պրոֆեսիոնալ պայքարը ղեկավարելով հաջողվել է տրեդ-յունիոնիստական շարժումը հեղափոխական դասակարգային շարժում դարձնել: Արդյոք դլխի չե՞ ընկնի նա, վոր այդ «փոխարկման» համար մենք պետք է ակտիվ կերպով ձեռնամուխ լինենք բազմակողմանի քաղաքական ագիտացիայի «անմիջական ղեկավարման»... «Կա՛մ այլ հեռանկար. սոցիալ-դեմոկրատիան իրեն հեռու յե պահում բանվորների տնտեսական պայքարի ղեկավարությունից և դրանով... կորում է իր թևերը»... «Իրեն հեռու յե պահում», «Рабочее Дело»-յի վերը բերված կարծիքով, «Искра»-ն: Բայց մենք տեսանք, վոր նա տնտեսական պայքարը ղեկավարելու համար շատ ավելի յե ասում, քան «Рабочее Дело»-ն, ըստվորում նա չի սահմանափակվում դրանով և հանուն այդ գործի չի նեղացնում իր քաղաքական խնդիրները:

մենք բոլորս պատկերացնում ենք ու կարծում, բայց վորոնք պետք է հենց միացնել և մի հսկայական հեղեղ դարձնել: Վոր այս իրագործելի խնդիր է,—այդ անհերքելի կերպով ապացուցում է բանվորական շարժման հսկայական աճումը և բանվորների վերն արդեն նշված ագահությունը քաղաքական գրականության վերաբերմամբ: Իսկ տեռորի կոչերը, նմանապես և կոչերը բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալու մասին, ներկայացնում են խուսափումն ռուսական հեղափոխականների ամենահրամայական պարտականությունից, վոր է՝ կազմակերպել բազմակողմանի քաղաքական ագիտացիա մղելը: «Свобода»-ն ուզում է ագիտացիան տեռորով փոխարինել, ուղղակի խոստովանելով, թե «հենց վոր սկսվի ուժեղացրած, յեռանդուն ագիտացիան մասսաների մեջ, նրա եքսցիտատիվ (գրգռիչ) դերը խաղացված է» (էջ 68, «Возрождение революционизма»): Այս հենց ցույց է տալիս, վոր թե՛ տեռորիստները, թե՛ եկոնոմիստները թերագնահատում են մասսաների հեղափոխական ակտիվությունը, հակառակ գարնան դեպքերի*) բացահայտ վկայության, ընդամենը նրանցից վոմանք ընկնում են արհեստական «գրգռիչներ» վորոնելու հետևից, իսկ մյուսները խոսում են «կոնկրետ պահանջների» մասին: Թե՛ մեկը և թե՛ մյուսները բավականաչափ ուշադրություն չեն դարձնում իրենց սեփական ակտիվության զարգացման վրա՝ քաղաքական ագիտացիայի և քաղաքական մերկացումների կազմակերպման գործում: Իսկ փոխարինել այդ գործն անհնարին է և վոչ մի ուրիշ բանով վո՛չ այժմ, վո՛չ էլ վորևե այլ ժամանակ:

Ե) ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՎՈՐՊԵՍ ԱՌԱՋԱՎՈՐ ՄԱՐՏԻԿ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Մենք տեսանք, վոր քաղաքական ամենալայն ագիտացիայի մղումը, հետևապես և քաղաքական բազմակողմանի մերկացումների կազմակերպումն անպայման անհրաժեշտ է և մեր գործունեության ամենից հրամայական անհրաժեշտ խնդիրն է, յեթե այդ գործունեությունը ճշմարտապես սոցիալ-դեմոկրատական է: Բայց մենք այդ հետևությունն արինք, յելնելով բանվոր դասակարգի՝ քաղաքական դիտության և քաղաքական դաստիարակության ամենակենսական պահանջից միայն: Մինչդեռ միայն այդպիսի հարցադրումը չափազանց նեղ կլիներ, կանգիտանար ընդհանրապես ամեն մի սոցիալ-դեմոկրատիայի

*) Խոսքը վերաբերում է 1901 թվականի գարնանը, յերբ սկսվեցին փողոցային խոշոր ցույցեր: (Հեղինակի ծանոթագրությունը 1908 թվականի հրատարակության առթիվ: Խմբ.):

և առանձնապես ժամանակակից ռուսական սոցիալ-դեմոկրատիայի համադեմոկրատական խնդիրները: Այս դրությունն ըստ հնարավորության ավելի կոնկրետ կերպով պարզաբանելու համար փորձ անենք դործին մոտենալու եկոնոմիստի համար «ամենամոտ», այն է՝ պրակտիկ կողմից: «Ամենքն էլ համաձայն են», վոր անհրաժեշտ է զարգացնել բանվոր դասակարգի քաղաքական դիտակցությունը: Հարց է ծագում, ի՞նչպես անենք այդ և ի՞նչ է հարկավոր, վորպեսզի անենք այդ: Տնտեսական պայքարը «հրում է» բանվորներին կառավարության՝ դեպի բանվոր դասակարգն ունեցած վերաբերմունքի հարցերը միայն, ուստի և, վորքան էլ մենք աշխատելու լինենք «բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալու» խնդրի վրա, մենք յերբեք չենք կարողանա բանվորների քաղաքական դիտակցությունը զարգացնել (մինչև սոցիալ-դեմոկրատական քաղաքական դիտակցության աստիճանը) այդ խնդրի շրջանակներում, վորովհետև հենց իրենք այդ շրջանակները նեղ են: Մարտինովի ֆորմուլան մեզ համար արժեքավոր է ամենևին վոչ այն պատճառով, վոր նա լուսաբանում է Մարտինովի չլինելու ընդունակությունը, այլ նրա համար, վոր այդ ֆորմուլան ցցուն կերպով արտահայտում է բոլոր եկոնոմիստների հիմնական սխալը, հենց այն համոզմունքը, թե բանվորների դասակարգային քաղաքական դիտակցությունը կարելի յե զարգացնել, այսպես ասած, իրենց տնտեսական պայքարի ներսից, այսինքն՝ յելնելով միայն (կամ թեկուզ գլխավորապես) այդ պայքարից, խարսխվելով միայն (կամ թեկուզ գլխավորապես) այդ պայքարի վրա: Այդպիսի հայացքն արմատապես սխալ է,—և հենց այն պատճառով, վոր եկոնոմիստները, բարկանալով մեզ վրա իրենց դեմ բանակռիվ մղելու համար, չեն ուզում մի լավ մտածել տարաձայնությունների աղբյուրի մասին և ստացվում է այնպիսի բան, վոր մենք բառացիորեն չենք հասկանում միմյանց, խոսում ենք տարբեր լեզուներով:

Դասակարգային քաղաքական դիտակցությունը բանվորի համար՝ կարող է բերվել միայն դրսից, այսինքն՝ տնտեսական պայքարից դուրս, բանվորների և տերերի հարաբերությունների վոլորտից դուրս: Այն բնագավառը, վորից և միայն կարելի յե քաղել այդ դիտությունը, բոլոր դասակարգերի և խավերի՝ դեպի պետությունն ու կառավարությունն ունեցած վերաբերմունքի բնագավառն է, բոլոր դասակարգերի փոխհարաբերությունների բնագավառը: Ուստի այն հարցին, թե ի՞նչ անենք, վորպեսզի բանվորները քաղաքական դիտություն ձեռք բերեն—չի կարելի տալ միմիայն այն պատասխանը, վորով մեծ մասամբ բավականանում են պրակտիկները (էլ չենք խոսում այն պրակտիկների մասին, վորոնք հակված են դեպի եկոնոմիզմը), այն է՝ «գնալ բանվորների մոտ»: Բանվորներին քաղաքական դիտություն տալու համար

սոցիալ-դեմոկրատները պետք է գնան բնակչության բոլոր դասակարգերի մեջ, պետք է ամեն կողմ ուղարկեն իրենց բանակի ջոկատները։

Մենք դիտմամբ ենք ընտրում այսպիսի անտաշ ձևակերպում—դիտմամբ ենք արտահայտվում խիստ պարզացրած—ամենևին վոչ պարադոքս ասելու ցանկությունից, այլ նրա համար, վոր լավ «հրենք» եկոնոմիստներին դեղի այն խնդիրները, վոր նրանք աններելի կերպով արհամարհում են, դեղի այն տարբերությունը՝ սոցիալ-դեմոկրատական և տրեդ-յունիոնիստական քաղաքականության միջև, վոր նրանք չեն ուզում հասկանալ։ Ուստի և մենք խնդրում ենք ընթերցողին չտաքանալ, այլ ուշադրությամբ լսել մեզ մինչև վերջը։

Վերցրեք վերջին տարիներս սոցիալ-դեմոկրատների խմբակի ամենատարածված տիպը և դիտեցեք նրա աշխատանքը։ Նա «կապեր ունի բանվորների հետ» և բավարարվում է դրանով, թռուցիկներ հրատարակելով, վորոնց մեջ խարազանվում են գործարանային չարաբկությունները, կառավարության աչառու վարմունքը կապիտալիստների նկատմամբ և վոստիկանական բռնությունները։ բանվորների մասնակցությամբ դումարվող ժողովներում դրույցը սովորաբար չի դուրս գալիս կամ գրեթե չի դուրս գալիս նույն թեմաների սահմաններից։ Զափազանց հաղվադյուտ բաներ են այնպիսի ռեֆերատներն ու դրույցները՝ վորոնք նվիրված են հեղափոխական շարժման պատմությանը, մեր կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հարցերին, Ռուսաստանի և Ցեվրոպայի տնտեսական եվոլուցիայի հարցերին և արդի հասարակության մեջ այս կամ այն դասակարգերի դրությանը և այլն։ վոչ վոք չի եկ մտածում հասարակության այլ դասակարգերի մեջ սիստեմատիկ կերպով կապեր ձեռք բերելու և լայնացնելու մասին։ Եթե այդպիսի խմբակի անդամների համար մեծ մասամբ իբրև գործչի իդեալ և պատկերանում մի բան, վոր շատ ավելի արեդյունիոնի քարտուղարի յե նման, քան թե քաղաքական առաջնորդ սոցիալիստի։ Քանի վոր, որինակ, ամեն մի անդլիական տրեդ-յունիոնի քարտուղար միշտ ուզում է բանվորներին տնտեսական պայքար մղելու, կազմակերպում է գործարանային մերկացումներ, պարզաբանում է այն որենքների և ձեռնարկումների անարդարությունը, վորոնք կաշկանդում են գործադուլների ազատությունը, պահակներ դնելու ազատությունը (ամենքին ու ամեն մեկին նախազգուշացնելու համար, վոր տվյալ գործարանում գործադուլ է), պարզաբանում է ժողովրդի բուրժուական դասակարգերին պատկանող միջնորդ դատավորի աչառությունը և այլն։

Մի խոսքով, տրեդ-յունիոնի ամեն մի քարտուղար մղում է և ուզում է մղելու «տնտեսական պայքար տերերի և կառավարության դեմ»։ Ցեվ չի կարելի բավականաչափ պնդել, վոր այդ դեռևս սոցիալ-դեմոկրատիզմ չէ, վոր սոցիալ-դեմոկրատի իդեալը պետք է լինի վոչ թե տրեդ-յունիոնի քարտուղարը, այլ ժողովրդական տրիբունը, վորը դիտե արձագանգ տալ կամայականության ու ճնշման բոլոր և ամեն տեսակ արտահայտություններին, վորտեղ էլ թեկուզ նրանք տեղի ունենան, վո՛ր դասակարգին կամ խավին էլ նրանք վերաբերեն,—վոր դիտե, ընդհանրացնել այդ բոլոր արտահայտությունները՝ վոստիկանական բռնության և կապիտալիստական շահագործման մի ընդհանուր պատկերի մեջ,—վոր դիտե ոգտվել ամեն մի մանր բանից՝ բոլորի առաջ շարադրելու համար իր սոցիալիստական համոզմունքները և իր դեմոկրատական պահանջները, վորպեսզի ամենքին և ամեն մեկին պարզաբանի պրոլետարիատի ազատագրական պայքարի համաշխարհային-պատմական նշանակությունը։ Համեմատեցե՛ք, որինակի համար, այնպիսի գործիչների, ինչպես Ռոբերտ Նայտը (անդլիական տրեդ-յունիոնների մեջ ամենահզորներից մեկի, կաթսագործների ընկերության հայտնի քարտուղարն ու առաջնորդը) և Վիլհելմ Լիբկնեխտը, և փորձ արեք կիրառելու նրանց վերաբերմամբ այն հակադրումները, վորոնց մեջ է Մարտինովը դնում իր տարաձայնությունները «Искра»-յի հետ։ Դուք կտեսնեք,—յես սկսում եմ թերթել Մարտինովի հոդվածը,—վոր Ռ. Նայտը շատ ավելի յեր «կոչում մասսաներին վորոշ կոնկրետ գործողությունների» (39), իսկ Վ. Լիբկնեխտն ավելի շատ զբաղվել է «ներկա ամբողջ իրավակարգի կամ նրա մասնակի արտահայտությունների հեղափոխական լուսաբանությամբ» (38—39)։ վոր Ռ. Նայտը «ձևակերպել է պրոլետարիատի մերձավորագույն պահանջները և նշել նրանց իրագործման միջոցները» (41), իսկ Վ. Լիբկնեխտը, այդ անելով հանդերձ, չեր հրաժարվում նմանապես «միաժամանակ զանազան ոպոզիցիոն խավերի ակտիվ գործունեությունը ղեկավարելուց», «նրանց համար գործողությունների դրական ծրագիր թելադրելուց»*) (41)։ վոր Ռ. Նայտը հենց ջանում եր «բուն իսկ տնտեսական պայքարին տալ ըստ հնարավորության քաղաքական բնույթ» (42) և հիանալի կերպով կարողանում եր «կառավարության առաջ դնել կոնկրետ պահանջներ, վորոնք խոստանում են վորոշ չոչափելի արդյունքներ» (43), մինչդեռ Վ. Լիբկնեխտը շատ ավելի զբաղվել է «միակողմանի» «մերկացումներով» (40)։ վոր Ռ. Նայտն ավելի նշանակություն եր տալիս «ընթացիկ գործ պայքարի առաջխաղաց ընթացքին» (61), իսկ Վ. Լիբկնեխտը՝ «փայլուն և լիավարտ գաղափարների պրոպագանդային» (61)։ վոր Վ. Լիբկնեխտն իր

*) Որինակ, ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Լիբկնեխտը գործողությունների ծրագիր եր թելադրում ամբողջ դեմոկրատիային, և ե՛լ ավելի հին այդ անում Մարքսն ու Ենգելսը 1848 թվականին։

ղեկավարած լրագրից ստեղծում եր հենց «հեղափոխական ոգողիցիայի որդան, վորը մերկացնում է մեր կարգերը և առավելապես քաղաքական կարգերը, վորչափով դրանք ընդհարվում են բնակչության ամենադանդաղ խավերի շահերի հետ» (63), մինչդեռ Ռ. Նայան աշխատում եր «բանվորական դործի համար պրոլետարական պայքարի հետ որդանական սերտ կապ պահպանելով» (63)—յեթե «որդանական և սերտ կապը» հասկանանք տարերայնության առաջ այն խոնարհվելու իմաստով, ինչ վոր մենք ուսումնասիրեցինք վերը Կրիչեվսկու և Մարտինովի որինակներով,—և «նեղացնում եր իր ներդործության վոլորտը», համատացած լինելով, իհարկե, ինչպես և Մարտինովը, վոր նա հենց «դրանով բարդացնում եր բուն իսկ ներդործությունը» (63): Մի խոսքով, դուք կտեսնեք, վոր de facto Մարտինովը նվաստացնում է սոցիալ-դեմոկրատիան տրեդ-յունիոնիզմի աստիճանի, թեև նա այդ անում է, իհարկե, ամենևին վոչ այն պատճառով, վոր նա բարիք չի ցանկանում սոցիալ-դեմոկրատիային, այլ պարզապես այն պատճառով, վոր մի փոքր շտապեց խորացնել Պլեխանովին, փոխանակ Պլեխանովին հասկանալու նեղությունը կրելու:

Բայց վերադառնանք մեր շարադրանքին: Մենք ասացինք, վոր սոցիալ-դեմոկրատը, յեթե նա լոկ խոսքով չե կողմնակից պրոլետարիատի քաղաքական գիտակցության բաղմակողմանի զարդացման անհրաժեշտության, պետք է «դնա բնակչության բոլոր դասակարդերի մեջ»: Հարցեր են ծագում. ի՞նչպես անենք այդ, ուժեր ունե՞նք արդյոք դրա համար, հող կա՞ արդյոք այդպիսի աշխատանքի համար բոլոր մյուս դասակարդերի մեջ, արդյո՞ք այդ նահանջ չի լինի դասակարդային տեսակետից կամ չի՞ տանի դեպի նահանջ: Կանդ առնենք այս հարցերի վրա:

Մենք պետք է «դնանք բնակչության բոլոր դասակարդերի մեջ» թե՛ վորպես թեորետիկներ, թե՛ վորպես պրոպագանդիստներ, թե՛ վորպես ագիտատորներ, թե՛ վորպես կազմակերպիչներ: Վոր սոցիալ-դեմոկրատների թեորիական աշխատանքը նպատակ պետք է ունենա ուսումնասիրելու առանձին դասակարդերի սոցիալական և քաղաքական դրության բոլոր առանձնահատկությունները,—այդ մասին վոչ վոք չի տարակուսում: Բայց այդ տեսակետից շատ ու շատ քիչ բան է արվում, անհամաչափ քիչ՝ համեմատած այն աշխատանքի հետ, վոր ուղղված է դործարանային կենցաղի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Կոմիտեներում և խմբակներում դուք մարդկանց կհանդիպեք, վորոնք խորանում են նույնիսկ վորևե յերկաթադործական արտադրության մասնադիտական ծանոթացման մեջ,—բայց դրեթե չեք դտնի այնպիսի որինակներ, վոր կազմակերպությունների անդամները (վորոնք, ինչպես հաճախ պատահում է, հարկադրված են այս կամ այն պատճառով հեռանալ դործնական աշխատանքից) հատկապես զբաղվեն մեր հասարակական և քաղաքական կյանքի վորևե հրատապ խնդրի շուրջը նյութերի հավաքումով, վոր բնակչության մյուս խավերում առիթ կարողանար տալ սոցիալ-դեմոկրատական աշխատանքի համար: Բանվորական շարժման ժամանակակից ղեկավարների մեծ մասի նվազ պատրաստվածության մասին խոսելով՝ չի կարելի չհիշատակել և պատրաստման մասին այդ տեսակետից, վորովհետև այդ ևս կապված է «պրոլետարական պայքարի հետ որդանական սերտ կապ» պահպանելու «տնտեսական» ըմբռնման հետ: Բայց գլխավորն, իհարկե,—պրոպագանդան ու ագիտացիան է ժողովրդի բոլոր խավերում: Արևմտա-յեվրոպական սոցիալ-դեմոկրատի համար այդ խնդիրը հեշտացնում են ժողովրդական ժողովներն ու հավաքույթները, ուր դալիս է յուրաքանչյուր ցանկացող,—հեշտացնում է պառլամենտը, վորի մեջ նա խոսում է բոլոր դասակարդերի պատդամավորների առաջ: Մենք չունենք վո՛չ պառլամենտ, վո՛չ հավաքույթների ազատություն,—բայց մենք, այնուամենայնիվ, կարողանում ենք ժողովներ սարքել բանվորների մասնակցությամբ, վորոնք ուզում են լսել սոցիալ-դեմոկրատին: Մենք նմանապես պետք է կարողանանք ժողովներ սարքել բնակչության բոլոր և ամեն տեսակի դասակարդերի ներկայացուցիչների հետ, վորոնք միայն ուզում են լսել դեմոկրատին: Վորովհետև սոցիալ-դեմոկրատ չե նա, ով իրականում մոռանում է, վոր «կոմունիստները պաշտպանում են ամեն մի հեղափոխական շարժում», և վոր այդ պատճառով մենք պարտավոր ենք ամբողջ ժողովրդի առաջ շարադրել և ընդդծել համադեմոկրատական խնդիրները, վոչ մի բոպե չթաղցնելով մեր սոցիալիստական համոզմունքները: Սոցիալ-դեմոկրատ չե նա, ով իրականում մոռանում է իր պարտականությունը՝ ամեն մի համադեմոկրատական հարցի առաջադրման, սրման և լուծման դործում լինել բոլորից առաջ:

«Դրան վճռականապես ամենքը համաձա՛յն են»—ընդհատում է մեղ անհամբեր ընթերցողը,—և միութենական վերջին համադումարում ընդունված նոր հրահանգը «Рабочее Дело»-յի խմբագրության համար ուղղակի ասում. ե «Քաղաքական պրոպագանդայի և ագիտացիայի առիթ պետք է ծառայեն քաղաքական և հասարակական կյանքի այն բոլոր յերևույթներն ու դեպքերը, վորոնք առնչություն ունեն պրոլետարիատի հետ կա՛մ անմիջականորեն՝ վորպես առանձին դասակարդի, կա՛մ վորպես բոլոր հեղափոխական ուժերի ավանգարդի՝ ազատության համար մղվող պայքարում» («Два съезда», էջ 17, ընդդծումը մերն է): Այո՛, սրանք շատ ճիշտ և շատ լավ խոսքեր են, և մենք միանդամայն դոհ կլինեյինք, յեթե «Рабочее Дело»-ն ըմբռներ դրանք, յերբ նա այդ խոսքերի հետ միասին չասեր այն, ինչ վոր հակասում

ե դրանց: Չե՞ վոր քիչ է դեռ իրեն «ավանդարդ», առաջավոր ջոկատ հայտարարելը, պետք է նաև գործել այնպես, վոր բոլոր մյուս ջոկատները տեսնեն և տեսլված լինեն ընդունել, վոր մենք առաջից ենք գնում: Ցեվ մենք հարցնում ենք ընթերցողին. մի՞թե մնացած «ջոկատների» ներկայացուցիչներն այնպիսի հիմարներ են, վոր «ավանդարդի» մասին մեր խոսքերին առանց այլևայլության հավատան: Կոնկրետ կերպով պա. կերացրե՛ք միայն մեկ այսպիսի պատկեր: Ռուսական կրթված ռադիկալների կամ լիբերալ սահմանադրականների «ջոկատին» ներկայանում է սոցիալ-դեմոկրատը և ասում է՝ մենք ավանդարդ ենք. «այժմ մեզ խնդիր է առաջադրվում, թե ինչպես բուն իսկ տնտեսական պայքարին ըստ կարելույն քաղաքական բնույթ տանք»: Քիչ թե շատ խելացի ռադիկալը կամ սահմանադրականը (իսկ ռուս ռադիկալների և սահմանադրականների մեջ խելոք մարդիկ շատ կան) միայն կժպտա այսպիսի ճառ լսելիս և կասի (ինքն իրեն, իհարկե, վորովհետև նա մեծ մասամբ փորձված դիվանագետ է). «ե՛հ, ինչ պարզամիտն է այս «ավանդարդը»: Չի հասկանում նույնիսկ այն, թե չե՞ վոր դա մեր խնդիրն է, բուրժուական դեմոկրատիայի առաջավոր ներկայացուցիչների խնդիրն է՝ բանվորների բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալ: Չե՞ վոր մենք էլ, ինչպես արևմտաեվրոպական բոլոր բուրժուաները, ուզում ենք բանվորներին քաղաքականության մեջ քաշել, բայց միայն հենց տրեդ-յունիոնիստական, այլ վոչ թե սոցիալ-դեմոկրատական քաղաքականության մեջ: Բանվոր դասակարգի տրեդ-յունիոնիստական քաղաքականությունը հենց բանվոր դասակարգի բուրժուական քաղաքականությունն է: Իսկ այդ ավանդարդի իր խնդրին տված այս ձևակերպումը հենց տրեդ-յունիոնիստակա՞ն քաղաքականության ձևակերպումն է: Դրա համար էլ թող նրանք նույնիսկ իրենց ինչքան ուզում են սոցիալ-դեմոկրատ անվանեն: Չե՞ վոր յես յերեխա չեմ իսկապես, վոր պիտակների պատճառով բորբոքվեմ: Թո՛ղ միայն չենթարկվեն այդ վնասակար որթոդոքսալ դոգմատապաշտներին, թո՛ղ «քննադատության աղատություն» վերապահեն նրանց, ով անդիտակցորեն սոցիալ-դեմոկրատիային տրեդ-յունիոնիստական հունի մեջ է քաշում»:

Ցեվ մեր կոնստիտուցիոնալիստի թեթև ժպիտը հոմերական քրքիջի կվերածվի, յերբ նա իմանա, վոր սոցիալ-դեմոկրատիայի ավանդարդի մասին խոսող սոցիալ-դեմոկրատները մեր շարժման մեջ տարբերության համարյա լրիվ տիրապետության ներկա ժամանակում աշխարհիս մեջ ամենից ավելի յեն վախենում «տարբերային ելեմենտի նվազեցումից», վախենում են «ընթացիկ դորշ պայքարի առաջադիմող ընթացքի նշանակությունը նվազեցնել փայլուն և լիավարտ իդեաների պրոպագանդայի համեմատությամբ» և այլն և այլն: «Առաջավոր» ջոկա՞տ, վորը վախենում է, վոր չլինի թե դիտակցականությունն առաջ անցնի տարերայնությունից, վորը վախենում է մի այնպիսի համարձակ «ալան» առաջ քաշել, վորն ընդհանուր ընդունելություն գտնի նաև անհամամիտ մտածողների կողմից: Բայց արդյոք նրանք ավանդարդ բառը չե՞ն շփոթում արյերդարդ բառի հետ:

Իրոք, թափանցեցե՛ք Մարտինովի հետևյալ դատողության մեջ: Նա ասում է 40-րդ եջում, վոր «Искра»-յի մերկացնող տակտիկան միակողմանի յե, վոր «ինչքան էլ անվստահություն և տեսություն սերմանենք կառավարության վերաբերմամբ, նպատակի չենք հասնի, մինչև վոր չկարողանանք զարդացնել բավականաչափ ակտիվ հասարակական յեռանդ՝ նրան տապալելու համար»: Այս, փակագծերի մեջ ասած, մեզ արդեն ծանոթ հոդան է մասսաների ակտիվությունը բարձրացնելու՝ սեփական ակտիվությունը նվազացնելու ձգտման հետ միասին: Բայց բանն այդ չե այժմ: Մարտինովն այստեղ, հետևապես, խոսում է հեղափոխական յեռանդի մասին («տապալելու համար»): Ցեվ ի՞նչ յեզրակացության է գալիս նա: Վորովհետև սովորական ժամանակ հասարակական տարբեր խավերն անխուսափելիորեն դնում են ցիրուցան, ապա «այդ պատճառով պարզ է, վոր մենք, սոցիալ-դեմոկրատներս, չենք կարող միաժամանակ ղեկավարել տարբեր ոպոզիցիոն խավերի ակտիվ գործունեությունը, չենք կարող գործողությունների դրական ծրագիր թելադրել նրանց համար, չենք կարող ցույց տալ նրանց, թե ինչ միջոցներով պետք է որեցոր պայքարեն նրանք իրենց շահերի համար... Լիբերալ խավերն իրենք արդեն կհոգան այն ակտիվ պայքարի մասին՝ իրենց մերձավորագույն շահերի համար, վորը նրանց յերես առ յերես կընդհարի մեր քաղաքական ռեժիմի հետ» (41): Այսպիսով, սկսելով խոսել հեղափոխական յեռանդի մասին, ակտիվ պայքարի մասին ինքնակալության տապալման համար, Մարտինովն խոսքն շեղվել է դեպի պրոֆեսիոնալ յեռանդը, մերձավորագույն շահերի համար մղվող ակտիվ պայքարը: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մենք չենք կարող ղեկավարել ուսանողների, լիբերալների և այլ խավերի պայքարը նրանց «մերձավորագույն շահերի» համար, բայց չե՞ վոր այդ մասին չեր խոսքը, մեծարգո՛ եկոնոմիստ: Խոսքն ինքնակալության տապալման մեջ տարբեր հասարակական խավերի հնարավոր և անհրաժեշտ մասնակցության մասին ե՛ր, իսկ «տարբեր ոպոզիցիոն խավերի» այդ «ակտիվ գործունեությունը» մենք վո՛չ միայն կարող ենք ղեկավարել, այլև անպատճառ պետք է ղեկավարենք, յեթե ցանկանում ենք «ավանդարդ» լինել: Այն մասին, վոր մեր լիբերալները, մեր ուսանողները և այլն «յերես առ յերես կընդհարվեն մեր քաղաքական ռեժիմի հետ», կհոգան վոչ միայն նրանք իրենք,—այդ մասին նախ և առաջ և ամենից շատ կհոգա ինքը

վոստիկանությունը և իրենք ինքնակալ կառավարության չինովնիկները: Սակայն «մենք», յեթե մենք կամենում ենք առաջավոր դեմոկրատներ լինել, պետք է հոգանք այն մասին, վորպեսզի հրենք այն մարդկանց, վորոնք իսկապես զժգոհ են միայն համալսարանական կամ միայն զեմստվային և այլ կարգերից, դեպի քաղաքական ամբողջ կարգի անպետք լինելու միտքը: Մենք պետք է մեզ վրա վերցնենք այդպիսի բաղմակողմանի քաղաքական պայքարի կազմակերպման խնդիրը մեր կուսակցության ղեկավարությամբ, վորպեսզի այդ պայքարին և այդ կուսակցությանն իրենց ուժերի չափ կարողանան ողնություն ցույց տալ և իրոք սկսեն ողնություն ցույց տալ բոլոր և ամեն տեսակ ոպոզիցիոն խավերը: Մենք պետք է պրակտիկ սոցիալ-դեմոկրատներից այնպիսի քաղաքական առաջնորդներ պատրաստենք, վորոնք կարողանային ղեկավարել այդ բաղմակողմանի պայքարի բոլոր արտահայտությունները, կարողանային հարկավոր րոպեին «գործողությունների դրական ծրագիր թելադրել» թե՛ հուզվող ուսանողներին, թե՛ զժգոհ զեմստվականներին, թե՛ վրդովված աղանդավորներին, թե՛ վիրավորված ժողովրդական ուսուցիչներին և այլն և այլն: Ուստի միանգամայն սխալ է Մարտինովի պնդումը, թե «նրանց վերաբերմամբ մենք կարող ենք հանդես դալ կարգերը մերկացնողի սոսկ բացասական դերում... Մենք կարող ենք միայն ցրել նրանց հույսերը կառավարական զանազան հանձնաժողովների նկատմամբ» (ընդգծումը մերն է): Այս ասելով, Մարտինովը դրանով իսկ ցույց է տալիս, վոր նա միանգամայն վոչինչ չի հասկանում հեղափոխական «ավանդարդի» իրական դերի հարցում: Ցեվ յեթե ընթերցողն այդ նկատի առնի, նրա համար հասկանալի կդառնա Մարտինովի հետևյալ յեղրափակիչ խոսքերի իսկական իմաստը. «Искра»-ն հեղափոխական ոպոզիցիայի որդանն է, վոր մերկացնում է մեր կարգերը և առավելապես քաղաքական կարգերը, վորչափով վոր նրանք ընդհարվում են բնակչության ամենաայլազան խավերի շահերի հետ: Իսկ մենք աշխատում ենք և աշխատելու յենք բանվորական դրծի համար՝ պրոլետարական պայքարի հետ որդանական սերտ կապ պահպանելով: Մեր ներդործության վոլորտը նեղացնելով, մենք դրանով իսկ բարդացնում ենք հենց ներդործությունը» (63): Այս յեղրակացության իսկական իմաստն այս է. «Искра»-ն կամենում է բարձրացնել բանվոր դասակարդի տրեդ-յունիոնիստական քաղաքականությունը (վորով մեղանում պրակտիկներն այնքան հաճախ սահմանափակվում են թյուրիմացությամբ, անպատրաստվածության հետևանքով կամ թե համոզմունքով) մինչև սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը: Իսկ «Рабочее Дело»-ն կամենում է նվաստացնել սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը՝ մինչև տրեդ-յունիոնիստականը: Ցեվ ընդամենը դեռ նա հավատացնում է բոլորին և ամեն մեկին, վոր դրանք «միանդամայն համատեղելի դիրքեր են ընդհանուր գործի մեջ» (63): O, sancta simplicitas*):

Առաջ դնանք: Արդյոք ուժեր ունե՞նք մենք, վորպեսզի մեր պրոպաղանդան ու ագիտացիան ուղղենք դեպի բնակչության բոլոր դասակարդերը: Իհարկե, այո՛: Մեր եկոնոմիստները, վոր հաճախ հակված են բացասելու այդ, աչքաթող են անում այն հսկայական քայլը դեպի առաջ, վոր արել է մեր շարժումը 1894 թվականից (մոտավորապես) մինչև 1901 թ.: Լինելով իսկական «սրոչականներ»՝ նրանք հաճախ ապրում են շարժման սկզբի վաղուց անցած շրջանի պատկերացումներով: Այն ժամանակ մենք իրոք զարմանալի քիչ ուժեր ունեինք, այն ժամանակ բնական և որինական եր ամբողջովին բանվորների մեջ աշխատելու վճռականությունը, ինչպես և այն, վոր դաժան կերպով դատապարտվում եր ամեն մի շեղում այդ գործից; այն ժամանակ ամբողջ խնդիրն այն եր, վորպեսզի ամրանանք բանվոր դասակարդի մեջ: Այժմ շարժման մեջ է ներդրավված ուժերի հսկայական մասսան, մեզ մոտ դալիս են կրթված դասակարդերի յերիտասարդ սերնդի բոլոր լավագույն ներկայացուցիչները, ամբողջ պրովինցիայում ամենուրեք և ամեն տեղ հարկադրված են նստել մարդիկ, վորոնք շարժմանն արդեն մասնակցել են կամ ուզում են մասնակցել, մարդիկ, վորոնք ձգտում ունեն դեպի սոցիալ-դեմոկրատիան (մինչդեռ 1894 թ. մատներով կարելի յեր համարել ռուսական սոցիալ-դեմոկրատներին): Մեր շարժման քաղաքական և կազմակերպական հիմնական թերություններից մեկն այն է, վոր մենք չենք կարողանում դրաղեցնել այդ բոլոր ուժերը, հարմար աշխատանք տալ բոլորին (այդ մասին ավելի մանրամասն կխոսենք հետևյալ դլխում): Այդ ուժերի ահագին մեծամասնությունը «բանվորների մոտ դնալու» հնարավորությունից միանդամայն զուրկ է, այնպես վոր մեր հիմնական դործից ուժեր խլելու վտանդի մասին խոսք անդամ չի կարող լինել: Իսկ բանվորներին իսկական, բաղմակողմանի և կենդանի քաղաքական դիտելիքներ մատակարարելու համար անհրաժեշտ են «մեր մարդիկը», սոցիալ-դեմոկրատներ, ամենուրեք և ամեն տեղ, հասարակական բոլոր խավերում, այն բոլոր դիրքերում, վորոնք հնարավորություն են տալիս իմանալու մեր պետական մեխանիզմի ներքին զսպանակները: Ցեվ այդպիսի մարդիկ անհրաժեշտ են վո՛չ միայն պրոպաղանդայի և ագիտացիայի տեսակետից, այլ եվ ավելի՝ կազմակերպական տեսակետից:

Հող կա՞ արդյոք դործունեության համար բնակչության բոլոր դասակարդերի մեջ: Ով չի տեսնում այդ, նա իր դիտակցականությամբ

*) — ո՜վ սուրբ անմեղություն: Խմբ.:

դարձյալ հետ է մնում մասսաների տարերային վերելքից։ Բանվորական շարժումը հարուցել է և շարունակում է հարուցել վոմանց դժգոհությունը, մյուսներին հույս է ներշնչում ոպոզիցիայի աջակցության վերաբերմամբ, յերբորդների մեջ առաջ է բերում ինքնակալության անհնարինության և նրա կործանման անխուսափելիության դիտակցությունը։ Մենք միայն խոսքով կլինեյինք «քաղաքաղեռներ» և սոցիալ-դեմոկրատներ (ինչպես շատ ու շատ հաճախ լինում է իրականության մեջ), յեթե չգիտակցեյինք մեր խնդիրը՝ ողտագործել դժգոհության բոլոր ու ամեն տեսակ արտահայտությունները, հավաքել և մշակման յենթարկել թեկուզ սաղմնային բողոքի բոլոր նշույլները։ Եվ չենք խոսում այն մասին, վոր աշխատավոր դյուղացիության, տնայնագործների, մանր արհեստավորների և այլոց ամբողջ բազմամիլիոն մասսան միշտ ազահությամբ կլսեր վոգբիշատե հմուտ սոցիալ-դեմոկրատի քարոզը։ Բայց մի՞թե կարելի յե նշել բնակչության թեկուզ մի դասակարգ, վորի մեջ չլինեյին իրավազրկությունից ու կամայականությունից դժգոհ մարդիկ, խմբեր ու խմբակներ, վորոնք այդ պատճառով մատչելի յեն սոցիալ-դեմոկրատի քարոզին, վորպես համադեմոկրատական ամենացավոտ կարիքների արտահայտչի։ Իսկ ով կամենում է կոնկրետ կերպով պատկերացնել սոցիալ-դեմոկրատի այդ քաղաքական ագիտացիան բնակչության բոլոր դասակարգերի ու խավերի մեջ, նրան մենք կմատանշենք քաղաքական մերկացումները բառիս լայն իմաստով, վորպես այդ ագիտացիայի գլխավոր (բայց, իհարկե, վոչ միակ) միջոցը։

«Մենք պետք է,—գրել եմ յես «Ինչի՞ց սկսել» հոդվածում («Искра», № 4, 1901 թ. մայիս), վորի մասին մենք առիթ կունենանք մանրամասն զրուցելու ոտորև,—ժողովրդի բոլոր քիչ թե շատ դիտակից խավերում արթնացնենք քաղաքական մերկացումների կիրք։ Ասվեք է չիմանալ, վոր քաղաքական մերկացուցիչ ճայները ներկայումս այդպես թույլ են, սակավ և յերկչոտ։ Դրա պատճառը—բնավ վոստիկանության կամայականության հետ ընդհանուր հաշտությունը չի։ Պատճառն այն է, վոր մերկացումներ անելու ընդունակ և պատրաստ մարդիկ ամբիոն չունեն, վորտեղից նրանք կարողանային խոսել,—չկա հանդիսատեսին հափշտակված ունկնդրող և վոգևորող լսարան,—վոր նրանք ժողովրդի մեջ վոչ մի տեղ չեն տեսնում մի այնպիսի ուժ, վորին արժենար դանդատվել «ամենազոր» ռուսական կառավարության մասին... Մենք այժմ իսկական յենք և մենք պարտավոր ենք ցարական կառավարության համաժողովրդական մերկացման համար ամբիոն ստեղծել. այդպիսի ամբիոն պետք է լինի սոցիալ-դեմոկրատական լրագիրը»*)։

Հենց այդպիսի իդեալական լսարան է հանդիսանում քաղաքական մերկացումների համար բանվոր դասակարգը, վորին քաղաքական բազմակողմանի և կենդանի դիտությունը հարկավոր է ամենից առաջ և ամենից շատ, վորն ամենից շատ է ընդունակ այդ դիտությունը վերածելու ակտիվ պայքարի, թեկուզ այն ամենևին էլ «չոչափելի արդյունքներ» չխոստանա։ Իսկ համաժողովրդական մերկացումների համար ամբիոն կարող է լինել միայն համառուսական լրագիրը։ «Առանց քաղաքական որգանի, ժամանակակից Ցեվրոպայում անհնարելի յե մի շարժում, վոր արժանի լինի քաղաքական անվանվելու», իսկ Ռուսաստանն այդ տեսակետից, անտարակույս, նույնպես պատկանում է ժամանակակից Ցեվրոպային։ Մամուլը վաղուց է արդեն ուժ դարձել մեզանում,—այլապես կառավարությունը տասնյակ-հազարավոր ռուբլիներ չեր ծախսի նրա կաշառման և զանազան Կատկովներին ու Մեշչերսկիներին վարձավորելու համար։ Ցեվ ինքնակալական Ռուսաստանում նորություն չե, վոր անլեգալ մամուլը փչրում եր գրաքննական փականքներն ու հարկադրում իր մասին խոսել լեգալ և պահպանողական որգաններին։ Այդպես է յեղել նաև 70-ական և նույնիսկ 50-ական թվականներին։ Իսկ քանի անգամ ավելի լայն ու խորն են այժմյան ժողովրդական խավերը, վորոնք պատրաստ են կարդալու անլեգալ մամուլը և սովորելու նրանից, թե «ինչպես պետք է տպրել և ինչպես՝ մեռնել», այն բանվորի արտահայտությամբ ասած, վոր նամակով դիմել եր «Искра»-յին (№ 7)։ Քաղաքական մերկացումները հանդիսանում են հենց պատերազմի նույնպիսի հայտարարումն կառավարությանը, ինչպես վոր տնտեսական մերկացումները—նշանակում են պատերազմի հայտարարումն դործարանատիրոջը։ Ցեվ պատերազմի այդ հայտարարումն այնքան ավելի բարոյական նշանակություն ունի, վորքան ավելի լայն և ուժեղ է այդ մերկացնող կամպանիան, վորքան ավելի բազմաթիվ ու վճռական է հասարակական այն դասակարգը, վոր պատերազմ է հայտարարում, վորպիսզի սկսի պատերազմը։ Ուստի քաղաքական մերկացումներն ինքնըստինքյան հենց հանդիսանում են հզոր միջոցներից մեկը, վորով մենք քայքայում ենք թշնամի իրակարգը, բաժանում ենք թշնամուց նրա պատահական կամ ժամանակավոր դաշնակիցներին, թշնամություն և անվստահություն ենք սերմանում ինքնակալ իշխանության մշտական մասնակիցների միջև։

Մեր ժամանակներում հեղափոխական ուժերի ամենադարդ դառնալ կարող է միայն այն կուսակցությունը, վոր կկազմակերպի իրոք համաժողովրդական մերկացումներ։ Իսկ այդ «համաժողովրդական» խոսքը շատ մեծ բովանդակություն ունի։ Վոչ-բանվոր դասակարգին պատկանող մերկացնողների ահագին մեծամասնությունը (իսկ ամենադարդ դառնալու համար պետք է հենց դրավել այլ դասակարգերը) դրաստ քաղաքաղեռներ և սառնարյուն դործարար մարդիկ են։ Նրանք հիանալի դիտեն, թե վորքան անվստահ չե «դանդատվելը» նույնիսկ ամենա-

*) Տե՛ս ներկա հրատարակությունը, էջ 24։ Խմբ.։

ատորին չինովնիկի վրա, ուր մնաց թե «ամենազոր» ռուսական կառավարության վրա: Ցեվ նրանք միայն այն ժամանակ կդիմեն մեզ դանդատով, յերբ վոր տեսնեն, վոր այդ դանդատն իրոք ընդունակ է ներգործություն անելու, վոր մենք քաղաքական ուժ ենք ներկայացնում: Վորպեսզի այդպիսին դառնանք կողմնակի անձերի աչքում, պետք է շատ և համառ աշխատենք մեր գիտակցականության, նախաձեռնության և յեռանդի բարձրացման վրա. դրա համար բավական չե արյերգարդի թեորիայի և պրակտիկայի վրա կախել «ավանդարդ» պիտակը:

Բայց յեթե մենք պետք է մեզ վրա վերցնենք կառավարության իրոք համաժողովրդական մերկացումները, ապա այդ դեպքում ինչի՞ մեջ կարտահայտվի մեր շարժման դասակարգային բնույթը,—կհարցնի և արդեն հարցնում է մեզ «պրոլետարական պայքարի հետ որդանական սերտ կապ պահպանելու» անխելացիորեն ջերմեռանդ յերկրպագուն:—Ա՛յ հենց նրանում, վոր մենք, սոցիալ-դեմոկրատներս ենք կազմակերպում այդ համաժողովրդական մերկացումները,—նրանում, վոր ագիտացիայով հարուցած բոլոր խնդիրների լուսաբանությունը տրվելու յե անշեղորեն սոցիալ-դեմոկրատական վոգով, առանց վորևե դիջում անելու մարքսիզմի դիտավորյալ կամ վոչ-դիտավորյալ աղավաղումներին,—նրանում, վոր այդ բազմակողմանի քաղաքական ագիտացիան մղելու յե այն կուսակցությունը, վորը միացնում և մի անխզելի ամբողջություն է դարձնում թե՛ գրոհը կառավարության դեմ ամբողջ ժողովրդի անունից, թե՛ պրոլետարիատի հեղափոխական դաստիարակությունը նրա քաղաքական ինքնուրույնության պահպանումով հանդերձ, թե՛ բանվոր դասակարգի տնտեսական պայքարի ղեկավարությունը, ոգտագործումը չահագործողների և նրա միջև տեղի ունեցող այն տարբերային ընդհարումների, վորոնք պրոլետարիատի նոյանոր խավեր են բարձրացնում և քաշում մեր բանակը:

Բայց եկոնոմիզմի ամենաբնորոշ գծերից մեկը հենց այդ կապը չըմբռնելն է—դեռ ավելին՝ պրոլետարիատի ամենակենսական պահանջի (բազմակողմանի քաղաքական դաստիարակություն՝ քաղաքական ագիտացիայի և քաղաքական մերկացումների միջոցով) և ընդհանուր դեմոկրատական շարժման պահանջի այդ զուգադիպությունը չըմբռնելը: Չըմբռնելն արտահայտվում է վո՛չ միայն «մարտինովյան» ֆրազների մեջ, այլ նաև իրենց իմաստով այդ ֆրազներին համանման՝ իբր թե դասակարգային տեսակետի հիշատակումների մեջ: Ահա թե, որինակ, ինչպես են արտահայտվում այդ մասին «եկոնոմիական» նամակի հեղինակներն «Искра»-յի 12-րդ համարում*) .—««Искра»-յի միևնույն

*) Տեղի սղությունը մեզ թույլ չտվեց «Искра»-յում լիովին հանգամանորեն պատասխանելու եկոնոմիստների համար չափազանց բնորոշ այդ նամակին: Մենք

հիմնական թերությունը (իդեոլոգիայի դերաղնահատությունը) պատճառ է հանդիսանում նրա անհետևողականության դեպի զանազան հասարակական դասակարգերն ու ուղղությունները սոցիալ-դեմոկրատական ունենալիք վերաբերմունքի հարցում: Թեորիական դատողությունների միջոցով...» (և վոչ թե «կուսակցության հետ միասին աճող կուսակցական խնդիրների աճման միջոցով...») «լուծելով անհապաղորեն աբսոլուտիզմի դեմ պայքարի անցնելու խնդիրը, և, հավանորեն, զգալով այդ խնդրի ամբողջ դժվարությունը բանվորների համար իրերի ներկա դրության ժամանակ...» (և վոչ միայն զգալով, այլ հիանալի իմանալով, վոր այդ խնդիրը բանվորներին ավելի հեշտ է թվում, քան վոքրիկ յերեխաների մասին հոգացող «եկոնոմիական» ինտելիգենտներին, քանի վոր բանվորները պատրաստ են կռվելու նույնիսկ այն պահանջների համար, վորոնք չեն խոստանում, անմոռանալի Մարտինովի լեզվով ասած, վոչ մի «չոշափելի արդյունք»)... «բայց համբերություն չունենալով սպասելու իրենց ուժերի հետագա կուտակմանն այդ պայքարի համար, «Искра»-ն սկսում է դաշնակիցներ փնտռել լիբերալների և ինտելիգենցիայի շարքերում»:

Այո՛, այո՛, մենք իրոք արդեն կորցրել ենք ամեն մի «համբերություն՝ «սպասելու» այն յերանելի, վաղուց արդեն մեզ ամեն տեսակ «հաշտարարների» կողմից խոստացված ժամանակին, յերբ մեր եկոնոմիստները կդադարեն իրենց հետամնացությունը բանվորների վրա դցելուց, իրենց յեռանդի պակասությունը բանվորների ուժերի իբր պակասությամբ արդարացնելուց: Մենք հարց կտանք մեր եկոնոմիստներին. ինչի՞ մեջ պետք է կայանա «բանվորների կողմից ուժերի կուտակումն այդ պայքարի համար»: Ակներև չե՞ միթե, վոր բանվորների քաղաքական դաստիարակության մեջ, նրանց առաջ մեր նողկալի ինքնակալության բոլոր կողմերի մերկացման մեջ: Ցեվ մի՞թե պարզ չի, վոր հենց այդ իսկ աշխատանքի համար ել մեզ հարկավոր են «դաշնակիցներ լիբերալների և ինտելիգենցիայի շարքերում», վորոնք պատրաստ են բաժանելու մեզ հետ քաղաքական արշավանքի մերկացումները՝ ընդդեմ զեմստվային զորձիչների, ուսուցիչների, ստատիստիկների, ուսանողների և այլն: Մի՞թե իսկապես այդքան դժվար է ըմբռնել այս զարմանալի «խորամանկ մեխանիկան»: Մի՞թե Պ. Բ. Ակսելրոդը չի պնդում ձեզ արդեն 1897 թվականից—«Ռուսական սոցիալ-դեմո-

չատ ուշաթափ եյինք նրա հայտնվելուն, քանի վոր «Искра»-յի դասակարգային տեսակետի յերերունության վերաբերյալ լուրերը վաղուց եյին հասել մեզ և ամենատարբեր կողմերից, և մենք միայն հարմար առիթ կամ տարածված մեղադրանքի ձևակերպված արտահայտություն եյինք փնտռում, վորպեսզի պատասխանենք նրան: Իսկ հարձակումներին պատասխանել մենք սովոր ենք վո՛չ թե պաշտպանությամբ, այլ հակահարձակումով:

կրատների կողմից իրենց համար վոչ-պրոլետար դասակարգերի մեջ կողմնակիցներ և ուղղակի կամ անուղղակի դաշնակիցներ ձեռք բերելու խնդիրը նախ և առաջ և գլխավորապես լուծվում է իր իսկ պրոլետարիատի շրջանում վարվող պրոպագանդիստական գործունեության բնույթով»: Իսկ Մարտինովները և այլ եկոնոմիստներն այնուամենայնիվ շարունակում են այնպես պատկերացնել բանը, վոր բանվորները նախ պետք է իրենց համար ուժեր կուտակեն (տրեդ-յունիոնիստական քաղաքականության համար) «տերերի և կառավարության դեմ մղվող տնտեսական պայքարով», իսկ հետո արդեն «անցնեն»—յերևի, տրեդ-յունիոնիստական «ակտիվության դաստիարակությունից»—սոցիալ-դեմոկրատական ակտիվությա՞նը:

«... Իր վորոնումների մեջ,—շարունակում են եկոնոմիստները,—«Искра»-ն հաճախ շեղվում է դասակարգային տեսակետից, մթագնելով դասակարգային հակասություններն ու առաջադրելով դժգոհության ընդհանրությունը կառավարության հանդեպ, թեև «դաշնակիցների» այդ դժգոհության պատճառներն ու աստիճանը խիստ տարբեր են: Այդպես է, որինակ, «Искра»-յի վերաբերմունքը դեպի զեմստվոն»... «Искра»-ն իբր թե «խոստանում է բանվոր դասակարգի ողնությունը կառավարության ներհակ փչրանքներով չբավարարված ազնվականներին, ընդսմին վոչ մի խոսք չասելով բնակչության այդ խավերի դասակարգային հակամարտության մասին»: Ցեթե ընթերցողը դիմի «Ինքնակալությունն ու զեմստվոն» հոդվածներին («Искра»-յի №№ 2 և 4), վորոնց մասին են խոսում, հավանորեն, նամակի հեղինակները, ապա կտեսնի, վոր այդ հոդվածները*) նվիրված են կառավարության վերաբերմունքին դեպի «դասային-բյուրոկրատական զեմստվոյի մեղմ ազիտացիան», դեպի «նույնիսկ ունևոր դասակարգերի ինքնագործունեությունը»: Հոդվածում ասված է, վոր բանվորը չպետք է անտարբեր նայի կառավարության պայքարին զեմստվոյի դեմ, զեմստվային գործիչները հրավիրվում են մի կողմ նետել մեղմ ճառերը և հաստատ ու խիստ խոսք ասել, յերբ կառավարության առջև իր ամբողջ հասակով կծառանա հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան: Ինչի՞ն համաձայն չեն այստեղ նամակի հեղինակները,—հայտնի չէ: Արդյոք նրանք կարծում են, թե բանվորը «չի՞ հասկանա» «ունևոր դասակարգեր» և «դասային բյուրոկրատական զեմստվո» խոսքերը,—վոր զեմստվային գործիչներին մեղմ բառերից խիստ բառերի անցնելու դրդելը «իդեոլոգիայի դերադնահատությո՞ւն է»: Ցերեկայո՞ւմ են նրանք, արդյոք, վոր բանվորները կարող են աբսոլուտիզմի դեմ պայքարելու համար «ուժեր կուտակել իրենց մեջ», յեթե նրանք չեն իմանալու աբսոլուտիզմի վերաբերմունքի մասին նաև դեպի զեմստվոն: Այս ամենը զարմանալի անհայտ է մնում: Մի բան միայն պարզ է, վոր հեղինակները շատ աղոտ կերպով են պատկերացնում իրենց սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական խնդիրները: Այդ և՛ ավելի պարզ է նրանց այս ֆրազից. «Նույնպիսին է նաև» (այսինքն՝ նույնպես «դասակարգային հակամարտություններն աղոտացնող») «Искра»-յի վերաբերմունքը դեպի ուսանողական շարժումը»: Փոխանակ կոչելու բանվորներին, վոր հրապարակային ցույցով հայտնեն, թե բռնության, կամայականության և սանձարձակության իսկական ոջախը վո՛չ թե ուսանողությունն է, այլ ռուսական կառավարությունը («Искра»-յի № 2)*),—մենք յերևի պետք է դատողություն զետեղեինք «Рабочая Мысль»-ի վրդով: Ցեվ նմանորինակ մտքեր արտահայտվում են սոցիալ-դեմոկրատների կողմից 1901 թվականի աշնանը, փետրվարյան և մարտյան դեպքերից հետո, ուսանողական նոր վերելքի նախորյակին, վերելք, վոր ցույց է տալիս, թե այդ բնաղավառում ևս ինքնակալության դեմ ուղղված բողոքի «տարերայնությունը» առաջ է անցնում շարժման դիտակցական ղեկավարությունից սոցիալ-դեմոկրատիայի կողմից: Բանվորների տարերային ձգտումը՝ պաշտպանելու վոստիկանության և կազակների կողմից ծեծի յենթարկվող ուսանողներին,—սոցիալ-դեմոկրատական կազմակերպության դիտակցական գործունեությունից առաջ է անցել:

«Մինչդեռ մյուս՝ հոդվածներում,—շարունակում են նամակի հեղինակները,—«Искра»-ն խիստ դատապարտում է ամեն մի կոմպրոմիս և, որինակի համար, պաշտպան է յելնում զեղիստների անհանդուրժելի վարքագծին»: Մենք խորհուրդ ենք տալիս լավ մտածել այս խոսքերի մասին այն մարդկանց, վորոնք այնքան ինքնավստահ և այնքան թեթևամիտ կերպով սովորաբար հայտարարում են ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի շրջանում գոյություն ունեցող տարաձայնությունների առթիվ, վոր իբր թե այդ տարաձայնություններն էական չեն և չեն արդարացնում պառակտումը: Հնարավո՞ր է արդյոք մի կազմակերպության մեջ հաջող աշխատանք այն մարդկանց, վորոնք ասում են, թե մենք դեռևս չափազանց քիչ բան ենք արել՝ պարզելու համար ինքնակալության թշնամի լինելը ամենատարբեր դասակարգերին, ծանոթացնելու համար բանվորներին ամենատարբեր խավերի ոպոզիցիային՝ հանդեպ ինքնակալության,—և այն մարդկանց, վորոնք այդ գործում «կոմպրոմիս» են տեսնում, յերևի կոմպրոմիս «տերերի

*) Իսկ այդ հոդվածների մեջ («Искра»-յի № 3) զետեղված էր մի հոդված, վոր հատկապես նվիրված էր դասակարգային հակամարտություններին մեր գյուղում: (Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ. հ. IV, էջ 100։ Խմբ.)։

*) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ. հ. IV, էջ 60։ Խմբ.։

դեմ և կառավարության դեմ մղելիք անտեսական պայքարի» թեզիսի նկատմամբ:

Մենք խոսել ենք գյուղը դասակարգային պայքար մտցնելու անհրաժեշտության մասին գյուղացիների աղատագրման քառասնամյակի առթիվ (№ 3)*) և ինքնավարության ու ինքնակալության անհաշտելիության մասին՝ Վիտեյի գաղտնի զեկուցագրի առթիվ (№ 4)· մենք հարձակվել ենք հողատերերի ճորտատիրականության և նրանց սպասավորող կառավարության վրա՝ նոր օրենքի առթիվ (№ 8)**) և վողջունել ենք անլեգալ դեմոսվային համագումարը, խրախուսելով դեմոսվային գործիչներին խոնարհ միջնորդություններից անցնել պայքարի (№ 8)·—մենք խրախուսել ենք այն ուսանողներին, վորոնք սկսել են հասկանալ քաղաքական պայքարի անհրաժեշտությունը և անցել են այդպիսին (№ 3), և միևնույն ժամանակ խարազանել ենք այն «վայրենի անըմբռնողությունը», վոր յերևան են բերել «միայն ուսանողական» շարժման կողմնակիցները, վորոնք հրավեր եյին կարդում ուսանողներին՝ չմասնակցել վողոցային ցույցերին (№ 3, Մոսկվայի ուսանողության Գործադիր Կոմիտեյի փետրվարի 25-ի կոչի առթիվ)·—մենք մերկացրել ենք «Россия» լրագրի նենդ լիբերալների «անիմաստ յերազանքներն» ու «ստահոդ կեղծավորությունը» (№ 5) և միևնույն ժամանակ նշել ենք կառավարական տանջարանի կատաղությունը, այն տանջարանի, վոր «խոշտանգում է խաղաղ գրականագետներին, ծեր պրոֆեսորներին ու գիտնականներին, հայտնի լիբերալ զեմստվային գործիչներին» (№ 5՝ «Վոստիկանական հարձակում գրականության վրա»)· մենք մերկացրել ենք «բանվորների կենցաղը բարելավելու պետական հոդարարձության» ծրագրի իսկական նշանակությունը և վողջունել ենք այն «արժեքավոր խոստովանությունը», թե «լավ է վերևից տրվող բարենորոգումներով կանխել նրանց պահանջը ներքևից, քան թե սպասել վերջինին» (№ 6)***)·—մենք խրախուսել ենք բողոքող-վիճակագիրներին (№ 7) և պարսավել շարայկրբեխեր-վիճակագիրներին (№ 9): Ո՛վ այս տակտիկայում պրոլետարիատի դասակարգային գիտակցության մթաղնումն է տեսնում և կոմպրոմիս լիբերալիզմի հետ, նա դրանով հենց յերևան է հանում, վոր բոլորովին չի հասկանում «Credo»-յի ծրագրի իսկական նշանակությունը և de facto հենց այդ ծրագիրն է կիրառում, վորքա՞ն էլ վոր նա հրաժարվի դրանից: Վորովհետև նա դրանով իսկ քաշում է սոցիալ-դեմոկրատիան դեպի «անտեսական պայքարն ընդդեմ տերերի և ընդդեմ կառավարության» և ընկրկում է լիբերալիզմի առաջ, հրաժարվելով ամեն մի «լիբերալ» հարցի ակտիվ միջամտելուց և իր սոցիալ-դեմոկրատական վերաբերմունքը դեպի այդ հարցը վորոշելու:

*) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ. հ. IV, եջ 100: Խմբ.:

**) Նույն տեղում, եջ 169: Խմբ.:

***) Նույն տեղում, եջ 158: Խմբ.:

զ) ԴԱՐՁՅԱԼ «ԶՐՊԱՐՏԻԶՆԵՐԸ», ԴԱՐՁՅԱԼ «ՄԻՍՏԻՖԻԿԱՏՈՐՆԵՐԸ»

Այս սիրալիր խոսքերը, ինչպես կհիշի ընթերցողը, պատկանում են «Рабочее Дело»-յին, վոր այս ձևով է պատասխանում «բանվորական շարժումը բուրժուական դեմոկրատիայի գործիք դարձնելու համար անուղղակի հող պատրաստելու» մեջ մեր կողմից նրան մեղադրելուն: Հոդեկան պարզությամբ «Рабочее Дело»-ն վճռել է, վոր այդ մեղադրանքը վոչ այլ ինչ է, բայց յեթե բանակռվային յելույթ, վոր իրը այդ չար դոգմատիկները վորոշել են ամեն տեսակ անախորժ բաներ ասել մեզ, հապա ել ի՞նչը կարող է ավելի անախորժ լինել, քան բուրժուական դեմոկրատիայի ձեռքին գործիք հանդիսանալը: Ցեվ ահա թափառառով «հերքում» է տալվում—«վոչնչով չպաճուճված զրպարտությունը» («Два съезда», եջ 30), «միստիֆիկացիան» (եջ 31), «դիմակահանդեսը» (եջ 33): Ցուպիտերի նման, «Рабочее Дело»-ն (թեև նա քիչ է նման Ցուպիտերին) բարկանում է հենց այն պատճառով, վոր նա արդարացի չէ, իր փութիկոտ հայհոյանքներով ապացուցելով, վոր ընդունակ չէ թափանցելու իր հակառակորդների մտքի ընթացքի մեջ: Բայց չէ՞ վոր մի փոքր պետք է մտածել՝ հասկանալու համար, թե ինչու ամեն մի խոնարհումը մասսայական շարժման տարերայնության առաջ, սոցիալ-դեմոկրատական քաղաքականության ամեն մի նվաստացումը մինչև տրեդ-յունիոնիստական աստիճան հենց հող է պատրաստում բանվորական շարժումը բուրժուական դեմոկրատիայի գործիքի փոխարկելու համար: Բանվորական տարերային շարժումն ինքնըստինքյան ընդունակ է ստեղծելու (և անխուսափելիորեն ստեղծում է) միայն տրեդ-յունիոնիզմ, իսկ բանվոր դասակարգի տրեդ-յունիոնիստական քաղաքականությունը բանվոր դասակարգի հենց բուրժուական քաղաքականությունն է: Բանվոր դասակարգի մասնակցությունը քաղաքական պայքարին և նույնիսկ քաղաքական հեղափոխությանը դեռևս ամենևին նրա քաղաքականությունը սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն չի դարձնում: «Р. Дело»-յի մտքով չի՞ անցնում արդյոք բացասել այդ: Նրա մտքով չի՞ անցնում արդյոք վերջապես բոլորի առաջ ուղղակի և առանց խուսափումների շարադրել միջազգային և ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ցավոտ հարցերի իր ըմբռնումը:—Ո՛չ, վոչ, նրա մտքով յերբեք նման բան չի անցնում, վորովհետև նա հաստատուն կերպով հեռևում է այն պրիոմին, վորը կարելի յե «չե-երով արտահայտվելու» պրիոմ

անվանել: Ցես յե՛ս չեմ, ձին իմս չե՛, յես կառապան չեմ: Մենք եկոնոմիստ չենք, «Рабочая Мысль»-ը եկոնոմիզմ չե՛, Ռուսաստանում առհասարակ եկոնոմիզմ չկա: Այդ շատ ճարպիկ և «քաղաքագետային» պրիոմ է, վոր միայն այն փոքրիկ անհարմարությունն ունի, վոր այդ կիրառվող որդաններին ընդունված է «ինչ կբարեհաճեք» կոչանունը տալ:

«Рабочее Дело»-յին թվում է, թե առհասարակ Ռուսաստանում բուրժուական դեմոկրատիան «ֆանտոմ» է («Два с'езда», էջ 32)*): Ցերջանի՛կ մարդիկ: Նրանք ջայլամի նման իրենց գլուխը թաղցնում են թևի տակ և յերևակայում են, թե դրանից չքանում է ամբողջ շրջապատը: Մի շարք լիբերալ հրապարակախոսներ, վորոնք ամեն ամիս տեղեկացնում են բոլորին իրենց հաղթանակի մասին մարքսիզմի ջլատման և նույնիսկ չքացման առթիվ, մի շարք լիբերալ լրագրեր («С.-Петербургские Ведомости», «Русские Ведомости» և ուրիշ շատերը), վորոնք խրախուսում են այն լիբերալներին, վորոնք բանվորներին դասակարգային պայքարի բրենտանոյական**) ըմբռնում և քաղաքականության արեղ-յունիոնիստական ըմբռնում են հրամցնում.—մարքսիզմի քննադատների պլեադան, վորոնց իսկական միտումներն այնքան լավ յերևան հանեց «Credo»-ն և վորոնց դրական ապրանքներն են միայն, վոր անհարկ-անմաքս զբոսնում են Ռուսաստանում,— հեղափոխական վոչ-սոցիալ-դեմոկրատական ուղղությունների աշխուժացումը, մանավանդ փետրվարյան և մարտյան դեպքերից հետո,— այս ամենը յերևի ֆանտո՞մ է: Այս ամենը բոլորովին վո՞չ մի առնչություն չունի բուրժուական դեմոկրատիայի հետ:

«Рабочее Дело»-ն, ինչպես և «Искра»-յի 12-րդ համարում տրված եկոնոմիական նամակի հեղինակները, պետք է «խորհելին այն մասին, թե այդ ինչո՞ւ դարձան դեպքերը հեղափոխական վոչ-սոցիալ-դեմոկրատական ուղղությունների այդպիսի աշխուժացում առաջացրին, փոխանակ ուժեղացնելու սոցիալ-դեմոկրատիայի հեղինա-

*) Հենց այստեղ էլ հիշատակում կա «կոնկրետ ռուսական պայմանների, վորոնք ճակատագրորեն հրում են բանվորական շարժումը դեպի հեղափոխական ուղին»: Մարդիկ չեն ուզում հասկանալ, վոր բանվորական շարժման հեղափոխական ուղին կարող է նաև լինել և վո՞չ սոցիալ-դեմոկրատական ուղի: Չե՞ վոր արևմտա-յեվրոպական ամբողջ բուրժուազիան արտոլուտիզմի ժամանակ «հրում էր», դիտակցաբար հրում էր բանվորներին դեպի հեղափոխական ուղին: Իսկ մենք, սոցիալ-դեմոկրատներս, չենք կարող բավարարվել դրանով: Ցեվ յեթե մենք մի վորևե բանով նեղաստացնում ենք սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը մինչև տարերային, արեղ-յունիոնիստական քաղաքականության աստիճանը, ապա մենք դրանով հենց ձեռնտու բան ենք անում բուրժուական դեմոկրատիայի համար:

**) Տե՛ս անվանացանկի մեջ Բրենտանո: Խմբ.:

կությունն ու վարկը»:—Վորովհետև մենք խնդրի բարձրության վրա չդտնվեցինք, բանվորական մասսաների ակտիվությունը ավելի բարձր դուրս յեկավ մեր ակտիվությունից, մենք չունեցանք բավականաչափ պատրաստված հեղափոխական ղեկավարներ և կազմակերպիչներ, վորոնք հիանալի կերպով իմանային բոլոր ոպոզիցիոն խավերի տրամադրությունն ու կարողանային շարժման գլուխ անցնել, տարերային ցույցը քաղաքականի փոխարկել, ընդլայնել նրա քաղաքական բնույթը և այլն: Այսպիսի պայմաններում մեր հետամնացությունից անխուսափելիորեն ոգտվելու յեն ավելի շարժուն, ավելի յեռանդուն վոչ-սոցիալ-դեմոկրատ հեղափոխականները, և բանվորները վորքան էլ անձնվեր և յեռանդուն կերպով կռվելու լինեն վոստիկանության ու զորքի դեմ, վորքան էլ նրանք հեղափոխականորեն հանդես գան, կլինեն միայն մի ուժ, վոր ոգնում է այդ հեղափոխականներին, կլինեն բուրժուական դեմոկրատիայի արյերդարդ, այլ վոչ թե սոցիալ-դեմոկրատական ավանգարդ: Վերցրեք գերմանական սոցիալ-դեմոկրատիան, վորի թույլ կողմերն են միայն կամենում փոխ առնել մեր եկոնոմիստները: Ինչի՞ցն է, վոր Գերմանիայում վոչ մի քաղաքական դեպք չի անցնում, վոր չաղդի սոցիալ-դեմոկրատիայի հեղինակության և վարկի ավելի ու ավելի ուժեղացման վրա: Նրանից, վոր սոցիալ-դեմոկրատիան միշտ բոլորից առաջ է այդ դեպքի ամենահեղափոխական գնահատությամբ, կամայականության դեմ կազմակերպվող ամեն մի բողոքի պաշտպանությամբ: Նա չի սրբրում իրեն այն դատողություններով, թե տնտեսական պայքարը կհրի բանվորներին դեպի իրենց իրավազրկության հարցը և թե կոնկրետ պայմանները ճակատագրական կերպով հրում են բանվորական շարժումը դեպի հեղափոխական ուղին: Նա միջամտում է հասարակական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառներին ու բոլոր հարցերին— թե՛ բուրժուական պրոդրեսիստների թեկնածու քաղաքագլխի՝ Վիլհելմի*) կողմից չհաստատվելու հարցին (մեր եկոնոմիստները դեռևս չեն կարողացել լուսավորել գերմանացիներին, վոր այդ, եյապես, կոմպրոմի՛ս է լիբերալիզմի հետ), թե՛ «անբարոյական» գրվածքների ու պատկերների դեմ որենքներ հրատարակելու հարցին, թե՛ պրոֆեսորների ընտրության վրա կառավարության ունեցած ազդեցության հարցին և այլն և այլն: Ամենուրեք նրանք բոլորից առաջ են լինում՝ քաղաքական դժգոհություն բորբոքելով բոլոր դասակարգերի մեջ, թափահարելով քնկոտներին, ձիգ տալով հետամնացներին, բազմակողմանի նյութ տալով պրոլետարիատի քաղաքական դիտակցության և քաղաքական ակտիվության զարգացման համար: Ցեվ արդյունքն այն է լինում, վոր սոցիալիզ-

*) — գերմանական կայսրի: Խմբ.:

մի գիտակցական թշնամիներն իսկ հարգանքով են տոգորվում դեպի քաղաքական առաջավոր մարտիկը, և հաճախ ինչ-որ հրաշքով «Vorwärts»-ի խմբագրական կաբինետն է ընկնում կարևոր փաստաթուղթ վո՛չ միայն բուրժուական, այլև բյուրոկրատական ու պալատական շրջաններից:

Ահա որտեղ է այն թվացող «հակասության» լուծումը, որն այն աստիճան է գերազանցում «Рабочее Дело»-յի հասկացման չափերից, որ նա միայն ձեռքերը վեր է բարձրացնում և գոռում է «մասկարա՛դ»: Յեվ իրոք, պատկերացրեք· մենք, «Рабочее Дело»-ս, անկյան գլխին գնում ենք բանվորական մասսայական շարժումը (և այս տպում ենք թավառառո՛վ), մենք զգուշացնում ենք բոլորին և յուրաքանչյուրին տարերային ելեմենտի նշանակության նվազեցումից, մենք ուզո՛ւմ ենք բուն, բուն, բուն տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալ, մենք ուզում ենք պրոլետարական պայքարի հետ սերտ և որգանական կապի մեջ մտնալ: Իսկ մեզ ասում են, թե մենք բանվորական շարժումը բուրժուական դեմոկրատիայի զենքի վերածելու համար հող ենք նախապատրաստում: Յեվ ո՞վ է ասում այդ: Այն մարդիկ, վորոնք «զիջումների» մեջ են մտնում լիբերալիզմի հետ, խառնվելով ամեն մի «լիբերալ» հարցի մեջ («պրոլետարական պայքարի հետ որգանական կապի» ինչպիսի՛ անհասկացողություն), այսքան շատ ուշադրություն դարձնելով և՛ ուսանողների, և՛ նույնիսկ (ո՛ սարսափ) զեմստվոյականների վրա: Մարդիկ, վորոնք առհասարակ ուզում են իրենց ուժերի ավելի մեծ (եկոնոմիստների՛ համեմատությամբ) տոկոսը նվիրել բնակչության վոչ-պրոլետարական դասակարգերի մեջ գործելուն: Դա արդյո՞ք «մասկարադ» չէ:

Խե՛ղճ «Рабочее Дело»: Մտածելով կհասնի՞ արդյոք նա յերբևիցե այս խորամանկ մեխանիկայի լուծմանը:

IV

ԵԿՈՆՈՄԻՍՏՆԵՐԻ ՏՆԱՏՆԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Վերը մեր կողմից քննության յենթարկված «Рабочее Дело»-յի պնդումները, թե տնտեսական պայքարը քաղաքական ագիտացիայի ամենից ավելի լայնորեն կիրառելի միջոցն է, որ այժմ մեր խնդիրը բուն իսկ տնտեսական պայքարին քաղաքական բնույթ տալն է և այլն, արտահայտում են վո՛չ միայն մեր քաղաքական, այլև մեր կազմակերպական խնդիրների նեղ ըմբռնումը: «Տերերի և կառավարության դեմ մղվող տնտեսական պայքարի» համար բոլորովին հարկավոր չէ,—ուստի և այդպիսի պայքարի հետևանքով չի ել կարող մշակվել,—համառուսական կենտրոնացած կազմակերպություն, վորը համախմբում, մի ընդհանուր դրոհ է դարձնում քաղաքական ոպոզիցիայի բողոքի և վրդովմունքի բոլոր և ամեն տեսակ արտահայտությունները, կազմակերպություն, վոր կազմված է պրոֆեսիայով հեղափոխականներից և ղեկավարվում է ամբողջ ժողովրդի իսկական քաղաքական առաջնորդների կողմից: Յեվ այդ հասկանալի ել է: Ամեն մի հիմնարկության կազմակերպության բնույթը բնականաբար և անխուսափելիորեն վորոշվում է այդ հիմնարկության գործունեության բովանդակության բնույթով: Ուստի «Рабочее Дело»-ն վերը իր քննարկած պնդումներով սրբագործում և որինականացնում է վո՛չ միայն քաղաքական գործունեության նեղությունը, այլև կազմակերպական աշխատանքի նեղությունը: Յեվ այս դեպքում, ինչպես և միշտ, նա մի որդան է, վորի գիտակցականությունը տեղի յե տալիս տարերայնության առաջ: Մինչդեռ կազմակերպության տարերայնորեն գոյացող ձևերի առաջ խոնարհվելը, այն գիտակցության բացակայությունը, թե վորքան նեղ ու պրիմիտիվ է մեր կազմակերպական աշխատանքը, թե ինչ «տնայնագործներ» ենք մենք դեռևս այդ կարևոր բնագավառում, այդ գիտակցության բացակայությունն, ասում եմ յես, մեր շարժման իսկական հիվանդությունն է: Հասկանալի յե ինքնըստինքյան, վոր այդ անկման հիվանդություն չէ, այլ աճման հիվանդություն: Բայց հենց այժմ, յերբ տարերային վրդովմունքի ալիքը, կարելի յե ասել, տակումն է անում մեզ, իբրև շարժման ղեկավարների ու կազմակերպիչների, առանձնապես անհրաժեշտ է ամենաանհաշտ պայքար հետամնացության ամեն մի պաշտպանության դեմ, նեղության ամեն մի որինականացման դեմ այս գործում, հատկապես անհրաժեշտ է դժգոհություն արթնացնել մեզանում իշխող տնայնագործականության նկատմամբ և նրանից ազատվելու անհողդողդ վճռականություն ամեն մեկի մեջ, ով մասնակցում է գործնական աշխատանքին կամ միայն պատրաստվում է սկսել այն:

ա) ԻՆՉ Է ՏՆԱՏՆԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փորձենք պատասխանել այս հարցին՝ 1894—1901 թվականների տիպիկ սոցիալ-դեմոկրատական խմբակի գործունեության փոքրիկ պատկերով: Մենք արդեն մատնանշել ենք, վոր այդ շրջանի ուսանող յերիտասարդությունն ամբողջովին տարված եր մարքսիզմով: Այդ տարվելը, հարկավ, վերաբերում եր վո՛չ միայն և նույնիսկ վո՛չ այնքան մարքսիզմին, վորպես թեորիայի, այլ վորպես՝ «ի՞նչ անել» հարցի պատասխանին, վորպես կոչի՝ թշնամու վրա արշավելու: Յեվ նոր

մարտիկներն արշավի եյին դուրս գալիս զարմանալիորեն նախնական հանդերձանքով ու պատրաստությամբ: Բազմաթիվ դեպքերում գրեթե նույնիսկ վոչ մի հանդերձանք ու պատրաստություն չի ել յեղել: Պատերազմ եյին գնում, ինչպես արորը թողած գյուղացիներ, միայն մահակ վերցնելով: Ուսանողների խմբակը առանց վորևե կապ պահպանելու շարժման հին գործիչների հետ, առանց վորևե կապ պահպանելու այլ վայրերի կամ նույնիսկ քաղաքի մյուս մասերի (կամ այլ ուսումնական հաստատությունների) խմբակների հետ, առանց հեղափոխական աշխատանքի առանձին մասերի վորևե կազմակերպման, առանց փոքրիշատե նշանակալից ժամանակաշրջան ընդգրկող գործունեության վորևե սիստեմատիկ պլանի, կապեր ե հաստատում բանվորների հետ և գործի յե ձեռնարկում: Խմբակն աստիճանաբար ավելի ու ավելի լայն պրոպագանդա ու ագիտացիա յե ծավալում. իր յելույթի փաստով գրավում ե բանվորների բավականին լայն խավերի համակրանքը, այն կրթված հասարակության վորոշ մասի համակրանքը, վոր փող ե հայթայթում և «կոմիտեյի» տրամադրության տակ գնում յերիտասարդության նորանոր խմբեր: Աճում ե կոմիտեյի (կամ պայքարի միության) հմայքը, աճում ե նրա գործունեության թափը, և նա լայնացնում ե այդ գործունեությունը միանդամայն տարերային կերպով. նույն մարդիկ, վորոնք մի տարի կամ միքանի ամիս առաջ դուրս եյին գալիս ուսանողական խմբակներում և լուծում այն հարցը, թե «ո՞ւր գնալ», վորոնք հարաբերություններ եյին հաստատում ու պահպանում բանվորների հետ, պատրաստում և լույս եյին ընծայում թերթիկներ—կապեր են հաստատում հեղափոխականների այլ խմբերի հետ, գրականություն են ճարում, ձեռնարկում են տեղական լրագրի հրատարակության, սկսում են խոսել ցույց սարքելու մասին, վերջապես դիմում են պատերազմական բացահայտ գործողությունների (ընդվորում այդպիսի պատերազմական բացահայտ գործողություն կարող ե հանդիսանալ, նայած հանգամանքներին, թե՛ հենց առաջին ագիտացիոն թռուցիկը, թե՛ լրագրի առաջին համարը և թե՛ առաջին ցույցը): Ցեվ սովորաբար այդ գործողությունների հենց առաջին սկզբնավորությունն անհասկաղ տանում ե դեպի կատարյալ տապալում: Անհասկաղ և կատարյալ հենց այն պատճառով, վոր այդ պատերազմական գործողությունները հանդիսացան վո՛չ թե յերկար ու համառ պայքարի սիստեմատիկ, նախապես մտածված և աստիճանաբար պատրաստված պլանի արդյունք, այլ պարզապես տրադիցիոն ձևով կատարվող խմբակային աշխատանքի տարերային աճում. վորովհետև վոստիկանությունը, բնականաբար, գրեթե միշտ ճանաչում եր տեղական շարժման բոլոր գլխավոր գործիչներին, վորոնք դեռևս ուսանողական նստարանից «աչքի եյին ընկել», և միայն սպասում եր իր համար ամենահարմար շուրջկալի մոմենտի, դիտմամբ հնարավորություն տալով խմբակին բավականաչափ աճելու և ծավալվելու, վորպեսզի շոշափելի corpus delicti*) ունենա, և դիտմամբ իրեն հայտնի միքանի մարդ թողնելով «ռազվոդկայի համար» (ինչպես ասում ե տեխնիկական արտահայտությունը, վոր գործ ե ածվում, վորքան ինձ հայտնի յե, թե՛ մերոնց կողմից և թե՛ ժանդարմների): Այսպիսի պատերազմը չի կարելի չհամեմատել մահակներով զինված գյուղացիների խմբի արշավանքի հետ ընդդեմ ժամանակակից զորքի: Ցեվ միայն զարմանալ պետք ե այդ շարժման կենսունակության վրա, վորը (շարժումը) լայնանում եր, աճում և հաղթություններ տանում, չնայած կուլտոնների պատրաստության այս լիակատար բացակայությանը: Ճիշտ ե, պատմական տեսակետից հանդերձանքի այդ պրիմիտիվությունը վոչ միայն անխուսափելի յեր սկզբում, այլ նույնիսկ որինական, վորպես լայն կերպով մարտիկներ ներգրավելու պայմաններից մեկը: Բայց հենց վոր սկսվեցին պատերազմական լուրջ գործողությունները (իսկ նրանք, ըստ եյության, սկսվեցին արդեն 1896 թ. ամառվա գործադուլներից),—մեր ռազմական կազմակերպության թերություններն սկսեցին ավելի և ավելի դժալի դառնալ: Առաջին պահին գլուխը կորցնելով և մի շարք սխալներ կատարելով (ինչպես՝ հասարակությանն ուղղված դիմումը սոցիալիստների վոճրագործությունների նկարագրությամբ կամ բանվորների աքսորը մայրաքաղաքներից գավառի արդյունաբերական կենտրոնները),—կառավարությունը շուտով հարմարվեց պայքարի նոր պայմաններին և կարողացավ հարկավոր տեղերում նշանակել բոլոր կատարելագործումներով զինված պրովոկատորների, լրտեսների և ժանդարմների իր ջոկատները: Ջարդերն սկսեցին այնքան հաճախակի կրկնվել, ընդգրկել այնքան բազմաթիվ անձերի, այն աստիճան վոչնչացնել տեղական խմբակները, վոր բանվորական մասսան տառացի կերպով կորցնում եր բոլոր ղեկավարներին. շարժումն անհրաժեշտորեն թռիչքային բնույթ եր ստանում, և բացարձակապես աշխատանքի վոչ մի հաջորդականություն ու կապակցություն հաստատվել չեր կարող: Տեղական գործիչների զարմանալի մասնատվածությունը, խմբակների կազմի պատահականությունը, անպատրաստվածությունը և նեղ մտահորիզոնը թեորիական, քաղաքական և կազմակերպական հարցերի բնագավառում նկարագրված պայմանների անխուսափելի արդյունքներն եյին: Բանն այնտեղ հասավ, վոր բանվորները միքանի տեղում անվստահությամբ են տոգորվում զեպի ինտելիգենցիան և խորշում են նրանից չնորհիվ մեր տոկունու-

*) — հանցակազմ: Խմբ.:

թյան ու կոնսպիրատիվության պակասության.—ինտելիգենտները, ասում են նրանք, չափազանց անզգուշ կերպով տանում են դեպի տապալումներ:

Վոր այդ տնայնագործականությունն սկսեց վերջապես զգացվել բոլոր մտածող սոցիալ-դեմոկրատների կողմից վորպես հիվանդություն, այդ գիտե ամեն վոք, ով փոքրիշատե ծանոթ է շարժմանը: Իսկ վորպեսզի նրան անծանոթ ընթերցողը չկարծի, թե մենք արհեստականորեն «հորինում ենք» շարժման առանձին ասպիճան կամ առանձին հիվանդություն, մենք կդիմենք մի անդամ արդեն հիշատակված վկային: Թող չտրտնջան մեզ վրա յերկար քաղվածքի համար.

«Եթե ասպիճանական անցումը դեպի ավելի լայն պրակտիկ գործունեություն,—գրում է Բ—վը «Рабочее Дело»-յի 6-րդ համարում,—անցում, վորն ուղղակի կախման մեջ է ռուսական բանվորական շարժման ապրած ընդհանուր անցումնային ժամանակից, բնորոշ դիծն է հանդիսանում... ապա կա նաև այլ՝ վոչ պակաս հետաքրքրական դիծ ռուսական բանվորական հեղափոխության ընդհանուր մեխանիզմի մեջ: Մենք խոսում ենք գործողության համար պիտանի հեղափոխական ուժերի այն ընդհանուր պակասության մասին*), վոր զգացվում է վո՛չ միայն Պետերբուրգում, այլև ամբողջ Ռուսաստանում: Բանվորական շարժման ընդհանուր աշխուժացման հետ, բանվոր մասսայի ընդհանուր զարգացման հետ, գործադուլների շարունակ հաճախացող դեպքերի հետ, բանվորների ավելի ու ավելի բացահայտ մասսայական կռվի հետ, վոր ուժեղացնում է կառավարական հալածանքները, ձերբակալությունները, աքսորն ու արտաքսումը, վորակապես բարձր հեղափոխական ուժերի այդ պակասությունն ավելի ու ավելի նկատելի յե դառնում և, անտարակույս, առանց ազդեցության չի մնում շարժման խորության և ընդհանուր բնույթի վրա: Շատ գործադուլներ անցնում են առանց հեղափոխական կազմակերպությունների ուժեղ ու անմիջական ներգործության... ապիտացիոն թռուցիկների և անլեգալ գրականության պակասություն և զգացվում... բանվորական խմբակներն առանց ապիտատորների յեն մնում... Դրա կողքին գրամական միջոցների մշտական կարիք և նկատվում:

Մի խոսքով, բանվորական շարժման անումը հեղափոխական կազմակերպությունների անման ու զարգացման առաջն է ընկնում: Գործող հեղափոխականների առկա կազմը չափազանց աննշան և դուրս գալիս, վորպեսզի կարողանա իր ձեռքում կենտրոնացնել ազդեցությունն ամբողջ հուզվող բանվորական մասսայի վրա, վորպեսզի բոլոր հուզմունքներին կարողանա տալ կարգավորվածության ու կազմակերպվածության դեթ նշույլը... Առանձին խմբակները, առանձին հեղափոխականները չեն հավաքված, չեն միավորված, չեն կազմում միասնական, ուժեղ և դիսցիպլինայի յենթարկված կազմակերպություն՝ պլանաչափ զարգացած մասերով»... Ցեվ վերապահություն անելով, թե ջախջախված խմբակների տեղը նորերի անմիջական յերևալը «միայն շարժման կենսունակությունն և ապացուցում... բայց դեռևս ցույց չի տալիս միանգամայն պիտանի հեղափոխական գործիչների բավականաչափ քանակի առկայություն», հեղինակը յեզրափակում է. «Պետերբուրգի հեղափոխականների գործնական անպատրաստվածությունը յերևան է գալիս նաև նրանց աշխատանքի արդյունքների մեջ: Վերջին պրոցեսները, մասնավոր «Ինքնազատագրում» և «Աշխատանքի պայքարը կապիտալիզմի դեմ» խմբերը, պարզ ցույց տվին, վոր յերիտասարդ

*) Ընդգծումն ամենուրեք մերն է:

ապիտատորը, վոր մանրամասն ծանոթ չե աշխատանքի պայմաններին, հետևապես և տվյալ գործարանում ապիտացիա մղելու պայմաններին, վոր չգիտե կոնսպիրացիայի սկզբունքները և յուրացրել է» (յուրացրե՞լ է արդյոք) «սոցիալ-դեմոկրատիայի միայն ընդհանուր հայացքները, կարող է աշխատել մի ինչ-վոր 4, 5, 6 ամիս: Այնուհետև գալիս է ձերբակալությունը, վորին հաճախ հետևում է ամբողջ կազմակերպության կամ դոնե նրա մի մասի ջախջախումը: Հարց է ծագում. հնարավո՞ր է արդյոք խմբի հաջող և արդյունավետ աշխատանքը, յեթե այդ խմբի գոյության ժամանակը ամիսներով է վորոշվում: Ակներև է, վոր գոյություն ունեցող կազմակերպությունների թերությունները չի կարելի ամբողջովին վերագրել անցումնային ժամանակին... ակներև է, վոր գործող կազմակերպությունների քանակական և, վոր գլխավորն է, վորակական կազմը այստեղ աննշան դեր չի խաղում, և մեր սոցիալ-դեմոկրատների առաջին անելիքը... պետք է լինի կազմակերպությունների ռեալ միավորումը անդամների խիստ ընտրությամբ»:

Բ) ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԿՈՆՈՄԻԶՄԸ

Մենք պետք է այժմ կանգ առնենք մի հարցի վրա, վոր հավանորեն ծագում է արդեն ամեն մի ընթերցողի մեջ: Կարելի՞ յե արդյոք այս տնայնագործականությունը, վորպես ամբողջ շարժմանը հատուկ աճման հիվանդություն, կապակցել եկոնոմիզմի հետ, վորպես ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ գոյություն ունեցող հոսանքներից մեկի: Կարծում ենք, վոր այո՛: Գործնական անպատրաստվածությունը, կազմակերպական աշխատանքի անհմտությունն իրոք ընդհանուր է բոլորիս համար, ի միջի այլոց նաև նրանց համար, ովքեր հենց սկզբից անշեղորեն կանգնած են յեղել հեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա: Ցեվ ինքնին անպատրաստվածության համար վոչ վոք, իհարկե, չեր եկ կարող մեղադրել պրակտիկներին: Բայց անպատրաստվածությունից բացի «տնայնագործականություն» հասկացողության մեջ մտնում է նաև ինչ-վոր այլ բան. ընդհանրապես ամբողջ հեղափոխական աշխատանքի նեղ թափը, այն հանգամանքի անըմբռնողությունը, վոր այդ նեղ աշխատանքով չի եկ կարող կազմավորվել հեղափոխականների լավ կազմակերպություն, վերջապես—և այդ գլխավորն է—այդ նեղությունն արդարացնելու և առանձին «թեորիա» դարձնելու փորձերը, այսինքն՝ խոնարհումն տարերայնության առաջ նաև այս բնագավառում: Հենց վոր յերևան յեկան այդպիսի փորձեր,—անտարակուսելի դարձավ արդեն, վոր տնայնագործականությունը կապված է եկոնոմիզմի հետ, և վոր մենք չենք ազատվի մեր կազմակերպական գործունեության նեղությունից, չազատվելով ընդհանրապես եկոնոմիզմից (այսինքն՝ թե՛ մարքսիզմի թեորիայի, թե՛ սոցիալ-դեմոկրատիայի դերի, թե՛ նրա քաղաքական խնդիրների նեղ ըմբռնումից): Իսկ այդ փորձերը յերևան յեկան յերկակի ուղղությամբ: Վոմանք սկսեցին ասել՝ ինքը բանվորական մասսան դեռևս չի առաջ-

դրել այնպիսի լայն և մարտական քաղաքական խնդիրներ, վոր հեղափոխականները «փաթաթում են նրա վզին», նա դեռևս պետք է պայքարի քաղաքական մերձավորագույն պահանջների համար, մղի «ընտեսական պայքար տերերի և կառավարության դեմ»*) (իսկ մասսայական շարժմանը «մատչելի» այդ պայքարին բնականաբար համապատասխանում է նաև նույնիսկ ամենաանպատրաստված յերիտասարդությանը «մատչելի» կազմակերպություն): Մյուսները, վոր հեռու յեն ամեն մի «ատելիանականությունից», սկսեցին ասել. հնարավոր է և պետք է «կատարել քաղաքական հեղափոխություն», բայց դրա համար վոչ մի կարիք չկա ստեղծելու հեղափոխականների ամուր կազմակերպություն, վոր դաստիարակում եր պրոլետարիատին տոկուն ու համառ պայքարով. դրա համար բավական է, վոր մենք բոլորս մեր ձեռքն առնենք «մատչելի» և արդեն ծանոթ մահակը: Առանց այլաբանությունների ասած—վոր մենք ընդհանուր գործադուլ տարքենք**), կամ վոր մենք բանվորական շարժման «տարատամ» ընթացքն աշխուժացնենք «եքսցիտատիվ տեռորի միջոցով»***): Այս յերկու ուղղություններն էլ, թե՛ ոպորտունիստները, և թե՛ «ռեվոլուցիոնիստները», ընկրկում են իշխող տնտեսագործականության առաջ, չեն հավատում նրանից ազատվելու հնարավորությանը, չեն հասկանում մեր առաջին և ամենահրամայական գործնական խնդիրը՝ ստեղծել հեղափոխականների կազմակերպություն, վոր ընդունակ լինի ապահովելու քաղաքական պայքարի յեռանդը, կայունությունն ու հաջորդականությունը:

Մենք նոր բերինք Բ—վի խոսքերը. «բանվորական շարժման աճումը հեղափոխական կազմակերպությունների աճման և զարգացման առաջն է ընկնում»: «Մերձավոր դիտողի» այս «արժեքավոր հաղորդումը» («Рабочее Дело»-յի խմբագրության կարծիքը Բ—վի հոդվածի մասին) մեզ համար կրկնակի արժեք ունի: Նա ցույց է տալիս, վոր մենք արդարացի եյինք, յերբ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ գոյություն ունեցող ժամանակակից ճգնաժամի հիմնական պատճառը մասսաների տարերային վերելքից ղեկավարների («լիդերների», հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատների) հետամնացության մեջ եյինք տեսնում: Նա ցույց է տալիս, վոր հենց տնտեսագործականության վարարանումն ու պաշտպանությունն են հանդիսանում եկոնոմիական նամակի հեղինակների՝ Բ. Կրիչեվսկու և Մարտինովի այդ

*) «Рабочая Мысль» և «Рабочее Дело», հասկացող Պլեխանովին ուղղված «Պատասխանը»:

**) «Кто совершит политическую революцию?» բրոշյուրը—Ֆուսսատանում հրատարակված «Пролетарская борьба» ժողովածուի մեջ: Վերահրատարակել և նաև Կիևի կոմիտեն:

***) «Возрождение революционизма» և «Свобода»:

բոլոր դիտողությունները («Искра»-յի 12-րդ համարում) տարերային ելեմենտի, ընթացիկ դորշ պայքարի նշանակության նվազեցման վտանգի մասին, տակտիկա-պրոցեսի մասին և այլն: Այդ մարդիկ, վոր առանց արհամարհական ծամածռության չեն կարողանում արտասանել «թեորետիկ» բառը, վորոնք «կյանքի հոտառություն» են անվանում իրենց ծնրադրությունը առորեական անպատրաստվածության և անպարզացածության առաջ, իրոք յերևան են հանում մեր ամենահրամայական պրակտիկ խնդիրների անըմբռնողությունը: Հետ մնացած մարդկանց ըղավում են՝ դնացե՛ք վոտք վոտքի, առաջ մի՛ ընկեք: Այն մարդկանց, վորոնք տառապում են կազմակերպական աշխատանքի մեջ յեռանդի ու նախաձեռնության պակասությունից, գործի լայն ու համարձակ կազմակերպման «պլանների» պակասությունից, ճչում են «տակտիկա-պրոցեսի՛» մասին: Մեր հիմնական մեղքն այն է, վոր մենք նվաստացնում ենք մեր քաղաքական և կազմակերպական խնդիրները մինչև ընթացիկ տնտեսական պայքարի մերձավորագույն, «չոչափելի», «կոնկրետ» շահերի աստիճանը,—իսկ մեզ շարունակում են յերդել՝ բուն իսկ տնտեսական պայքարին պետք է քաղաքական բնույթ տալ: Մի անգամ ևս. այդ տառացիորեն նույնպիսի «կյանքի հոտառություն է», վոր յերևան եր հանում ժողովրդական եպոսի հերոսը—թաղման թափոր նկատելով—յերբ ըղավում եր. «ինչքա՞ն էլ տանեք՝ չի հատնի»:

Մտաբերեցեք, թե վորպիսի անբաղդատելի, ճշմարտապես «Նարցիսյան» ամբարտավանությամբ եյին այդ իմաստուններն ուսուցանում Պլեխանովին. «բանվորական խմբակներին առհասարակ (sic!) մատչելի չեն քաղաքական խնդիրները այդ խոսքի իրական, գործնական իմաստով, այսինքն՝ քաղաքական պահանջների համար մղվող նպատակահարմար և հաջող գործնական պայքարի իմաստով» («Рабочее Дело»-յի խմբագրության պատասխանը, եջ 24): Խմբակներ էլ կան, խմբակներ էլ, պարոննե՛ր: «Տնտեսագործների» խմբակի համար, իհարկե, անմատչելի յեն քաղաքական խնդիրները, քանի դեռ այդ տնտեսագործները չեն գիտակցել իրենց տնտեսագործականությունն ու չեն ազատվել նրանից: Իսկ յեթե այդ տնտեսագործները բացի դրանից սիրահարված են իրենց տնտեսագործականության վրա, յեթե նրանք՝ «գործնական» բառը անպատճառ գրում են ընդգծումով և յերևակայում են, թե գործնականությունը պահանջում է, վոր իրենց խնդիրները նվաստացնեն մինչև մասսայի ամենահետամնաց խավերի ըմբռնման մակարդակը,—ապա այն ժամանակ, հարկավ, այդ տնտեսագործներն անհասալի յեն, և դրանց համար, իրոք, ընդհանրապես անմատչելի յեն քաղաքական խնդիրները: Բայց Ալեքսեյևի և Միչկինի, Խալտուրինի և

ժելյաբովի նման կորիֆեյների*) խմբակի համար մատչելի չեն քաղաքական խնդիրներն այդ բառի ամենատիրական, ամենագործնական իմաստով, մատչելի չեն հենց այն պատճառով և այն չափով, ինչ չափով վոր նրանց ջերմ քարոզն արձագանգ է գտնում տարերայնորեն արթնացող մասսայի մեջ, ինչ չափով վոր նրանց կրակոտ յեռանդը նեցուկ և ոգնություն է ստանում հեղափոխական դասակարգի յեռանդի կողմից: Պլեխանովը հազար անգամ արդարացի յեր, յերբ նա վո՛չ միայն նշեց այդ հեղափոխական դասակարգը, վո՛չ միայն ապացուցեց նրա տարերային զարթոնքի անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը, այլև նույնիսկ «բանվորական խմբակների» առջև քաղաքական բարձր և մեծ խնդիր դրեց: Իսկ դուք այն ժամանակից հետո ծագած մասսայական շարժման վրա յեք հիմնվում այն նպատակով, վոր նվաստացնեք այդ խնդիրը,—նրա համար, վոր նեղացնեք «բանվորական խմբակների» գործունեության յեռանդն ու թափը: Ի՞նչ է այս, յեթե վոչ տնայնագործի սիրահարվածությունը իր տնայնագործականության վրա: Դուք պարծենում եք ձեր գործնականությամբ և չեք նկատում ամեն մի ռուսական պրակտիկին ծանոթ այն փաստը, թե վորպիսի հրաշքներ է ընդունակ կատարելու հեղափոխական գործում վոչ միայն խմբակի, այլ նույնիսկ առանձին անհատի յեռանդը: Թե՞ դուք կարծում եք, վոր մեր շարժման մեջ չեն կարող լինել այնպիսի կորիֆեյներ, վորոնք յեղել են 70-ական թվականներին: Ինչո՞ւ պետք է այդպես լինի: Վորովհետև մենք քի՞չ ենք պատրաստված: Բայց մենք պատրաստվում ենք, պատրաստվելու յենք և կպատրաստվենք: Ճիշտ է, «ընդդեմ տերերի և ընդդեմ կառավարության մղվող տնտեսական պայքարի» կանգնած ջրի յերեսին մեզանում, դժբախտաբար, բորբոս է գոյացել, մարդիկ են յերևան յեկել, վորոնք ծունկ են չոքում և աղոթում են տարերայնությանը, ակնածությամբ դիտելով (Պլեխանովի արտահայտությամբ) ռուսական պրոլետարիատի «հետինը»: Բայց մենք կկարողանանք ազատվել այդ բորբոսից: Հենց հիմա ճշմարիտ հեղափոխական թեորիայով զեկավարվող ռուս հեղափոխականը, հենվելով ճշմարիտ հեղափոխական և տարերայնորեն արթնացող դասակարգի վրա, կարող է վերջապես—վերջապե՛ս—ուղղվել իր ամբողջ հասակով և ծավալել իր ամբողջ դյուցազնական ուժերը: Դրա համար հարկավոր է միայն, վոր պրակտիկների բազմության մեջ, այն մարդկանց ե՛լ ավելի մեծ բազմության մեջ, վորոնք դպրոցական նստարանից արդեն յերազում են պրակտիկ աշխատանքի մասին, մեր քաղաքական խնդիրներն ու մեր կազմակերպչական աշխատանքի թափը նվաստացնելու ամեն մի նկրտում ծաղրի և արհամարհանքի հանդիպի: Ցեվ մենք կհասնենք դրան, հանգի՛ստ յեղեք, պարոններ:

«Ինչի՞ց սկսել» հոդվածում յես գրել եմ «Рабочее Дело»-յի դեմ. «24 ժամվա մեջ փոխել կարելի յե վորևե հատուկ հարցի վերաբերյալ ագիտացիայի տակտիկան, կուսակցական կազմակերպության վորևե մանրամասնություն կիրառելու տակտիկան, իսկ վո՛չ միայն 24 ժամում, այլ թեկուզ նույնիսկ 24 ամսում փոխել իրենց հայացքները այն մասին, թե արդյոք պետք է առհասարակ, մշտապես և անպայմանորեն մարտական կազմակերպություն ու քաղաքական ագիտացիա մասսայի մեջ, կարող են միմիայն այն մարդիկ, վորոնք զուրկ են վորևե հիմքից»*): «Рабочее Дело»-ն պատասխանում է. «Искра»-յի՝ փաստական ընույթի հավակնություն ունեցող այս միակ մեղադրանքը վոչ մի բանի վրա չի հիմնված: «Рабочее Дело»-յի ընթերցողները լավ գիտեն, վոր մենք հենց սկզբից վո՛չ միայն քաղաքական ագիտացիայի կոչ եյինք անում, չսպասելով «Искра»-յի յերևան գալուն»... (ընդսմին ասելով, թե վոչ միայն բանվորական խմբակներին, «այլև մասսայական բանվորական շարժմանը անհնարին է վորպես առաջին քաղաքական խնդիր առաջադրել արսոլուտիզմի տապալումը, այլ միայն՝ մերձավորագույն պահանջների համար մղելիք պայքարը, և թե «մերձավորագույն քաղաքական պահանջները մասսային մատչելի կդառնան մեկ կամ, ծայրահեղ դեպքում, միքանի գործադուլներից հետո»)... «այլև մեր հրատարակություններով Ռուսաստանում գործող ընկերներին արտասահմանից միակ սոցիալ-դեմոկրատական քաղաքական-ագիտացիոն նյութն եյինք մատակարարում»... (ըստվորում դուք այս միակ նյութի մեջ վոչ միայն լոկ տնտեսական պայքարի հողի վրա ամենալայն քաղաքական ագիտացիա եյիք կիրառում, այլև ի վերջո մատնելով հասաք այն բանին, թե այդ նեղացրած ագիտացիան «ամենից ավելի լայն չափով և կիրառելի»: Ցեվ դուք չե՞ք նկատում, պարոննե՛ր, վոր ձեր փաստարկումն ապացուցում է հենց «Искра»-յի յերևան գալու անհրաժեշտությունը—այսպիսի միակ նյութի պայմաններում—և «Искра»-յի պայքարի անհրաժեշտությունը «Рабочее Дело»-յի դեմ)... «Մյուս կողմից, մեր հրատարակչական գործունեությունը իրականում նախապատրաստում եր կուսակցության տակտիկական միասնությունը»... (համոզմունքի միասնություն այն բանո՞ւմ, թե տակտիկան կուսակցական այն խնդիրների աճման պրոցեսն է, վորոնք աճում են կուսակցության հետ միասին: Թանգարժե՛ք միասնություն)... «և դրանով հենց «մարտական կազմակերպության» հնարավորությունը, վորի ստեղծման համար Միությունն առհասա-

*) Տե՛ս ներկա հրատարակությունը, էջ 20: Խմբ.:

*) Կորիֆեյներ—ականավոր գործիչներ վորևե բնագավառում: Խմբ.:

բակ ամբողջ մատչելի յեղածն արել է արտասահմանյան կազմակերպութեան համար» («Р. Д.» № 10, էջ 15): Դուրս պրծնելու լավ՞ը փորձ: Վոր դուք արել եք ձեզ համար բոլոր մատչելին, այդ յերբեք էլ յես չեմ մտածել բացասել: Յես պնդել եմ և պնդում եմ, վոր «մատչելի» սահմանները դուք նեղացնում եք ձեր ըմբռնման կարճատեսութեամբ: Միծաղելի յե նույնիսկ խոսել «մարտական կազմակերպութեան» մասին հանուն «մերձավորագույն քաղաքական պահանջների» պայքարելու համար կամ էլ «տերերի և կառավարության դեմ տնտեսական պայքար մղելու համար»:

Բայց յեթե ընթերցողը կամենում է տեսնել «եկոնոմիական» սիրահարվածության զոհարներ (սիրահարվածություն տնայնագործականության վրա), ապա նա, հարկավ, պետք է եկլեկտիկ և անկայուն «Рабочее Дело»-յից դառնա դեպի հետևողական և վճռական «Рабочая Мысль»-ը: «Այժմ յերկու խոսք հատկապես այսպես կոչված հեղափոխական ինտելիգենցիայի մասին,—գրում եր Ռ. Մ.-ն «Առանձին հավելվածում», էջ 13,—նա, ճիշտ է, հաճախ ցույց է տվել գործով իր լիակատար պատրաստակամությունը «վճռական մարտի բռնվելու ցարիզմի հետ»: Ամբողջ դժբախտությունն այն է միայն, վոր անխնա կերպով հալածվելով քաղաքական վոստիկանության կողմից, մեր հեղափոխական ինտելիգենցիան այդ քաղաքական վոստիկանության դեմ մղվող պայքարն ընդունում եր վորպես քաղաքական պայքար ինքնակալության դեմ: Ուստի և նրա համար մինչև այժմ մնում է չպարզված այն հարցը, թե «վո՞րտեղից վերցնել ուժեր ինքնակալության դեմ պայքարելու համար»»:

Իսկապես, վորքա՞ն աննման է այս հոյակապ արհամարհանքը վոստիկանության դեմ մղվող պայքարի վերաբերմամբ տարերային շարժման յերկրպագուի (վատ իմաստով յերկրպագուի) կողմից: Մեր կոնսպիրատիվ անհմտությունը նա պատրաստ է արդարացնելո՞ւ նրանով, վոր մեզ համար, տարերային մասսայական շարժման պարագայում, կարևոր էլ չե՞ եյապես պայքարը քաղաքական վոստիկանության դեմ: Այս հրեշավոր յեղրակացության տակ շատ ու շատ քչերը կստորագրեն, այն աստիճան բոլորի համար ցավոտ հարց է դարձել մեր հեղափոխական կազմակերպությունների թերությունների հարցը: Բայց յեթե նրա տակ չի ստորագրի, որինակ, Մարտինովը, ապա այն պատճառով միայն, վոր նա չի կարողանում կամ քաջություն չունի իր գրությունները հասցնելու տրամաբանական վախճանի: Իսկապես, մի՞թե այնպիսի մի «խնդիր», վորպիսին շոշափելի արդյունքներ խոստացող կոնկրետ պահանջների առաջադրումն է մասսայի կողմից, պահանջում է առանձին հոգացողություն հեղափոխականների կայուն, կենտրոնացած, մարտական կազմակերպության ստեղծման մասին. մի՞թե այդ «խնդիրը» չի իրագործում և այնպիսի մասսան, վորն ամենևին չի «պայքարում քաղաքական վոստիկանության դեմ»: Դեռ ավելին. մի՞թե այդ խնդիրն իրագործելի կլիներ, յեթե բացի փոքրաթիվ զեկավարներից այդ գործին չձեռնարկեին նույնպես (ահագին մեծամասնությամբ) այնպիսի բանվորներ, վորոնք միանգամայն անընդունակ են «պայքարելու քաղաքական վոստիկանության դեմ»: Այդպիսի բանվորները, մասսայի միջակ մարդիկ, ընդունակ են հոկայական յուսանք և անձնուրացություն ցուցաբերելու գործադուլի մեջ, վոստիկանության և գործի դեմ մղվող փողոցային կռվում, ընդունակ են վճռելու մեր ամբողջ շարժման յելքը (և մենակ նրանք կարող են անել այդ).—բայց հենց բարձրագույն վոստիկանության դեմ մղվող պայքարը պահանջում է առանձին հատկություններ, պահանջում է պրոֆեսիայով հեղափոխականներ: Յեվ մենք պետք է հոգանք վո՛չ միայն այն մասին, վոր մասսան կոնկրետ պահանջներ «առաջադրի», այլև այն մասին, վոր բանվորների մասսան ավելի ու ավելի թվով այդպիսի պրոֆեսիայով հեղափոխականներ «առաջադրի»: Այսպիսով մենք մոտեցանք պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպության և գուտ բանվորական շարժման փոխհարաբերության հարցին: Գրականության մեջ քիչ արտացոլում գտած այս հարցը շատ է պրաղեցրել մեզ, «քաղաքագետներիս», դեպի եկոնոմիզմը շատ թե քիչ թեքված ընկերների հետ ունեցած խոսակցությունների և վիճաբանությունների մեջ: Արժե առանձնապես կանգ առնել դրա վրա: Բայց նախ ևս մի մեջբերումով ավարտենք՝ եկոնոմիզմի հետ տնայնագործականության ունեցած կապի վերաբերյալ մեր դրության լուսաբանումը:

««Աշխատանքի Ազատագրություն» Խումբը,—գրում եր պ. N.N.-ը իր «Պատասխանի» մեջ,—ուղղակի պայքար է պահանջում կառավարության դեմ, չհշտադատելով, թե վորտեղ է այդ պայքարի համար հարկավոր նյութական ուժը, չնշելով, թե վորտեղ են նրա ուղիները»: Յեվ ընդգծելով վերջին խոսքերը, հեղինակն այսպիսի ծանոթագրություն է դնում «ուղիներ» խոսքի առթիվ. «Այս հանգամանքը չի կարող բացատրվել կոնսպիրատիվ նպատակներով, վորովհետև ծրագրի մեջ խոսքը վո՛չ թե դավադրության, այլ մասսայական շարժման մասին է: Իսկ մասսան չի կարող գնալ գաղտնի ուղիներով: Մի՞թե հնարավոր է գաղտնի գործադուլը: Մի՞թե հնարավոր է գաղտնի մանիֆեստացիան ու պետիցիան («Vademecum», էջ 59): Հեղինակն ընդհանուր մոտեցել է թե՛ այդ «նյութական ուժին» (գործադուլների և մանիֆեստացիաների կազմակերպիչներ) և թե՛ պայքարի «ուղիներին», բայց այնուամենայնիվ մնացել է շփոթված՝ տարակուսանքի մեջ, վորովհետև նա «խո-

նարհվում է» մասսայական շարժման առաջ, այսինքն՝ նայում է նրան վորպես մի բանի, վոր ազատում է մեզ մեր հեղափոխական ակտիվությունից, և վոչ թե վորպես մի բանի, վոր պետք է խրախուսի և հրահրի մեր հեղափոխական ակտիվությունը: Գաղտնի գործադուլն անհնարին է—նրա մասնակիցների և նրա հետ անմիջականորեն չփվող անձերի համար: Բայց ռուսական բանվորների մասսայի համար այդ գործադուլը կարող է մնալ (և մեծ մասամբ մնում է) «գաղտնի», վորովհետև կառավարությունը հոգ է տանելու, վոր ամեն մի կապ կորվի գործադուլավորների հետ, հոգ է տանելու, վոր անհնարին դարձնի գործադուլի վերաբերյալ տեղեկությունների ամեն մի տարածումը: Ահա այստեղ արդեն հարկավոր է հատուկ «պայքար քաղաքական վոստիկանության դեմ», պայքար, վոր չերբեք չի կարողանա ակտիվ կերպով մղել նույնպիսի լայն մասսան, վորպիսին մասնակցում է գործադուլներին: Այդ պայքարը պետք է կազմակերպեն «արվեստի բոլոր կանոնների համաձայն» այն մարդիկ, վորոնք պրոֆեսիոնալ կերպով զբաղված են հեղափոխական գործունեությամբ: Այդ պայքարի կազմակերպումը պակաս հարկավոր չդարձավ նրանից, վոր մասսան տարերայնորեն ներգրավվում է շարժման մեջ: Ընդհակառակը, դրանից կազմակերպությունը դառնում է ավելի հարկավոր, վորովհետև մենք, սոցիալիստներս, կատարած չեյինք լինի մեր անմիջական պարտականությունները մասսայի առաջ, յեթե չկարողանայինք խանգարել վոստիկանությանը՝ գաղտնի դարձնելու (իսկ յերբեմն ել ինքներս յեթե չնախապատրաստեյինք գաղտնի) ամեն մի գործադուլ և ամեն մի մանիֆեստացիա: Իսկ այդ կարողանալու մենք ի վիճակի յենք հենց այն պատճառով, վոր տարերայնորեն արթնացող մասսան կառաջադրի նույնպես իր միջից «պրոֆեսիայով հեղափոխականների» ավելի ու ավելի մեծ թիվ (յեթե մեր խելքին չփչի ամեն պարագայում հրավիրել բանվորներին, վոր զոփզոփին միևնույն տեղում):

գ) ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե քաղաքական պայքարի հասկացողությունը սոցիալ-դեմոկրատի համար ծածկվում է «տերերի և կառավարության դեմ մղվող անտեսական պայքարի» հասկացողությամբ, ապա բնական է սպասել, վոր նրա համար «հեղափոխականների կազմակերպություն» հասկացողությունը պետք է ավելի կամ պակաս չափով ծածկվի «բանվորների կազմակերպություն» հասկացողությամբ: Յեվ այդ իրոք պատահում է, այնպես վոր, կազմակերպության մասին խոսելիս, մենք տարացիորեն գտնվում ենք տարբեր լեզուներով խոսող մարդկանց դրության մեջ: Այսորվա պես հիշում եմ, որինակ, խոսակցությունս մի բավականին հետևողական եկոնոմիստի հետ, վորին յես առիթ չեյի ունեցել առաջուց ճանաչելու: Խոսք բացվեց «Кто совершит политическую революцию?» բրոշյուրի մասին, և մենք արագ համաձայնություն յեկանք այն մասին, վոր այդ բրոշյուրի հիմնական թերությունը կազմակերպության հարցի անգիտացումն է: Մենք արդեն յերևակայում եյինք, վոր համերաշխ ենք իրար հետ—բայց... խոսակցությունն առաջ է գնում, և դուրս է գալիս, վոր մենք տարբեր բաների մասին ենք խոսում: Իմ զրուցակիցը մեղադրում է հեղինակին գործադուլային դանձարկղների, փոխողնության և այլ նման ընկերությունների անգիտացման համար, իսկ յես նկատի ունեյի հեղափոխականների կազմակերպությունը, վոր անհրաժեշտ է քաղաքական հեղափոխություն «կատարելու» համար: Յեվ հենց վոր յերևան յեկավ այս տարաձայնությունը,—յես չեմ հիշում արդեն, վոր յես ընդհանրապես վորևե տկղբունքային հարցի նկատմամբ հարկ զգայի համաձայնելու այդ եկոնոմիստի հետ:

Իսկ ի՞նչն ել մեր տարաձայնությունների աղբյուրը: Հենց այն, վոր եկոնոմիստները շարունակ սոցիալ-դեմոկրատիզմից սայթաքում են դեպի տրեդ-յունիոնիզմ՝ թե՛ կազմակերպական և թե՛ քաղաքական խնդիրներում: Սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական պայքարը շատ ավելի լայն է և բարդ, քան բանվորների տնտեսական պայքարը տերերի և կառավարության դեմ: Ճիշտ նույնպես ել (և դրա հետևանքով) հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպությունն անխուսափելիորեն պետք է լինի այլ տեսակի, քան բանվորների կազմակերպությունն այդպիսի պայքարի համար: Բանվորների կազմակերպությունը, նախ, պետք է լինի պրոֆեսիոնալ, յերկրորդ, նա պետք է ըստ հնարավորության ավելի լայն լինի, յերրորդ, նա պետք է լինի ըստ հնարավորության ավելի պակաս կոնսպիրատիվ (յես ասում եմ, հարկավ, այստեղ և ստորև, նկատի ունենալով միայն ինքնակալական Ռուսաստանը): Ընդհակառակը, հեղափոխականների կազմակերպությունը պետք է ընդգրկի նախ և առաջ ու գլխավորապես այն մարդկանց, վորոնց պրոֆեսիան հեղափոխական գործունեությունն է (ուստի և յես խոսում եմ հեղափոխականների կազմակերպության մասին, նկատի ունենալով հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին): Այդպիսի կազմակերպության անդամների այս ընդհանուր հատկանիշի առաջ պետք է բոլորովին ջնջվի բանվորների ու ինտելիգենտների ամեն մի տարբերություն, չխոսելով արդեն առաջինների և վերջինների առանձին պրոֆեսիաների տարբերության մասին: Այդ կազմակերպությունն անհրաժեշտորեն պետք է լինի վոչ շատ լայն և ըստ

հնարավորության ավելի կոնսպիրատիվ: Կանդ առնենք այս յուրակի տարբերության վրա:

Քաղաքական ազատություն ունեցող երկրներում արհեստակցական և քաղաքական կազմակերպության տարբերությունը միանգամայն պարզ է, ինչպես պարզ է նաև տրեդ-յունիոնների և սոցիալ-դեմոկրատիայի տարբերությունը: Վերջինիս հարաբերություններն առաջինների վերաբերմամբ անխուսափելիորեն կերպարանափոխվում են, իհարկե, տարբեր երկրներում՝ նայած պատմական, իրավաբանական և այլ պայմաններին,—նրանք կարող են լինել ավելի կամ պակաս սերտ, բարդ և այլն (մեր տեսակետից, նրանք պետք է լինեն ըստ հնարավորության ավելի սերտ և ըստ հնարավորության պակաս բարդ), բայց պրոֆեսիոնալ միությունների կազմակերպության և սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպության զուգադիպության մասին ազատ երկրներում խոսք անգամ չի կարող լինել: Իսկ Ռուսաստանում ինքնակալության ճնշումը առաջին հայացքից ջնջում է ամեն մի տարբերություն սոցիալ-դեմոկրատական կազմակերպության և բանվորական միության միջև, վորովհետև ամեն տեսակի բանվորական միություններ և ամեն տեսակի խմբակներ արգելված են, վորովհետև բանվորների տնտեսական պայքարի գլխավոր արտահայտությունն ու գործիքը—գործադուլը—ընդհանրապես քրեական (իսկ երբեմն մինչև իսկ քաղաքական՝) հանցանք է հանդիսանում: Այսպիսով, մեր պայմանները, մի կողմից, խիստ «հրում են» տնտեսական պայքար մղող բանվորներին դեպի քաղաքական հարցերը, իսկ մյուս կողմից, «հրում են» սոցիալ-դեմոկրատներին դեպի տրեդ-յունիոնիզմի և սոցիալ-դեմոկրատիզմի շփոթումը (և մեր Կրիչևսկիները, Մարտինովներն ու Ընկ. Ջանասիրությամբ դատելով առաջին կարգի «հրման մասին», չեն նկատում յերկրորդ կարգի «հրումը»): Իսկապես, յերևակայեցեք մարդիկ, վորոնք 99 հարյուրերորդականով կլանված են «տերերի և կառավարության դեմ մղվող պայքարով»: Նրանցից վոմանք իրենց գործունեության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում (4—6 ամիս) վոչ մի անգամ առիթ չեն ունենում մտածելու հեղափոխականների ավելի բարդ կազմակերպության անհրաժեշտության հարցի մասին. մյուսները, թերևս, «առիթ ունենան» ծանոթանալու համեմատաբար տարածված բերնաբանական դրականության, վորից համոզմունք կքաղեն «ընթացիկ գործ պայքարի առաջընթացի» կրկնակի կարևորության մասին: Վերջապես, յերրորդ կարգի մարդիկ գոցն հրապուրվեն գայթակղեցուցիչ դաղափարով՝ աշխարհին ցույց տալու նոր նմուշ՝ «պրոլետարական պայքարի հետ սերտ և որգանական կապ պահպանելու», նոր նմուշ՝ պրոֆեսիոնալ և սոցիալ-դեմոկրատական շարժման կապակցության: Վորքան ուշ է մի յերկիր յելնում կապիտալիզմի, հետևապես և բանվորական շարժման առաջարեզ,—կարող են դատել այդպիսի մարդիկ,—այնքան ավելի կարող են սոցիալիստները մասնակցություն ցույց տալ պրոֆեսիոնալ շարժմանը և ոգնել նրան, այնքան ավելի սակավ կարող են և պետք է լինեն վոչ-սոցիալ-դեմոկրատական պրոֆեսիոնալ միություններ: Մինչև այստեղ այդպիսի դատողությունը միանգամայն ճիշտ է, բայց դժբախտությունն այն է, վոր ե՛լ ավելի հեռու յեն գնում և յերազում են սոցիալ-դեմոկրատիզմի և տրեդ-յունիոնիզմի լիակատար միաձուլման մասին: Մենք հիմա կտեսնենք Ս.-Պետերբուրգի Պայքարի Միության կանոնադրության որինակով, թե ինչպես վնասակար կերպով են անդրադառնում այդ յերազանքները մեր կազմակերպական պլանների վրա:

Բանվորների կազմակերպությունները տնտեսական պայքարի համար, պետք է լինեն պրոֆեսիոնալ կազմակերպություններ: Ամեն մի սոցիալ-դեմոկրատ բանվոր պետք է ըստ հնարավորության աջակցություն ցույց տա այդ կազմակերպություններին և ակտիվ կերպով աշխատի նրանց մեջ: Այդ այդպես է: Բայց ամենուին ել մեր շահերը չեն պահանջում, վոր միայն սոցիալ-դեմոկրատները կարողանան լինել «համքարային» միությունների անդամ. այդ կնեղացներ մասսայի վրա ունեցած մեր ազդեցության ծավալը: Թող ամեն մի բանվոր, վոր ըմբռնում է միավորման անհրաժեշտությունը տերերի և կառավարության դեմ կռվելու համար, մասնակցի համքարային միության: Համքարային միությունների բուն նպատակն անհասանելի կլիներ, յեթե նրանք չմիացնեին այն բոլորին, ում մատչելի յե ըմբռնման թեկուզ միայն այդ տարրական աստիճանը, յեթե այդ համքարային միությունները չլինեին շատ լայն կազմակերպություններ: Ցեվ վորքան լայն են այդ կազմակերպությունները, այնքան ավելի լայն կլինի և մեր ազդեցությունը նրանց վրա, ազդեցություն, վոր արվում է վո՛չ միայն տնտեսական պայքարի «տարերային» զարգացումով, այլև միության սոցիալիստ անդամների ուղղակի, գիտակցական ներգործությամբ իրենց ընկերների վրա: Բայց կազմակերպության լայն կազմի դեպքում անկարելի յե խիստ կոնսպիրացիան (վոր շատ ավելի պատասխանատվություն և պահանջում, քան թե անհրաժեշտ է տնտեսական պայքարին մասնակցելու համար): Ի՞նչպես հաշտեցնենք այս՝ լայն կազմի և խիստ կոնսպիրացիայի անհրաժեշտության միջև յեղած հակասությունը: Ի՞նչպես հասնենք այն դրության, վոր համքարային կազմակերպություններն ըստ հնարավորության ավելի պակաս կոնսպիրատիվ լինեն: Դրա համար կարող է լինել, ընդհանրապես ասած, յերկու ուղի. կա՛մ համքարային միությունների լեզալացում (վոր մի քանի յերկրներում նախորդել է սոցիալիստական և քաղաքական

միությունների լեգալացմանը), կա՛մ պահպանումն դաղտնի կազմակերպության, բայց այնքան «ազատ», քիչ-ձևավորված, lose, ինչպես ասում են դերմանացիները,—վորպեսզի անդամների մասնայի համար այդ կոնսպիրացիան հավասարվի համարյա զերոյի:

Վոչ-սոցիալիստական և վոչ-քաղաքական բանվորական միությունների լեգալացումը Ռուսաստանում արդեն սկսվել է, և վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր մեր արագ աճող սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման ամեն մի քայլը պետք է բազմապատկի և խրախուսի այդ լեգալացման փորձերը,—փորձեր, վորոնք դլխավորապես արվում են գոյություն ունեցող կարգերի կողմնակիցների կողմից, բայց մասամբ ել իրենց՝ բանվորների կամ լիբերալ ինտելիգենցիայի կողմից: Լեգալացման դրոշակն արդեն պարզել են Վասիլյեվները և Զուբատովները, աջակցությունն այդ գործին արդեն խոստացված է և տրված պ. պ. Ոգերովների և Վորմսերի կողմից, բանվորների մեջ կան արդեն նոր հոսանքի հետևորդներ: Ցեվ մենք այսուհետև չենք կարող հաշվի չառնել այդ հոսանքը: Թե ինչպես հաշվի առնենք,—այդ մասին սոցիալ-դեմոկրատների մեջ հպդիվ թե յերկու կարծիք լինի: Մենք պարտավոր ենք անշեղորեն մերկացնել Զուբատովների և Վասիլյեվների, ժանդարմների և տերտերների ամեն մի մասնակցությունն այդ հոսանքին և պարզաբանել բանվորներին այդ մասնակիցների իսկական դիտավորությունները: Մենք պարտավոր ենք մերկացնել նույնպես ամեն տեսակ հաշտարար, «ներդաշնակ» նոտաները, վոր կսպրդեն լիբերալ դործիչների ճառերի մեջ բանվորների բաց ժողովներում,—միևնույն է՝ նրանք հնչեցնո՞ւմ են արդյոք այդ նոտաներն իրենց անկեղծ համոզմունքով, ցանկալի համարելով դասակարգերի խաղաղ համագործակցությունը, թե իշխանությանը հաճոյանալու ցանկությամբ կամ վերջապես՝ պարզապես անճարպիկության հետևանքով: Մենք պարտավոր ենք, վերջապես, նախազգուշացնել բանվորներին այն թակարդից, վոր նրանց համար հաճախ դնում է վոստիկանությունը, այդ բաց ժողովներում ու թույլատրված ընկերությունների մեջ վորոնելով «կրակոտ մարդկանց», փորձելով լեգալ կազմակերպությունների միջոցով պրովոկատորներ մտցնել նաև անլեգալների մեջ:

Բայց այդ ամենն անել—ամենևին չի նշանակում մոռանալ այն, վոր վերջիվերջո բանվորական շարժման լեգալացումն ոգուտ կբերի հենց մեզ և վոչ յերբեք՝ Զուբատովներին: Ընդհակառակը, հենց մեր մերկացնող կամպանիայով է, վոր մենք բաժանում ենք վորոմը ցորենից: Վորոմը մենք արդեն նշեցինք: Ցորենը՝ այդ—բանվորների ե՛լ ավելի լայն և ամենահետամնաց խավերի ուշադրության դրավումն է դեպի սոցիալական և քաղաքական հարցերը, այդ—մեր, հեղափոխականներիս, ազատագրումն է այնպիսի ֆունկցիաներից, վորոնք ըստ էության լեգալ են (լեգալ դրքերի տարածում, փոխողնություն և այլն), և վորոնց զարգացումն անխուսափելիորեն ավելի ու ավելի նյութ պիտի տա մեզ ագիտացիայի համար: Այդ իմաստով մենք կարող ենք և պետք է ասենք Զուբատովներին ու Ոգերովներին. Ջանացե՛ք, պարոններ, Ջանացե՛ք: Վորչափով դուք թակարդներ եք դնում բանվորների համար (բացարձակ պրովոկատորության իմաստով արդյոք, թե բանվորներին «ստրուվիզմով»*) «աղնվորեն» անբարոյականացնելու իմաստով),—մենք կհոդանք արդեն ձեզ մերկացնելու մասին: Վորչափով դուք իրական քայլ եք անում դեպի առաջ,—թեկուզ «ամենայերկչոտ զիգզագի» ձևով, բայց քայլ դեպի առաջ,—մենք կասենք՝ չնո՛ր արեք: Իրական քայլ դեպի առաջ կարող է լինել բանվորների ազատության միայն իրական, թեկուզ մինյատյուր լայնացումը: Իսկ ամեն մի այդպիսի լայնացում մեր ոգտին կծառայի և կարագացնի այդպիսի լեգալ ընկերությունների յերևան դալը, վորոնց մեջ վո՛չ թե պրովոկատորները կվորսան սոցիալիստներին, այլ սոցիալիստները կվորսան իրենց համար նորընծաներ: Մի խոսքով, մեր գործն այժմ վորոմի դեմ կռվելն է: Մեր գործը չե սենյակային ծաղկամաններում ցորեն բուսցընելը: Վորոմը պոկելով, մենք դրանով իսկ հող ենք մաքրում ցորենի սերմերի հնարավոր բողբոջման համար: Ցեվ քանի դեռ Աֆանասի Իվանիչները Պուլխերիա Իվանովնաների հետ միասին գրաղվում են սենյակային բուսաբուծությամբ, մենք պետք է հնձվորներ պատրաստենք, վորոնք կարողանային թե՛ այսորվա վորոմները հարել և թե՛ վաղվա ցորենը հնձել**):

Այսպես ուրեմն, մենք չենք կարող լեգալացման միջոցով լուծել ըստ հնարավորության ավելի պակաս կոնսպիրատիվ և ըստ հնարավորության ավելի լայն արհեստակցական կազմակերպություն ստեղծե-

---

*) — այսինքն «լեգալ մարքսիզմով», վորի ամենանշանավոր ներկայացուցիչն է պ. Ստրուվեն: Խմբ.:

**) «Искра»-յի պայքարը վորոմների դեմ «Рабочее Дело»-յի կողմից այսպիսի բարկացկոտ յերեսյթ առաջ բերեց. «Իսկ «Искра»-յի համար ժամանակի նշան են ծառայում վո՛չ այնքան այդ խոշոր դեպքերը (զարնանային), վորքան Զուբատովյան գործակալների՝ բանվորական շարժումը «լեգալացնելու» վոդորմելի փորձերը: Նոր չի տեսնում, վոր հենց այս փաստերը խոսում են իր դեմ. դրանք հենց վկայում են այն մասին, վոր բանվորական շարժումը կառավարության աչքում շատ սպառնալի չափեր և ընդունել» («Два съезда», եջ 27): Այս բոլորի մեղքը «կյանքի տիրական հրամանների հանդեպ խուլ» այդ որթոդոքսների «դոգմատիզմն» է: Համառորեն չեն ուզում տեսնել արշինանոց ցորենը և կռվում են վերջհանոց վորոմների դեմ: Դա արդյոք «ռուսական բանվորական շարժման վերաբերմամբ հեռանկարի խեղաթյուրված դատում» չե՞ (նույն տեղը, եջ 27):

լու հարցը (բայց շատ ուրախ կլինեմք, եթե Զուբատովներն ու Ոգերովները բանային մեզ համար այդպիսի լուծման դեթ մասնակի հնարավորությունը,—դրա համար մենք պետք է վորքան կարելի յե ավելի յեռանդուն պատերազմենք նրանց դեմ)։ Մնում է դաղանի պրոֆեսիոնալ կազմակերպությունների ուղին, և մենք պարտավոր ենք ամեն տեսակ աջակցություն ցույց տալ այն բանվորներին, վորոնք արդեն բռնում են (ինչպես մեզ հաստատապես հայտնի յե) այդ ուղին։ Պրոֆեսիոնալ կազմակերպությունները վո՛չ միայն կարող են հսկայական ոգուտ տալ տնտեսական պայքարի զարգացման և ամրապնդման գործում, այլև շատ կարևոր աջակից հանդիսանալ քաղաքական ագիտացիային և հեղափոխական կազմակերպությանը։ Այդ արդյունքին հասնելու համար, սկսվող պրոֆեսիոնալ շարժումը սոցիալ-դեմոկրատիայի համար ցանկալի հունը ուղղելու համար անհրաժեշտ է, նախ և առաջ, պարզ պատկերացնել կազմակերպման այն պլանի անհեթեթությունը, վորով Պետերբուրգի եկոնոմիստներն ահա արդեն համարյա հինգ տարի յե ինչ զբաղված են։ Այդ պլանը շարադրված է և 1897 թվականի հուլիսի «Բանվորական դանձարկղի կանոնադրության» մեջ («Листок Работника», № 9—10, եջ 46,—«Рабочая Мысль»-ի առաջին համարից) և 1900 թ. հոկտեմբերի «Բանվորական միութենական կազմակերպության կանոնադրության» մեջ (առանձին թերթիկ, վոր տպագրված է Ս.-Պետերբուրգում և հիշատակված «Искра»-ի առաջին համարում)։ Ցերկու կանոնադրության հիմնական թերությունն էլ լայն բանվորական կազմակերպության մանրամասն ձևավորումն է և այդ կազմակերպության չփոթումը հեղափոխականների կազմակերպության հետ։ Վերցնենք յերկրորդ կանոնադրությունը, վորպես ավելի մշակված գործ։ Նրա կորպուսը բաղկացած է հիսուն յերկու պարագրաֆից։—23 պարագրաֆները շարադրում են ամեն մի գործարանում կազմակերպվող «բանվորական խմբակների» («վոչ ավելի քան 10 մարդ») կազմությունը, գործավարության կարգը և գերատեսչության սահմանները, խմբակներ, վորոնք ընտրում են «կենտրոնական (գործարանային) խմբեր»։ «Կենտրոնական խումբը,—ասում է § 2-րդը,—հետևում է այն ամենին, ինչ վոր կատարվում է իր ֆաբրիկայում կամ գործարանում, և այդտեղի դեպքերի խրոնիկան է վարում»։ «Կենտրոնական խումբն ամեն ամիս հաշիվ է տալիս բոլոր վճարողներին դանձարկղի դրության մասին» (§ 17) և այլն։ 10 պարագրաֆ նվիրված է «ռայոնական կազմակերպության» և 19—«Բանվորական կազմակերպության կոմիտեյի» և «Ս.-Պետերբուրգի Պայքարի Միության կոմիտեյի» չափազանց բարդ հյուսվածքին (յուրաքանչյուր ռայոնից և «գործադիր խմբերից» ընտրյալներ—«գլխավոր հետ հարաբերություններ պահպանող, արտասահմանի հետ հարաբերություններ պահպանող, պահեստները կառավարող, հրատարակչական, դանձարկղային պրոպագանդիստների խմբերից»)։

Սոցիալ-դեմոկրատիան=«գործադիր խմբեր» բանվորների տնտեսակա՞ն պայքարի վերաբերմամբ։ Դժվար կլիներ ավելի ցայտուն կերպով ցուցադրել, թե ինչպես է եկոնոմիստի միտքը սայթաքում սոցիալ-դեմոկրատիզմից դեպի տրեդ-յունիոնիզմ, վորքան խորթ է նրա համար ամեն մի պատկերացում այն մասին, վոր սոցիալ-դեմոկրատը պետք է նախ և առաջ մտածի հեղափոխականների կազմակերպման մասին, վորոնք ընդունակ լինեն ղեկավարելու պրոլետարիատի ազատագրական ամբողջ պայքարը։ Խոսել «բանվոր դասակարգի քաղաքական ազատագրման մասին», «ցարական կամայականության» դեմ պայքարելու մասին—և կազմակերպության այսպիսի կանոնադրություններ գրել, նշանակում է բացարձակապես վոչ մի հասկացողություն չունենալ սոցիալ-դեմոկրատիայի իսկական քաղաքական խնդիրների մասին։ Հիմուն պարագրաֆներից և վոչ մեկը հանդես չի բերում ըմբռնման նշույլն անգամ այն հանգամանքի, վոր անհրաժեշտ է ամենալայն քաղաքական ագիտացիա մասսաների մեջ, վոր լուսաբաներ ուսական աբսոլուտիզմի բոլոր կողմերը, զանազան հասարակական դասակարգերի ամբողջ դեմքը Ռուսաստանում։ Այդպիսի կանոնադրության կիրառումով անիրագործելի յեն վո՛չ միայն քաղաքական, այլ նույնիսկ տրեդ-յունիոնիստական նպատակները, վորովհետև նրանք պահանջում են կազմակերպումն ըստ պրոֆեսիաների, վորի մասին ամենևին չի եկ հիշատակվում։

Բայց թերևս ամենից ընորոշը այս ամբողջ «սիստեմի» զարմանալի ծանրաքաշությունն է, մի սիստեմ, վոր փորձ է անում ամեն մի առանձին գործարանը «կոմիտեյի» հետ կապելու միակերպ և ծիծաղելի ստոիցիզմի մանր կանոնների մշտական թելով՝ ընտրությունների յեռաստիճան սիստեմի կիրառմամբ։ Եկոնոմիզմի նեղ հորիզոնով սեղմված միտքն այստեղ այնպիսի մանրամասնությունների մեջ է ընկնում, վորոնցից ուղղակի քաջքշուկի և դրասենյակայնության հոտ է բուրում։ Իրականում, իհարկե, այդ բոլոր պարագրաֆների յերեք քառորդն էլ յերբեք չի կիրառվում, բայց դրա փոխարեն այդպիսի «կոնսպիրատիվ» կազմակերպությունը ամեն մի գործարանում դանվող կենտրոնական խմբով ժանդարմների համար հեշտացնում է անհրաժեշտի լայն տապալումների կազմակերպումը։ Լեհ ընկերներն անցել են արդեն շարժման այդպիսի շրջանը, յերբ բոլորը տարվում էին բանվորական դանձարկղների լայն հիմնադրությամբ, բայց նրանք շատ շուտով հրաժարվեցին այդ մտքից, համոզվելով, վոր միայն առատ հունձ են տալիս ժանդարմներին։ Յեթե մենք ուզում ենք բանվորա-

կան լայն կազմակերպություններ և չենք ուզում լայն տապալումներ, չենք ուզում բավականություն պատճառել ժանդարմներին, ապա մենք պետք է ձգտենք, որ այդ կազմակերպությունները բոլորովին ձևավորված չլինեն:—Կկարողանա՞ն արդյոք նրանք գործել այդ դեպքում:—Ահա նայեցեք այդ ֆունկցիաներին՝ «...հետևել այն ամենին, ինչ որ կատարվում է գործարանում, և այնտեղի դեպքերի խրոնիկան վարել» (կանոնադրության § 2): Մի՞թե անպատճառ այդ պետք է ձևավորել: Մի՞թե այս է՛լ ավելի լավ չի կատարվի անլեգալ լրագրերին ուղղված թղթակցություններով՝ առանց այդ նպատակով առանձին խմբեր կազմելու: «...Ղեկավարել բանվորների պայքարը գործարանում, նրանց դրության բարելավման համար» (կանոնադրության § 3): Դարձյալ կերբիք չկա ձևակերպելու: Թե ինչ պահանջներ են ուզում առաջադրել բանվորները, այդ ամեն մի փոքրիշատե բանիմաց ագիտատորը իմանալ կարող է ամենայն ճշտությամբ հասարակ զրույցից, իսկ իմանալով, կարող կլինի հաղորդել, հեղափոխականների արդեն նեղ և վոչ թե լայն կազմակերպությանը համապատասխան թռուցիկ հայթայթելու համար: «...Կազմակերպել գանձարկղ... ռուբլուց 2 կոպ. մուծելով» (§ 9)—և այնուհետև ամեն ամիս հաշիվ տալ բոլորին գանձարկղի մասին (§ 17), վտարել չվճարող անդամներին (§ 10) և այլն: Ա՛յ սա ուղղակի դրախտ է վոստիկանության համար, վորովհետև ավելի հեշտ բան չկա, քան «կենտրոնական ֆաբրիկային գանձարկղի» այս ամբողջ կոնսպիրացիայի մեջ թափանցելը և փողերը դրավելն ու բոլոր լավագույն մարդկանց բռնելը: Ավելի պարզ չե՞ արդյոք տարածել կոպեկանոց կամ յերկու կոպեկանոց դրոշմանիշներ հայտնի (շատ նեղ և շատ կոնսպիրատիվ) կազմակերպության չտեսնելով, կամ առանց վորևե դրոշմանիշի հանդանականություններ անել, վորոնց հաշվետվությունը տալում է անլեգալ լրագիրը վորոշ պայմանաբանով (пароль): Նույն այդ նպատակին կարելի յե հասնել, իսկ ժանդարմները հարյուր անգամ ավելի դժվար կհասնեն մինչև թեկերը:

Ցեռ կարող կլինեյի շարունակել կանոնադրության՝ որինակի համար արված՝ քննությունը, բայց կարծում եմ, որ սովածն էլ բավական է: Ամենահուսալի, փորձված և կոփված բանվորների փոքրիկ, սերտորեն միացված կորիզը, որ գլխավոր ռայոններում հավատարիմ մարդիկ ունի և խստագույն կոնսպիրացիայի բոլոր կանոններով շաղկապված է հեղափոխականների կազմակերպության հետ, լիովին կկարողանա պրոֆեսիոնալ կազմակերպության վրա ընկած բոլոր ֆունկցիաները կատարել մասսայի ամենալայն աջակցությամբ առանց վորևե ձևակերպման էլ, և բացի դրանից՝ կատարել հենց այնպես, ինչպես այդ ցանկալի յե սոցիալ-դեմոկրատիայի համար: Միայն այսպիսի ճանապարհով կարելի յե հասնել սոցիալ-դեմոկրատական պրոֆեսիոնալ շարժման ամրապնդմանն ու զարգացմանը՝ հակառակ բոլոր ժանդարմների:

Ինձ կառարկեն, թե մի կազմակերպություն, այն աստիճանի lose*), որ նա ամենևին ձևակերպված էլ չե, որ չունի նույնիսկ ակնհայտնի և տոմարագրված անդամներ, չի էլ կարող կազմակերպություն կոչվել:—Դուցե: Ցեռ անվան հետևից չեմ ընկնում: Բայց այն ամենն, ինչ որ հարկավոր է, այդ «առանց անդամների կազմակերպությունը» կանի և հենց սկզբից կապահովի մեր ապագա տրեդ-յունիոնների հաստատուն կապը սոցիալիզմի հետ: Իսկ ով աբսոլուտիզմի որով ցանկանում է բանվորների լայն կազմակերպություն ընդունություններով, հաշվետվություններով, ընդհանուր քվեարկություններով և այլն—նա պարզապես անուղղելի ուտոպիստ է:

Այստեղից մորալը պարզ է· յեթե մենք սկսենք հեղափոխականների ամուր կազմակերպության հաստատուն կառուցումից, ապա մենք կկարողանանք ապահովել շարժման կայունությունն իր ամբողջությամբ, իրագործել թե՛ սոցիալ-դեմոկրատական և թե՛ զուտ տրեդ-յունիոնիստական նպատակները: Իսկ յեթե մենք սկսենք մասսային իբր առավել «մատչելի» (իսկ իրոք ժանդարմներին առավել մատչելի և հեղափոխականներին վոստիկանության համար առավել մատչելի դարձնող) բանվորական լայն կազմակերպությունից, ապա մենք չենք իրականացնի վո՛չ մեկ և վո՛չ էլ մյուս նպատակները, տնտեսագործականությունից չենք ազատվի և մեր մասնատվածությամբ, մեր հավիտենական ջախջախվածությամբ միայն ամենից մատչելի կդարձնենք մասսայի համար զուբատովյան կամ ոզերովյան տիպի տրեդ-յունիոնները:

Իսկապես վորո՞նք պետք է լինեն հեղափոխականների այդ կազմակերպության ֆունկցիաները:—Այդ մասին մենք մանրամասնորեն կպրուցենք հիմա: Բայց նախ քննենք մեր տեսությունի մի խիստ տիպիկ դատողությունը ևս· այդ տեսությունը վերջին դանվում է (նրա ցավալի՛ ճակատագիրն է) եկոնոմիստի մերձավորագույն հարևանության մեջ: Բանվորների համար հրատարակվող «Свобода» ժուռնալում (№1) կա մի հոդված—«Կազմակերպություն» վերնագրով, որի հեղինակն ուզում է պաշտպանել իր ծանոթներին, Իվանովո-Վոզնեսենսկի բանվոր-եկոնոմիստներին:

«Վատ է,—գրում է նա,—յերբ ամբոխն անմտունչ է, անգիտակից, յերբ շարժումը դալիս է վոչ սուրբին խավերից: Ա՛յ տեսեք· ուսանողները համալսարանական քաղաքից ցրվում են տուներին կամ ամառն իրենց տները—և բանվորական շարժումը

*)— ազատ, լայն: Խմբ·:

կանգ է առնում։ Մի՞թե դրսից հրվող այդպիսի բանվորական շարժումը կարող է իրական ուժ լինել։ Իհարկե, վոչ... Նա դեռևս չի սովորել իր վոտքերով ման դալ, և նրան մանկական ժապավենով են ման ածում։ Ցեվ ամեն բանում այդպես է. ուսանողները ցրվեցին—կանգառում. բանեցին սերուցքներից ամենաընդունակներին—կաթը թթվեց. ձերբակալեցին «Կոմիտեն»—և մինչև նորի կազմակերպումը դարձյալ հանդարտություն. և դեռևս հայտնի չէ, թե ինչպիսի կոմիտե կկազմվի, դուցե բոլորովին առաջվա կոմիտեյի նման չլինի. նա մի բան էր ասում, իսկ սա հակառակը կասի... Կապը յերեկվա և վաղվա որվա միջև կորչում է, անցյալի փորձն ուսանելի չի լինում ապագայի համար։ Ցեվ այդ ամենն այն պատճառով, վոր ազգատները չկան խորքում, ամբոխի մեջ, աշխատում են վո՛չ թե հարյուր հիմարներ, այլ տասնյակ խելոքներ... Տասնյակը միշտ կարելի յե բռնել դայլաձուկի յերախով, բայց յերբ կազմակերպությունն ընդդրկում է մի ամբոխի, ամեն ինչ ամբոխից է դալիս,—վոչ վոքի ջանքն է վիճակի չի կործանելու դործը» (էջ 63)։

Փաստերը ճիշտ են նկարագրված։ Մեր տնայնագործականության պատկերը վատ չէ։ Բայց յեզրակացություններն արժանի յեն «Рабочая Мысль»-ին՝ թե՛ իրենց անիմաստությամբ և թե՛ իրենց քաղաքական անտակտությամբ։ Անբանականության դագաթնակետն է այս, վորովհետև հեղինակը չփոթում է շարժման «խորքում» գտնվող «արմատների» վերաբերյալ փիլիսոփայական և սոցիալ-պատմական հարցը ժամանակակից դարմանների հետ լավագույն պայքար մղելու վերաբերյալ տեխնիկական-կազմակերպական հարցի հետ։ Քաղաքական անտակտության դագաթնակետն է այս, վորովհետև փոխանակ վատ ղեկավարներից ղիմելու լավ ղեկավարների, հեղինակը ղեկավարներից ընդհանրապես՝ ղիմում է «ամբոխին»։ Այս նույնպիսի փորձ է մեզ հետ քաշ տալու կազմակերպական տեսակետից, ինչպես վոր քաղաքական տեսակետից հետ է քաշ տալիս քաղաքական ագիտացիան եքսցիտատիվ տեսորով փոխարինելու միտքը։ Ցես, ճիշտն ասած, իսկական embarras de richesses*) եմ զգում, չիմանալով՝ վորտեղից սկսեմ «Свобода»-յի կողմից մեզ հրամցվող խառնաշփոթության քննությունը։ Ակնառու դարձնելու համար փորձեմ սկսել մի որինակից։ Վերցրեք դերմանացիներին։ Հուսով եմ, դուք չե՞ք ժխտի, վոր նրանց մոտ կազմակերպությունն ընդդրկում է ամբոխին, ամեն ինչ ամբոխից է դալիս, բանվորական շարժումը սովորել է իր վոտքերով ման դալը։ Մինչդեռ ի՞նչպես դնահատել դիտե այդ միլիոնավոր ամբոխն իր «տասնյակ» փորձված քաղաքական առաջնորդներին, ի՞նչպես ամուր և նրանցից բռնած։ Քանիցս պառլամենտում թշնամական կուսակցությունների պատգամավորները ծաղրում էին սոցիալիստներին—«լա՛վ դեմոկրատներ եք, ձեզանում միայն խոսքով է բանվոր դասակարդի շարժում,—իսկ գործնականում առաջնորդների միշտ միևնույն ընկերությունն է հանդես գալիս։

*) — առատությունից դժվարանալը։—Խմբ։

Միշտ նույն Բեբելը, միշտ նույն Լիբկնեխտը տարեցտարի, տասնամյակից տասնամյակ։ Բանվորների կողմից իրը ընտրված ձեր պատվիրակները ավելի՛ անփոխելի յեն, քան կայսրի նշանակած չինովնիկները»։ Բայց դերմանացիները միայն արհամարհական քմծիծաղով էին դիմավորում այդ դեմագոգիական փորձերին, վոր նպատակ ունեցին «առաջնորդներին» հակադրելու «ամբոխին», վերջինիս մեջ վատ և սնափառ բնազդներ հրահրելու, մասսայի դեպի «տասնյակ խելոքները» ունեցած վստահության խախտման միջոցով՝ խախտելու շարժման կայունությունն ու ամրությունը։ Գերմանացիների քաղաքական միտքն արդեն բավականաչափ զարդացած է, բավականաչափ քաղաքական փորձ է կուտակված, վորպեսզի հասկանան, վոր առանց «մի տասնյակ» տաղանդավոր (իսկ տաղանդները հարյուրներով չեն ծնվում), փորձված, պրոֆեսիոնալ կերպով պատրաստված և յերկարատև դպրոցում սովորած առաջնորդների, հիանալի կերպով միմյանց հասկացող առաջնորդների անհնարին է ժամանակակից հասարակության մեջ վորևե դասակարդի տոկուն պայքարը։ Գերմանացիներն իրենց շրջանում կա՛ս շատ են տեսել դեմագոգներ, վորոնք շողոքորթում էին «հարյուրավոր հիմարների», նրանց ավելի բարձր դասելով «տասնյակ խելոքների» հանդեպ, շողոքորթում էին մասսայի «մկանոտ բռունցքին», դրդելով այդ մասսան (Մոսսի կամ Հասսելմանի նման) չմտածված «հեղափոխական» գործողությունների և անվստահություն առաջացնելով հետևողական և տոկուն առաջնորդների վերաբերմամբ։ Ցեվ միայն չնորհիվ անչեղ ու անհաչտ պայքարի ընդդեմ բոլոր և ամեն տեսակի դեմագոգիական տարրերի սոցիալիզմի ներսում՝ այնպես աճեց ու ամրացավ դերմանական սոցիալիզմը։ Իսկ մեր խմասուններները, այնպիսի մի ժամանակաշրջանում, յերբ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ կրկիսը բացատրվում է նրանով, վոր տարեմայնորեն արթնացած մասսան չունի բավականաչափ պատրաստված, զարդացած և փորձառու ղեկավարներ, բարբառո՛ւմ են իմանուելիայի խորիմաստությամբ՝ «վատ է, յերբ շարժումը դալիս է վոչ ստորին խավերից»։

«Ուսանողներից կազմված կոմիտեն անպետք է, նա կայուն չէ»։—Միանգամայն արդարացի յե։ Բայց այստեղից յեզրակացությունն այն է, վոր հարկավոր է պրոֆեսիոնալ հեղափոխականներից կազմված կոմիտե, միևնույն է, ուսանո՞ղը, թե բանվորը կկարողանա իրենից պրոֆեսիոնալ հեղափոխական պատրաստել։ Իսկ դուք այն յեզրակացությունն եք անում, վոր չպե՛տք է բանվորական շարժումը հրել դրսից։ Ձեր քաղաքական միամտությամբ դուք չեք էլ նկատում, վոր զորավիդ եք հանդիսանում մեր եկոնոմիզմին և մեր տնայնագործականությանը։ Այդ ինչի՞ մեջ է արտահայտվել, թույլ տվեք հարց-

նել, մեր բանվորներին «հրելը» մեր ուսանողների կողմից: Միմիայն նրանում, վոր ուսանողը տանում եր բանվորին քաղաքական դիտության այն պատառները, վոր ուներ նա, սոցիալիստական դաղափարների այն փչրանքները, վոր բաժին եյին ընկել նրան (վորովհետև ժամանակակից ուսանողի դլխավոր մտավոր սնունդը, լեդալ մարքսիզմը, չեր եկ կարող տալ վոչինչ, բացի այդ փչրանքներից): Հենց այդ տեսակ «հրումն դրսից» վո՛չ թե չափազանց շատ, այլ, ընդհակառակը, չափազանց քիչ, անաստված և անխիղճ կերպով քիչ է յեղել մեր շարժման մեջ, վորովհետև մենք չափազանց յեռանդուն կերպով ենք յեփվել մեր սեփական հյութի մեջ, չափազանց ստրկորեն ենք խոնարհվել «բանվորների կողմից տերերի ու կառավարության դեմ մղվող» տարրական «տնտեսական պայքարի» առաջ: Հենց այդպիսի «հրումով» հարյուր անդամ ավելի պետք է պարապենք և պարապելու յենք մենք, պրոֆեսիայով հեղափոխականներս: Բայց հենց նրանով, վոր դուք ընտրում եք այնպիսի նողկալի խոսք, ինչպես «հրումը դրսից», վորն անխուսափելիորեն առաջացնում է բանվորների մեջ (դոնե այն բանվորների, վոր նույնքան անդարդացած են, վորքան անդարդացած եք դուք) անվստահություն դեպի այն բոլոր մարդիկ, ովքեր նրան քաղաքական դիտություն և հեղափոխական փորձ են բերում դրսից, ընտրական ցանկություն և առաջացնում դիմադրելու բոլոր այդպիսի մարդկանց,—դուք հանդիսանում եք դեմագոգ, իսկ դեմագոգները բանվոր դասակարգի ամենավատ թշնամիներն են:

Այո՛, այո՛: Մի՛ շտապեք վայնասուն բարձրացնել իմ բանավեճի «վոչ-ընկերական յեղանակների» մասին: Ցեսս չեմ եկ մտածում կասկածել ձեր դիտավորությունների մաքրության մասին, յես ասացի արդեն, վոր դեմագոգ կարելի յե դառնալ նաև սոսկ քաղաքական մխամտության հետևանքով: Բայց յես ցույց տվի, վոր դուք ցած եք իջել մինչև դեմագոգիա: Ցեվ յես յերբեք չեմ հոգնի կրկնելուց, վոր դեմագոգները բանվոր դասակարգի ամենավատթար թշնամիներն են: Ամենավատթար հենց այն պատճառով, վոր նրանք հրահրում են ամբոխի վատ ընդդները, վոր անդարդացած բանվորների համար անհնարին և այդ թշնամիներին ճանաչելը, վորոնք հանդես են դալիս և յերբեմն անկեղծ են հանդես դալիս վորպես նրանց բարեկամներ: Ամենավատթար՝ այն պատճառով, վոր խառնաշփոթության և տատանման շրջանում, մի շրջանում, յերբ նոր է ձևավորվում մեր շարժման դեմքը, ավելի հեշտ բան չկա, քան դեմագոգորեն դրավել ամբոխին, վորին հետո միայն ամենադառը փորձությունները կարող են համոզել իր սխալների մեջ: Ահա թե ինչու ժամանակակից ռուսական սոցիալ-դեմոկրատի համար մոմենտի լոդունդը պետք է լինի վճռական պայ-

քարը թե՛ դեմագոգիայի աստիճանին ընկնող «Свабода»-յի դեմ և թե՛ դեմագոգիայի աստիճանին ընկնող «Рабочее Дело»-յի դեմ (այդ մասին դեռևս մանրամասն կխոսվի*) ստորև):

«Տասնյակ խելոքների ավելի հեշտ է վորսալ, քան թե հարյուր հիմարների»: Այս հոյակապ ճշմարտությունը (վորը հրամցնելու համար ձեզ միշտ ծափահարելու յեն մի հարյուրյակ հիմարներ) ըստ ինքյան ակներև է թվում միայն այն պատճառով, վոր դուք դատողության ընթացքի ժամանակ թռիչք գործեցիք մի հարցից մյուսը: Դուք սկսեցիք խոսել և շարունակում եք խոսել «կոմիտեն» վորսալու մասին, «կազմակերպությունը» վորսալու մասին, իսկ հիմա թռիչք եք գործել դեպի շարժման «արմատները» «խորքում» վորսալու հարցը: Իհարկե, մեր շարժումն անվորսալի յե միայն այն պատճառով, վոր նա խորքում ունի հարյուրավոր և հարյուր-հազարավոր արմատներ, բայց չե՞ վոր խոսքն ամենևին այդ մասին չե: «Խորքում գտնվող արմատների» իմաստով մեզ չեն կարող «վորսալ» այժմ եկ, չնայած մեր ամբողջ տնայնագործականությանը, և այնուամենայնիվ՝ մենք բոլորս եկ դանդատվում ենք և չենք կարող չդանդատվել «կազմակերպություններ» վորսալու վրա, վոր վոչնչացնում է շարժման ամեն մի հաջորդականություն: Իսկ քանի վոր դուք կդնեք կազմակերպությունները վորսալու հարցը և չեք շեղվի նրանից, ապա յես կասեմ ձեզ, վոր տասնյակ խելոքների շատ ավելի դժվար է վորսալ, քան թե մի հարյուր հիմարի: Ցեվ յես այդ դրույթը կպաշտպանեմ, վորքան եկ վոր դուք դրդռելու լինեք ամբոխին իմ դեմ իմ «հակադեմոկրատիզմի» համար և այլն: Կազմակերպական իմաստով «խելոքներ» ասելով պետք է հասկանալ, ինչպես յես քանիցս նշել եմ, միայն պրոֆեսիոնալ հեղափոխականներին, միևնույն է՝ ուսանողներից են նրանք մշակվում թե բանվորներից: Ցեվ ահա յես պնդում եմ, (1) վոր վոչ մի հեղափոխական շարժում չի կարող կայուն լինել առանց ղեկավարների կայուն և հաջորդականություն պահպանող կազմակերպության. (2) վոր, վորքան ավելի լայն է պայքարի մեջ տարերայնորեն քաշվող շարժման հիմքը կազմող և նրան մասնակցող մասսան, այնքան ավելի հրամայական է այդպիսի կազմակերպության անհրաժեշտությունը և այնքան ավելի ամուր պետք է լինի այդ կազմակերպությունը (վորովհետև ամեն տեսակ դեմագոգների համար այնքան ավելի հեշտ է դրա-

*) Իսկ այստեղ նկատենք միայն, վոր «դրսից հրելու» և կազմակերպության մասին «Свобода»-յի արած բոլոր հետագա դատողությունների առթիվ մեր կողմից ամբողջ ասածը ամբողջությամբ վերաբերում է բոլոր եկոնոմիստներին, ի թիվս վորոնց և «ռաբոչեդելականներին», վորովհետև նրանք մասամբ ակտիվ կերպով քարոզել են ու պաշտպանել միևնույն հայացքները կազմակերպման հարցերի վերաբերմամբ, մասամբ եկ սխալանքի մեջ են ընկել այդ հայացքներից:

վել մասսայի անդարգացած խավերը)։ (3) վոր այդպիսի կազմակերպությունը պետք է բաղկացած լինի դլխավորապես այնպիսի մարդկանցից, վորոնք պրոֆեսիոնալ կերպով պարապում են հեղափոխական դործունեությամբ։ (4) վոր ինքնակալական յերկրում վորքան ավելի նեղացնենք այդպիսի կազմակերպության անդամների կազմը, այն աստիճանի, վոր նրան մասնակցեն այնպիսի անդամներ միայն, վորոնք պրոֆեսիոնալ կերպով պարապում են հեղափոխական դործունեությամբ և ստացել են պրոֆեսիոնալ պատրաստություն քաղաքական վոստիկանության դեմ մղվող պայքարի արվեստում, այնքան ավելի դժվար կլինի այդպիսի կազմակերպությունը «վորսալ», և—(5)—այնքան ավելի լայն կլինի այն անձերի կազմը թե՛ բանվոր դասակարդից և թե՛ հասարակության մնացած դասակարդերից, վորոնք հնարավորություն կունենան մասնակցելու շարժմանը և ակտիվ կերպով աշխատելու նրա մեջ։

Առաջարկում եմ մեր եկոնոմիստներին, տեռորիստներին և «եկոնոմիստ-տեռորիստներին»*) հերքել այս դրույթները, վորոնցից յես այժմ կանդ կառնեմ վերջին յերկուսի վրա։ «Տասնյակ խելոք» և «հարյուր հիմար» վորսալու հեշտության հարցը հանդում է վերը քննած հարցին՝ այն մասին, թե հնարավո՞ր է արդյոք մասսայական կազմակերպությունը խստադույն կոնսպիրացիայի անհրաժեշտության պարագայում։ Լայն կազմակերպությունը մենք յերբեք չենք կարողանա դնել այն կոնսպիրատիվ բարձրության վրա, առանց վորի խոսք անդամ լինել չի կարող կառավարության դեմ մղվող տոկուն և հաջորդականություն պահպանող պայքարի մասին։ Եթե բոլոր կոնսպիրատիվ ֆունկցիաների կենտրոնացումն ըստ հնարավորության փոքրաթիվ պրոֆեսիոնալ հեղափոխականների ձեռքում ամենևին չի նշանակում, թե այդ վերջինները «մտածելու յեն բոլորի փոխարեն», թե ամբոխը

*) Այս տերմինը թերևս ավելի ճիշտ է «Свобода»-յի վերաբերմամբ, քան նախընթացը, վորովհետև «Возрождение революционизма»-յի մեջ պաշտպանվում է տեռորիզմը, իսկ քննվող հոդվածում՝ եկոնոմիզմը։ Բարի՛ ցանկություն, բայց դա՞ոը վիճակ—կարելի յե առհասարակ ասել «Свобода»-յի մասին։ Ամենալավ առհավատչյաներ ու ամենալավ դլխավորություններ և արդյունքը՝ խառնաշփոթություն, խառնաշփոթություն դլխավորապես չնորհիվ այն հանդամանքի, վոր պաշտպանելով կազմակերպության հաջորդականությունը, «Свобода»-ն չի ուզում դիտենալ հեղափոխական մտքի և սոցիալ-դեմոկրատական թեորիայի հաջորդականությունը։ Աշխատել նորից կյանքի կոչել պրոֆեսիոնալ հեղափոխականին («Возрождение революционизма») և դրա համար առաջարկել, նախ, եքսցիտատիվ տեռոր, իսկ յերկրորդ, վորքան կարելի յե «դրսից քիչ հրվող» բրանվոր-միջակների կազմակերպություն («Свобода», № 1, 66 և հաջորդ էջերը),—այդ, ճշմարտապես, նշանակում է իր բնակարանը տաքացնելու նպատակով քանդել նույն այդ բնակարանը՝ փայտ ձեռք բերելու համար։

ներդործոն մասնակցություն չի ունենալու շարժման մեջ։ Ընդհակառակը, այդ պրոֆեսիոնալ հեղափոխականները պիտի առաջադրվեն ամբոխի կողմից ավելի ու ավելի մեծ թվով, վորովհետև ամբոխն այն ժամանակ կիմանա, վոր բավական չե միքանի ուսանողի և տնտեսական պայքար մղող բանվորների հավաքվելը՝ «կոմիտե» կազմելու համար, այլ անհրաժեշտ է տարիներով իրենցից մշակել պրոֆեսիոնալ հեղափոխականներ, և ամբոխը «կմտածի» վո՛չ թե միայն տնտեսադործականության մասին, այլ հենց այդպիսի մշակման մասին։ Կազմակերպության կոնսպիրատիվ ֆունկցիաների կենտրոնացումն ամենևին չի նշանակում շարժման բոլոր ֆունկցիաների կենտրոնացում։ Ամենալայն մասսայի ակտիվ մասնակցությունն անհրաժեշտ դրականության մեջ չի պակասի, այլ տասնապատիկ կուժեղանա չնորհիվ այն բանի, վոր «տասնյակ» պրոֆեսիոնալ հեղափոխականներ կենտրոնացնում են այդ դործի կոնսպիրատիվ ֆունկցիաները։ Այդպես և միայն այդպես կհասնենք մենք այն բանին, վոր անհրաժեշտ դրականության ընթերցանությունը, աշխատակցությունը նրա մեջ, մասամբ նույնիսկ նրա տարածումը գրեթե կդադարեն կոնսպիրատիվ գործ լինելուց, վորովհետև վոստիկանությունը չուտով կհասկանա հաղարներով ցրվող հրատարակություններից ամեն մեկի առթիվ դատարանական և վարչական դործ սկսելու դլխացավանքի անհեթեթությունն ու անհնարինությունը։ Ցեղ այդ վերաբերում է վո՛չ միայն մամուլին, այլև շարժման բոլոր ֆունկցիաներին՝ ընդհուպ մինչև ցույցը։ Մասսայի ամենաակտիվ և ամենալայն մասնակցությունն այդ ցույցին վո՛չ միայն չի տուժի, այլ, ընդհակառակը, շատ կշահի չնորհիվ այն բանի, վոր «տասնյակ» փորձված, մեր վոստիկանությունից վոչ պակաս պրոֆեսիոնալորեն վարժված հեղափոխականներ կենտրոնացնում են դործի բոլոր կոնսպիրատիվ կողմերը, թռուցիկների նախապատրաստումը, մոտավոր պլանի մշակումը, դեկլամատորների ջոկատի նշանակումը քաղաքի ամեն մի ռայոնի համար, գործարանային ամեն մի թաղամասի համար, ամեն մի ուսումնական հիմնարկության համար և այլն (յես դիտեմ,—ինձ կառարկեն, վոր իմ հայացքները «վոչ-դեմոկրատական» են, բայց յես այդ բոլորովին վոչ խելացի առարկությանը ստորև կպատասխանեմ մանրամասնորեն)։ Ամենից ավելի կոնսպիրատիվ ֆունկցիաների կենտրոնացումը հեղափոխականների կազմակերպության կողմից վո՛չ թե կանդրադառնի, այլ կհարբուցանի բազմաթիվ այլ կազմակերպությունների դործունեության լայնությունն ու բովանդակալիությունը, այն կազմակերպությունների, վորոնք լայն հասարակության համար են, ուստի և ըստ հնարավորության պակաս ձևակերպված են և ըստ հնարավորության պակաս կոնսպիրատիվ են—թե՛ բանվորական պրոֆեսիոնալ միությունների,

թե՛ ինքնակրթության և անընդհատ դրականության ընթերցման համար կազմված բանվորական խմբակների, թե՛ բնակչության բոլոր այլ խավերի մեջ դոյություն ունեցող սոցիալիստական և նմանապես դեմոկրատական խմբակների և այլն և այլն: Այդպիսի խմբակներ, միություններ և կազմակերպություններ ամենուրեք անհրաժեշտ են ամենալայն թվով, ամենաբազմազան ֆունկցիաներով, բայց անհեթեթ բան է և վնասակար, յեթե մենք դրանց շփոթենք հեղափոխականների կազմակերպության հետ, դրանց միջև յեղած սահմանը ջնջենք, հանդցնենք մասսայի մեջ առանց այն էլ անբնականալի կերպով աղոտացած դիտակցությունն այն բանի, որ մասսայական շարժման «սպասարկության» համար հարկավոր են մարդիկ, որոնք իրենց հատկապես նվիրում են ամբողջովին սոցիալ-դեմոկրատական գործունեության և որ այդպիսի մարդիկ պետք է համբերությամբ ու համառությամբ իրենցից պրոֆեսիոնալ հեղափոխականներ մշակեն:

Այո՛, այդ դիտակցությունն անբնականալի կերպով աղոտացել է: Մեր հիմնական մեղքը կազմակերպական տեսակետից այն է, որ մենք մեր տնայնագործականությամբ գցել ենք հեղափոխականի վարկը Ռուսիայում: Թեորիական հարցերում դյուրաբեկ ու յերերուն, նեղ մտահորիզոնով, իր թորշոմածության արդարացման համար մասսայի տարերայնությունը մատնանշող, ավելի տրեդ-յունիոնի քարտուղարի նման, քան թե ժողովրդական տրիբունի, անկարող՝ լայն ու համարձակ պլան առաջադրելու, մի պլան, որ հակառակորդներին ևս հարգանք ներշնչեր, անփորձ ու անճարպիկ՝ իր պրոֆեսիոնալ արվեստում,—քաղաքական վոստիկանության դեմ մղվող պայքարում,—ներեցե՛ք, դա—հեղափոխական չե, այլ ինչ-որ վողորմելի տնայնագո՛րծ:

Թող վոչ մի պրակտիկ չվիրավորվի ինձնից այս խիստ խոսքի համար, որովհետև, որչափով խոսքը վերաբերում է անպատրաստվածության, յես նախ և առաջ ինձ նկատի ունեմ: Յես աշխատել եմ մի խմբակում*), որ շատ լայն, համայնապարփակ խնդիրներ ե՛ր առաջադրում իրեն,—և մենք բոլորս, այդ խմբակի անդամներս, հարկադրված ենք յեղել չարաչար, ցավադնորեն տառապել այն դիտակցությունից, որ մենք տնայնագործներ ենք դուրս գալիս այնպիսի պատմական մոմենտում, յերբ կարելի յեր, փոխակերպելով հայտնի դարձվածքը, ասել՝ տվե՛ք մեզ հեղափոխականների կազմակերպություն—և մենք չո՛ւռ կտանք Ռուսաստանը: Յես որքան հաճախ եմ առիթ ունեցել այն ժամանակվանից հետո մտաբերելու ամոթի այն կիզիչ զգացմունքի մասին, որ յես այն ժամանակ ապրել եմ, այնքան տվելի յեր իմ մեջ դատնությունն կուտակվում այն կեղծ-սոցիալ-դեմոկրատների դեմ, որոնք իրենց քարոզով «խայտառակում են հեղափոխականի բարձր ատիճանը», որոնք չեն ըմբռնում, որ մեր խնդիրն այն չե, որ պաշտպանենք հեղափոխականի նվաստացումը մինչև տնայնագործի ատիճանը, այլ այն, որ տնայնագործներին բարձրացնենք մինչև հեղափոխականների ատիճանը:

*) — այսինքն՝ Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միության» մեջ: Խմբ.:

դ) ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԱՓԸ

Մենք վերը լսեցինք Բ—վից «գործողության համար պլատնի հեղափոխական ուժերի այն պակասության մասին, որ զգացվում է վո՛չ միայն Պետերբուրգում, այլև ամբողջ Ռուսաստանում»: Յեվ հարկավ թե վորևե մեկը փորձի վեճի առարկա դարձնել այդ փաստը: Բայց հարցն այն է, թե ի՞նչպես բացատրել այն: Բ—վը գրում է.

«Մենք չենք մտնի այդ յերևույթի պատմական պատճառների պարզաբանման մեջ. կասենք միայն, որ տեսական քաղաքական ռեակցիայից բարոյալքված և կատարված ու կատարվող տնտեսական փոփոխություններից ջլատված հասարակությունն իր մեջից առաջադրում է հեղափոխական աշխատանքի համար պիտանի անձերի խիստ փոքր թիվ, որ բանվոր դասակարգը, հեղափոխական բանվորներ առաջադրելով, մասամբ լրացնում է անընդհատ կազմակերպությունների շարքերը,—բայց որ այդպիսի հեղափոխականների թիվը չի համապատասխանում ժամանակի պահանջներին: Մանավանդ որ գործարանում 11½ ժամ զբաղված բանվորն իր գրությամբ կարող է կատարել զլխավորապես ազիտատորի ֆունկցիաներ. իսկ պրոպագանդան ու կազմակերպումը, անընդհատ դրականությունն մատակարարելն ու վերարտադրելը, պրոկլամացիաներ լույս ընծայելը և այլն ակամայից զլխավոր ծանրությամբ ընկնում են շատ աննշան ինտելիգենտական ուժերի վրա» («Рабочее Дело», № 6, էջ 38—39):

Մենք շատ բանում համաձայն չենք Բ—վի այս կարծիքին և առանձնապես համաձայն չենք մեր ընդդծած խոսքերին, որոնք առանձնապես ռելյեֆ կերպով են ցույց տալիս, որ մեր տնայնագործականությունից խիստ տանջվելուց (ինչպես և ամեն մի փոքրիշատե մտածող պրակտիկը) հետո Բ—վը չի կարողանում, եկոնոմիզմից ճզմված լինելու հետևանքով, յելք գտնել անտանելի դրությունից: Վո՛չ, հասարակությունը ատատիկ շատ ե առաջադրում «գործի» համար պիտանի անձեր, բայց մենք չենք կարողանում ոգտագործել նրանց բոլորին: Մեր շարժման ճգնաժամային, անցումնային դրությունը քննվող տեսակետից կարելի յե ձևակերպել հետևյալ բառերով. մարդիկ չկան և—մարդիկ շատ կան: Մարդիկ շատ կան, որովհետև թե՛ բանվոր դասակարգը և թե՛ հասարակության ավելի ու ավելի բազմազան խավերը տարեցտարի տալիս են ավելի ու ավելի դժգոհներ, որոնք ցանկանում են բողոքել, պատրաստ են ըստ իրենց կարողու-

թյան աջակցել աբսոլուտիզմի դեմ մղվող պայքարին, այն աբսոլուտիզմի, որի անհանդուրժելիությունը դիտակցվում է դեռևս վոչ բոլորի կողմից, սակայն ավելի լայն մասսաների կողմից, և ավելի ուր է զգացվում։ Ցեվ միևնույն ժամանակ մարդիկ չկան, որովհետև չկան դեկտվարներ, չկան քաղաքական առաջնորդներ, կազմակերպչական տաղանդներ, որոնք ընդունակ լինելին կազմակերպելու այդպիսի լայն և միաժամանակ միասնական ու ներդաշնակ աշխատանք, որը կարողանար գործադրել ամեն մի, թեկուզ ամենաաննշան ուժ։ «Հեղափոխական կազմակերպությունների աճումն ու զարգացումը» հետ է մնում վո՛չ միայն բանվորական շարժման աճումից, մի բան, որ Բ—վն էլ ընդունում է, այլև ժողովրդի բոլոր խավերում ծավալվող համադեմոկրատական շարժման աճումից։ (Ի դեպ, ներկայումս, հավանորեն, Բ—վն այս էլ կընդուներ իրրև լրացումն իր յեզրակացության)։ Հեղափոխական աշխատանքի թափը չափազանց նեղ է շարժման տարերային լայն հիմքի համեմատությամբ, չափազանց սեղմված է «տերերի և կառավարության դեմ մղվող տնտեսական պայքարի» խղճուկ թեորիայով։ Մինչդեռ ներկայումս վո՛չ միայն քաղաքական աղիտատորները, այլև կազմակերպիչ-սոցիալ-դեմոկրատները պետք է «դնան բնակչության բոլոր դասակարգերի մեջ»*)։ Ցեվ հաղիվ թե դեթ մի պրակտիկ տարակուսի այն մասին, որ սոցիալ-դեմոկրատները կարող եյին իրենց կազմակերպական աշխատանքի հաղարավոր կոտորակային ֆունկցիաները բաշխել ամենարազմազան դասակարգերի առանձին ներկայացուցիչների միջև։ Մեր տեխնիկայի ամենախոշոր թերություններից մեկը մասնագիտացման պակասությունն է, որի առթիվ այնպես դառնաղին և արդարացի կերպով դանդատվում է Բ—վը։ Որքան ավելի մանր լինեն ընդհանուր գործի առանձին «օպերացիաները», այնքան ավելի շատ կարելի յե գտնել անձեր, որոնք ընդունակ են այդպիսի օպերացիաներ կատարելու (և մեծ մասամբ միանգամայն անընդունակ պրոֆեսիոնալ հեղափոխականներ դառնալու) և այնքան ավելի դժվար կլինի վոստիկանության համար «վորսալ» այդ բոլոր «մանրամասնական աշխատողներին», այնքան ավելի դժվար կլինի նրա համար վորևե չնչին բանի պատճառով մարդ բանելուց այդպիսի «գործ» ստեղծել, որ ծածկի «պահպանության»

*) Որինակ, վերջին ժամանակներս զինվորական շրջանում դեմոկրատական վոգու անսարակուսելի աճումն է նկատվում, մասամբ փողոցային պայքարի հաճախացող դեպքերի հետևանքով, պայքար այնպիսի «թշնամիների» դեմ, որոնցից բանվորներն ու ուսանողներն են։ Ցեվ հենց վոր տակա ուժերը թույլ կան, մենք անպատճառ պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնենք զինվորների և սպաների մեջ պրոպագանդա և ագիտացիա մղելու վրա, մեր կուսակցության մեջ մտնող «ոգտակար կազմակերպությունների» ստեղծման վրա։

վրա դանձարանի արած ծախսերը։ Իսկ ինչ վերաբերում է մեզ աջակցությունն ցույց տալու պատրաստ անձերի թվին, մենք արդեն նախընթաց դլխում էս նշել ենք այն հսկայական փոփոխությունը, որ տեղի յե ունեցել այդ տեսակետից մի վորևե հինդ տարվա ընթացքում։ Բայց, մյուս կողմից եվ, վորպեսզի ի մի հավաքենք այս բոլոր մանր կոտորակները, և վորպեսզի շարժման ֆունկցիաների մասնատման հետ միասին չմասնատենք շարժումը էս, և վորպեսզի մանր ֆունկցիաներ կատարողին ներշնչենք այն հավատն իր աշխատանքի անհրաժեշտության և նշանակության վերաբերմամբ, առանց վորի նա յերբեք չի եվ աշխատի*),—այդ ամենի համար հենց վորձված հեղափոխականների ամուր կազմակերպություն է անհրաժեշտ։ Այդպիսի կազմակերպության դեպքում հավատը կուսակցության ուժի նկատմամբ այնքան ավելի կամրանա ու այնքան ավելի լայն կտարածվի, որքան ավելի կոնսպիրատիվ կլինի այդ կազմակերպությունը,—իսկ չե՞ որ պատերազմում, հայտնի բան է, ամենից կարևորն այն է, որ հավատ ներշնչես քո ուժերի վերաբերմամբ վո՛չ միայն քո զորքանակին, այլև թշնամուն ու բոլոր չեզոք տարրերին. բարեկամական չեզոքությունը յերբեմն կարող է վճռել գործի յելքը։ Այդպիսի կազմակերպության ժամանակ, որ կանգնած է թեորիական ամուր հիմքի վրա և ունի սոցիալ-դեմոկրատական ոգի, հարկ չի լինի վախենալու, թե շարժումը ճանապարհից շեղել կկարողանան նրա մեջ ներդրավված

*) Ցես հիշում եմ, մի ընկեր հաղորդել է ինձ, թե ինչպես եր սոցիալ-դեմոկրատական ոգնելու պատրաստ և ոգնած գործարանային մի տեսուչ դառնաղին դանդատվում, որ ինքը չդիտի, հասնո՞ւմ է արդյոք իր «ինֆորմացիան» իսկական հեղափոխական կենտրոնին, որքան է հարկավոր իր ոգնությունը և որքան հնարավորություն կա ոգտագործելու իր փոքրիկ և մանր ծառայությունները։ Սմենն մի պրակտիկ դիտի, իհարկե, որ յեղակի չեն նման դեպքերը, յերբ մեր տնայնագործակատությունը դաշնակիցներ է խլել մեզնից։ Իսկ առանձին վերցրած «մանր» և ի մի դումարած անգնահատելի ծառայությունները կարող կլինեն մատուցանել և կմատուցանեին մեզ վո՛չ միայն գործարանային մասի, այլև փոստային, յերկաթուղային, մաքսատանային, ազնվական, տերտերական և ամեն այլ մասերի, նույնիսկ ընդհուպ մինչև վոստիկանական ու պալատական մասերի ծառայողներն ու չինովնիկները։ Ցեթե մենք արդեն ունենայինք իսկական կուսակցություն, հեղափոխականների իրոք մարտական կազմակերպություն, մենք բոլոր այդպիսի «աջակիցներին» չեյինք տա վճռական դեր, չեյինք շտապի միշտ և անպայմանորեն քաշել նրանց «անկեղծակատությանց» հենց միջուկի մեջ, այլ, ընդհակառակը, առանձնապես կպահպանեյինք նրանց և նույնիսկ հատկապես կնախապատրաստեյինք մարդկանց այդպիսի ֆունկցիաների համար, հիշելով, որ ուսանողներից շատերը կարող եյին ավելի ոգուտ տալ կուսակցությանը վորպես «աջակից»—չինովնիկներ, քան թե վորպես «կարճատև» հեղափոխականներ։ Բայց—մեկ անգամ էս կրկնում եմ—այդ տակտիկան իրավունք ունի կիրառելու միայն արդեն բոլորովին հաստատուն կազմակերպությունը, որ ակտիվ ուժերի պակասություն չի զգում։

բաղմաթիվ «կողմնակի» տարրերը (ընդհակառակը, հենց այժմ, իշխող տնայնագործականության որով, մենք նկատում ենք, թե ինչպես շատ սոցիալ-դեմոկրատներ ձգում են «Credo»-յի դծով, միայն իրենց սոցիալ-դեմոկրատներ յերևակայելով)։ Մի խոսքով, մասնադիտացումն անհրաժեշտորեն յենթադրում ե կենտրոնացում և, իր հերթին, անպայման պահանջում ե այն։

Բայց հենց ինքը Բ—վը, վոր այնպես հիանալի ուրվագծել ե մասնագիտացման ամբողջ անհրաժեշտությունը, մեր կարծիքով, բավականաչափ չի դնահատում այն՝ բերված դատողության յերկրորդ մասում։ Բանվորներից դուրս յեկած հեղափոխականների թիվը բավական չե, ասում ե նա։ Միանգամայն արդարացի յե այդ, և մենք դարձյալ ընդդիմում ենք, վոր «մերձավոր դիտողի արժեքավոր հաղորդումը» լիովին հաստատում ե մեր հայացքը սոցիալ-դեմոկրատիայի մեջ նկատվող ժամանակակից կրիզիսի պատճառների մասին, հետևապես և նրանից բուժվելու միջոցների վերաբերմամբ։ Վո՛չ միայն հեղափոխականներն են առհասարակ հետ մնում մասսաների տարերային վերելքից, այլ նույնիսկ բանվոր հեղափոխականներն ել են հետ մնում բանվորական մասսաների տարերային վերելքից։ Իսկ այս փաստն ամենաակնառու կերպով հաստատում ե նույնիսկ «գործնական» տեսակետից վո՛չ միայն անհեթեթությունը, այլև բաղաբական հետադիմականությունն այն «մանկավարժության», վորով մեզ այնքան հաճախ հյուրասիրում են բանվորների հանդեպ մեր ունեցած պարտականությունների հարցի քննարկման ժամանակ։ Այս փաստը վկայում ե, վոր մեր ամենառաջին, ամենահրամայական պարտականությունն ե—աջակցել բանվոր-հեղափոխականների մշակմանը, վորոնք նույնպիսի մակարդակի վրա լինեն կանգնած կուսակցական գործունեության վերաբերմամբ, ինչպես և ինտելիգենտ-հեղափոխականները (մենք ընդդիմում ենք կուսակցական գործունեության վերաբերմամբ խոսքերը, վորովհետև այլ տեսակետներից նույնպիսի մակարդակի հասնելը բանվորների կողմից թեև անհրաժեշտ ե, բայց բնավ այնքան հեշտ չե և վոչ ել այնքան ստիպողական)։ Ուստի գլխավոր ուշադրությունը պետք ե դարձվի այն բանի վրա, վոր բարձրացնենք բանվորներին մինչև հեղափոխականները, ամենևին վոչ այն բանի վրա, վոր ինքներս անպատճառ իջնենք մինչև «բանվորական մասսան», ինչպես եկոնոմիստներն են կամենում, անպատճառ մինչև «բանվոր-միջակները», ինչպես «Свобода»-ն ե ուզում (վոր այս տեսակետից բարձրանում ե եկոնոմիական «մանկավարժության» յերկրորդ աստիճանը)։ Ցեսս հեռու յեմ բանվորների համար հանրամատչելի գրականություն և առանձնապես հետամնաց բանվորների համար առանձնապես-հանրամատչելի (միայն, իհարկե, վոչ խեղկատակային) գրականություն հրատարակելու անհրաժեշտությունը

բացառելու մտքից։ Բայց ինձ վրդովեցնում ե մանկավարժության այս մշտական խոթումը քաղաքականության հարցերի մեջ, կազմակերպության հարցերի մեջ։ Զե՞ վոր դուք, «բանվոր-միջակի» հոդատար պարոններ՝ ե, յեթե դուք ավելի շուտ վիրավորում եք բանվորներին ձեր ցանկությամբ՝ անպատճառ կռանալու—նախքան բանվորական քաղաքականության մասին կամ բանվորական կազմակերպության մասին խոսելը։ Դե, խոսեցեք վերջապես լուրջ բաների մասին՝ ուղղվելուց հետո, և մանկավարժությունը թողեք մանկավարժներին, այլ վոչ թե քաղաքագետներին և վոչ ել կազմակերպիչներին։ Մի՞թե ինտելիգենցիայի մեջ ևս չկան առաջավորներ, «միջակներ» և «մասսա»։ Մի՞թե բոլորի կողմից անհրաժեշտ չի համարվում ինտելիգենցիայի համար ևս հանրամատչելի գրականության անհրաժեշտությունը և չի գրվում այդ գրականությունը։ Բայց յերևակայեցեք միայն, վոր ուսանողների կամ գիմնազիստների կազմակերպմանը նվիրված հոդվածում հեղինակն սկսի, վորպես ինչ-վոր մի դյուտ, ծամծմել, թե նախ և առաջ հարկավոր ե «ուսանող-միջակների» կազմակերպումը։ Այդպիսի հեղինակին անպատճառ կծաղրեն—և արժանի յե։ Տվե՛ք մեզ, կասեն նրան, կազմակերպական գաղափարիկներ, յեթե միայն ունեք այդպիսիները, իսկ մենք հետո ինքներս կպարզենք, թե ով ե մեզանից «միջակ», ով ավելի բարձր և ով ավելի ցածր։ Իսկ յեթե դուք ձեր կազմակերպական գաղափարիկները չունեք,—ապա ձեր բոլոր ճիգերը «մասսայի» և «միջակների» վերաբերմամբ պարզապես տաղտկալի կլինեն։ Վերջապես հասկացեք, վոր արդեն հենց «քաղաքականության», «կազմակերպության» հարցերն այնքան լուրջ են, վոր նրանց մասին չի կարելի խոսել այլապես, քան միանգամայն լուրջ կերպով։ կարելի յե և պետք ե բանվորներին (և՛ ուսանողներին, և՛ գիմնազիստներին) պատրաստել այն բանի համար, վոր նրանց հետ կարելի լինի խոսք բանալ այդ հարցերի մասին, բայց քանի վոր դուք խոսք եք բացել նրանց մասին, տվեք իսկական պատասխաններ, հետ-հետ մի՛ դնաք դեպի «միջակները» կամ «մասսան», ոճիք մի՛ աղատեք սրախոսություններով կամ ֆրազներով*)։

---

*) «Свобода», № 1, «Կազմակերպություն» հոդվածը, եջ 66։ «բանվորական բաղմությունը ծանր քայլվածքով կամրապնդի այն բոլոր պահանջները, վոր կառաջադրվեն ռուսաստանյան Աշխատանքի անունից»,—անպատճա՛ռ մեծ տառով։ Ցեվ այդ նույն հեղինակը բացականչում ե։ «յես ամենևին թշնամաբար չեմ վերաբերվում ինտելիգենցիային, բայց»... (այս հենց այն բայցն ե, վոր Շչեդրինն այսպես ե թարգմանում՝ ականջները ճակատից բարձր չե՞ն բուսնում)... «բայց ինձ միշտ սոսկալի զայրացնում ե, յերբ գալիս ե մեկը և շատ դեղեցիկ ու հիանալի բաներ ե ասում ու պահանջում ե, վոր նրանք ընդունվեն իրեն (նրա՞) դեղեցկության և այլ բարեմասնությունների համար» (62)։ Այո՛, ինձ ել այս «միշտ սոսկալի զայրացնում ե»...

Բանվոր–հեղափոխականն իր գործի համար լիակատար պատրաստականություն ձեռք բերելու նպատակով նույնպես պետք է դառնա պրոֆեսիոնալ հեղափոխական: Այդ պատճառով արդարացի չէ Բ—վը, յերբ նա ասում է, թե վորովհետև բանվորն զբաղված է գործարանում 11½ ժամ, ուրեմն մնացած հեղափոխական ֆունկցիաները (բացի ագիտացիայից) «ակամայից դլխավոր ծանրությամբ ընկնում են շատ աննշան ինտելիդենտական ուժերի վրա»: Ամենևին «ակամայից» չի արվում այդ, այլ մեր հետամնացության հետևանքով, վորովհետև մենք չենք դիտակցում մեր պարտականությունն՝ ոգնելու ամեն մի՝ իր ընդունակություններով աչքի ընկնող բանվորի, վոր դառնա պրոֆեսիոնալ ագիտատոր, կազմակերպիչ, պրոպագանդիստ, ցրիչ-տարածող և այլն և այլն: Այս տեսակետից մենք ուղղակի խայտառակ կերպով վատնում ենք մեր ուժերը, չկարողանալով պահպանել այն, ինչ վոր պետք է առանձին հոդացողությամբ բուսցնենք և աճեցնենք: Նայեցե՛ք դերմանացիներին. նրանք հարյուր անդամ ավելի ուժեր ունեն, քան մենք, բայց նրանք հիանալի հասկանում են, վոր իրոք ընդունակ ագիտատորները և այլն առաջադրվում են «միջակների» կողմից ամենևին վոչ չափազանց հաճախ: Այդ պատճառով նրանք իսկույն ևեթ աշխատում են այնպիսի պայմանների մեջ դնել ամեն մի ընդունակ բանվորի, վորոնց մեջ նրա ընդունակությունները կարողանան լիակատար զարդացում և լիակատար գործադրություն ստանալ. նրան պրոֆեսիոնալ ագիտատոր են դարձնում, նրան դրդում են լայնացնել իր գործունեության ասպարեզը, տարածելով այդ գործունեությունը մի գործարանից ամբողջ արհեստի բնագավառը, մի վայրից ամբողջ յերկրի վրա: Նա իր պրոֆեսիայի մեջ ձեռք և բերում փորձառություն և ճարպիկություն, նա լայնացնում է իր մտահորիզոնը և իր դիտելիքները, նա կողք-կողքի դիտում է այլ վայրերի և այլ կուսակցությունների ականավոր քաղաքական առաջնորդներին, նա աշխատում է ինքն ել հասնել նույնպիսի բարձրության և իր մեջ միացնել բանվորական միջավայրի դիտելիքներն ու սոցիալիստական համոզմունքների թարմությունն այն պրոֆեսիոնալ հմտության հետ, առանց վորի պրոլետարիատը չի կարող համառ պայքար մղել իր թշնամիների հիանալի մարզված շարքերի դեմ: Այդպես և միայն այդպես են բանվորական մասսայի միջից առաջ քաշվում Բեբելներ և Աուերներ: Բայց այն, ինչ վոր քաղաքականապես ազատ յերկրում արվում է նշանակալի չափով ինքնըստինքյան, մեզանում մեր կազմակերպությունները պետք է կիրառեն սիստեմատիկ կերպով: Բանվորների միջից դուրս յեկած փոքրիչատե տաղանդավոր և «հույս ներշնչող» ագիտատորը չպետք է գործարանում աշխատի որական 11 ժամ: Մենք պետք է հոգանք այն մասին, վոր նա

ապրի կուսակցության միջոցներով, վոր նա կարողանա ժամանակին անցնել անընդհատ դրության, վոր նա փոխի իր գործունեության վայրը, վորովհետև այլապես նա չի մշակի մեծ փորձառություն, չի լայնացնի իր հորիզոնը, չի կարողանա գոնե միքանի տարի դիմանալ ժանդարմների դեմ մղվող կռվում: Վորքան լայնանում և խորանում է բանվորական մասսաների տարերային վերելքը, այնքան ավելի յեն նրանք առաջադրում վո՛չ միայն տաղանդավոր ագիտատորներ, այլև տաղանդավոր կազմակերպիչներ ու պրոպագանդիստներ և «պրակտիկներ» լավ իմաստով (վորոնք այնքան քիչ են մեր ինտելիդենցիայի մեջ, մեծ մասամբ մի փոքր ռուսավարի անփույթ և դանդաղաշարժ): Ցերբ վոր մենք կունենանք մասնագիտորեն պատրաստված և յերկար դպրոց անցած բանվոր–հեղափոխականների ջոկատներ (և ընդամենը, հարկավ, «դենքի բոլոր տեսակների» հեղափոխականներ),— այն ժամանակ այդ ջոկատներին հաղթել չի կարողանա աշխարհի վոչ մի քաղաքական վոստիկանություն, վորովհետև հեղափոխությանը անձնուրացորեն նվիրված մարդկանց այդ ջոկատները կվայելեն նույնպես անձնուրաց վստահություն բանվորական ամենալայն մասսաների կողմից: Ցեվ մեր ուղղակի մեղքն է այդ, վոր չափազանց քիչ ենք «հրում» բանվորներին՝ նրանց և «ինտելիդենտների» համար ընդհանուր՝ պրոֆեսիոնալ–հեղափոխական ուսման այդ ճանապարհը, չափազանց հաճախ նրանց դեպի հետ ենք քաշ տալիս մեր հիմար ճառերով այն մասին, թե ինչն է «մատչելի» բանվորական մասսայի համար, «բանվոր–միջակների» համար և այլն:

Այս, ինչպես և այլ տեսակետներից, կազմակերպական աշխատանքի նեղ թաղին անտարակուսելի և անխղելի (թեև «եկոնոմիստների» և սկսնակ պրակտիկների ահագին մեծամասնության կողմից չգիտակցվող) կապակցության մեջ է դտնվում մեր թեորիայի և մեր քաղաքական խնդիրների նեղացման հետ: Տարերայնության առաջ խոնարհվելը առաջ է բերում մասսային «մատչելիից» դեթ մի քայլ հեռանալու ինչ-վոր վախ, մասսայի մերձավորադույն և անմիջական պահանջներին պարզապես սպասարկելուց չափազանց վեր բարձրանալու վախ: Մի՛ վախենաք, պարոննե՛ր: Հիշեցե՛ք, վոր մենք այնքան ցածր ենք կանգնած կազմակերպական տեսակետից, վոր անհեթեթություն է նույնիսկ հենց այն միտքը, թե մենք կարող ենք վեր յելնել չափազանց բարձր:

Ե) «ԴԱՎԱԴԱՐԱԿԱՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ «ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ»

Իսկ մեր մեջ շատ մարդիկ կան, վորոնք այնքան զգայուն են «կյանքի ձայնի» վերաբերմամբ, վոր ամենից շատ վախենում են հենց

դրանից, մեղադրելով նրանց, ովքեր կողմնակից են այստեղ շարադրվող հայացքներին, «նարոդովոլյականության» մեջ, «դեմոկրատիզմը» չընդունելու մեջ և այլն: Հարկադրված եմ կանգ առնել այդ մեղադրանքների վրա, որոնք, իհարկե, ճանկել է նաև «Рабочее Дело»-ն:

Այս տողերը գրողին շատ լավ հայտնի է, որ Պետերբուրգի եկոնոմիստները նարոդովոլյականության մեջ մեղադրում էին դեռ «Рабочая Газета»-ին (որը և հասկանալի է, եթե համեմատենք նրան «Рабочая Мысль»-ի հետ): Ուստի մեզ ամենևին չզարմացրեց, երբ «Искра»-յի ծագումից շատ չանցած՝ մի ընկեր հաղորդեց մեզ, որ X քաղաքի սոցիալ-դեմոկրատները «Искра»-ն անվանում են «նարոդովոլյական» որդան: Մեզ համար այդ մեղադրանքն, իհարկե, միայն հաճելի է եր, որովհետև եկոնոմիստները վո՞ր կարդին սոցիալ-դեմոկրատին չեն մեղադրել նարոդովոլյականության մեջ:

Այդ մեղադրանքներն առաջանում են երկու տեսակի թյուրիմացություններից: Նախ, մեղանում այնքան վատ դիտեն հեղափոխական շարժման պատմությունը, որ «նարոդովոլյականություն» են անվանում ցարիզմին վճռական պատերազմ հայտարարող ռազմական կենտրոնացած կազմակերպության վերաբերյալ ամեն մի դաղափար: Բայց այն հիանալի կազմակերպությունը, որ ունեցին 70-ական թվականների հեղափոխականները և որը մեզ բոլորիս համար սիրուն է տիպար ծառայեր, ամենևին նարոդովոլյականների ստեղծածը չէ, այլ զեմլեվոլյականների, որոնք պառակտվեցին չերնոպերեդելականների և նարոդովոլյականների: Այսպիսով, ռազմական հեղափոխական կազմակերպության մեջ տեսնել հատուկ նարոդովոլյական մի բան—անհեթեթություն է թե՛ պատմականորեն և թե՛ տրամաբանորեն, որովհետև ամեն մի հեղափոխական ուղղություն, եթե միայն նա իրոք մտածում է լուրջ պայքարի մասին, չի կարող յոլա գնալ առանց այդպիսի կազմակերպության: Նարոդովոլյականների սխալը նրանումը չեր, որ նրանք ջանում էին իրենց կազմակերպության մեջ քաշել բոլոր դժգոհներին և այդ կազմակերպությունն ուղղել վճռական պայքարի ընդդեմ ինքնակալության: Ընդհակառակը, դրանումն է կայանում նրանց պատմական մեծ ծառայությունը: Իսկ նրանց սխալը նրանումն եր, որ նրանք հենվում էին մի թեորիայի վրա, որն ըստ էության ամենևին հեղափոխական թեորիա չեր, և ընդունակություն չունեցան կամ չկարողացան անխզելիորեն կապել իրենց շարժումը զարգացող կապիտալիստական հասարակության ներսում տեղի ունեցող դասակարգային պայքարի հետ: Ցեվ միայն մարքսիզմի ամենաբիրտ անըմբռնողությունը (կամ նրա «ըմբռնումը» «ստրուվիզմի» վոդով) կարող եր ծնել այն կարծիքը, թե բանվորական մասսայական տարերային շարժման ծագումն ազատում է մեզ հեղափոխականների նույնպիսի լավ, ինչպես

զեմլեվոլյականներինն եր, անհամեմատ ե՛լ ավելի լավ կազմակերպություն ստեղծելու պարտականությունից: Ընդհակառակը, այդ շարժումն է հենց այդ պարտականությունը դնում մեզ վրա, որովհետև պրոլետարիատի տարերային պայքարը չի եկ դառնա նրա իսկական «դասակարգային պայքարը», մինչև որ այդ պայքարը չղեկավարվի հեղափոխականների ամուր կազմակերպության կողմից:

Ցերկրորդ, շատերը—և որոնց թվում, ըստ երևույթին, Բ. Կրիչեվսկին («Рабочее Дело», № 10, եջ 18)—սխալ են հասկանում այն բանավեճը քաղաքական պայքարի վերաբերմամբ արտահայտած «դավադրական» հայացքի դեմ, որ միշտ մղել են սոցիալ-դեմոկրատները: Մենք ըմբոստացել ենք և, իհարկե, միշտ պիտի ըմբոստանանք քաղաքական պայքարը մինչև դավադրության ամտիճանը նեղացնելու դեմ*), բայց այդ, իհարկե, երբեք չի նշանակել հեղափոխական ամուր կազմակերպության անհրաժեշտության բացասումն: Ցեվ, որինակ, Ծանոթագրության մեջ անվանված բրոշյուրում, քաղաքական պայքարը դավադրության վերածելու դեմ ուղղված բանավեճի կողքին, ուրվագծվում է (վորպես սոցիալ-դեմոկրատական իդեալ) այնքան ամուր մի կազմակերպություն, որ կարողանար «արտոյուտիզմին վճռական հարված հասցնելու համար դիմել թե՛ «ապստամբության» և թե՛ «գրոհի ամեն մի ուրիշ յեղանակի»**): Ըստ իր ձևի այսպիսի ամուր հեղափոխական կազմակերպությունն ինքնակալական յերկրում կարող է անվանվել և «դավադրական» կազմակերպություն, որովհետև ֆրանսական «կոնսպիրացիա» բառը հավասար է ռուսական «заговор»-ին, իսկ կոնսպիրատիվությունն այդպիսի կազմակերպության համար առավելագույն աստիճանի անհրաժեշտ է: Կոնսպիրատիվությունն այդպիսի կազմակերպության համար այնչափ անհրաժեշտ պայման է, որ բո-

*) Համեմատիր «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները», ռուս. հրատ., եջ 21, բանավեճ Գ. Լ. Լավրովի դեմ: (Տե՛ս Ցերկ., հատոր II, ռուս. հրատ. եջ 183: Խմբ.):

**) «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները», եջ 23, Ցերկ. հատոր II, եջ 185: Խմբ.): Իդեալ, ահավասիկ ևս մի լուսաբանում այն բանի, որ «Рабочее Дело»-ն կամ չի հասկանում այն, ինչ որ ասում է, կամ իր հայացքները փոխում է «ջրմու ուղղությամբ»: «Рабочее Дело»-յի առաջին համարում տպված է ընդգծումով «բրոշյուրի շարադրված եյուրյունը ամբողջովին զուգադիպում է «Рабочее Дело»-յի խմբագրական ծրագրի հետ» (եջ 142): Մի՞թե այդպես է: «Ծնգիրների» հետ զուգադիպո՞ւմ է արդյոք այն հայացքը, թե մասսայական շարժման առաջ չի կարելի իբրև առաջին խնդիր դնել ինքնակալության տապալումը. զուգադիպո՞ւմ է «տերերի և կառավարության դեմ մղելիք տնտեսական պայքարի» թեորիան. զուգադիպո՞ւմ է արդյոք ոտագիտների թեորիան: Առաջարկում ենք ընթերցողին գտնել, թե կարո՞ղ է արդյոք խոսք լինել օգտագործային կոյուսությունների մասին այնպիսի մի որդանի, որ այսքան որիգինալ կերպով է հասկանում «զուգադիպումը»:

լոր մնացած պայմանները (անդամների թիվը, նրանց ընտրությունը, ֆունկցիաները և այլն) պետք է համապատասխան դարձվեն նրան: Ուստի մեծագույն միամտություն կլիներ, յեթե մենք վախենայինք այն մեղադրանքից, թե մենք, սոցիալ-դեմոկրատները, կամենում ենք դավադրական կազմակերպություն ստեղծել: Այդ մեղադրանքները պետք է նույնպես հաճելի լինեն եկոնոմիզմի ամեն մի թշնամու համար, ինչպես և «նարոդովոլյականության» մեջ մեղադրելը:

Մեզ կառարկեն. այդպիսի հզոր և խստորեն դաղտնի կազմակերպությունը, վոր իր ձեռքումն է համակենտրոնացնում կոնսպիրատիվ գործունեության բոլոր թելերը, մի կազմակերպություն, վոր անհրաժեշտաբար ցենտրալիստական է, չափազանց հեշտ կերպով կարող է վաղաժամ դրոհի նետվել, կարող է չմտածված կերպով սրել շարժումը՝ առաջ քան այդ կարելի յե և պետք է՝ ըստ բանվոր դասակարդի մեջ գոյություն ունեցող քաղաքական դժդոհության աճման, ըստ խմորման ու զայրույթի ուժի և այլն: Մենք կպատասխանենք դրան. վերացականորեն ասած՝ չի կարելի, իհարկե, ժխտել, վոր մարտական կազմակերպությունը կարող է չմտածված կերպի հանել, վորը կարող է վերջանալ այդ պայմաններում ամենևին վոչ անհրաժեշտ պարտությամբ: Բայց վերացական նկատառություններով չի կարելի սահմանափակվել այսպիսի հարցում, վորովհետև ամեն մի ճակատամարտ պարունակում է իր մեջ պարտության վերացական հնարավորությունը, և այդ հնարավորությունը պակասեցնելու այլ միջոց չկա, քան ճակատամարտի կազմակերպված նախապատրաստությունը: Իսկ յեթե մենք հարցը դնենք ժամանակակից ռուսական պայմանների կոնկրետ հողի վրա, ապա հարկադրված կլինենք այն դրական յեղրակացությունն անել, վոր հեղափոխական ամուր կազմակերպությունն անպայման անհրաժեշտ է հենց նրա համար, վոր շարժմանը կայունություն տա և նախապահպանի նրան չմտածված դրոհների հնարավորությունից: Հատկապես այժմ, այդպիսի կազմակերպության բացակայության և հեղափոխական շարժման արագ տարերային աճման պարագայում յերկու հակադիր ծայրահեղություններ են նկատվում արդեն (վորոնք, ինչպես վոր հարկ է նրանց, «միանում են»)՝ մերթ միանգամայն սնանկ եկոնոմիզմ և չափավորության քարոզ, մերթ նույնքան սնանկ «եքսցիտատիվ տեռոր», վոր ձգտում է «զարդացող և ամրացող շարժման մեջ, վոր դեռևս ավելի մոտ է սկզբնավորությանը, քան վերջավորությանը, արհեստականորեն առաջ բերել նրա վերջավորության հայտանիշները» (Վ. Զասուլիչը «Заря»-յի 2—3 համարներում, եջ 353): Յեվ «Рабочее Дело»-յի որինակը ցույց է տալիս, վոր արդեն կան սոցիալ-դեմոկրատներ, վորոնք ընկրկում են յերկու ծայրահեղությունների առաջ: Այդպիսի յերևույթը դարմանալի չէ, մնացած պատճառներից զատ, նաև այն պատճառով, վոր «տերերի ու կառավարության դեմ մղվող տնտեսական պայքարը» յերբեք չի բավարարի հեղափոխականին, և հակադիր ծայրահեղություններ միշտ կառաջանան մերթ այստեղ, մերթ այնտեղ: Միայն կենտրոնացած մարտական կազմակերպությունն է ի վիճակի նախապահպանելու շարժումը չմտածված դրոհից և նախապատրաստելու հաջողություն խոստացող դրոհը, մի կազմակերպություն, վոր տոկունությամբ կիրառում է սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն և բավարարում, այսպես ասած, բոլոր հեղափոխական բնազդներն ու ձգտումները:

Մեզ կառարկեն այնուհետև, վոր շարադրվող հայացքը կազմակերպության վերաբերմամբ հակասում է «դեմոկրատական սկզբունքին»: Վորչափ նախընթաց մեղադրանքը հատուկ ռուսական ծագում ունի, այնչափ էլ այս—հատուկ արտասահմանյան բնույթ ունի: Յեվ միայն արտասահմանյան կազմակերպությունը (ռուսական սոցիալ-դեմոկրատների «միությունը») կարող էր տալ իր խմբագրությանն այլ հրահանգների թվում նաև հետևյալը.

«Կազմակերպական սկզբունքը: Հանուն սոցիալ-դեմոկրատիայի հաջող զարդացման ու մրավորման շահերի պետք է ընդդեմ, զարդացնել, պայքարել նրա կուսակցական կազմակերպության դեմոկրատական լայն սկզբունքի համար, մի բան, վոր առանձնապես անհրաժեշտ է մեր կուսակցության շարքերում յերևան յեկած հակադեմոկրատական տենդենցների պատճառով» («Два съезда», եջ 18):

Թե իրոք ինչպես է «Рабочее Дело»-ն պայքարում «Искра»-յի «հակադեմոկրատական տենդենցների» դեմ, այդ մենք կտեսնենք հետևյալ դլխում: Իսկ այժմ ավելի մոտից դննենք եկոնոմիստների առաջադրած այդ «սկզբունքը»: Ամեն վոք կհամաձայնի, հավանորեն, վոր «դեմոկրատական լայն սկզբունքը» պարունակում է իր մեջ հետևյալ յերկու անհրաժեշտ պայմանները. նախ, լիակատար հրապարակայնություն, և յերկրորդ, բոլոր ֆունկցիաների ընտրականություն: Առանց հրապարակայնության ծիծաղելի կլիներ դեմոկրատիզմի մասին խոսելը և ընդամին այնպիսի հրապարակայնության, վոր չսահմանափակվեր կազմակերպության անդամներով: Մենք դեմոկրատական կանվանենք դերմանական սոցիալիստական կուսակցության կազմակերպությունը, վորովհետև նրա մեջ ամեն ինչ կատարվում է բացահայտ, ընդհուպ մինչև կուսակցական համագումարի նիստերը, բայց վոչ վոք դեմոկրատական կազմակերպություն չի անվանի այնպիսի մի կազմակերպություն, վոր բոլոր վոչ-անդամների համար ծածկված և դաղտնիքի քողով: Հարց է ծագում, եվ ինչ իմաստ ունի «դեմոկրատական լայն սկզբունքի» առաջադրումը, քանի վոր այդ սկզբունքի հիմնական պայմանն անիրագործելի յե դաղտնի կազմակերպության համար: «Լայն

սկզբունքը» դուրս է գալիս պարզապես հնչուն, բայց դատարկ ֆրազ։ Այդ դեռ քիչ է։ Այդ ֆրազը վկայում է կազմակերպական տեսակետից մոմենտի կենսական խնդիրների լիակատար անըմբռնողության մասին։ Ամենքը գիտեն, թե վորքան մեծ է մեզանում հեղափոխականների «լայն» մասսայի գերիշխող անկոնսպիրատիվությունը։ Մենք տեսանք, թե ինչպես է դառնապին դանդատվում այդ բանի վրա Բ—վը, վոր միանգամայն արդարացի պահանջում է «անդամների խիստ ընտրություն» («Рабочее Дело», № 6, էջ 42)։ Ցեվ ահա մարդիկ են յերևան գալիս, վորոնք պարծենում են «կյանքի վերաբերմամբ» իրենց «հոտառությամբ», վորոնք դործի այսպիսի դրության պարագայում ընդգծում են վո՛չ թե խստադույն կոնսպիրացիայի և անդամների խըստադույն (հետևապես և ավելի սերտ) ընտրության անհրաժեշտությունը, այլ—«դեմոկրատական լա՛յն սկզբունքը»։ Այս նշանակում է՝ վոչինչ չհասկանալ դործից։

Ավելի լավ չէ նաև դեմոկրատիզմի յերկրորդ հատկանիշի, ընտրականության հարցի բանը։ Քաղաքական ազատություն ունեցող յերկրներում այդ պայմանն ինքնըստինքյան հասկանալի է։ «Կուսակցությանն անդամ համարվում է ամեն վոք, ով ընդունում է կուսակցական ծրագրի սկզբունքներն ու աջակցում է կուսակցությանն իր ուժերի չափով»—ասում է դերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպական կանոնադրության առաջին պարագրաֆը։ Ցեվ վորովհետև քաղաքական ամբողջ ասպարեզը բաց է ամենքի առջև, վորպես բեմի առաջամասը թատրոնի հանդիսատեսների առջև, ապա այդ ընդունումը կամ չընդունումը, աջակցությունը, թե հականերդործությունը հայտնի յեն ամենքին ու ամեն մեկին թե՛ լրագրերից և թե՛ ժողովրդական հավաքույթներից։ Ամենքն էլ դիտեն, վոր այս-ինչ քաղաքական դործիչն սկսել է այս-ինչ բանից, ապրել է այս-ինչ եվոլուցիան, կյանքի դժվար բոպեին իրեն արտահայտել է այս-ինչ կերպ, առհասարակ աչքի յե ընկնում այս-ինչ հատկություններով—ուստի և բնական է, վոր այդպիսի դործչին կուսակցության բոլոր անդամները կարող են դիտակցաբար ընտրել կամ չընտրել կուսակցական վորոշ պաշտոնի համար։ Ընդհանուր (բառիս տառացի իմաստով) վերահսկողությունը կուսակցության մարդու ամեն մի քայլի վերաբերմամբ նրա քաղաքական ասպարեզում ստեղծում է ավտոմատիկ կերպով դործող մեխանիզմ, վոր տալիս է այն, ինչ վոր բիոլոգիայի մեջ կոչվում է «ամենից ավելի հարմարվածների կենդանի մնալը»։ Լիակատար հրապարակայնության, ընտրականության և ընդհանուր վերահսկողության «բնական ընտրանքն» ապահովում է այն, վոր ամեն մի դործիչ վերջիվերջո «իր տեղն է գրավում», վերցնում է իր ուժերի և ընդունակությունների համար ամենահարմար դործ, իր վրա յե

զրում իր սխալների բոլոր հետևանքները և բոլորի աչքի առջև ապացուցում է՝ սխալները դիտակցելու և նրանցից խուսափելու իր ընդունակությունը։

Ապա փորձեցե՛ք այդ նկարը դնել մեր ինքնակալության չրջանակների մեջ։ Ցերևակայելի՞ յե արդյոք, վոր մեզանում ամենքը, «ով ընդունում է կուսակցական ծրագրի սկզբունքները և աջակցում կուսակցությանն իր ուժերի չափով», վերահսկողության յենթարկեն հեղափոխական կոնսպիրատորի ամեն մի քայլը։ Վոր նրանք բոլորը վերջիններիս թվից ընտրեն մեկին կամ մյուսին, յերբ հեղափոխականը պարտավոր է աշխատանքի շահերի տեսակետից թաղցնել այդ «բոլորի» ինքը տասերորդականից իր ով լինելը։ Դեթ մի վոքր թափանցեցեք այն մեծաղղորդ խոսքերի իսկական իմաստի մեջ, վորոնցով հանդես է գալիս «Рабочее Дело»-ն, և դուք կտեսնեք, վոր կուսակցական կազմակերպության «լայն դեմոկրատիզմը» ինքնակալության խավարի մեջ, ժանդարմական ընտանիքի տիրապետության որով, լոկ դատարկ և վնասակար խաղալիք է։ Այդ դատարկ խաղալիք է, վորովհետև իրականում յերբեք վոչ մի հեղափոխական կազմակերպություն լայն դեմոկրատիզմ չի կիրառել և չի կարող կիրառել, նույնիսկ յեթե շատ է ցանկանում այդ։ Այդ վնասակար խաղալիք է, վորովհետև իրականում «դեմոկրատական լայն սկզբունք» կիրառելու փորձերը միայն հեշտացնում են վոստիկանության համար կազմակերպությունները լայնորեն տապալելը և հավերժացնում են թաղավորող տնայնադործականությունը, չեղում են պրակտիկների միտքն իրենցից պրոֆեսիոնալ հեղափոխականներ մշակելու լուրջ, հրամայական խնդրից դեպի ընտրությունների սիստեմներին վերաբերյալ մանրամասն «թղթի» կանոնադրություններ կազմելը։ Միայն արտասահմանում կարող եր վորոշ տեղերում և մանավանդ դանազան մանր խմբակներում զարդանալ այս «դեմոկրատիզմ խաղալը», արտասահմանում, վորտեղ հաճախ հավաքվում են մարդիկ, վորոնք հնարավորություն չունեն իրենց համար իսկական, կենդանի դործ դտնելու։

Վորպեսզի ցույց տանք ընթերցողին «Рабочее Дело»-յի սիրած յեղանակի ամբողջ անվայելչությունը՝ առաջ քաշելու այնպիսի վայելուչ «սկզբունք», ինչպես դեմոկրատիզմը հեղափոխական դործում, մենք այնուամենայնիվ մատնացույց կանենք վկային, կհենվենք վկայի վրա։ Այդ վկան Ցե. Սերեբրյակովն է, Լոնդոնի «Накануне» ժուռնալի խմբագիրը, վոր մեծ համակրանք է տածում դեպի «Рабочее Дело»-ն և մեծ ատելություն դեպի Պլեխանովն ու «պլեխանովականները»։ արտասահմանյան «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միության» պառակտման առթիվ դրված հոդվածներում «Накануне»-ն վճռականապես «Рабочее Дело»-յի կողմն է բռնել և Պլեխանովի վրա յե հարձակվել վո-

զորմելի բառերի ամբողջ տարափով։ Այդ պատճառով այդ վկան ավելի հարցի վերաբերմամբ ավելի ևս արժեքավոր է դառնում մեզ համար։ «Наквнуне»-յի 7-րդ համարի (1899 թ. հուլիս) իր հոդվածում՝ «Բանվորների ինքնազատագրման խմբակի կոչի առթիվ»՝ Ցե. Սերեբրյակովը նշում էր «լուրջ հեղափոխական շարժման մեջ ինքնահրապուրման, գլխավորության, այսպես կոչված արեոպագի» հարցերի հարուցման «անվայելչությունը» և ի միջի այլոց գրում էր.

«Միչկինը, Ռոդաշևը, Ժելյաբովը, Միխայլովը, Պերովսկայան, Ֆիգները և ուրիշները յերբեք իրենց չեն համարել առաջնորդներ, և վոչ վոք նրանց չի ընտրել ու չի նշանակել, թեև իրոք նրանք յեղել են այդպիսիներ, վորովհետև ինչպես պրոպագանդայի շրջանում, այնպես էլ կառավարության դեմ մղվող պայքարի շրջանում նրանք իրենց վրա յեն վերցրել աշխատանքի ամենամեծ ծանրությունը, զնացել են ամենավտանգավոր տեղերը, և նրանց գործունեությունը յեղել է ամենից արդյունավետը։ Ցեվ գլխավորությունը վոչ թե արդյունք էր նրանց ցանկությունների, այլ շրջապատող ընկերների կողմից դեպի նրանց խելքը, դեպի նրանց յեռանդն ու նվիրվածությունը տածած վստահության։ Իսկ վախենալ ինչ-վոր արեոպագից (իսկ յերբեմն էլ վախենալ, ինչու զրել նրա մասին), վոր կարող է ինքնիշխան կերպով զեկավարել շարժումը, արդեն չափազանց միամիտ բան կլիներ։ Ո՞վ կլսի նրան»։

Մենք հարցնում ենք ընթերցողին, ինչո՞վ է տարբերվում «արեոպագը» «հակադեմոկրատական տենդենցներից»։ Ցեվ ակներև չե՞ մի-թե, վոր «Рабочее Дело»-յի «վայելուչ» կազմակերպական սկզբունքը ճիշտ նույնպես և՛ միամիտ է, և՛ անվայել.—միամիտ է, վորովհետև վոչ վոք պարզապես չի լսի «արեոպագին» կամ «հակադեմոկրատական տենդենցներ» ունեցող մարդկանց, քանի վոր չի լինի «վստահություն շրջապատող ընկերների կողմից՝ դեպի նրանց խելքը, յեռանդն ու նվիրվածությունը»։ Անվայել է,—վորպես դեմագոգիական արարք, վոր վոմանց անափառության վրա յե սպեկուլացիա անում, մյուսների՝ մեր շարժման իսկական կացության հետ անծանոթ լինելու վրա, յերրորդների՝ հեղափոխական շարժման պատմության հետ անծանոթ լինելու և անպատրաստվածության վրա։ Մեր շարժման գործիչների համար միակ լուրջ կազմակերպական սկզբունքը պետք է լինի՝ խստագույն կոնսպիրացիան, անդամների խստագույն ընտրությունը, պրոֆեսիոնալ հեղափոխականների՝ պատրաստումը։ Բանի վոր ահա յեն այդ հատկությունները,—ապահովված է ավելին, քան «դեմոկրատիզմը», այն է՝ ընկերական լիակատար վստահություն հեղափոխականների միջև։ Իսկ այդ ավելին անպայման անհրաժեշտ է մեզ համար, վորովհետև մեզանում, Ռուսաստանում խոսք անդամ չի կարող լինել այն՝ դեմոկրատական ընդհանուր վերահսկողությամբ փոխարինելու մասին։ Ցեվ մեծ սխալ կլիներ կարծել, թե իրոք «դեմոկրատական» վերահսկողության անհնարինությունը հեղափոխական կազմակերպության անդամներին զրկում է անկոնտրոլ. նրանք ժամանակ չունեն դեմոկրատիզմի խաղալիքային ձևերի մասին մտածելու (լիակատար փոխադարձ վստահություն վայելող ընկերների սերտ միջուկի ներսում գոյություն ունեցող դեմոկրատիզմի), բայց իրենց պատասխանատվությունը նրանք զգում են շատ կենդանի կերպով, ընդամենը փորձից գիտենալով, վոր իսկական հեղափոխականների կազմակերպությունն իր անպետք անդամից ազատվելու համար կանգ չի առնի վոչ մի միջոցի առաջ։ Բացի դրանից մենք ունենք բավականին զարգացած, իր հետևն ամբողջ պատմություն ունեցող հասարակական կարծիքը՝ ռուսական (և միջազգային) հեղափոխական միջավայրի, մի կարծիք, վոր անխնա դաժանությամբ պատժում է ընկերականության պարտականությունների ամեն մի խախտում (իսկ չե՞ վոր «դեմոկրատիզմը», իսկապես, վոչ-խաղալիքային դեմոկրատիզմը մտնում է վորպես մասն ամբողջության մեջ՝ ընկերականության այդ հասկացողության մեջ)։ Ուշադրության առնք այս ամենը—և դուք կհասկանաք, թե արտասահմանյան դեներալության խաղի վո՛րպիսի նեխահոտ է բարձրանում «հակադեմոկրատիկ տենդենցներին» նվիրված այդ խոսակցություններից ու բանաձևերից։

Պետք է նկատել նմանապես, վոր այդպիսի խոսակցությունների մյուս աղբյուրը, այսինքն միամտությունը, սնվում է դեմոկրատական վերաբերող պատկերացումների նույնպիսի աղոտությամբ։ Վերը ամուսինների զրքում (անգլիական տրեդ-յունիոնների մասին) կա հեռաքրքրական մի գլուխ՝ «պրիմիտիվ դեմոկրատիա»։ Հեղինակները պատմում են այնտեղ, թե ինչպես անգլիական բանվորներն իրենց միությունների գոյության առաջին շրջանում դեմոկրատիայի անհրաժեշտ հատկանիշն եյին համարում այն, վոր բոլորն անեն ամեն ինչ միությունները կառավարելու գործում։ Վո՛չ միայն բոլոր հարցերը վորոշվեն բոլոր անդամների քվեարկություններով, այլև պաշտոնները կատարվեն հերթով բոլոր անդամների կողմից։ Պատմական յերկարատև փորձ էր հարկավոր, վորպեսզի բանվորները հասկանային դեմոկրատիայի մասին իրենց ունեցած այս պատկերացման անհեթեթությունը և՝ մի կողմից՝ ներկայացուցչական հաստատությունների, մյուս կողմից՝ պրոֆեսիոնալ պաշտոնյաների անհրաժեշտությունը։ Միութենական դանձարկղների ֆինանսական անանկացման մի քանի դեպք էր հարկավոր, վորպեսզի բանվորները հասկանային, վոր մուծվող անդամավճարների և ստացվող նպաստների համեմատական հարաբերության հարցը չի կարող լուծվել սոսկ դեմոկրատական քվեարկությամբ, այլ պահանջում է նաև ապահովագրական գործի մասնագետի ձայնը։ Վերցրեք այնուհետև Կաուցկու գրքը պառլամենտարիզմի և ժողովրդական որենդրության մասին,—և դուք կտեսնեք, վոր թեորետիկ-մարքսիստի յեզրակացությունները զուգադիպում են «տարերայ-

նորեն» միավորված բանվորների յերկարամյա պրակտիկայի դասին։ Կատեդրին վճռականորեն ըմբոստանում է դեմոկրատիայի այն պրիմիտիվ ըմբռնողության դեմ Ռիտինհաուզենի կողմից, ծաղրում է այն մարդկանց, վորոնք հանուն դրա պատրաստ են պահանջելու, վոր «ժողովրդական լրագրերն ուղղակի խմբագրվեն ժողովրդի կողմից», ապացուցում է պրոֆեսիոնալ ժուռնալիստների, պառլամենտական դործիչների և մյուսների անհրաժեշտությունը պրոլետարիատի դասակարդային պայքարի սոցիալ-դեմոկրատական դեկավարման համար, հարձակվում է «անարխիստների և դրականադետների սոցիալիզմի» վրա, վորոնք «եֆեկտների հետևից ընկած» դրվատում են ժողովրդական ուղղակի որենսդրությունը և չեն ըմբռնում նրա կիրառման խիստ պայմանականությունը ժամանակակից հասարակության մեջ։

Ով դործնականորեն աշխատել է մեր շարժման մեջ, նա դիտե, թե վորքան լայն է տարածված ուսանող յերիտասարդության և բանվորների՝ մասսայի մեջ «պրիմիտիվ» հայացքը դեմոկրատիայի մասին։ Զարմանալի չե, վոր այդ հայացքը սողոսկում է թե՛ կանոնադրությունների և թե՛ դրականության մեջ։ Բերնշտայնական յերանդի եկոնոմիստները դրում են իրենց կանոնադրության մեջ. «§ 10։ Ամբողջ միությունական կազմակերպության շահերին վերաբերող բոլոր դործերը վճռվում են նրա բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ»։ Տեորիատական յերանդի եկոնոմիստները ձայնակցում են նրանց։ «Անհրաժեշտ է, վոր կոմիտեական վորոշումները չրջեն բոլոր խմբակները և միայն այն ժամանակ իսկական վորոշումներ դառնան» («Свобода», № 1, եջ 67)։ Նկատեցե՛ք, վոր լայն կերպով ռեֆերենդում*) կիրառելու այս պահանջն առաջադրվում է ամբողջ կազմակերպությունն ընտրական սկզբունքով կառուցելու պահանջից զատ։ Մենք, իհարկե, հեռու յենք սրա համար պրակտիկներին դատապարտելու մտքից, վորոնք չափազանց քիչ հնարավորություն են ունեցել ծանոթանալու իրոք դեմոկրատական կազմակերպությունների թեորիային ու պրակտիկային։ Բայց յերբ դեկավար դեր խաղալու հավակնություն ունեցող «Рабочее Дело»-ն այսպիսի պայմաններում սահմանափակվում է լայն դեմոկրատական սկզբունքին նվիրված բանաձևով, ապա ի՞նչպես չասենք, թե այդ պարդապես նշանակում է «եֆեկտի հետևից ընկնել»։

գ) ՏԵՂԱԿԱՆ ՑԵՎ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ցեթե կազմակերպության այստեղ շարադրվող պլանի դեմ արվող առարկությունները՝ այդ կազմակերպության վոչ-դեմոկրատիկ և դաղրական բնույթի տեսակետից միանդամայն անհիմն են, ապա մի հարց էլ մնում է, վոր շատ հաճախ է առաջադրվում և արժանի չե մանրամասն քննության։ Դա տեղական և համառուսական աշխատանքի փոխհարաբերության հարցն է։ Ցերկյուղ է արտահայտվում, թե ցենտրալիստական կազմակերպության ստեղծումը չի՞ տա արդյոք այն արդյունքը, վոր ծանրության կենտրոնն առաջինից կվերադրվի յերկրորդի վրա, այդ չի՞ մնասի արդյոք շարժմանը, թուլացնելով բանվորական մասսայի հետ ունեցած մեր կապերի ամրությունը և առհասարակ տեղական ագիտացիայի կայունությունը։ Մենք կպատասխանենք դրան, վոր վերջին տարիների մեր շարժումը հենց տառապում է նրանից, վոր տեղական դործիչները չափազանց կլանված են տեղական աշխատանքով, վոր այդ պատճառով անպայման անհրաժեշտ է մի փոքր տեղափոխել ծանրության կենտրոնը համառուսական աշխատանքի կողմը. վոր այդպիսի տեղափոխությունը վո՛չ թե կթուլացնի, այլ կամրացնի թե՛ մեր կապերի ամրությունը և թե՛ մեր տեղական ագիտացիայի կայունությունը։ Վերցնենք կենտրոնական և տեղական որդանների հարցը և խնդրենք ընթերցողին չմոռանալ, վոր լրագրային դործը մեզ համար հանդիսանում է վոչ ավելի քան մի որինակ, վոր լուսաբանում է անչափ ավելի լայն և բազմակողմանի հեղափոխական դործն ընդհանրապես։

Մասսայական շարժման առաջին շրջանում (1896—1898 թ. թ.) փորձ է արվում տեղական դործիչների կողմից համառուսական որդան՝ «Рабочая Газета»-ն հիմնելու. հետևյալ շրջանում (1898—1900 թ. թ.) շարժումն ահագին քայլ է անում դեպի առաջ, բայց դեկավարների ուշադրությունն ամբողջովին կլանվում է տեղական որդաններով։ Ցեթե հաշվենք այդ բոլոր տեղական որդանները միասին, դուրս կգա*), վոր կլոր թվով լրագրի մի համար է դալիս ամսական։ Մի՞թե այս ցնցառու նկարագրությունը չե մեր տնայնադործականության։ Մի՞թե այս ցույց չի տալիս ակներևորեն մեր հեղափոխական կազմակերպության հետամնացությունը շարժման տարերային վերելքի համեմատությամբ։ Ցեթե լրագրերի համարների նույն թիվը լույս ընծայվեր վո՛չ թե տեղական մասնատված խմբերի, այլ միասնական կազմակերպության կողմից—մենք վո՛չ միայն մեծ չափով ուժեր խնայած կլինեինք, այլև կապահովեինք մեր աշխատանքի անչափ ավելի կայունությունն ու հաջորդականությունը։ Այս պարզ նկատառումը չափազանց հաճախ աչքաթող են անում և այն պրակտիկները, վորոնք ակտիվ կերպով

*) — այսինքն հարցերը դնել կուսակցական կազմակերպության բոլոր անդամների քվեարկությանը։ Խմբ.։

*) Տե՛ս «Доклад Парижскому конгрессу», եջ 14. «Այն ժամանակից սկսած (1897 թ.) մինչև 1900 թվականի դարունը դանազան վայրերում լույս է տեսել դանազան լրագրերի 30 համար... Մինչև թվով ամսական լույս եր տեսնում մի համարից ավելի»։

աշխատում են դրեթե բացառապես տեղական որդանների վրա (ցավոք սրտի, մեծ մասամբ այդ այժմ էլ այդպես է), և այն հրապարակախոսները, որոնք տվյալ հարցում զարմանալի դոն-քիշոտություն են հանդես բերում: Պրակտիկը սովորաբար բավականանում է այն նկատառումով, թե տեղական գործիչների համար «դժվար է»*) համառուսական լրագրի կազմակերպումով զբաղվելը և թե լավ է տեղական լրագրեր, քան թե վոչ մի լրագիր: Վերջինս, իհարկե, միանգամայն արդարացի է, և մենք վոչ մի պրակտիկից պակաս չենք ընդունում տեղական լրագրերի հսկայական նշանակությունն ու ահագին ոգուտն ընդհանրապես: Բայց չէ՞ որ խոսքը դրա մասին չէ, այլ նրա մասին, թե չէ՞ կարելի արդյոք ազատվել մասնատվածությունից ու տնայնագործականությունից, որ այնպես ակնառու կերպով արտահայտվում են ամբողջ Ռուսաստանի տարածության վրա 2½ տարում հրատարակված տեղական լրագրերի 30 համարներում: Եվ մի՛ սահմանափակվեք տեղական լրագրերի ոգուտի վերաբերյալ ընդհանրապես անվիճելի, բայց չափազանց ընդհանուր դրույթով, այլ նույնպես քաջություն ունեցեք բացարձակ կերպով ընդունելու նրանց բացասական կողմերը, որ հայտաբերվել են յերկուս և կես տարվա փորձով: Այդ փորձը վկայում է, որ տեղական լրագրերը մեր պայմաններում մեծ մասամբ սկզբունքայնորեն անկայուն են դուրս գալիս, քաղաքականապես նշանակությունից դուրկ, հեղափոխական ուժերի ծախսման տեսակետից—անչափ թանդ, տեխնիկական տեսակետից՝ միանգամայն անբավարար (յես, իհարկե, նկատի ունեմ վո՛չ թե տպագրության տեխնիկան, այլ լույս տեսնելու հաճախությունն ու կանոնավորությունը): Եվ բոլոր նշված թերությունները պատահականություն չեն, այլ անխուսափելի արդյունքն այն մասնատվածության, որ, մի կողմից, բացառում է տեղական լրագրերի դերակշռությունը քննվող ժամանակաշրջանում, իսկ, մյուս կողմից, պահպանվում է այդ դերակշռությամբ: Տեղական առանձին կազմակերպության ուժերից ուղղակի վեր է իր լրագրի սկզբունքային կայունությունն ապահովելը և նրան քաղաքական որդանի բարձրության վրա դնելը, ուժերից վեր է մեր ամբողջ քաղաքական կյանքի լուսաբանման համար բավականաչափ նյութ հավաքելն ու ոգտագործելը: Իսկ այն փաստարկը, որով սովորաբար պաշտպանում են բազմաթիվ տեղական լրագրերի անհրաժեշտությունն ազատ յերկրներում—նրանց եժանությունը տեղական բանվորների կողմից տպագրվելու դեպքում և տեղական բնակչության ավելի լիակատար և արագ ինֆորմացիան—այդ փաստարկը, ինչպես փորձն է վկայում, մեղանում տեղական լրագրերի դեմն է ուղղվում: Նրանք անչափ թանդ են դուրս գալիս՝ հեղափոխական ուժերի ծախսման տեսակետից, և առանձնապես ուշ-ուշ են լույս տեսնում այն հասարակ պատճառով, որ անիծյալ լրագրի համար, որքան էլ նա փոքր լինի, այնպիսի հսկայական կոնսպիրատիվ ապարատ է անհրաժեշտ, որ ֆաբրիկային խոշոր արդյունաբերություն է պահանջում, որով-հետև տնայնագործական արհեստանոցում չի էլ կարելի պատրաստել այդ ապարատը: Իսկ կոնսպիրատիվ ապարատի պրիմիտիվությունը միշտ և ամենուրեք (ամեն մի պրակտիկ դիտե բազմաթիվ այդպիսի օրինակներ) ունենում է այն հետևանքը, որ վոստիկանությունն ոգտվում է մեկ-յերկու համար լույս տեսնելուց և տարածվելուց, որպեսզի կատարի մասսայական տապալում, որոնք այնքան մաքուր են սրբում ամեն ինչ, որ հարկ է լինում դարձյալ սկզբից սկսել: Լավ կոնսպիրատիվ ապարատը պահանջում է հեղափոխականների լավ պրոֆեսիոնալ պատրաստություն և ամենահետևողական կերպով կիրառվող աշխատանքի բաժանում, իսկ այս յերկու պահանջն էլ միանգամայն համապատասխան չեն առանձին տեղական կազմակերպության ուժերին, որքան էլ նա ուժեղ լինի տվյալ րոպեին: Եվ չխոսելով արդեն մեր ամբողջ շարժման ընդհանուր շահերի մասին (քանվորների սկզբունքայնորեն տոկուն սոցիալիստական և քաղաքական դաստիարակությունը), բայց տեղական հատուկ շահերը ևս ավելի լավ են սպասարկվում վոչ-տեղական որգանների կողմից·—այս միայն առաջին հայացքից է պարադոքս թվում, իսկ իրոք մեր նշած յերկուս և կես տարվա փորձն անհերքելի կերպով ապացուցում է այդ: Ամեն վոք կհամաձայնի, որ յեթե բոլոր այն տեղական ուժերը, որոնք լրագրերի 30 համար են լույս ընծայել, աշխատեին մի լրագրի շուրջը, ապա այդ վերջինը հեշտությամբ կարող եր տալ 60, յեթե վոչ 100 համար, հետևապես և ավելի լիակատար կերպով կարատացրեր շարժման դուռ տեղական բնույթ կրող բոլոր առանձնահատկությունները: Անտարակույս, այդպիսի կազմակերպվածությունը հեշտ չէ, բայց հարկավոր է, վերջապես, որ մենք գիտակցենք դրա անհրաժեշտությունը, որ ամեն մի տեղական խմբակ մտածի և ակտիվ կերպով աշխատի դրա վրա դրսից հրում չսպասելով, չհրապուրվելով տեղական որդանի այն մատչելիությամբ, այն մերձավորությամբ, որ—մեր հեղափոխական փորձի տվյալների հիման վրա—նշանակելի չափով խաբուսիկ է դուրս գալիս:

*) Այդ դժվարությունը յերևութական է միայն: Իրոք չկա այնպիսի տեղական խմբակ, որ հնարավորություն չունենար ակտիվ կերպով ձեռնարկելու համառուսական գործի այս կամ այն ֆունկցիային: «Մի՛ ասի՝ չեմ կարողանում, այլ ասա՝ չեմ կամենում»:

Ցեվ վատ ծառայություն են մատուցանում պրակտիկ աշխատանքին իրենց առանձնապես պրակտիկներին մոտ յերևակայող այն հրապարակախոսները, վորոնք չեն տեսնում այդ խարուսիկությունը և իրենց ոձիքն աղատում են զարմանալի եժան և զարմանալի դատարկ դատողությամբ, թե հարկավոր են տեղական լրագրեր, հարկավոր են ռայոնական լրագրեր, հարկավոր են համառուսական լրագրեր: Իհարկե, այս ամենն, ընդհանրապես ասած, հարկավոր է, բայց չե՞ վոր հարկավոր է նաև մտածել միջավայրի և մոմենտի պայմանների մասին, քանի վոր ձեռնարկում ես կազմակերպական կոնկրետ հարցի լուծման: Մի՞թե իսկապես դոն-քիշոտություն չե այդ, յերբ «Свобода»-ն (№1, եջ 68) հատկապես «կանգ առնելով լրագրի հարցի վրա», գրում է. «Մեզ թվում է, թե բանվորների կուտակման ամեն մի փոքրիշատե նշանավոր վայրում պետք է լինի սեփական բանվորական լրագիր: Վո՛չ թե վորևե տեղից ներմուծվող, այլ հենց իր սեփականը»: Ցեթե այս հրապարակախոսը չի կամենում մտածել իր խոսքերի նշանակության մասին, ապա գոնե դուք, ընթերցո՛ղ, մտածեցեք նրա փոխարեն: Ռուսաստանում քանի՛ տասնյակ, յեթե վոչ հարյուր, «բանվորների կուտակման փոքրիշատե նշանավոր վայր» կա, և մեր տնտեսագործունության վորպիսի՛ հավերժացումն կլիներ այդ, յեթե իրոք յուրաքանչյուր տեղական կազմակերպություն սկսեր հրատարակել իր սեփական լրագիրը: Այդ մասնատվածությունն ի՞նչպես կհեշտացներ մեր ժանդարմների համար տեղական գործիչներին վորսալու խնդիրը—և ընդսմին առանց «փոքրիշատե զգալի» զժվարության—նրանց գործունեության հենց սկզբում, հնարավորություն չտալով այդ գործիչներին իսկական հեղափոխականներ դառնալու:—Համառուսաստանյան լրագրում,—շարունակում է հեղինակը,—հետաքրքրական չեին լինի բանվորների համար գործարանատերերի արարքների և «զանազան վոչ իրենց քաղաքների գործարանային կյանքի մանրունքի» նկարագրությունները, իսկ «որյոլցու համար ամենևին տաղտկալի չե որյոլյան գործերի մասին կարդալը: Ամեն անդամ նա գիտե, թե ում են «խելքի բերել», ում են «շշպրել», և նրա հոգին փառավորվում է» (եջ 69): Այո՛, այո՛, որյոլցու հոգին փառավորվում է, բայց չափազանց «փառավորվում է» նույնպես և մեր հրապարակախոսի միտքը: Տակտո՞վ վարմունք է արդյոք մանրախնդրության այս պաշտպանությունը,—ահա թե ինչի մասին պետք է մտածեր նա: Մենք վոչ վոքից հետ չենք մնա գործարանային մերկացումների կարևորությունը և անհրաժեշտությունն ընդունելու մեջ, բայց չե՞ վոր պետք է հիշել, վոր մենք արդեն այն տեղն ենք հասել, վոր պետերբուրգցիների համար տաղտկալի յե պետերբուրգյան լրագիր «Рабочая Мысль»-ի պետերբուրգյան թղթակցությունների ընթերցումը: Գործարանային մերկացումների համար տեղերում մեղանում միշտ յեղել են և միշտ պետք է մնան թերթիկները, իսկ լրագրի տիպը մենք պետք է բարձրացնենք, և վոչ թե նվաստացնենք գործարանային թերթիկի աստիճանի: «Լրագրի» համար մեզ մոտ վոչ այնքան «մանրունքի» մերկացումներն են հարկավոր, վորքան գործարանային կյանքի խոշոր, տիպիկ թերությունների մերկացումները, վորոնք տրված են առանձնապես ուշագրավ որինակներով, ուստի և ընդունակ են հետաքրքրելու բոլոր բանվորներին և շարժման բոլոր ղեկավարներին, վորոնք իսկապես ընդունակ են հարստացնելու նրանց դիտելիքները, լայնացնելու նրանց մտահորիզոնը, սկիզբը դնելու նոր ռայոնի, բանվորների նոր պրոֆեսիոնալ խավի արթնացման:

«Այնուհետև, տեղական լրագրում գործարանային կառավարչության, թե այլ իշխանությունների արարմունքները կարելի յե բռնել իսկույն ևեթ թարմ հետքերով: Իսկ մինչև ընդհանուր, հեռավոր լրագրին կհասնի տեղեկությունը—տեղումն արդեն կմոռանան այն, ինչ վոր պատահել է. «Կա՛ց, եղ յե՛րբ է պատահել, ասված հիշողություն տա» (նույն տեղում): Իսկապես վոր ասված հիշողություն տա: 2½ տարվա մեջ հրատարակված 30 համարը, ինչպես իմանում ենք նույն աղբյուրից, ընկնում է 6 քաղաքի: Այդ տալիս է միջին թվով ամեն մի քաղաքին լրագրի մե՛կ համար՝ կես տարում: Ցեվ յեթե նույնիսկ մեր թերեւամիտ հրապարակախոսն իր յենթադրության մեջ յեռապատկի տեղական աշխատանքի արտադրողականությունը (մի բան, վոր անպայման սխալ կլիներ միջակ քաղաքի նկատմամբ, վորովհետև տնայնագործականության շրջանակներում անհնարին է արտադրողականության նշանակելի չափով լայնացումը),—ապա այնուամենայնիվ կստանանք յերկու ամսում մեկ համար միայն, այսինքն՝ մի բան, վոր ամենևին նման չե «թարմ հետքերով բռնելու»: Մինչդեռ բավական է, վոր ասոր տեղական կազմակերպություններ միավորվեն և գործադրեն իրենց պատվիրակներին ընդհանուր լրագրի տարբավորման ակտիվ ֆունկցիաների համար,—և այն ժամանակ կարելի կլինի ամբողջ Ռուսաստանում յերկու շաբաթը մի անդամ «նկարագրել» վո՛չ թե մանրունքը, այլ իրոք աչքի ընկնող և տիպիկ այլանդակությունները: Այդ մասին չի տարակուսի մեր կազմակերպությունների գործերի դրությանը ծանոթ և վոչ մի մարդ: Իսկ թշնամուն հանցանքի վայրում բռնելու մասին, յեթե այդ լուրջ հասկանանք և վոչ թե միայն դեղեցիկ խոսքի իմաստով, չի ել կարող մտածել անլեղալ լրագիրն առհասարակ. այդ մատչելի յե միմիայն դաղտնի թռուցիկի համար, վորովհետև այդ բռնելու վերջնական ժամկետը մեծ մասամբ մեկ-յերկու

որից ավելի չի լինում (վերցրեք, որինակ, սովորական կարճատև դործադուլը, կամ դործարանային ջարդը կամ ցույցը և այլն)։

«Բանվորն ապրում է վոչ միայն դործարանում, այլև քաղաքում»,—շարունակում է մեր հեղինակը, մասնավորից դեպի ընդհանուրը բարձրանալով այնպիսի խիստ հետևողականությամբ, վոր պատիվ կբերի հենց Բորիս Կրիչեվսկուն։ Ցեվ նա նշում է քաղաքային դումաների, քաղաքային հիվանդանոցների, քաղաքային դպրոցների հարցերը, պահանջելով, վոր բանվորական լրագիրը լռության չտա ընդհանրապես քաղաքային դործերը։—Ինքնաստինքյան դեղեցիկ պահանջ, վոր սակայն առանձնապես ակնառու կերպով նկարագրդում է այն անրովանդակ վերացականությունը, վորով շատ հաճախ են սահմանափակվում տեղական լրագրերի մասին դատելիս։ Նախ, յեթե իսկապես «բանվորների կուտակման ամեն մի փոքրիշատե նշանակելի վայրում» լրագրեր յերևային այնպիսի մանրամասն քաղաքային բաժնով, ինչպես «Свобода»-ն է կամենում, ապա դա անխուսափելիորեն կայլասերվեր մեր ռուսական պայմաններում, կդառնար իսկական մանրախնդրություն և դրա հետևանքով կթուլանար ցարական ինքնակալության դեմ համառուսական հեղափոխական դրոհ մղելու կարևորության դիտակցությունը, կուժեղացներ խիստ կենսունակ և ավելի շուտ թաղնված կամ ողմված, քան արմատախիլ արված ծիլերն այն ուղղության, վորն արդեն համբավ և ձեռք բերել հոչակավոր ասացվածքով այն հեղափոխականների մասին, վորոնք չափազանց շատ են խոսում դոյություն չունեցող պառլամենտի մասին և չափազանց քիչ՝ դոյություն ունեցող քաղաքային դումաների մասին։ Մենք ասում ենք՝ անխուսափելիորեն, դրանով ընդդծելով, վոր «Свобода»-ն ակնհայտնի չի կամենում այդ, այլ կամենում է դրա հակառակը։ Բայց սոսկ բարի դիտավորությունները բավական չեն։—Վորպեսզի քաղաքային դործերի լուսարանությունը դաննք անհրաժեշտ հեռանկարի մեջ մեր ամբողջ աշխատանքի համեմատությամբ, հարկավոր է սկզբից, վորպեսզի այդ հեռանկարը միանդամայն մշակված լինի, ամուր կերպով հաստատված լինի վո՛չ թե միայն սոսկ դատողություններով, այլև բազմաթիվ որինակներով, վորպեսզի նա արդեն ձեռք բերի տրադիցիայի կայունություն։ Մեղանում այդ չկա ամենևին, իսկ այդ հարկավոր է հենց սկզբից, նախքան կարելի կլինի մտածել և խոսել տեղական լայն մամուլի մասին։

Ցերկրորդ, իրոք լավ և հետաքրքիր կերպով դրելու համար քաղաքային դործերի մասին, պետք է լավ—և վոչ թե միայն դրքից—իմանալ այդ դործերը։ Իսկ այդ դիտություն ունեցող սոցիալ-դեմոկրատներ համարյա թե չկան ամբողջ Ռուսաստանում։ Քաղաքային

և պետական դործերի մասին լրագրում (և վոչ թե հանրամատչելի բրոշյուրում) դրելու համար պետք է ունենալ ճարտ, բազմակողմանի, հմուտ մարդու կողմից հավաքած և մշակված նյութ։ Իսկ այդպիսի նյութը հավաքելու և մշակելու համար բավական չէ սրբիմիտիվ խմբակի «սրբիմիտիվ դեմոկրատական», այն խմբակի, վորի մեջ ամենքն անում են ամեն ինչ և զվարճանում են ռեֆերենդում խաղալով։ Դրա համար անհրաժեշտ է մասնագետ-դրոդների, մասնագետ-թղթակիցների շտաբ, ռեպորտյոր-սոցիալ-դեմոկրատների բանակ, վորոնք ամենուրեք և ամեն տեղ կապեր են հաստատում, կարողանում թափանցել բոլոր և ամեն տեսակ «պետական դաղտնիքների» մեջ (վորոնցով այնքան հպարտանում է ռուսաստանյան չինովնիկը և վորոնք նա այնքան հեշտ է դուրս տալիս), ներսողալ ամեն տեսակ «անդրկուլիսներ», այնպիսի մարդկանց բանակ, վորոնք «ի պաշտոնե» պարտավոր են լինել ամենուրեք և ամենագետ։ Ցեվ մենք, ամեն մի տնտեսական, քաղաքական, սոցիալական, ազգային ճնշման դեմ պայքարող մի կոնսպիրացիա, կարող ենք և պետք է ամենագետ մարդկանց այդպիսի բանակ դտնենք, հավաքենք, սովորեցնենք, մորալիզացիա անենք և արշավի դուրս բերենք,—բայց չե՞ վոր այդ դեռևս պետք է անե՛նք։ Իսկ մեղանում վո՛չ միայն դեռևս չի արված վայրերի ահագին մեծամասնության մեջ վոչ մի քայլ այդ ուղղությամբ, այլ շատ անդամ հաճախ այդ անելու գիտակցությունն անդամ չկա։ Ապա վնասեցնեք մեր սոցիալ-դեմոկրատական մամուլում կենդանի և հետաքրքրական հոդվածներ, թղթակցություններ և մեր դիպլոմատական, ռազմական, յեկեղեցական, քաղաքային, ֆինանսական և այլ դործերի ու մանրիկ դործերի մերկացումներ. դուք գրեթե վոչինչ չեք դտնի կամ շատ քիչ բան կդտնեք*)։ Ահա թե ինչու «ինձ միշտ սոսկալի դայրացնում է, յերբ մի մարդ ե դալիս և սկսում է ասել շատ դեղեցիկ և հիանալի բաներ» «բանվորների կուտակման ամեն մի փոքրիշատե նշանակելի վայ-

*) Ահա թե ինչու մինչև անդամ բացառիկ լավ տեղական որդանների որինակն էլ միանդամայն հաստատում է մեր տեսակետը. որինակ՝ «Южный Рабочий»-ն մի հիանալի լրագիր է, վոր ամենևին անմեղ է սկզբունքային անկայունության մեջ։ Բայց այն, ինչ վոր նա կամենում էր տալ տեղական շարժման համար, չիրագործվեց ուշ-ուշ լույս տեսնելու և լայն խափանումների հետևանքով։ Այն, ինչ վոր ամենից հրամայականն է կուսակցության համար ամբողջ մամենտին,—շարժման արմատական հարցերի սկզբունքային դրումն ու քաղաքական բազմակողմանի ագիտացիան—տեղական որդանի ուժերից վեր դուրս յեկավ։ Իսկ այն լավ բանը, ինչ վոր նա տալիս էր,—որինակ, հոդվածները լեռնարդյունաբերողների համադումարի մասին, դործադրկության մասին և այլն,—դուրս տեղական նյութ չէր և պահանջվում էր ամբողջ Ռուսաստանի համար, և վոչ թե միայն հարավի համար։ Այդպիսի հոդվածներ չեն յեղել և մեր սոցիալ-դեմոկրատական ամբողջ մամուլում։

ռում» թե՛ գործարանային, թե՛ քաղաքային, թե՛ պետական այլանդակությունները մերկացնող լրագրեր ունենալու անհրաժեշտության մասին:

Տեղական մամուլի դերակշռությունը կենտրոնականի վերաբերմամբ նշան է կամ աղքատության, կամ չռայլության: Աղքատության—յերբ շարժումը դեռևս ուժեր չի մշակել խոշոր արտադրության համար, յերբ նա իր գոյությունը քաշ է տալիս անայնադործականության մեջ և գրեթե խեղդվում «գործարանային կյանքի մանրունքներում»: Շռայլության—յերբ շարժումը միանգամայն հաղթահարել է արդեն բաղմակողմանի մերկացումների և բաղմակողմանի ագիտացիայի խնդիրը, այնպես վոր բացի կենտրոնական որդանից անհրաժեշտ են դառնում բազմաթիվ տեղական որդաններ: Թող ամեն վոք վճռի արդեն իր համար, թե ինչի մասին է վկայում տեղական լրագրերի դերակշռությունը մեզանում ներկայումս: Իսկ յես կսահմանափակվեմ իմ յեզրակացության ճշգրիտ ձևակերպումով, վորպեսզի թյուրիմացությունների առիթ չտամ: Մինչև այժմ մեզանում տեղական կազմակերպությունների մեծամասնությունը մտածում է գրեթե բացառապես տեղական որդանների մասին և գրեթե միայն նրանց վրա յե ակտիվ կերպով աշխատում: Այդ աննորմալ բան է: Պետք է լինի հակառակը, վոր տեղական կազմակերպությունների մեծ մասը մտածի դլխավորապես համառուսական որդանի մասին և դլխավորապես նրա վրա աշխատի: Մինչև վոր չլինի այդ, մենք չենք կարողանա հիմնել վոչ մի լրագիր, վոր փոքրիչատե ընդունակ լիներ իրոք սպասարկելու շարժմանը բազմակողմանի ագիտացիայով՝ մամուլում: Իսկ յերբ այդ կլինի,—այդ ժամանակ ինքնըստինքյան կհաստատվի նորմալ հարաբերություն կենտրոնական անհրաժեշտ որդանի և տեղական անհրաժեշտ որդանների միջև:

* * *

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հատուկ-տնտեսական պայքարի բնագավառի վերաբերմամբ անկիրառելի յե մեր յեղրակացությունը՝ ծանրության կենտրոնը տեղական աշխատանքից համառուսականի վրա տեղափոխելու անհրաժեշտության մասին.— բանվորների անմիջական թշնամիներ այստեղ հանդիսանում են առանձին ձեռնարկությունները կամ նրանց խմբերը, վորոնք կապակցված չեն այնպիսի մի կազմակերպությամբ, վոր դոնե հեռավորապես հիշեցներ ռուսական կառավարության, քաղաքական պայքարի ասպարեզում մեր անմիջական թշնամու զուտ ռազմական, խիստ ցենտրալիստական, մինչև ամենամանր յերևույթը միասնական կամքով ղեկավարվող կազմակերպությունը։

Բայց այդպես չե այդ: Տնտեսական պայքարը—մենք արդեն շատ անգամ ենք այդ նշել—պրոֆեսիոնալ պայքար է, ուստի և նա պահանջում է միավորում ըստ բանվորների պրոֆեսիաների, այլ վոչ թե միայն ըստ նրանց աշխատավայրի: Եվ այդ պրոֆեսիոնալ միավորումն այնքան ավելի հրամայականորեն անհրաժեշտ է դառնում, վորքան ավելի արագ է առաջ դնում մեր ձեռնարկումների միավորումն տեսակ ընկերությունների և սինդիկատների մեջ: Մեր մասնատվածությունն ու մեր տնայնադործականությունն ուղղակի խանգարում են այդ միավորմանը, վորի համար անհրաժեշտ է հեղափոխական կանների միասնական համառուսական կազմակերպություն, վոր ընդունակ լինի իր վրա վերցնելու բանվորների համառուսական պրոֆեսիոնալ միությունների ղեկավարությունը: Մենք վերևում խոսել ենք արդեն կազմակերպության՝ այդ նպատակի համար ցանկալի տիպի մասին և այժմ կավելացնենք միայն մի քանի խոսք մեր մամուլի հարցի կապակցությամբ:

Վոր յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատական լրագրում պրոֆեսիոնալ (տնտեսական) պայքարի բաժին պետք է լինի,—այդ հազիվ թե կասկածի յենթարկվի վորևե մեկի կողմից: Բայց պրոֆեսիոնալ շարժման աճումը ստիպում է մտածել նաև պրոֆեսիոնալ մամուլի մասին: Սակայն մեզ թվում է, թե Ռուսաստանում պրոֆեսիոնալ լրագրերի մասին, հաղվադեպ բացառություններով, առայժմ խոսք ել չի կարող լինել· այդ—չռայլություն է, իսկ մենք հաճախ ամենորյա հաց ել չունենք: Անլեգալ աշխատանքի պայմաններին հարմար և պրոֆեսիոնալ մամուլի այժմ իսկ անհրաժեշտ ձև պետք է մեզանում լիներ պրոֆեսիոնալ բրոշյուրները: Նրանց մեջ պետք եր հավաքել ու սիստեմատիկ կերպով խմբավորել լեգալ*) և անլեգալ նյութը հետևյալ

*) Լեգալ նյութն այս տեսակետից առանձնապես կարևոր է, և մենք առանձնապես հետ ենք մնացել այդ նյութը սիստեմատիկ կերպով հավաքելու և օգտագործելու մեր հմտությամբ: Զարմանալի չի լինի, յեթե ասենք, վոր միայն լեգալ նյութի հիման վրա կարելի յե դեռևս մի կերպ գրել պրոֆեսիոնալ բրոշյուր, իսկ միայն անլեգալ նյութի հիման վրա—անհնարին է: Անլեգալ նյութ հավաքելով բանվորներից՝ «Рабочая Мысль»-ի հրատարակածի նման հարցերի շուրջը մենք իսկույն հեղափոխականի շատ ուժեր ենք ծախսում (վորին այս բանում հեշտությամբ կարող կլիներ փոխարինել լեգալ գործիչը) և այնուամենայնիվ յերբեք չենք ստանում լավ նյութ, վորովհետև հաճախ մեծ գործարանի միայն մեկ բաժանմունքն իմացող և գրեթե միշտ տնտեսական արդյունքները, և վոչ թե իրենց աշխատանքի ընդհանուր պայմաններն ու նորմաները դիտցող բանվորներին անհնարին է ձեռք բերել այնպիսի պիտելիքներ, վոր ունեն գործարանային ծառայողները, տեսուչները, բժիշկները և

հարցերի շուրջը։—տվյալ արհեստագործության մեջ գոյություն ունեցող աշխատանքի պայմանների մասին, այդ տեսակետից Ռուսաստանի զանազան վայրերում նկատվող տարբերությունների մասին, տվյալ պրոֆեսիայի բանվորների գլխավոր պահանջների, նրան վերաբերող որենսդրության թերությունների մասին, այդ ցեխի բանվորների տնտեսական պայքարի աչքի ընկնող դեպքերի, նրանց պրոֆեսիոնալ կազմակերպության սաղմերի, ժամանակակից դրության և կարիքների մասին և այլն։ Այդպիսի բրոշյուրները, նախ, կազատեին մեր սոցիալ-դեմոկրատական մամուլը բազմաթիվ այնպիսի պրոֆեսիոնալ մանրամասնություններից, որոնք հատկապես հետաքրքրում են միայն տվյալ արհեստի բանվորներին, յերկրորդ, նրանք կարձանագրեին պրոֆեսիոնալ պայքարում ձեռք բերված մեր փորձը, կպահպանեին հավաքվող նյութը, որ այժմ տարաբաց կերպով կորչում է բազմաթիվ թռուցիկներում ու կցկտուր թղթակցությունների մեջ, և կընդհանրացնեին այդ նյութը։ յերրորդ, նրանք կարող կլինեին մի տեսակ ձեռնարկ ծառայել ագիտատորների համար, որովհետև աշխատանքի պայմանները փոփոխվում են համեմատաբար դանդաղ, տվյալ արհեստի բանվորների հիմնական պահանջները խիստ կայուն են (համեմատի՛ր մոսկովյան ռայոնի ջուլհակների 1885 թ. պահանջները և պետերբուրգյան ռայոնի 1896 թ. պահանջները), և այդ պահանջների ու կարիքների ամփոփումը կարող եր տարբեր շարունակ հիանալի ոժանդակ ձեռնարկ ծառայել տնտեսական ագիտացիայի համար հետամնաց վայրերում կամ բանվորների հետամնաց խավերի մեջ։ հաջող գործադուլների որինակները մի ռայոնում, տվյալները կյանքի ավելի բարձր մակարդակի, աշխատանքի ավելի յավ պայմանների մասին մի վայրում՝ կխրախուսեին նաև այլ վայրերի բանվորներին նորանոր պայքարի։ չորրորդ, իր վրա վերցնելով

այլն և որոնք մեծ չափով ցրված են լրագրային մանր թղթակցությունների և մասնագիտական՝ արդյունաբերական, սանիտարական, զեմստվային ու այլ հրատարակությունների մեջ։

Այստեղ պես հիշում եմ իմ «առաջին փորձը», որ յես յերբեք չեյի կրկնի։ Ցեխ չատ չարաթներ զրաղվեցի, «աշխատությամբ» հարցաքննելով ինձ մոտ յեղող մի բանվորի բոլոր ու ամեն տեսակ կարդերի մասին մի հսկայական գործարանում, որտեղ նա աշխատում եր։ Ճիշտ է, յես, թեև ահագին դժվարությամբ, բայց այնուամենայնիվ մի կերպ կազմեցի նկարագրությունը (միա՛յն մեկ գործարանի), բայց դրա փոխարեն բանվորը յերբեմն, քրտինքը սրբելով, ասում եր պարապմունքների վերջում, ժպտալով. «ինձ համար ավելի հեշտ է արտակարգ աշխատանք կատարել, քան ձեզ ձեր հարցերի՛ն պատասխանել»։

Որքան ավելի յեռանդուն մղենք մենք հեղափոխական պայքարը, այնքան ավելի հարկադրված կլինի կառավարությունը լեգալ դարձնելու «պրոֆեսիոնալ» աշխատանքի մի մասը, դրանով վերցնելով մեր բեռի մի մասը մեր վրայից։

պրոֆեսիոնալ պայքարի ընդհանրացման նախաձեռնությունը և այդպիսով ամրացնելով ռուսական պրոֆեսիոնալ շարժման կապը սոցիալիզմի հետ, սոցիալ-դեմոկրատիան միևնույն ժամանակ կհոգար այն մասին, որ մեր տրեդ-յունիոնիստական աշխատանքը մեր սոցիալ-դեմոկրատական աշխատանքի ընդհանուր գումարի մեջ դրավի վոչ չափազանց փոքր և վոչ չափազանց մեծ բաժինը։ Տեղական կազմակերպության համար, յեթե նա կտրված է մյուս քաղաքների կազմակերպություններից, շատ դժվար է լինում, յերբեմն նույնիսկ դրեթե անհնարին, ճիշտ համամասնություն պահպանելը (և «Рабочая Мысль»-ի որինակը ցույց է տալիս, թե ընդամենը վորպիսի հրեշավոր չափազանցության կարելի յե հասնել՝ տրեդ-յունիոնիզմի ուղղությամբ)։ Բայց հեղափոխականների համառուսական կազմակերպությունը, որ կանգնած է մարքսիզմի անհողդողդ տեսակետի վրա, զեկավարում է քաղաքական ամբողջ պայքարը և ունի պրոֆեսիոնալ ագիտատորների շատ, յերբեք չի դժվարանա վորոշել այդ ճիշտ համամասնությունը։

V

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ «ՊԼԱՆԸ»

««Искра»-յի ամենախոշոր վրիպումն այս տեսակետից նրա համակուսակցական կազմակերպության «պլանն» է» (այսինքն՝ «Ինչի՞ց սկսել» հոդվածը),—գրում է Բ. Կրիչևսկին («Рабочее Дело», № 10, եջ 30), մեղադրելով մեզ «թեորիան պրակտիկայից մեկուսացնելու միջոցով այն մեռյալ դոկտրինա դարձնելու» տենդենցի մեջ։ Ցեվ Մարտինովը ձայնակցում է նրան, հայտարարելով, թե ««Искра»-յի տենդենցը՝ նվազեցնելու ընթացիկ գործ պայքարի առաջընթացի նշանակությունը փայլուն և լիավարտ դաղափարների պրոպագանդայի համեմատությամբ... պահվեց կուսակցության կազմակերպման պլանով, որ նա առաջարկում է 4-րդ համարում «Ինչի՞ց սկսել» հոդվածում» (նույն տեղը, եջ 61)։ Վերջապես, ամենավերջին ժամանակներս այդ «պլանից» (չափերները պետք է արտահայտեն հեղնական վերաբերմունքը դեպի նա) վրդովված մարդկանց միացավ և Լ. Նադեժդինը մեր հենց նոր ստացած «Канун революции» բրոշյուրում (հրատարակություն մեղ արդեն ծանոթ Ազատություն «հեղափոխական-սոցիալիստական խմբի»), որտեղ հայտարարվում է, որ «խոսել այժմ համառուսական լրագրից թելերով ձգվող կազմակերպության մասին,—այդ նշանակում է կաբինետային մտքեր և կաբինետային աշխատանք ծնել» (եջ 126), այդ—«դրականամոլության» (литературщина) արտահայտություն է և այլն։

Վոր մեր տեսությունը համերաշխ դուրս յեկավ «ընթացիկ գործ

«պայքարի առաջընթացի» պաշտպանների հետ, այդ չի կարող մեզ զարմացնել այն բանից հետո, քանի վոր մենք հետամուտ յեղանք այդ մերձավորության արմատներին քաղաքականության և կազմակերպության նվիրված գլուխներում։ Բայց մենք պետք է այժմ ևեթ նկատենք, վոր Լ. Նադեժդինը, և միայն նա, փորձ է արել բարեխիղճ կերպով թափանցելու իրեն դուր չեկած հոդվածի մտքի ընթացքի մեջ, փորձ է արել պատասխանելու նրան ըստ էության,—մինչդեռ «Рабочее Дело»-ն ամենևին վոչինչ չի ասել ըստ էության, այլ միայն աշխատել է խճճել հարցը դեմագոգիական անվայել արարքների ամբողջ կույտով։ Յեվ վորքան եվ այդ անախորժ լինի, հարկադրված ենք սկզբից ժամանակ վատնել ավդյան ախոռը մաքրելու համար։

ա) Ո՞Վ ՎԻՐԱՎՈՐՎԵՑ «ԻՆՉԻՑ ՍԿՍԵԼ» ՀՈԴՎԱԾԻՑ

Բերենք այն արտահայտությունների և բացականչությունների մի փնջիկ, վորոնցով «Рабочее Дело»-ն հարձակվեց մեզ վրա։ «Վո՛չ թե լրագիրը կարող է կուսակցական կազմակերպություն ստեղծել, այլ ընդհակառակը»։ «Մի լրագիր, վոր կանգնած է կուսակցությունից վեր, նրա վերահսկողությունից դուրս և նրանից անկախ՝ չնորհիվ ազենտների սեփական ցանցի»։ «Ի՞նչպիսի հրաշքով «Искра»-ն մոռացել է այն կուսակցության վերաբերեն գոյություն ունեցող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին, վորին ինքն է պատկանում»։ «Հատատուն սկզբունքների և համապատասխան պլանի տերերը հանդիսանում են նաև կուսակցության ռեալ պայքարի գերադույն կարգավորիչներ, վորոնք իրենց պլանի կատարումն են թելադրում նրան»... «Պլանը մեր կենդանի ու կենսունակ կազմակերպություններին ստվերների թաղավորությունն է քշում և ուզում է կյանքի կոչել ազենտների ֆանտաստիկ ցանցը»։ «Յեթե «Искра»-յի պլանը ի կատար ածվեր, ապա դա կտաներ դեպի մեղնում կազմակերպվող Ռուս. Սոց.-Դ. Բ. կուսակցության հետքերի լիակատար ջնջումը»։... «Պրոպագանդիստական որգանը հեղափոխական ամբողջ գործնական պայքարի անկոնտրոլ, ինքնակալ որենսդիր է դառնում»... «Ի՞նչպես պիտի մեր կուսակցությունը վերաբերվի ավտոնոմ խմբագրությանն իր լիակատար յենթարկվելուն» և այլն և այլն։

Ինչպես տեսնում է ընթերցողն այս քաղվածքների բովանդակությունից և տոնից, «Рабочее Дело»-ն վիրավորվել է։ Բայց վիրավորվել է վո՛չ թե իր համար, այլ մեր կուսակցության կազմակերպության և կոմիտեների համար, վորոնց երբ թե «Искра»-ն ուզում է քշել ստվերների թաղավորությունը և նույնիսկ ջնջել նրանց հետքերը։ Ի՞նչպիսի սարսափներ, յերևակայի՛ր։ Տարորինակ է միայն մի բան։

«Ինչի՞ց սկսել» հոդվածը լույս է տեսել 1901 թվի մայիսին, «Рабочее Дело»-յի հոդվածները՝ 1901 թվի սեպտեմբերին, իսկ այժմ արդեն 1902 թվի հունվարի կեսն է։ Այս ամբողջ 5 ամսում (և՛ մինչև սեպտեմբեր և՛ սեպտեմբերից հետո) կուսակցության վո՛չ մի կոմիտե և վո՛չ մի կազմակերպություն ֆորմալ բողոքով չի հանդես յեկել ընդդեմ այս հրեշի, վորն ուզո՞ւմ է կոմիտեներին և կազմակերպություններին ստվերների թաղավորությունը քշել։ Իսկ չե՞ վոր այս ժամանակվա ընթացքում և՛ «Искра»-յում, և՛ բազմաթիվ այլ տեղական և վոչ-տեղական հրատարակություններում տասնյակ և հարյուրավոր հաղորդագրություններ են հրապարակ յեկել Ռուսաստանի բոլոր ծայրերից։ Այդ ի՞նչպես է յեղել, վոր նրանք, ում ուզում են ստվերների թաղավորությունը քշել, չեն նկատել այդ ու չեն վիրավորվել դրանից, այլ վիրավորվել է մի յերրորդ անձնավորություն։

Այդ առաջացել է նրանից, վոր կոմիտեներն ու մյուս կազմակերպություններն իսկական գործով են զբաղված, և վոչ թե «դեմոկրատիզմ» խաղալով։ Կոմիտեները կարդացել են «Ինչի՞ց սկսել» հոդվածը, տեսել են, վոր դա փորձ է «կազմակերպության վորոշ պլան մշակելու, վորպեսզի դրա կառուցմանը հնարավոր լինի ձեռնարկել բոլոր կողմերից» և, քանի վոր նրանք շատ լավ գիտեին և տեսնում եին, վոր այս «բոլոր կողմերից» վոչ մեկը չի մտածում «կառուցմանը ձեռնարկել», մինչև վոր կհամոզվի դրա անհրաժեշտության և ճարտարապետական պլանի ճշտության մեջ, ապա նրանք, բնականաբար, իրենց մտքով՝ անգամ չանցկացրին «վիրավորվել» ա՛յն մարդկանց հանդգնությունից, վորոնք արտահայտվել եին «Искра»-յում։ «Նկատի ունենալով հարցի անհետաձգելի կարևորությունը, մենք սիրտ ենք անում, մեր կողմից, ընկերների ուշադրությանն առաջարկել այն պլանի ուրվագիծը, վոր ավելի մանրամասն զարդացնում ենք մենք տպագրության համար պատրաստվող բրոշյուրում»։ Մի՞թե գործին բարեխիղճ վերաբերվելու դեպքում կարելի յեր չհասկանալ այն, վոր յեթե ընկերները կընդունեն նրանց ուշադրությանն առաջարկված պլանը, ապա նրանք կկենսագործեն այն վո՛չ թե «յենթարկման» պատճառով, այլ յելնելով այն համոզմունքից, թե դա անհրաժեշտ է մեր ընդհանուր գործի համար. իսկ յեթե նրանք չընդունեն այն, ապա «ուրվագիծը» (ինչպիսի հավակնոտ խոսք է, չե՞) այդպես եվ հասարակ ուրվագիծ կմնա։ Մի՞թե դեմագոգիա չե, յերբ պլանի ուրվագծի դեմ կռվում են վո՛չ միայն նրանով, վոր «ջարդուփշուր են անում» այն և խորհուրդ են տալիս ընկերներին մերժել այդ պլանը,—այլև նրանով, վոր հեղափոխական գործի մեջ սակավափորձ մարդկանց գրգռում են ուրվագծի հեղինակների դեմ միայն նրա համար, վոր նրանք համար-

ձակվում են «բենեֆրություն անել», վորպես «դերազույն կարգավորիչներ» հանդես գալ, այսինքն՝ համարձակվում են պլանի ուրվագիծ առաջարկել: Կարո՞ղ է արդյոք մեր կուսակցությունը զարգանալ և առաջադիմել, յեթե տեղական գործիչներին ավելի լայն հայացքների, խնդիրների, պլանների և այլն բարձրացնելու փորձի համար առարկեն վո՛չ միայն այս հայացքների անճշտության տեսակետից, այլ այն բանից «վիրավորվելու» տեսակետից, թե մեզ «ուզում են» «բարձրացնել»: Ձե՞ վոր Լ. Նադեժդինն էլ «ջարդուփշուր արեց» մեր պլանը, բայց նա չիլալ այնպիսի դեմագոգիայի ասոլեճանի, վորն արդեն չի կարող միայն միամտությամբ և քաղաքական հայացքների պրիմիտիվությամբ բացատրվել. «կուսակցության վրա տեսչություն անելու» մեղադրանքը նա մերժեց վճռականապես հենց սկզբից: Այդ պատճառով էլ Նադեժդինին կարելի յե և պետք է ըստ եյության պատասխանել պլանի նրա քննադատության առթիվ, իսկ «Рабочее Дело»-յին կարելի յե միայն արհամարհանքով պատասխանել:

Բայց մինչև «ինքնակալության» և «յենթարկման» վերաբերյալ աղաղակներն ստորացող դրողին արհամարհելը դեռևս չի աղատում մեզ այն խճողանքն արձակելու պարտականությունից, վոր այդպիսի մարդիկ հրամցնում են ընթերցողին: Յեվ ահա այստեղ մենք կարող ենք ակնարկ կերպով ցույց տալ բոլորին, թե «լայն դեմոկրատիզմի» մասին այս տարածված ֆրազներն ինչ բնույթ ունեն: Մեզ մեղադրում են կոմիտեները մոռացության տալու մեջ, նրանց ստվերների թագավորությունը քշելու ցանկության կամ փորձի մեջ և այլն: Ի՞նչպես պատասխանել այս մեղադրանքներին, քանի վոր չենք կարող ընթերցողին փաստական համարյա վոչինչ պատմել կոմիտեների հետ ունեցած մեր իսկական հարաբերությունների մասին, չենք կարող՝ կոնսպիրացիայի պայմանների պատճառով: Մարդիկ, վորոնք ամբոխին կծու և դրդիչ մեղադրանք են շպրտում, դուրս է գալիս, վոր մեղմից առաջ են չնորհիվ իրենց վոչնչից չքաշվելուն, չնորհիվ դեպի այնպիսի հեղափոխականի պարտականություններն ունեցած արհամարհական վերաբերմունքի, վորն աշխարհի աչքից խնամքով ծածկում է այն հարաբերություններն ու կապերը, վոր նա ունի, վոր նա կարդի յե բերում կամ փորձում է կարդի բերել: Հասկանալի յե, վոր «դեմոկրատիզմի» ասպարեզի վրա այսպիսի մարդկանց հետ մրցակցելուց մենք միանգամ ընդմիշտ հրաժարվում ենք: Իսկ ինչ վերաբերում է կուսակցական բոլոր գործերին անտեղյակ ընթերցողին, ապա նրա վերաբերմամբ մեր պարտքը կատարելու միակ միջոցը հանդիսանում է վո՛չ թե այն մասին պատմելը, թե ինչ կա և ինչ գոնվում է im Werden*), այլ այն

*) — լինելության, ծագման պրոցեսում: Խմբ.:

բանի մի մասնիկի մասին զատմելը, ինչ յեղել է և ինչի մասին թույլատրելի յե պատմել, վորպես անցյալի մասին:

Բունդն ակնարկում է մեր «ինքնակալությունը*), արտասահմանյան «Միությունը» մեղադրում է մեզ կուսակցության հետքերը ջնջելու մեջ: Թույլ տվե՛ք, պարոններ: Դուք լիակատար բավարարում կստանաք, յերբ մենք հասարակությանը չորս փաստ պատմենք անցյալից:

Առաջին**) փաստ:—«Պայքարի Միություններից» մեկի անդամները, վորոնք անմիջական մասնակցություն են ունեցել մեր կուսակցությունը կազմելու և այդ կուսակցությունը հիմնող կուսակցական համագումարին պատվիրակ ուղարկելու մեջ, «Искра»-յի խմբի անդամներից մեկի հետ պայմանավորվում են ամբողջ շարժման կարիքներին ապասարկելու համար հատուկ բանվորական գրադարան հիմնելու մասին: Բանվորական գրադարան հիմնելը չի հաջողվում, և դրա համար գրված «Задачи русских социал-демократов» և «Новый фабричный закон»***) բրոշյուրները զարտուղի ճանապարհով և յերբորդ անձերի միջոցով արտասահման են ընկնում, վորտեղ և դրանք տպագրվում են:

Յերկրորդ փաստ:—Բունդի Կենտրոնական Կոմիտեյի անդամները զիմում են «Искра»-յի խմբի անդամներից մեկին****), ինչպես Բունդն ել այն ժամանակ արտահայտվում, «զրական լաբորատորիա» կազմակերպելու առաջարկով: Միաժամանակ նրանք մատնանշում են, վոր յեթե այդ չհաջողվի անել, ապա մեր շարժումը կարող է խիստ հետ դնալ: Բանակցությունների արդյունքը «Рабочее дело в России» բրոշյուրն է հանդիսանում*****):

Յերրորդ փաստ:—Բունդի Կենտրոնական Կոմիտեն դավառական մի փոքրիկ քաղաքի միջոցով զիմում է «Искра»-յի անդամներից մեկին******) վերանորոգվող «Рабочая газета»-յի խմբագրությունն իր վրա վերցնելու առաջարկով և, իհարկե, համաձայնություն է ստանում: Առա-

*) «Искра» № 8, Համ. Հրեական Մ. Կենտր. Կոմիտեյի պատասխանը Ա.-ին և Գ.-ին ազգային հարցի մասին գրած մեր հոդվածին:

**) Մենք այս փաստերը զիտմամբ այն կարգով չենք դասավորում, ինչպես տեղի յեն ունեցել նրանք:

***) Տե՛ս ռուս. հրատ. Յերկ., II հատորը, եջ 167 և 125: Խմբ.:

****) — Մարտովին: Խմբ.:

*****) Ի զեպ, այս բրոշյուրի հեղինակն ինձ խնդրում է հայտնել, վոր դա, ինչպես և իր առաջվա բրոշյուրները, «Միություն»-ն ուղարկված այն յենթադրությամբ, վոր նրա հրատարակությունների խմբագիրը «Աշխատանքի Ազատագրություն» խումբն է հանդիսանում (միքանի պայմանների չնորհիվ նա այդ ժամանակ, այսինքն՝ 1899 թվականի փետրվարին, չեր կարող իմանալ խմբագրությունը փոխվելու մասին): Այս բրոշյուրը շուտով կվերահրատարակի Լիգան:

******) — Լենինին: Խմբ.:

ջարկն այնուհետև վոխվում է. աշխատակցություն են առաջարկում, բանի վոր խմբագրության վերաբերմամբ նոր կոմբինացիա չե արված: Դրան էլ, ըստինքյան հասկանալի չե, համաձայնություն է տրվում: Ուղարկվում են հոդվածներ (վոր հաջողվել է պահել)—«Մեր ծրագիրը», վորի մեջ ուղղակի բողոք եր արվում բերնչոտայնիքադայի, լեղալ գրականության մեջ յեղած շրջադարձի և «Рабочая Мысль»-ի դեմ. «Մեր մերձավորագույն խնդիրը» («կանոնավոր լույս տեսնող և բոլոր տեղական խմբերի հետ սերտորեն կապված կուսակցական որգանի կազմակերպումը». տիրապետող «տնայնագործականության» թերությունները). «Կենտական խնդիր» (այն առարկության քննությունը, թե պետք է նախ զարգացնել տեղական խմբերի գործունեությունը, ապա միայն ընդհանուր որգան հիմնելու գործին ձեռնարկել. «Հեղափոխական կազմակերպության» առաջնակարգ կարևորության պնդումը, դիսցիպլինան և կոնսպիրատիվ տեխնիկան «կատարելության բարձրագույն աստիճանի հասցնելու անհրաժեշտության» պնդումը*): «Рабочая Газета»-ն վերահրատարակելու առաջարկը չի իրագործվում և հոդվածները մնում են առանց տալու:

Չորրորդ փնտա:—Մեր կուսակցության յերկրորդ հերթական համագումարը կազմակերպող կոմիտեի անդամը հաղորդում է «Искра»-յի խմբի անդամին**) համագումարի ծրագիրը և այս խմբի թեկնածությունն է առաջարկում վերանորոգվող «Рабочая Газета»-յի խմբագրման ֆունկցիայի համար: Նրա, այսպես ասած, նախնական քայլը սանկցիա չե ստանում նաև այն կոմիտեի կողմից, վորին պատկանում եր նա, և Բունդի Կենտրոնական Կոմիտեի կողմից: «Искра»-յի խումբը ցուցում է ստանում համագումարի տեղի և ժամանակի մասին, բայց (հավատացած չլինելով, թե արդյոք հնարավորություն կունենա ինքը, միքանի պատճառներով, պատվիրակ ուղարկել այդ համագումարին) կազմում է նաև գրավոր զեկուցում համագումարին: Այս զեկուցման մեջ արծարծվում է այն միտքը, թե մենակ Կենտրոնական Կոմիտե ընտրելով մենք վո՛չ միայն չենք լուծի միավորման հարցը լիակատար ցրվածության այնպիսի մի ժամանակում, վորում ապրում ենք մենք, այլև կուսակցություն ստեղծելու մեծ խդեան վարկաբեկելու ոխկ ենք անում նոր արատ ու լիակատար տապալման դեպքում, վորն ավելի քան հավանական է տիրող անկոնսպիրատիվության պայմաններում. թե այդ պատճառով էլ գործը պետք է սկսել բոլոր կոմիտեներին և բոլոր կազմակերպություններին հրավիրելով վերանորոգվող այն ընդհանուր որգանին աջակցելու, վորը ռեալ կերպով փաստական

*) Տե՛ս Ցերկեր, սուս. հրատ. հ. II, էջ 491, 495 և 500: Խմբ.:

**) — Լենինին: Խմբ.:

կապով կկապի բոլոր կոմիտեներին, ռեալ կերպով կպատրաստի համբողջ շարժման ղեկավարների մի խումբ,—իսկ կոմիտեների կողմից ստեղծված այսպիսի մի խումբը Կ.Կ. դարձնել արդեն իսկ հեշտությամբ կարող են կոմիտեներն ու կուսակցությունը, յեթե այսպիսի խումբն աճի և ամրապնդվի: Համագումարը սակայն չի իրագործվում մի շարք ձախողումների պատճառով, և զեկուցումը կոնսպիրատիվ նկատառումներով վոչնչացվում է՝ միայն միքանի ընկերների կողմից, այս թվում նաև մի կոմիտեի լիազորների կողմից կարդացվելուց հետո:

Թո՛ղ այժմ ընթերցողն ինքը դատի այնպիսի յեղանակների բնույթի մասին, ինչպիսին է Բունդի կողմից ինքնակոչության մասին արված ակնարկը կամ «Рабочее Дело»-յի այն փաստարկը, թե մենք ուզում ենք կոմիտեներին ստվերների թագավորությունը քշել, կուսակցության կազմակերպությունը «փոխարինել» մեկ լրագրի խդեաների տարածման կազմակերպումով: Հենց կոմիտեներին է վոր մենք, նրանց բազմիցս հրավիրելով, զեկուցել ենք ընդհանուր աշխատանքի վորոշ այսպիսի ընդունելու անհրաժեշտության մասին: Հենց կուսակցական կազմակերպության համար ենք մենք մշակել այս պլանը «Рабочая Газета»-յի հոդվածներում և կուսակցության համագումարին ուղղված զեկուցման մեջ, դարձյալ այն մարդկանց հրավերով, վորոնք կուսակցության մեջ այնպիսի ազդեցիկ դերք եյին դրավում, վոր իրենց վրա եյին վերցնում նրա (փաստական) վերականգնման նախաձեռնությունը: Յեվ միայն այն բանից հետո, յերբ կուսակցական կազմակերպության՝ մեզ հետ միասին կուսակցության կենտրոնական որգանը պաշտոնապես վերանորոգելու յերկու անգամ արված փորձերն անհաջողությամբ վերջացան, մենք մեր ուղղակի պարտականությունը համարեցինք հանդես դալ անպաշտոնական որգանով, վորպեսզի յերրորդ փորձն անելիս ընկերներն իրենց առաջ փորձի վորոշ արդյունքներ և վոչ միայն դուշակողական յենթադրություններ ունենան: Ներկայումս այս փորձի վորոշ արդյունքներն արդեն իսկ բոլորի աչքերի առաջ են, և բոլոր ընկերները կարող են դատել, թե արդյոք ճի՛շտ ենք հասկացել մեր պարտականությունը և ի՛նչ պետք է մտածել այն մարդկանց մասին, վորոնք աշխատում են մոլորության մեջ դցել այն անձերին, վորոնք ծանոթ չեն ամենամոտիկ անցյալին, և դա անում են նրանք զայրանալով այն բանի վրա, վոր մենք վոմանց նկատմամբ ասացուցում եյինք, թե նրանք անհետևողական են ազդային հարցում, իսկ մյուսների նկատմամբ, թե թույլատրելի չե անսկզբունք տատանումների մեջ ընկնելը:

բ) ԿԱՐՈ՞Ղ Ե ԱՐԴՅՈՔ ԼՐԱԳԻՐԸ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԼԻՆԵԼ

«Ինչի՞ց սկսել» հոդվածի ամբողջ եյությունը հենց այս հարցադրումն ու նրա դրական լուծումն է: Մեզ հայտնի միակ փորձն այս հարցն ըստ եյության քննելու և նրա բացասական լուծման անհրաժեշտությունն ապացուցելու՝ անում է Լ. Նադեժդինը, վորի փաստարկներն ել մենք կվերարտադրենք ամբողջովին.

«...Մեզ շատ է դուր դալիս համառուսական լրագրի անհրաժեշտության հարցադրումն «Искра»-յում (№ 4), բայց մենք վոչ մի կերպ չենք կարող համաձայնել, վոր այդ դրումը հարմար լինի «Ինչի՞ց սկսել» հոդվածի վերնագրին: Այդ անտարակույս խիստ կարևոր դործերից մեկն է, բայց նրանով չէ, ժողովրդական թերթիկների ամբողջ սերիայով չէ, թռուցիկների կույտով չէ, վոր կարող է սկիզբը դրվել մարտական կազմակերպությանը հեղափոխական մոմենտի համար: Անհրաժեշտ է ձևավորել տեղերում քաղաքական ուժեղ կազմակերպությունների առաջացման: Մենք չունենք այդ կազմակերպությունները, մեղանում աշխատանքը ընթացել է դլխավորապես ինտելիդենտ բանվորների շրջանում, իսկ մասսաները դրեթե բացառապես տնտեսական պայքար են մղել: Ցերեկ տեղերում չդաստիարակվեն քաղաքական ուժեղ կազմակերպություններ, ի՞նչ նշանակություն ունի համառուսական թեկուզ հիանալի կերպով կազմակերպված լրագիրը: Անկեղ մարենի, վոր ինքը վառվում է, չի այրվում, բայց և վոչ վոքի չի վառում: Նրա շուրջը, դործի մեջ նրա համար կհավաքվի ժողովուրդը, կկազմակերպվի,—կարծում է «Искра»-ն: Բայց նրան շա՛տ ավելի մոտ է ավելի՛ կոնկրետ գործի շուրջը հավաքվելն ու կազմակերպվելը: Այդպիսին կարող է և պետք է հանդիսանա տեղական լրագրերի լայն կազմակերպումը, հենց այժմ բանվորական ուժերի պատրաստումն ցույցերի համար, տեղական կազմակերպությունների մշտական աշխատանքը դործադուրկների մեջ (անընդհատ կերպով պետք է տարածել նրանց մեջ թերթեր և թռուցիկներ, ժողովների կանչել նրանց, դիմադրության կոչել կառավարության հանդեպ և այլն): Տեղերում պետք է հիմք դնել քաղաքական կենդանի աշխատանքին, և յերբ այդ իրական հողի վրա միավորվելու անհրաժեշտություն յերևան դա,—այդ միավորումը կլինի վոչ արհեստական, վոչ թղթային—լրագրերով չէ, վոր կարելի յե տեղական աշխատանքների այդպիսի միավորման հասնել և ստեղծել համառուսական դործ» («Канун рев.», էջ 54):

Մենք ընդգծեցինք այս պերճախոս տիրադայի այն տեղերը, վորոնք ամենից ավելի ռելյեֆ կերպով ցույց են տալիս և՛ մեր պլանի՝ հեղինակի տված դնահատության անճշտությունը, և՛ ընդհանրապես նրա տեսակետի անճշտությունը, վոր այստեղ հակադրվում է «Искра»-յին: Եթե տեղերում չդաստիարակվեն քաղաքական ուժեղ կազմակերպություններ,—վոչ մի նշանակություն չի ունենա նաև համառուսական ամենահիանալի լրագիրը:—Միանդամայն արդարացի յե: Բայց եյությունը հենց այն է, վոր քաղաքական ուժեղ կազմակերպություններ դաստիարակելու այլ միջոց չկա, քան համառուսական լրագիրը: Հեղինակն աչքաթող է արել «Искра»-յի ամենաեյական հատարարությունը, վոր նա արել է իր «պլանի» շարադրմանն անցնելուց առաջ. անհրաժեշտ է «կոչել հեղափոխական կազմակերպության մշակման, վոր ընդունակ լինի միավորելու բոլոր ուժերը և չարժումը ղեկավարելու վո՛չ թե անունով միայն, այլև իրոք, այսինքն՝ միշտ պատրաստ լինի աչքկցելու ամեն մի բողոքի և ամեն մի բռնկման, ոգտվի նրանցից՝ բաղմապատկելու և ամրացնելու վճռական մարտի համար պիտանի ռազմական ուժերը»: Բայց սկզբունքով այժմ, փետրվարից և մարտից հետո, բոլորը կհամաձայնեն այս մտքին,—շարունակում է «Искра»-ն,—իսկ մեզ հարկավոր է հարցի վո՛չ թե սկզբունքային, այլ գործնական լուծումը, պետք է անհապաղ կերպով կառուցման այնպիսի վորոշ պլան առաջադրել, վորպեսզի իսկույն ևեթ զանազան կողմերից բոլորն ել կարողանան կառուցման դործին անցնել: Իսկ մեզ կրկին դործնական լուծումից դեպի հետ են քաշում—դեպի սկզբունքորեն ճիշտ անվիճելի, մեծ, բայց միանդամայն անբավարար, աշխատողների լայն մասսայի համար միանդամայն անհասկանալի ճշմարտությունը. «քաղաքական ուժեղ կազմակերպությունն՝ դաստիարակենք»: Արդեն այդ մասին չէ խոսքը, հարդելի՛ հեղինակ, այլ այն մասին, թե իսկապես ինչպես դաստիարակենք և ինչպես պե՛տք է դաստիարակենք:

Սխալ է, թե «մեղանում աշխատանքը կատարվել է դլխավորապես ինտելիդենտ բանվորների մեջ, իսկ մասսաները դրեթե բացառապես տնտեսական պայքար են մղել»: Այսպիսի ձևով այս դրությունը հանդում է «Свобода»-յի համար սովորական և հիմնովին սխալ՝ ինտելիդենտ բանվորների հակադրության «մասսային»: Մեղանում ինտելիդենտ բանվորները ևս վերջին տարիները «դրեթե բացառապես տնտեսական պայքար են մղել»: Այս մի կողմից: Իսկ մյուս կողմից, մասսաներն ել յերբեք չեն սովորի քաղաքական պայքար մղել, մինչև վոր մենք չդնենք այդ պայքարի համար ղեկավարներ դաստիարակելուն՝ թե՛ ինտելիդենտ բանվորներից և թե՛ ինտելիդենտներից. իսկ այդպիսի ղեկավարներ դաստիարակել կարող են բացառապես մեր քաղաքական կյանքի բոլոր կողմերի, զանազան դասակարդերի բողոքի և պայքարի բոլոր փորձերի սիստեմատիկ, ընթացիկ դնահատումով և զանազան առիթներով: Ուստի խոսել «քաղաքական կազմակերպությունների դաստիարակման» մասին և միևնույն ժամանակ քաղաքական լրագրի «թղթային դործը» հակադրել—«տեղերում կատարվող քաղաքական կենդանի աշխատանքին»՝ պարդապես ծիծաղելի՛ յե: Բայց չե՞ վոր «Искра»-ն լրագրի իր «պլանը» համաձայնեցնում է այնպիսի «մարտական պատրաստականություն» մշակելու «պլանին», վորպեսզի աչակցություն ցույց տրվի թե՛ դործադուրկների չարժմանը, թե՛ դյուղացիական բունտերին, թե՛ դեմոստրացիոն դործիչների դժդոհությանը, թե՛ «բնակչության վրդովմունքին ընդդեմ չափն անցկացրած ցարական բռնիբռնության» և այլն: Չե՞ վոր չարժմանը ծանոթ ամեն վոք հիմնավորա-

պես դիտե, վոր այդ մասին տեղական կազմակերպությունների հսկայական մեծամասնությունը նույնիսկ չի էլ մտածում, վոր այստեղ նախանշվող «կենդանի քաղաքական աշխատանքի» հեռանկարներից շատերը դեռևս վոչ մի անգամ չեն կիրառվել կյանքում կազմակերպություններից և վոչ մեկի կողմից, վոր, որինակ, զեմստվային ինտելիգենցիայի մեջ ծայր տված դժգոհության ու բողոքի աճման վրա ուշադրություն հրավիրելու փորձը դլխակորույս տարակուսանքի զդացմունք է առաջացնում և՝ Նադեժդինի մեջ («տեր աստված, զեմստվային դործիչների համար չե՞ արդյոք այդ որդանը», «Канун», եջ 129), և՝ եկոնոմիստների մեջ («Искра»-յի № 12-րդ նամակը), և՝ պրակտիկներից շատերի մեջ: Այս պայմաններում «սկսել» կարելի յե նրանից միայն, վոր դրդենք մարդկանց մտածելու այս ամենի մասին, դրդենք նրանց դումարի բերելու և ընդհանրացնելու խմորման և ակտիվ պայքարի բոլոր և ամեն տեսակ նշույները: Սոցիալ-դեմոկրատական խնդիրների նվաստացման մեր ժամանակում «քաղաքական կենդանի աշխատանքը» կարելի յե սկսել բացառապես քաղաքական կենդանի ագիտացիայից, վոր անհնարին է առանց համառուսական, հաճախակի լույս տեսնող և կանոնավոր կերպով տարածվող լրագրի:

Մարդիկ, վորոնք «Искра»-յի «պլանի» մեջ «դրականամոլության» արտահայտություն են տեսնում, ամենևին չեն հասկացել պլանի բուն եյությունը, նրա նպատակը տեսնելով այն բանի մեջ, ինչ վոր առաջադրվում է վորպես ներկա վայրկյանում ամենահարմար միջոց: Այդ մարդիկ նեղություն չեն կրել մտածելու այն յերկու համեմատության մասին, վորոնցով ակնառու կերպով լուսաբանվել է առաջարկվող պլանը: Համառուսական քաղաքական լրագրի ստեղծումը,—ասված ել «Искра»-յի մեջ,—պետք է լինի հիմնական թելը, վորից բռնելով մենք կարող կլինեյինք անշեղորեն զարդացնել, խորացնել և լայնացնել այդ կազմակերպությունը (այսինքն՝ հեղափոխական կազմակերպությունը, վոր միշտ պատրաստ է աջակցություն ցույց տալու ամեն մի բողոքի և ամեն մի բռնկման): Ասացե՛ք խնդրեմ. յերբ քարտաշները հսկայական և միանդամայն չտեսնված չենքի քարերն են դնում դանազան տեղեր,—«թղթային» դործ չե՞ արդյոք թել անցկացնելը, վոր ողնում է քար դնելու կանոնավոր տեղը դտնելուն, նշում է ընդհանուր աշխատանքի վերջնական նպատակը, հնարավորություն է տալիս դործադրելու վո՛չ միայն ամեն մի քարը, այլև քարի ամեն մի կտորը, վորը զոդվելով նախորդների և հաջորդների հետ, կազմում է ամբողջացած և համաչնապարփակ դիծ: Ցավ մի՞թե մենք հենց այդպիսի մոմենտ չենք ապրում մեր կուսակցական կյանքում, յերբ մեզանում կան և՝ քարեր, և՝ քարտաշներ, իսկ բացակայում է հենց բոլորի համար

տեսանելի թելը, վորը կարողանար բոլորի համար ուղեցույց լինել թողնելու ճշտի, թե թելն անցկացնելով, մենք իշխել ենք կամենում. յեթե մենք իշխել ուզենայինք, պարոննե՛ր, մենք փոխանակ «Искра»-յի № 1-ը դրելու՝ կդրեյինք «Рабочая Газета» № 3, ինչպես առաջարկում եյին մեզ մի քանի ընկերներ և ինչպես մենք լիակատար իրավունք կունենայինք անելու այն դեպքերից հետո, վորոնց մասին պատմվեց վերևում: Բայց մենք այդ չարինք. մենք կամենում եյինք ազատ թողնել մեր ձեռքերն անհաշտ պայքարի համար ընդդեմ ամեն տեսակ կեղծ-սոցիալ-դեմոկրատների. մենք կամենում եյինք, վոր մեր թելը, յեթե նա ճիշտ է անցկացված, սկսեն հարդել նրա ճշտության համար և վոչ թե այն պատճառով, վոր անց է կացրած պաշտոնական որդանի կողմից:

«Տեղական դործունեությունը կենտրոնական որդաններում միավորելու հարցը պատվում է կախարդական շրջադծում,—ուսուցանում է մեզ Լ. Նադեժդինը,—միավորման համար տարրերի միատեսակություն է պահանջվում, իսկ այդ միատեսակությունն ինքը կարող է ստեղծվել միայն վորևե միավորող բանով, բայց այդ միավորող բանը կարող է արդյունք հանդիսանալ տեղական ուժեղ կազմակերպությունների, վորոնք այժմ ամենևին միատեսակ բնույթ չունեն»: Նույնքան պատկառելի և նույնքան անվիճելի ճշմարտություն, վորքան և այն, վոր պետք է քաղաքական ուժեղ կազմակերպություններ դաստիարակել: Մի ճշմարտություն, վոր նույնքան անպտուղ է, վորքան և մյուսը: Ամեն մի հարց «պատվում է կախարդական շրջադծում», վորովհետև քաղաքական ամբողջ կյանքն ողակների անվերջ շարքից կազմված անվերջ շղթա յե: Քաղաքագետի ամբողջ արվեստը հենց այն է, վոր դանի ու ամուր ու պինդ կառչի այնպիսի ողակից հենց, վորն ամենից քիչ կարող է ձեռքից խլվել, վորը տվյալ մոմենտում ամենից կարևորն է, վոր ամենից շատ է ապահովում ողակն ունեցողի համար ամբողջ շղթային տիրապետելը*): Յեթե մենք ունենայինք փորձված քարտաշների ջոկատ, այն աստիճանի իրար համաձայն, վոր նրանք առանց թելի եել կարողանային քարերը դնել հենց այնտեղ, վորտեղ հարկավոր է (յեթե վերացականորեն ասենք, այդ ամենևին անհնարին չե),—այն ժամանակ մենք թերևս կարողանայինք ուրիշ ողակից ևս բռնել: Բայց դժբախտությունն եել հենց այն է, վոր մենք փորձված և համամիտ քարտաշներ չունենք դեռևս, վոր քարերը շատ հաճախ դեր-

*) Ընկե՛ր Կրիչեվսկի և ընկե՛ր Մարտինով: Ձեր ուշադրությունն եմ հրավիրում «ինքնակալության», «անկոնտրոլ հեղինակավորության», «դերադույն կարդավորման» և այլն այս վրդովեցուցիչ արտահայտության վրա: Ներեցե՛ք, ուզո՞ւմ է տիրապետել ամբողջ շղթային: Ապա չուտով դանդատ դրեցեք: Ահա՛ ձեզ պատրաստի թեմա «Рабочее Дело»-յի № 12-փ յերկու առաջնորդողների համար:

վում են բոլորովին զուր, դրվում են վո՛չ թե ընդհանուր թելի ուղղությամբ, այլ այն աստիճան մասնատված, որ թշնամին փչելով վայր է գցում նրանց, կարծես թե դրանք վոչ թե քարեր են, այլ ավազահատիկներ։

Մյուս համեմատությունը. «Լրագիրը վո՛չ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ և կոլեկտիվ ագիտատոր է, այլ նմանապես և կոլեկտիվ կազմակերպիչ։ Այս վերջին տեսակետից այն կարելի յե համեմատել վերելակների հետ, որոնք չինվում են կառուցվող շենքի շուրջը, կանխագծում շենքի կոնտուրները, հեշտացնում են հարաբերություններն առանձին կառուցողների միջև, ոգնում են նրանց՝ աշխատանքի բաշխում կատարելու և կազմակերպված աշխատանքով ստացված ընդհանուր արդյունքները դիտելու»*)։ Հիրավի, ի՞նչպես նման է այս գրականագետի, կաբինետային աշխատանքի մարդու կողմից իր դերը չափազանցնելուն։ Վերելակներն ամենևին հարկավոր չեն բուն բնակարանի համար, վերելակները կառուցվում են վատագույն նյութից, վերելակները կառուցվում են կարճ ժամանակով և վառարանն են նետվում, հենց որ շենքը ավարտված է՝ թեկուզ թերի։ Հեղափոխական կազմակերպությունների կառուցման վերաբերմամբ փորձը վկայում է, որ յերբեմն առանց վերելակների ևս հաջողվում է կառուցել դրանք— վերցրե՛ք յոթանասնական թվականները։ Բայց այժմ մեզանում յերևակայել անգամ չի կարելի մեզ համար անհրաժեշտ շենքի կառուցման հնարավորությունն առանց վերելակների։

Նադեժդինը չի համաձայնվում դրան և ասում է. «Լրագրի շուրջը, գործի մեջ նրա համար կհավաքվի ժողովուրդը, կկազմակերպվի,— կարծում է «Искра»-ն։ Բայց նրան շատ ավելի մոտ է ավելի՛ կոնկրետ գործի՛ շուրջն հավաքվելն ու կազմակերպվելը»։ Այդպես, այդպես. «շատ ավելի մոտ է ավելի կոնկրետի շուրջը»... Ռուսական առածն ասում է՝ մի՛ թքեր ջրհորի մեջ,—հարկավոր կդա ջուր խմելու համար։ Բայց կան մարդիկ, որոնք չեն խորշում ջուր խմելուց այնպիսի ջրհորից ևս, որը թքոտված է արդեն։ Ի՞նչ դարշելի բաներ ընդունակ յեղան ասելու հանուն այդ ավելի կոնկրետության մեր հոյակապ լեգալ «մարքսիզմի քննադատներն» ու «Рабочая Мысль»-ի անլեգա՛լ յերկրպագուները։ Ինչպե՛ս և մեր ամբողջ շարժումը ճզմված մեր նեղությամբ, անձեռներեցությամբ ու յերկչոտությամբ, որ արդարացվում է տարբերությունը փաստարկներով՝ «շատ ավելի մոտ ավելի՛ կոնկրետի շուրջը»։ Ցեվ Նադեժդինը,—որ իրեն առանձնապես զգայուն է համարում «կյանքի» վերաբերմամբ, առանձնապես խիստ դատապարտում է «կաբինետային» մարդկանց, մեղադրում է (սրախոսելու հավակնությամբ) «Искра»-յին ամեն տեղ եկոնոմիզմ տեսնելու թուլության համար, յերևակայում է, թե ինքը շատ ավելի բարձր է կանգնած այդ բաժանումից՝ որթոդոքսների և քննադատների,—չի նկատում այն, որ նա իր փաստարկներով իրեն վրդովեցնող նեղությանն է ոժանդակում, որ խմում է հենց ամենաթքոտվա՛ծ ջրհորից։ Այո՛, ամենաանկեղծ վրդովմունքը նեղությունից, նրա առաջ խոնարհվող մարդկանց բարձրացնելու ամենաջերմ ցանկությունը դեռևս բավական չե, յեթե վրդովվողը այս կամ այն կողմն է ընկնում անղեկ ու անառաջնորդ և նույնպես «տարբերությունին», ինչպես և 70-ական թվականների հեղափոխականները, կառչում է «եքսցիտատիվ տեսությունից», «ագրարային տեսությունից», «ահաղանգից» և այլն։ Նայեցեք այդ «ավելի կոնկրետին», որի շուրջը, նա կարծում է,—«շատ ավելի մոտ» կլինի հավաքվելն ու կազմակերպվելը. 1) տեղական լրագրեր. 2) ցույցերի նախապատրաստումներ. 3) աշխատանք գործազուրկների մեջ։ Հենց առաջին հայացքից յերևում է, որ այս բոլոր գործերը միանգամայն պատահականորեն են վերցված, հենց այնպես, մի բան ասելու համար, որովհետև ինչպես եվ որ մենք նայելու լինենք՝ նրանց մեջ տեսնել մի որևե բան, որ հատկապես պիտանի յե «հավաքելու և կազմակերպելու համար», արդեն բոլորովին անհեթեթություն է։ Չե՞ որ միևնույն Նադեժդինը յերկու եջ ներքև ասում է. «ժամանակ է, որ մենք պարզապես հավատանք մի փաստ. տեղերում շատ վողորմելի աշխատանք է կատարվում, կոմիտեները նույնիսկ տասերորդ մասը չեն անում այն գործերի, որ նրանք կարող եյին անել... այն միավորող կենտրոնները, որ կան մեզանում այժմ,—ֆիկցիա յե այդ, հեղափոխական դրասենյակամոլություն (канцелярщина) է այդ, միմյանց՝ գեներալի աստիճանի փոխադարձ շնորհումն, և այդպես կլինի մինչև այն ժամանակ, քանի դեռ չեն աճի տեղական ուժեղ կազմակերպություններ»։ Այս խոսքերի մեջ, անտարակույս, չափազանցումների կողքին պարունակվում է շատ դառը ճշմարտություն, և մի՞թե Նադեժդինը չի տեսնում, որ տեղերում կատարվող վողորմելի աշխատանքը կապված է գործիչների մատահորիզոնի այն նեղության հետ, նրանց գործունեության թափի այն նեղության հետ, որոնք անխուսափելի յեն տեղական կազմակերպությունների շրջանակներում փակվող գործիչների անպատրաստվածության պայմաններում։ Մի՞թե նա «Свобода»-յի՝ կազմակերպությանը նվիրված հոդվածի հեղինակի նման մոռացել է, թե ինչպես տեղական լայն մամուլին անցնելուն զուրգը-

*) «Р. Дело»-յում այս քաղվածքի առաջին նախադասությունը բերելով (№ 10, էջ 62), Մարտինովը բաց է թողել հենց յերկրորդ նախադասությունը, դրանով կարծես ընդգծելով հարցի նյութությունը չշոշափելու իր ցանկությունը կամ այդ նյութությունը հասկանալու իր անընդունակությունը։

թաց (1898 թվականից) առանձնապես ուժեղացան եկոնոմիզմն ու «տնայնագործականությունը»: Ցեթե նույնիսկ հնարավոր էլ լիներ «տեղական լայն մասուլի» փոքրիշատե բավարար կազմակերպումը (իսկ մենք ցույց տվինք վերևում, որ անհնարին է այդ, բացառությամբ բոլորովին առանձնակի դեպքերի), ապա այն ժամանակ էլ տեղական որդանները չէին կարողանա «հավաքել և կազմակերպել» հեղափոխականների բոլոր ուժերն ինքնակալության դեմ ընդհանուր գրոհ կատարելու, միասնական պայքարը ղեկավարելու համար: Մի՛ մոռանաք, որ այստեղ խոսքը վերաբերում է լրագրի միայն «հավաքող», կազմակերպչական նշանակությանը, և մենք կարող էինք մասնատվածությունը պաշտպանող Նադեժդինին առաջարկել իր իսկ տված հեղնական հարցը· «արդյոք չե՞նք ստացել մենք վերևից իբրև ժառանգություն 200·000 հեղափոխական կազմակերպչական ուժեր»: Այնուհետև, «ցույցերի նախապատրաստումը» չի կարելի հակադրել «Искра»-յի պլանին հենց այն պատճառով, որ այդ պլանը որպես նպատակներից մեկը նախատեսում է հենց ամենալայն ցույցերը· իսկ խոսքը գործնական միջոցի ընտրության մասին է: Նադեժդինը կրկին շփոթվել է այստեղ, աչքաթող անելով, որ ցույցեր «նախապատրաստել» (որոնք մինչև այժմ հսկայական մեծամասնությամբ կատարվել են միանգամայն տարերային կերպով) կարող է միայն արդեն «հավաքված և կազմակերպված» զորքը, իսկ մենք հենց հավաքել ու կազմակերպել չենք կարողանում: «Աշխատանք գործազուրկների մեջ»: Դարձյալ նույն շփոթությունը, որովհետև այս էլ ներկայացնում է մոբիլիզացիայի յենթարկված զորքի ռազմական գործողություններից մեկը, և ոչ թե զորքը մոբիլիզացիայի յենթարկելու պլանը: Թե մինչև ինչ աստիճան Նադեժդինն այստեղ էլ թերագնահատում է մեր մասնատվածության վնասը, «200·000 ուժի» բացակայությունը մեղանում, յերևում է հետևյալից: «Искра»-յին չատերն են կշտամբել (ի թիվս որոնց նաև Նադեժդինը) գործազրկության վերաբերյալ տեղեկությունների պաքատության համար, գյուղական կյանքի առորեական յերևույթների վերաբերյալ թղթակցությունների պատահականության համար: Կշտամբանքն արդարացի է, բայց «Искра»-ն այստեղ «անմեղ մեղավոր է»: Մենք աշխատում ենք «թեզն անցկացնել» նաև գյուղի միջով, բայց այնտեղ գրեթե ոչ մի տեղ քարտաշներ չկան, և ստիպված ենք խրախուսելու ամեն մեկին, ով հաղորդում է մինչև իսկ առորեական փաստ,—այն հույսով, որ դա կբազմապատկի աշխատակիցների թիվն այդ բնագավառի վերաբերմամբ և բոլորին կառվորեցնի ընտրել, վերջապես, նաև իրոք ցայտուն փաստեր: Բայց սովորելու համար այնքան քիչ նյութ կա, որ վճռականորեն չի կարելի որևէ բանով սովորել առանց այդ նյութին ընդհանրացնելու ամբողջ Ռուսաստանի վերաբերմամբ: Անտարակույս է, որ դեթ մոտավորապես նույնպիսի ագիտատորական ընդունակություններ և բոստակի կյանքի նույնպիսի ծանոթություն ունեցող մարդը, որպիսիք նկատվում են Նադեժդինի մեջ, կարող էր գործազուրկների շրջանում մղվող ագիտացիայով անգնահատելի ծառայություններ մատուցել շարժմանը,—բայց այդպիսի մարդը հողի մեջ թաղած կլիներ իր տաղանդը, յեթե չհոգար իր աշխատանքի ամեն մի քայլի նկատմամբ բոլոր ռուսական ընկերներին տեղյակ պահելու մասին, որպես դաս և որինակ այն մարդկանց համար, որոնց մեծամասնությունը դեռևս չի էլ կարողանում նոր գործի ձեռնարկել:

Միավորման կարևորության, «հավաքելու և կազմակերպելու» անհրաժեշտության մասին այժմ վճռականապես բոլորն էլ խոսում են, բայց մեծ մասամբ վոչ մի վորոշ պատկերացում չկա այն մասին, թե ինչից սկսենք և ինչպես վարենք միավորման այդ գործը: Ամենքն էլ կհամաձայնեն, հավանական է, որ յեթե մենք «միավորում ենք» մի քաղաքի առանձին—յենթադրենք՝ ռայոնական—խմբակները, ապա դրա համար անհրաժեշտ են ընդհանուր հիմնարկություններ, այսինքն վո՛չ միայն «միություն» ընդհանուր կոչումը, այլև իսկապես ընդհանուր աշխատանք, նյութի, փորձի և ուժերի փոխանակություն, ֆունկցիաների բաշխումն արդեն վո՛չ միայն ըստ ռայոնների, այլև ըստ ամբողջ քաղաքային գործունեության մասնագիտությունների: Ամեն վոք կհամաձայնի, որ սոլիդ կոնսպիրատիվ ապարատն իր ծախսերը ծածկել չի կարողանա (յեթե կարելի չե առևտրական արտահայտություն գործածել) մի ռայոնի «միջոցներով» (իհարկե, թե՛ նյութական և թե՛ անձնական), որ այդ նեղ ասպարեզում չի կարող մասնագետի տաղանդը զարգանալ: Սակայն նույնը վերաբերում է նաև զանազան քաղաքների միավորման, որովհետև այնպիսի ասպարեզ էլ, ինչպես առանձին վայրը, դուրս է յեկել և արդեն դուրս է յեկել անչափ նեղ մեր սոցիալ-դեմոկրատական շարժման պատմության մեջ,—մենք այդ վերը ապացուցել ենք մանրամասն, թե՛ քաղաքական ագիտացիայի և թե՛ կազմակերպչական աշխատանքի որինակով: Հարկավոր է, անհրաժեշտորեն հարկավոր է և ամենից առաջ հարկավոր է լայնացնել այդ ասպարեզը, փաստական կապ ստեղծել քաղաքների միջև և կանոնավոր ընդհանուր աշխատանքի շուրջը, որովհետև մասնատվածությունը սեղմում է մարդկանց, որոնք «նստած են ինչպես փոսում» («Искра»-յին ուղղած մեկ նամակի հեղինակի արտահայտությամբ), չիմանալով, թե ինչ է կատարվում լույս աշխարհում, ումից սովորեն,

ինչպես փորձ ձեռք բերեն, ինչպես բավարարեն լայն գործունեության ցանկությունը: Ցեվ յես շարունակում եմ պնդել, վոր այդ փաստական կապի ստեղծումը կարելի յե սկսել միայն ընդհանուր լրադրի միջոցով, իբրև միակ կանոնավոր համառուսական ձեռնարկության, վոր ի մի յե գումարում գործունեության ամենազանազան տեսակների արդյունքները և դրանով հրում մարդկանց անդադար առաջ ընթանալու այն բոլոր բազմաթիվ ուղիներով, վորոնք տանում են դեպի հեղափոխությունը, ինչպես բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ: Ցեթե մենք լոկ խոսքով չենք ցանկանում միավորում, ապա պետք է ամեն մի տեղական խմբակ իսկույն աչք իր ուժերի, ասենք, մի քառորդը հատկացնի ընդհանուր գործին ուղղված ակտիվ աշխատանքին, և լրադիրն իսկույն ցույց և տալիս նրան*) այդ գործի ընդհանուր ուրվագիծը, չափերն ու բնույթը, ցույց և տալիս, թե խիստ ամենից ուժեղ կերպով հատկապես ի՞նչ բացեր են զգացվում ամբողջ համառուսական գործունեության մեջ, վո՞րտեղ չկա ագիտացիա, վո՞րտեղ են կապերը թույլ, հսկայական ընդհանուր մեխանիզմի վո՞ր անիվները կարող և տվյալ խմբակն ուղղել կամ փոխարինել ավելի լավերով: Այն խմբակը, վոր դեռևս չի աշխատել, այլ միայն աշխատանք և փնտռում, կարող եր սկսել արդեն վոչ վորպես տնայնագործն առանձին փոքրիկ արհեստանոցում, վոր վո՛չ «արդյունաբերության» զարգացումը դիտե մինչև ինքը, վո՛չ արտադրության տվյալ արդյունաբերական յեղանակների ընդհանուր դրությունը, այլ վորպես մասնակցող լայն ձեռնարկության, վոր արտացոլում է ինքնակալության դեմ մղվող համահեղափոխական ամբողջ դրոհը: Ցեվ վորքան ավելի կատարյալ լիներ ամեն մի անիվի հղկվածությունը, վորքան շատ լիներ ընդհանուր գործի շուրջը մանրամասնային աշխատողների թիվը, այնքան ավելի խիտ-կլիներ մեր ցանցը և այնքան ավելի քիչ չափոմունք առաջ կբերեին ընդհանուր շարքերում անխուսափելի ձախողումները:

Փաստական կապ կսկսեր ստեղծել հենց միայն լրադրի տարածման ֆունկցիան (յեթե այդպիսին արժանի լիներ լրադրի անվան, այսինքն՝ լույս տեսներ կանոնավորապես վո՛չ թե ամիսը մեկ անգամ, ինչպես հաստ ժուռնալներն են լույս տեսնում, այլ մոտավորապես ամսական չորս անգամ): Այժմ հեղափոխական գործի պետքերի համար քաղաքների միջև յեղած հարաբերությունները չափազանց հապվազյուտ են և, համենայն դեպս, բացառություն. այն ժամանակ այդ հարաբերությունները կդառնային կանոն և կապահովեին, իհարկե, վո՛չ միայն լրադրի տարածումը, այլ նմանապես (վոր շատ ավելի կարևոր և) փորձի, նյութերի, ուժերի ու միջոցների փոխանակությունը: Կազմակերպական աշխատանքի թափը միանգամից կլայնանար շատ անգամ, և մեկ վայրի հաջողությունը շարունակ կխրախուսեր հետագա կատարելագործումը, յերկրի մյուս ծայրում գործող ընկերոջ արդեն պատրաստի փորձից ոգտվելու ցանկությունը: Տեղական աշխատանքը շատ ավելի հարուստ և բազմակողմանի կդառնար, քան այժմ. ամբողջ Ռուսաստանում հավաքվող քաղաքական և տնտեսական մերկացումները մտավոր սնունդ կտային բոլոր պրոֆեսիաների և զարգացման բոլոր աստիճանների բանվորներին, նյութ ու առիթ կտային զրույցների և ընթերցանությունների համար ամենատարբեր հարցերի շուրջը, վորոնք բացի դրանից հարուցված են թե՛ լեղալ մամուլի ակնարկներով, թե՛ հասարակության մեջ պտտվող խոսակցություններով, թե՛ կառավարական «ամոթխած» հաղորդագրություններով: Ամեն մի բռնկում, ամեն մի ցույց կդնահատվեր և քննության կառնվեր բոլոր կողմերից Ռուսաստանի բոլոր ծայրերում, ցանկություն առաջացնելով ուրիշներից հետ չմնալու, ուրիշներից լավ կատարելու—(մենք, սոցիալիստներս, ամենևին չենք ժխտում առհասարակ ամեն մի մրցություն, ամեն մի «կոնկուրենցիա»),—դիտակցաբար նախապատրաստելու այն, ինչ վոր առաջին անգամ դուրս յեկավ մի տեսակ տարերային կերպով, ոգտվելու տվյալ վայրի կամ տվյալ մոմենտի բարենպաստ պայմաններից՝ դրոհի պլանը փոփոխելու համար և այլն: Միևնույն ժամանակ տեղական աշխատանքի այդ աշխուժացումը չեր հասցնի բոլոր ուժերի այն հուսահատ «հոդևարքային» լարման և բոլոր մարդկանց վտանգման, ինչպես հաճախ լինում է այժմ ամեն մի ցույցի ժամանակ կամ տեղական լրադրի ամեն մի համար լույս ընծայելիս.—մի կողմից, վոստիկանության համար շատ ավելի դժվար է «արմատներին» հասնելը, քանի վոր հայտնի չե, թե ինչ վայրում պետք է փնտռել նրանց. մյուս կողմից, ընդհանուր կանոնավոր աշխատանքը կսովորեցներ մարդկանց տվյալ դրոհի ուժը համաձայնեցնել ընդհանուր բանակի այս-ինչ ջոկատի ուժի կացության հետ (այժմ այդ համաձայնեցման մասին դրեթե վոչ վոք յերբեք էլ չի մտածում, վորովհետև դրոհների ինքը տասերորդական մասը պատահում է տարերայնորեն) և կհեշտացներ այլ վայրից վո՛չ միայն դրականության, այլև հեղափոխական ուժերի «փոխադրությունը»:

*) Վերապահում.—յեթե նա համակրում է այս լրադրի ուղղությանը և գործի համար/ոգտակար է համարում նրա աշխատակիցը դառնալը, այս խոսքի տակ վո՛չ միայն դրական, այլ առհասարակ ամեն մի հեղափոխական աշխատակցություն հասկանալով: Ծանոթագրություն «Рабочее Дело»-ի համար.—այն հեղափոխականների մեջ, վորոնք գործը, և վոչ թե դեմոկրատիզմ խաղալն են գնահատում, վորոնք «համակրությունը» չեն անջատում ամենաակտիվ ու աշխուժ մասնակցությունից,—այս վերապահումը բացինքյան հասկանալի յե:

Այժմ այդ ուժերը բազմաթիվ դեպքերում արյունաքամ են լինում տեղական նեղ աշխատանքի մեջ, իսկ այն ժամանակ հնարավորություն և մշտական առիթներ կլինեին փոքրիշատե ընդունակ ադմինատորին կամ կազմակերպչին յերկրի մեկ ծայրից մյուսը տեղափոխելու: Սկսած փոքրիկ ուղևորությունից կուսակցության գործերով՝ կուսակցության հաշվով, մարդիկ կսովորեին ամբողջովին ապրել կուսակցության հաշվով, պրոֆեսիոնալ հեղափոխականներ դառնալ, իրենցից իսկական քաղաքական առաջնորդներ մշակել:

Ցեվ յեթե մեզ իրոք հաջողվեր հասնել այն դրության, վորպեսզի բոլոր տեղական կոմիտեները, տեղական խմբերն ու խմբակները կամ նրանց նշանակելի մեծամասնությունը ակտիվ կերպով ձեռնարկեին ընդհանուր գործին, մենք կարող կլինեինք ամենամոտ ապագայում հիմնել շաբաթաթերթ, վորը կանոնավոր կերպով կտարածվեր տասնյակ-հազարավոր օրինակներով ամբողջ Ռուսաստանում: Այդ թերթը մասնիկը կդառնար դարբնի այն հսկայական փուքսի, վորը հրահրում և դասակարգային պայքարի ու ժողովրդական զայրույթի ամեն մի կայծը, դարձնելով այն ընդհանուր հրդեհ: Այս ինքնաստինքյան դեռևս շատ անմեղ ու դեռևս շատ փոքր, բայց կանոնավոր ու բառիս լիակատար իմաստով ընդհանուր գործի շուրջը սիստեմատիկորեն կընտրվեր ու կսովորեր փորձված մարտիկների մշտական բանակը: Այս կազմակերպական ընդհանուր շենքի վերելակներով կամ աստիճաններով շուտով կբարձրանային և աչքի կընկնեին մեր հեղափոխականներից սոցիալ-դեմոկրատական ժելյաբովներ, մեր բանվորներից՝ ռուսական Բեբելներ, վորոնք մոբիլիզացիայի յենթարկված բանակի գլուխ կանգնեին և ամբողջ ժողովուրդը կբարձրացնեին՝ Ռուսաստանի խայտառակության ու անեծքի դատաստանը տեսնելու:

Ահա թե ինչի՛ մասին պետք է յերազել:

* * *

«Պետք է յերազե՛լ»: Գրեցի յես այս բառերը և վախեցա: Ցեվ յերևակայեցի, վոր նստած եմ «մխավորող համագումարում», իմ դիմաց նստած են «Рабочее Дело»-յի խմբագիրներն ու աշխատակիցները: Ցեվ ահա վեր է կենում ընկեր Մարտինովն ու ահարկու կերպով դիմում է ինձ. «Իսկ թույլ ավեք հարցնել ձեզ, իրավունք ունի՞ արդյոք դեռ ավտոնոմ խմբագրությունը յերազելու՝ առանց նախապես հարցում անելու կուսակցության կոմիտեներին»: Իսկ նրանից հետո վեր է կենում ընկեր Կրիչևսկին (և փիլիսոփայորեն խորացնելով ընկեր Մարտինովին, վորը վաղուց արդեն խորացրել է ընկեր Պլեխանովին) և՛ ավելի ահարկու կերպով շարունակում է. «Ցես ավելի առաջ եմ գնում: Ցես հարց եմ տալիս, իրավունք ունի՞ արդյոք առհասարակ մարքսիստը յերազելու, յեթե նա չի մոռանում, վոր ըստ Մարքսի մարդկությունը միշտ իր առջև իրագործելի խնդիրներ է դնում, և վոր տակտիկան կուսակցության հետ աճող խնդիրների աճման պրոցես է»:

Այս ահարկու հարցերի մասին սոսկ մտածելն իսկ սարսուռ է դցում մարմնիս մեջ, և յես մտածում եմ միայն, թե վո՞րտեղ թաղնվեմ: Փորձ անեմ Պիսարևի հետևը թաղնվելու:

«Աննյորդաշնակություն ել կա, աննյորդաշնակություն ել»,—պրում եր Պիսարևը յերազանքի և իրականության միջև յեղած աննյորդաշնակության հարցի առթիվ.—«Իմ. յերազանքը կարող է դեպքերի բնական ընթացքի առաջն ընկնել կամ թե նա կարող է միանգամայն շեղվել մի կողմ, այնտեղ, վորտեղ յերբեք չի կարող դալ դեպքերի վոչ մի բնական ընթացք: Առաջին դեպքում յերազանքը վոչ մի վնաս չի բերում. նա նույնիսկ կարող է ուժեղացնել աշխատավոր մարդու յեռանդը և աջակցել նրան... Նման յերազանքների մեջ բանվորական ուժն աղճատող կամ ջլատող վոչինչ չկա: Նույնիսկ բոլորովին ընդհակառակը: Յեթե մարդս միանգամայն դուրկ լիներ այդ կերպ յերազելու ընդունակությունից, յեթե նա չկարողանար մերթընդմերթ առաջ վազել և իր յերևակայությամբ մատհայել ամբողջացած և ավարտված պատկերի մեջ հենց այն ստեղծագործությունը, վոր նոր միայն սկսում է կազմավորվել իր ձեռքերի տակ,—այն ժամանակ յես վճռականորեն չեմ կարողանում յերևակայել, թե ինչ դրդիչ պատճառ կարող եր ստիպել մարդուն նախաձեռնել ու մինչև վերջը հասցնել լայնածավալ ու հոգնեցուցիչ աշխատանքները արվեստի, գիտության և գործնական կյանքի բնագավառում... Յերազանքի և իրականության միջև յեղած աննյորդաշնակությունը վոչ մի վնաս չի բերում, յեթե միայն յերազող անձնավորությունը լուրջ հավատում է իր յերազներին, ուշադրությամբ դիտելով կյանքը, համեմատում է իր դիտողություններն իր ոդային ամրոցների հետ և առհասարակ բարեխիղճ կերպով աշխատում է իր ֆանտազիայի իրագործման համար: Ցերը վորևե փոխադարձ առնչություն կա յերազանքի և կյանքի միջև, այն ժամանակ ամեն ինչ բարեհաջող է»:

Ահավասիկ ինչ կարգի յերազանքներ, դժբախտաբար, չափազանց քիչ են մեր շարժման մեջ: Ցեվ դրանում մեղավոր են ամենից շատ իրենց գաղտնատեսությամբ և «կոնկրետի» նկատմամբ իրենց «մերձավորությամբ» պարծեցող լեռչ քննադատության և անլեզալ «գործնականության» ներկայացուցիչները:

գ) Ի՞ՆՉՊԻՍԻ ՏԻՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Է ՄԵԶ ՀԱՐԿԱՎՈՐ

Նախընթացից ընթերցողը տեսնում է, վոր մեր «տակտիկա-պլանը» դրոհի անհապաղ կոչի ժխտումն է հանդիսանում, մենք պահանջում ենք «թշնամու ամրոցի կանոնավոր պաշարում», կամ այլապես պահանջում ենք բոլոր ջանքերը նվիրել մշտական զորք հավաքելու, կազմակերպելու և մոբիլիզացիայի յենթարկելու գործին: Յերբ մենք «Рабочее Дело»-ն ծաղրեցինք եկոնոմիզմից դեպի դրոհի վերաբերյալ ճիչերն ուրած նրա թռիչքի համար (վորոնք հնչեցին 1901 թ. ապրիլին «Листок Рабочего Дела»-յի 6-րդ համարում), նա, իհարկե, հարձակվեց մեզ վրա, մեղադրելով մեզ «դոկտրինյորության» մեջ, հեղափոխական պարտականությունը չըմբռնելու մեջ, զգուշության կոչելու մեջ և այլն: Մեզ ամենևին չզարմացրին, իհարկե, այդ մեղադրանքները այն մարդկանց շրթունքներում, վորոնք վոչ մի հաստատուն հիմք չունեն և իրենց դլուխն աղատում են խորիմաստ «տակտիկա-պրոցես»-ով, ինչպես չզարմացրեց նաև այն, վոր այդպիսի մեղադրանքները կրկնեց Նադեժդինը, վոր առհասարակ ամենահոյակապ արհամարհանք է տածում դեպի ծրագրային և տակտիկական հաստատուն հիմքերը:

Ասում են, թե պատմությունը չի կրկնվում: Բայց Նադեժդինն իր ամբողջ ուժով ճգնում է կրկնել այն և յեռանդագին ընդդիմանում է Տկաչեվին, տարփողելով «հեղափոխական կուլտուրարարությունը» («культурничество»), աղաղակելով «վեչեյի դանդաղի ահազանգի» մասին, «հեղափոխության նախորյակի» առանձին «տեսակետի» մասին և այլն: Նա, ըստ յերևույթին, մոռանում է հայտնի ասացվածքը, վոր յեթե պատմական դեպքի «բնագիրը» ներկայացնում է վոդեվիլություն, ապա նրա պատճենը միայն ֆարս է հանդիսանում: Տկաչեվի քարոզով նախապատրաստված և «ահարձակող» ու իսկապես ահ տարածած տեսության միջոցով իշխանություն նվաճելու փորձը—վեհ ներ, իսկ փոքրիկ Տկաչեվի «էքսցիտատիվ» տեսությունը պարզապես ծիծաղելի յե և առանձնապես ծիծաղելի, յերբ լրացվում է միջակներին կազմակերպելու դաղափարով:

«Յեթե «Искра»-ն,—դրում է Նադեժդինը,—դուրս գար դրականամոլության իր շրջանից, նա կտեսներ, վոր այդ (այնպիսի յերևույթներն, ինչպես բանվորի նամակը «Искра»-յի 7-րդ համարում և այլն) հայտանիշներն են այն բանի, վոր շուտով, շատ շուտով կսկսվի «դրոհը», և խոսել այժմ (sic!) համառուսական լրագրից թելերով ձգվող կազմակերպության մասին, նշանակում է կաբինետային մտքեր և կաբինետային աշխատանք ծնել»: Դե, տեսեք, ինչ անհերևակայելի խստաշչություն և այս. մի կողմից, էքսցիտատիվ տեսությունը և «միջակների կազմակերպություն» այն կարծիքի կողքին, թե «շատ ավելի մտա է» «ավելի կոնկրետ»—որինակ՝ տեղական լրագրերի—չուրջը հավաքվելը, իսկ մյուս կողմից, «այժմ» խոսել համառուսական կազմակերպության մասին՝ նշանակում է կաբինետային մտքեր ծնել, այսինքն՝ ավելի ուղիղ և ավելի պարզ ասած՝ «այժմ» ո՛ւշ է արդեն: Իսկ «տեղական լրագրերի լայն կազմակերպումը»,—ուշ չե՞ այդ, ամենապատվելի Լ. Նադեժդին: Յեվ համեմատեցեք դրա հետ «Искра»-յի տեսակետն ու տակտիկան. էքսցիտատիվ տեսությունը—դատարկ բան է, խոսել հենց միջակների կազմակերպության և լայն չափով տեղական լրագրեր հիմնադրելու մասին՝ նշանակում է դռները լայն բաց անել եկոնոմիզմի առջև: Պետք է խոսել հեղափոխականների համառուսական միասնական կազմակերպության մասին, և նրա մասին խոսելը ուշ չե հենց մինչև այն պահը, յերբ կսկսվի իսկական և վոչ թե թղթային դրոհը:

«Այո՛, կազմակերպման վերաբերմամբ մեղանում գործերը ամենևին ել փայլուն չեն,—շարունակում է Նադեժդինը,—այո՛, «Искра»-ն միանգամայն արդարացի յե, վոր ասում է, թե մեր ռազմական ուժերի գլխավոր մասսան կամավորներն են և ապստամբները... Այդ լավ է, վոր դուք զգաստ պատկերացնում եք մեր ուժերի դրությունը, բայց ինչո՞ւ յեք ընդսմին մոռանում, վոր ամբոխը մերը չե ամենևին և վոր այդ պատճառով նա չի հարցնի մեզ, թե յերբ պետք է սկսել պատերազմական գործողություններն, ու կսկսի «բունտ անել»... Յերբ ինքն ամբոխը կենի իր տարերային կործանարար ուժով, չե՞ վոր նա կարող է ճղմել, սրբել «մշտական զորքը», վորի մեջ բոլորը հավաքվում են, բայց չկարողացան ժամանակին չափազանց սիստեմատիկ կազմակերպություն մտցնել»: (Ընդգծումը մերն է):

Զարմանալի՛ տրամաբանություն: Հենց այն պատճառով, վոր «ամբոխը մերը չե»—վոչ խելացի և անվայելուչ բան է այս բոպեյիս «դրոհի» մասին աղաղակելը, վորովհետև դրոհը մշտական զորքի հարձակում է, և վոչ թե ամբոխի տարերային բռնկում: Հենց այն պատճառով, վոր ամբոխը կարող է ճղմել և սրբել մշտական զորքը, մենք անհրաժեշտորեն պետք է «հարմնենք» տարերային վերելքին՝ մշտական զորքի մեջ «չափազանց սիստեմատիկ կազմակերպություն մտցնելու» մեր աշխատանքով, վորովհետև վորքան շատ այդպիսի կազմակերպվածություն մենք «կարողանանք» մտցնել, այնքան ավելի հավանական է, վոր մշտական զորքը չի ճղմվի ամբոխի կողմից, այլ կառաջնորդի և կդլխավորի ամբոխին: Նադեժդինն այն պատճառով է հարցը շփոթում, վոր յերևակայում է, թե այդ սիստեմատիկորեն կազմակերպվող զորքն զբաղված է մի ինչ-վոր բանով, վոր նրան անջատում է ամբոխից, մինչդեռ իրոք նա զբաղված է բացառապես բազմակողմանի և համայնապարփակ քաղաքական ագիտացիայով, այսինքն՝ հենց այն աշխատանքով, վոր մոտեցնում և ի մի յե ձուլում ամբոխի տարերա-

յին–կործանարար ուժը և հեղափոխականների կազմակերպության գործնական–կործանարար ուժը։ Չե՞ վոր դուք, պարոններ, ուրիշի վրա յեք դցում ձեր մեղքը, վորովհետև հենց «Свобода» խումբն է, վոր ծրագրի մեջ տեռոր մտցնելով, դրանով տեռորիստների կազմակերպման կոչ է անում, իսկ այդպիսի կազմակերպությունն իսկապես կխանգարեր մեր զորքի մերձեցումը ամբոխին, վոր դեռևս, դժբախտաբար, մերը չէ, վոր դեռևս, դժբախտաբար, չի հարցնում կամ քիչ է հարցնում մեզ այն մասին, թե յերբ և ինչպես պետք է սկսել պատերազմական գործողությունները։

«Մենք չենք նկատի հեղափոխությունն իսկ,—շարունակում է վախեցնել «Искра»–յին Նադեժդինը,—ինչպես չնկատեցինք այժմյան դեպքերը, վորոնք բոլորովին անսպասելի եյին մեզ համար»։ Այս ֆրազը վերև բերվածների կապակցությամբ ակնառու կերպով ցույց է տալիս մեզ «Свобода»–յի հորինած «հեղափոխության նախորյակի առանձին տեսակետի» անհեթեթությունը*)։ Առանձին «տեսակետը», յեթե ուղղակի խոսենք, հանդում է այն բանին, վոր «այժմ» ուշ է արդեն դատելն ու պատրաստվելը։ Յեթե այդպես է, ո՛, ամենապատվելի թշնամի «դրականամոլության», ապա ի՞նչ հարկ կար 132 տպագիր եջում դրելու «թեորիայի**) և տակտիկայի հարցերի մասին»։ Չե՞ք դտնում արդյոք դուք, վոր «հեղափոխության նախորյակի տեսակետի» համար ավելի վայել կլիներ 132 հազար թռուցիկների հրատարակությունը, վորոնք կպարունակեին կարճ կոչ՝ «խփի՛ր նրանց»։

Հեղափոխությունը չնկատելու վտանգից ամենից շատ հենց նա, ով համաժողովրդական քաղաքական ագիտացիան անկյունաքար է դարձնում իր ամբողջ թե՛ ծրագրի, թե՛ տակտիկայի, թե՛ կազ-

*) «Канун революции»–ի եջ 62։

**) Ասենք, թեորիայի հարցերի վերաբերմամբ Լ. Նադեժդինն իր «թեորիայի հարցերի տեսության» մեջ դրեթե վոչինչ չի ասել, յեթե չհաշվենք հետևյալ՝ «հեղափոխության նախորյակի տեսակետից» խիստ հետաքրքրաշարժ պատասխանը. «Բերնշտայնիադան իր ամբողջությամբ կորցնում է իր սուր բնույթը մեր մոմենտի համար ճիշտ այնպես, ինչպես կապացուցի արդյոք պ. Ադամովիչը՝ թե պ. Սարուվեն արդեն արժանի չի ճարմանդի, թե ընդհակառակը, պ. Սարուվեն կհերքի պ. Ադամովիչին և չի համաձայնի պաշտոնաթող լինել,—վճռականապես մեկ է այդ, վորովհետև մոտենում է հեղափոխության վերահաս ժամը» (եջ 110)։ Դժվար կլիներ ավելի ուշիկ պատկերացնել Լ. Նադեժդինի անսուտման անհոգությունը թեորիայի վերաբերմամբ։ Մե՞նք ապդարարեցինք «հեղափոխության նախորյակ»—այդ պատճառով «վճռականորեն մեկ է», թե որթողքները կարող կլինե՞ն արդյոք քննադատներին իրենց դիրքերից վերջնականապես վայր նետել։ Յեվ չի նկատում մեր իմաստունը, վոր հենց հեղափոխության ժամանակ հարկավոր կդան մեզ քննադատների դեմ մղած թեորիական պայքարի արդյունքները՝ նրանց գործնական դիրքերի դեմ վճռական պայքար մղելու համար։

մակերպական աշխատանքի, ինչպես «Искра»–ն է անում։ Ամբողջ Ռուսաստանում կազմակերպության թելերը վոլորելով դրաղված մարդիկ, մի կազմակերպություն, վոր ձգվում է համառուսական լրագրից, վո՛չ միայն նկատեցին դարնան դեպքերը, այլ, ընդհակառակը, հնարավորություն ավին մեզ դուշակելու դրանք։ Նրանք աչքից չեն փախցրել նաև այն ցույցերը, վորոնք նկարագրված են «Искра»–յի 13–րդ և 14–րդ համարներում. ընդհակառակը, նրանք մասնակցել են այդ ցույցերին, վառ գիտակցելով իրենց պարտականությունը՝ ողնության հասնել ամբոխի տարերային վերելքին և լրագրի միջոցով ողնելու միևնույն ժամանակ բոլոր ռուսական ընկերներին, վոր ծանոթանան այդ ցույցերին և ոգտագործեն նրանց փորձը։ Նրանք աչքաթող չեն անի, յեթե կենդանի մնան, նաև հեղափոխությունը, վոր կպահանջի մեզանից ամենից առաջ և ամենից շատ փորձառություն ագիտացիայի մեջ, հմտություն՝ աջակցելու (սոցիալ–դեմոկրատականորեն աջակցելու) ամեն մի բողոքի, հմտություն՝ տարերային շարժման ուղղություն տալու, պաշտպանելով այն թե՛ բարեկամների սխալներից, թե՛ թշնամիների թակարդներից։

Այսպիսով մենք մոտեցանք վերջին նկատառությանը, վոր հարկադրում է մեզ առանձնապես պնդելու համառուսական լրագրի շուրջը կազմակերպվելու պլանը՝ ընդհանուր լրագրի համար կատարվող միատեղ աշխատանքի միջոցով։ Միայն այդպիսի կազմակերպությունը կապահովի սոցիալ–դեմոկրատական մարտական կազմակերպության համար անհրաժեշտ նկուղությունը, այսինքն՝ ընդունակություն՝ անմիջապես հարմարվելու պայքարի ամենաբաղմապան և արագորեն փոփոխվող պայմաններին, հմտություն՝ «մի կողմից խուսափելու բաց դաշտում իր ուժով դերակշռող այն թշնամու հետ ճակատամարտելուց, վոր հավաքել է իր բոլոր ուժերը մի կետում, իսկ մյուս կողմից, ոգտվելու այդ թշնամու անդյուրաշարժությունից և նրա վրա հարձակվելու՝ այնտեղ և այն ժամանակ, վորտեղ ամենից քիչ են հարձակում սպասում»*)։ Ամենամեծ սխալը կլիներ, յեթե մենք կուսակցական կազմակերպությունը կառուցեցինք, հաշվի առնելով միայն բռնկումն ու փողոցային պայքարը կամ միայն «ընթացիկ գործ պայ-

*) «Искра» № 4, «Ինչից սկսել»—«Հեղափոխական կուսակցարարներին, վորոնք չեն կանդնած հեղափոխության նախորյակի տեսակետի վրա, աշխատանքի յերկարատևությունը ընավ չի չփոթեցնում»,—գրում է Նադեժդինը (եջ 62)։ Այս առթիվ մենք կնկատենք. յեթե մենք չկարողանանք մշակել քաղաքական այնպիսի տակտիկա, այնպիսի կազմակերպական պլան, վորոնք անպատճառ նկատի ունենան խիստ յերկար աշխատանք և միևնույն ժամանակ այդ իսկ աշխատանքի պրոցեսով ապահովեն մեր կուսակցության պատրաստակամությունը իր դիրքում դտնվելու և իր պարտականությունը կատարելու ամեն մի անակնկալի դեպքում, դեպքերի ընթացքի ամեն մի

քարի առաջընթացը»: Մենք միշտ պետք է կատարենք մեր առորեյական աշխատանքը և միշտ պատրաստ լինենք ամեն բանի, վորովհետև շատ հաճախ գրեթե անհնարին է լինում առաջուց նախատեսել բռընկման ժամանակաշրջանների հերթափոխումը դադարի ժամանակաշրջանների, իսկ այն դեպքերում, յերբ հնարավոր է, չեր կարելի ողտվել այդ նախատեսությունից կազմակերպության վերակառուցման համար, վորովհետև այդ հերթափոխումը ինքնակալական յերկրում կատարվում է զարմանալի արագ, յերբեմն կապված լինելով ցարական յենիչերների մի դիչերային հարձակման հետ: Ցեվ հենց հեղափոխությունն էլ պետք է պատկերացնել ամենևին վոչ յեզակի ակտի ձևով (ինչպես, ըստ յերևույթին, թվում է Նաղեժդինին), այլ ավելի կամ պակաս ուժեղ պայթյունի և ավելի կամ պակաս ուժեղ դադարի միքանի արագ հերթափոխումների ձևով: Այդ պատճառով մեր կուսակցական կազմակերպության գործունեության՝ հիմնական բովանդակությունը, այդ գործունեության կիզակետը պետք է լինի այնպիսի աշխատանքը, վորը և՛ հնարավոր է, և՛ հարկավոր ինչպես ամենաուժեղ պայթյունի շրջանում, այնպես էլ լիակատար դադարի շրջանում, այն է՝ քաղաքական ագիտացիայի աշխատանքը, մի ագիտացիայի, վոր միավորված է ամբողջ Ռուսաստանում, լուսաբանում է կյանքի բոլոր կողմերը և ուղղված է դեպի ամենալայն մասսաները: Իսկ այդ աշխատանքն անհրաժեշտ յե ժամանակակից Ռուսաստանում առանց համառուսական շատ հաճախակի լույս տեսնող լրագրի: Այն կազմակերպությունը, վոր ինքնըստինքյան ձևավորվում է այդ լրագրի շուրջը, նրա աշխատակիցների (բառիս լայն իմաստով, այսինքն՝ նրա համար բոլոր աշխատողների) կազմակերպությունը հենց պատրաստ կլինի ամեն բանի, սկսած կուսակցության պատվի, հեղինակության և հաջորդականության փրկումից հեղափոխական ամենամեծ «ճնշման» վայրկյանին և վերջացրած համաժողովրդական զինված ապստամբության նախապատրաստումով, նշանակումով և իրագործմամբ:

Իսկապես, յերևակայեցե՛ք մեղանում լիակատար տապալման շատ սովորական դեպք մեկ կամ միքանի վայրերում: Տեղական բոլոր կազմակերպություններում մեկ ընդհանուր կանոնավոր գործի բացակայության դեպքում այդպիսի տապալումների հետևանքով հաճախ աշ-

---

արաղացման պարագայում,—ապա մենք դուրս կգանք պարզապես քաղաքական վողորմելի ավանտյուրիստներ: Միայն Նաղեժդինը—վոր յերեկվանից է սկսել իրեն սոցիալ-դեմոկրատ անվանել—կարող է մոռանալ այն մասին, վոր սոցիալ-դեմոկրատիայի նպատակն է ամբողջ մարդկության կյանքի պայմանների արմատական փոխակերպումը, վոր այդ պատճառով սոցիալ-դեմոկրատի համար անթույլատրելի է աշխատանքի յերկարատևության վերաբերյալ հարցով «չփոթվելը»:

խատանքն ընդհատվում է շատ ամիսներով: Իսկ յերբ բոլորը մի ընդհանուր գործ ունեն,—նույնիսկ ամենաուժեղ տապալումից հետո բավական կլինի յերկու-յերեք յեռանդուն մարդու միքանի շաբաթվա աշխատանքը, վորպեսզի յերիտասարդության նոր խմբակներ կապվեն ընդհանուր կենտրոնի հետ, խմբակներ, վորոնք, ինչպես հայտնի է, ծաղում են շատ արագ կերպով նույնիսկ այժմ,—իսկ յերբ տապալումից տուժող այդ ընդհանուր գործն ամենքի աչքի առաջն է, այդ դեպքում նոր խմբակները կարող են ծաղել և կապվել նրա հետ է՛լ ավելի արագ:

Մյուս կողմից, պատկերացրեք ժողովրդական ապստամբությունը: Ներկայումս, յերևի, ամենքը կհամաձայնեն, վոր մենք պետք է մտածենք նրա մասին ու նախապատրաստվենք նրա համար: Բայց ի՞նչպես պատրաստվենք: Հո Կենտրոնական Կոմիտեն գործակալներ չի՞ նշանակի բոլոր վայրերում՝ ապստամբություն պատրաստելու համար: Ցեթե մենք ունենալինք էլ Կենտկոմ, նա այդպիսի նշանակումով բացարձակապես վոչինչ չեր շահի ժամանակակից ռուսական պայմաններում: Ընդհակառակը, գործակալների*) ցանցը, վոր ինքնըստինքյան գոյանում է ընդհանուր լրագրի հիմնադրման և տարածման ուղղությամբ կատարվող աշխատանքի շուրջը, չպետք է «նստեր ու սպասեր» դեպի ապստամբություն կոչող լոզունգին, այլ հենց այնպիսի կանոնավոր գործ կկատարեր, վորը կապահովեր հաջողության ամենամեծ հավանականությունը՝ ապստամբության դեպքում: Հենց այդպիսի գործը կամրացներ կապերը թե՛ բանվորների ամենալայն մասսաների հետ, թե՛ ինքնակալությունից դժգոհ բոլոր խավերի հետ, մի բան, վոր այնքան կարևոր է ապստամբության համար: Հենց այդպիսի գործով կմշակվեր ընդհանուր քաղաքական դրությունը ճիշտ գնահատելու ընդունակությունը և, հետևապես, ապստամբության համար հարմար

---

*) Ավա՜ղ, ավա՜ղ: Դարձյալ իմ բերնից թռավ այս «գործակալ» սոսկալի բառը, վոր այնպե՛ս ծակում է Մարտինովների դեմոկրատական ականջը: Ինձ տարորինակ է թվում, թե ինչո՞ւ այս բառը չեր վիրավորում 70-ական թվականների կորիֆեյներին, իսկ վիրավորում է 90-ական թվականների տնայնագործներին: Ինձ դուր է գալիս այս բառը, վորովհետև նա պարզ և կարուկ մատնանշում է այն ընդհանուր գործը, վորին յենթարկում են բոլոր գործակալներն իրենց մտածումներն ու գործողությունները, և յեթե այս բառը պետք է փոխարինել մեկ ուրիշով, ապա չես կարող չի կանգ առնել թերևս միմիայն «աշխատակից» բառի վրա, յեթե դրանից վորոշ դրականամոլության և վորոշ ճապաղության հոտ չգար: Իսկ մեզ հարկավոր է գործակալների ռազմական կազմակերպություն: Իդեպ, այն բաղմաթիվ (առանձնապես արտասահմանում) Մարտինովները, վորոնք սիրում են «մի իմյանց փոխադարձաբար դեներալության աստիճան շնորհելով» զբաղվել, կարող եյին «անցագրային մասի գործակալի» փոխարեն ասել «հեղափոխականներին անցագրեր մատակարարելու առանձին բաժնի գլխավոր կառավարիչ» և այլն:

մոմենտ ընտրելու ընդունակությունը: Հենց այդպիսի գործը կոմբինեցներ բոլոր տեղական կազմակերպություններին միաժամանակ արձագանգել ամբողջ Ռուսաստանը հուզող միևնույն քաղաքական հարցերին, դեպքերին ու պատահարներին, պատասխանել այդ «պատահարներին» ըստ հնարավորին ավելի յեռանդուն, ըստ հնարավորին ավելի միակերպ և ավելի նպատակահարմար,—իսկ չէ՞ վոր ապստամբությունն, իր եությամբ, ամբողջ ժողովրդի ամենայեռանդուն, ամենամիակերպ և ամենանպատակահարմար «պատասխանն» է կառավարությանը: Վերջապես, հենց այդպիսի գործը կոմբինեցներ բոլոր հեղափոխական կազմակերպություններին Ռուսաստանի բոլոր ծայրերում վարել ամենամշտական և միևնույն ժամանակ ամենակոնսպիրատիվ հարաբերություններ, վորոնք կուսակցության փաստական միասնականությունն են ստեղծում,—իսկ առանց այդպիսի հարաբերությունների անհնարին է կոլեկտիվ կերպով քննել ապստամբության պլանը և ձեռնարկել նրա նախորյակին այն նախապատրաստական անհրաժեշտ միջոցներին, վորոնք պետք է պահպանվեն իբրև խստագույն դաղտնիք:

Մի խոսքով, «համառուսական քաղաքական լրագրի պլանը» վո՛չ միայն դոկտրինյորությամբ ու դրականամտությամբ վարակված մարդկանց կաբինետային աշխատանքի պտուղ չէ (ինչպես այդ թվաց դրան լավ խելամուտ չեղած մարդկանց), այլ, ընդհակառակը, նա ամենագործնական պլանն է՝ բոլոր կողմերից սկսելու և խսկույն ևեթ ապստամբության պատրաստվելու, միևնույն ժամանակ վոչ մի բոպե չմոռանալով մեր առորեական, կենսական աշխատանքը:

ՑԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի պատմությունն ակնհայտնի կերպով բաժանվում է յերեք շրջանի:

Առաջին շրջանն ընդգրկում է մոտ տասը տարի, մոտավորապես 1884—1894 թվականները: Սոցիալ-դեմոկրատիայի թեորիայի և ծրագրի ծագման ու ամրացման շրջանն եր այդ: Նոր ուղղության կողմնակիցների թիվը Ռուսաստանում չափվում եր միավորներով: Սոցիալ-դեմոկրատիան գոյություն ուներ առանց բանվորական շարժման, ապրելով՝ վորպես քաղաքական կուսակցություն՝ արդանդային զարգացման պրոցես:

Յերկրորդ շրջանն ընդգրկում է յերեք-չորս տարի, 1894—1898 թվականները: Սոցիալ-դեմոկրատիան լույս աշխարհ է յերևան գալիս վորպես հասարակական շարժում, վորպես ժողովրդական մասսաների վերելք, վորպես քաղաքական կուսակցություն: Մանկության և պատանեկության շրջանն է այդ: Համաճարակի արագությամբ տարածվում է ինտելիգենցիայի ընդհանուր հրապուրումը նարոդնիկության դեմ մղվող պայքարով և բանվորների մոտ դնալով, բանվորների ընդհանուր հրապուրումը գործադուլներով: Շարժումը հսկայական հաջողություն է՝ ունենում: Ղեկավարների մեծամասնությունը բոլորովին յերիտասարդ մարդիկ են, վոր ամենևին չեն հասել այն «յերեսունհինգամյա հասակին», վորը պ. Ն. Միխայլովսկուն թվում եր ինչ-վոր բնական սահման: Իրենց յերիտասարդության շնորհիվ նրանք անպատրաստ են հանդիսանում պրակտիկ գործունեության և զարմանալի արագ կերպով հեռանում են թատերաբեմից: Բայց նրանց աշխատանքի թափը մեծ մասամբ շատ լայն եր: Նրանցից շատերն սկսել եյին հեղափոխականորեն մտածել վորպես նարոդովոլյականներ: Վաղ պատանեկության ժամանակ գրեթե ամենքը հիացմունքով խոնարհվում եյին տեռորի հերոսների առաջ: Այդ հերոսական տարրերության համայնք տպավորությունից հրաժարվելը պայքարով կատարվեց, վորն ուղեկցվեց խղճմտով այն մարդկանց հետ, վորոնք ինչպես ել լինի՝ կամ-

նում էին հավատարիմ մնալ Նարոդնայա Վոլյային և վորոնց խորապես հարգում էին յերիտասարդ սոցիալ-դեմոկրատները։ Պայքարն ստիպում եր սովորել, ամեն տեսակ ուղղությունների անլեգալ դերվածքներ կարդալ, ուժգին պարապել լեգալ նարոդնիկության խնդիրներով։ Այդ պայքարով դաստիարակված սոցիալ-դեմոկրատները գնում էին բանվորական շարժման մեջ, «վոչ մի բոպե» չմոռանալով՝ վո՛չ մարքսիզմի թեորիայի մասին—վոր լուսավորել եր նրանց պայծառ լուսով,—վո՛չ էլ ինքնակալությունը տապալելու խնդրի մասին։ 1898 թվականի դարնանը կուսակցություն կազմելն այդ շրջանի սոցիալ-դեմոկրատների ամենացցուն և միևնույն ժամանակ վերջին գործն եր։

Յերրորդ շրջանը նախապատրաստվում է, ինչպես տեսանք, 1897 թվականին և վերջնականապես փոխարինում է յերկրորդ շրջանին 1898 թվականին (1898—?)։ Խառնաշփոթության, քայքայման, տատանման շրջանն է այդ։ Պատանիության ժամանակ այնպես է լինում, վոր մարդուս ձայնը բեկվում է։ Ահա և այդ շրջանի ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ձայնը ևս սկսեց բեկվել, սկսեց կեղծ հնչել,—մի կողմից, պ. պ. Ստրուվեյի և Պրոկոպովիչի, Բուլգակովի և Բերդյայեվի գրվածքներում, մյուս կողմից—Վ. Ի.-ների և Ռ. Մ.-ի, Բ. Կրիչեվսկու և Մարտինովի մոտ։ Բայց միայն ղեկավարներն էին անջատ ընթանում և հետ գնում. ինքը շարժումը շարունակում եր աճել և հսկայական քայլեր անել դեպի առաջ։ Պրոլետարական պայքարն ընդգրկում եր բանվորների նոր խավեր և տարածվում ամբողջ Ռուսաստանում, միևնույն ժամանակ անուղղակի կերպով ազդելով նաև դեմոկրատական վոգու աշխուժացման վրա ուսանողության մեջ և բնակչության մյուս խավերում։ Իսկ ղեկավարների դիտակցականությունն ընկրկեց տարբերային վերելքի լայնության և ուժի առջև. սոցիալ-դեմոկրատների մեջ արդեն գերիշխում եր այլ չերտ, այն գործիչների չերտը, վորոնք գրեթե միայն մարքսիստական «լեգալ» գրականությամբ էին դաստիարակվել, իսկ այդ գրականությունն այնքան ավելի անբավարար եր, վորքան ավելի դիտակցականություն եր պահանջում նրանցից մասսայի տարերայնությունը։ Ղեկավարները վո՛չ միայն հետ էին մնում թե՛ թեորիական տեսակետից («քննադատության ազատությունը»), թե՛ գործնական («տնայնագործականությունը»), այլև փորձում էին յուչտպանելու իրենց հետամնացությունն ամեն տեսակ վերամբարձ արտահայտությունների։ Սոցիալ-դեմոկրատիզմը նվաստացվում եր մինչև տրեդ-յունիոնիզմի աստիճանի՝ թե՛ լեգալ գրականության բրենտանիստների և թե՛ անլեգալ գրականության պոչականների կողմից։ Credo-յի ծրագիրն սկսում եր իրագործվել, մանավանդ յերբ սոցիալ-դեմոկրատների «տնայնագործականությունն» առաջ բերեց վոչ-սոցիալ-դեմոկրատական հեղափոխական ուղղությունների աշխուժացում։

Ցեվ ահա, յեթե ընթերցողը կշտամբի ինձ այն բանի համար, վոր յես չափազանց մանրամասն զբաղվեցի ինչ-վոր «Рабочее Дело»-յով, յես կպատասխանեմ դրան. «Рабочее Дело»-ն «պատմական» նշանակություն և ձեռք բերել այն պատճառով, վոր ամենից ռելյեֆ կերպով իր մեջ արտացոլել և այդ յերրորդ շրջանի*) «վոգին»։ Վո՛չ թե հետևողական Ռ. Մ.-ն, այլ հենց քամու հոսանքով յերերվող Կրիչեվսկիները ու Մարտինովները կարող էին իսկական կերպով արտահայտել խառնաշփոթությունն ու տատանումները, պատրաստակամությունը՝ զիջումներ անելու թե՛ «քննադատության», թե՛ «եկոնոմիզմի» և թե տեռորիզմի հանդեպ։ Այդ շրջանի համար բնորոշ է վոչ թե՛ վսեմաշուք արհամարհանքը դեպի պրակտիկան «աբսոլուտի» վորևե յերկրպագուի կողմից, այլ հենց մանր պրակտիցիզմի միացումը թեորիական կատարյալ անհոգության հետ։ Այդ շրջանի հերոսներն զբաղվում էին վոչ այնքան «մեծ խոսքերի» ուղղակի բացատրությամբ, վորքան դրանց դեհեկացումով.—դիտական սոցիալիզմը դադարեց ամբողջական հեղափոխական թեորիա լինելուց, այլ փոխարկվում եր մի խառնուրդի, վորին «ազատ կերպով» հեղուկներ էին ավելացնում դեմոկրատական ամեն մի նոր դասակարգից. «դասակարգային պայքար» լոզունգն առաջ չեր հրում՝ դեպի ավելի ու ավելի լայն, ավելի ու ավելի յեռանդուն գործունեություն, այլ հանդստացման միջոց եր ծառայում, վորովհետև չե՞ վոր «ռուսական պայքարն անխզելի կերպով կապված է քաղաքականի հետ». կուսակցության դաղափարը չեր ծառայում վորպես կոչ հեղափոխականների մարտական կազմակերպության ստեղծման, այլ արդարացնում եր ինչ-վոր «հեղափոխական դրասենյակամոլության» և «դեմոկրատական» ձևեր խաղալու յերեխայական գործը։

Ցերը և վերջանում յերրորդ շրջանը և սկսվում չորրորդը (վոր համենայն դեպս արդեն շատ նշաններից նախադուշակվում է),—մենք չգիտենք։ Պատմության բնագավառից մենք այստեղ անցնում ենք ներկայի, մասամբ ապագայի բնագավառը։ Բայց մենք հաստատապես հավատում ենք, վոր չորրորդ շրջանը կտանի դեպի մարանչող մարք-

*) Ցես նմանապես կարող էի պատասխանել գերմանական առածով—Den Sack schlägt man, den Esel meint man, կամ ռուսերեն՝ кошку бьют, невестке поветки дают (կո՛ւշ, քեզ կասեմ, կուլա՛, դու հասկացիր)։ Միայն «Рабочее Дело»-ն չեր, այլ պրակտիկների և թեորետիկների լայն մասսան եր տարվում մոդայական «քննադատությամբ», խճճվում տարերայնության հարցում, մեր քաղաքական և կազմակերպական խնդիրների սոցիալ-դեմոկրատական ըմբռնումից թեքվում դեպի տրեդ-յունիոնիստականը։

սիզմի ամրացումը, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատիան ճգնաժամից ամրապնդված և առնացած դուրս կդա, վոր սոցրաուենիտների արի-երդարդին «հերթափոխի» կդա սմենահեղափոխական դասակարդի իրոք առաջավոր ջոկատը:

Այդպիսի «հերթափոխի» կոչի իմաստով և ի մի ամփոփելով ամբողջ վերև շարադրվածը, մենք կարող ենք ի՞նչ անել հարցին տալ կարճ պատասխան.

Լիկվիդացիայի յենթարկել յերրորդ շրջանը:

Հավելված

«ИСКРА»-Ն «РАБОЧЕЕ ДЕЛО»-ՅԻ ՀԵՏ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Մեզ մնում է ուրվագծել այն տակտիկան, վոր ընդունել և հետևողականորեն անց է կացրել «Искра»-ն «Рабочее Дело»-յի հետ ունեցած կազմակերպական հարաբերությունների ընթացքում: Այս տակտիկան արդեն լիովին արտահայտված է «Искра»-յի № 1-ում՝ «Ռուս. սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան միության պառակտման» մասին հոդվածում*): Մենք միանդամից կանդնեցինք այն տեսակետի վրա, վոր իսկական «Արտասահմանյան ռուսական սոցիալ-դեմոկրատների միությունը», վորին մեր կուսակցության առաջին համագումարն ընդունեց վորպես կուսակցության արտասահմանյան ներկայացուցիչ, պառակտվել է յերկու կազմակերպության.—վոր կուսակցության ներկայացուցչության հարցը մնում է բաց, թեև միայն ժամանակավորապես և պայմանականորեն այն կերպ է լուծվել, վոր փարիզյան միջազգային կոնդրեսում մշտական միջազգային սոցիալիստական բյուրոյի մեջ Ռուսաստանից ընտրվել է յերկու անդամ, պառակտված Միության յուրաքանչյուր մասից մեկական անդամ: Մենք հայտարարեցինք, վոր քան եղության «Раб. Дело»-ն իրավացի չէ, մենք վճռականապես սկզբունքային տեսակետից «Աշխատանքի Ազատագրություն» խմբի կողմն անցանք, բայց միևնույն ժամանակ հրաժարվեցինք մտնել պառակտման մանրամասնության մեջ և նշեցինք Միության մատուցած ծառայությունը զուտ պրակտիկ աշխատանքի բնագավառում**):

*) Տե՛ս Ցերկ., ռուս. հրատ. հ. IV, էջ 65: Խմբ.:

**) Պառակտման այսպիսի գնահատության հիմքն ել կազմում վո՛չ միայն գրականության հետ ծանոթանալը, այլև այն տվյալները, վոր հավաքել ելին արտասահմանում մեր կազմակերպության այնտեղ յեղած անդամներից միքանիսը:

Այսպիսով մեր դիրքը վորոշ չափով սպասողական եր։ Մենք պիջում արինք ռուսական սոցիալ-դեմոկրատների մեծամասնության շրջանում տիրապետող այն կարծիքին, թե «Միության» հետ ձեռք-ձեռքի տված կարող են աշխատել նաև եկոնոմիզմի ամենավճռական թշնամիները, վորովհետև «Միությունը» բավմիցս հայտարարել եր, թե սկզբունքով համաձայն է «Աշխատանքի Ազատագրություն» խմբի հետ, և թե, իբր, ինքնուրույն դեմքի հավակնություն չունի թեորիայի և պրակտիկայի արմատական հարցերում։ Մեր բռնած դիրքի ճշտությունը կողմնակի կերպով հաստատվեց նրանով, վոր «Искра»-յի առաջին համարը լույս տեսնելու հետ համարյա միաժամանակ (դեկտեմբեր 1900 թ.) «Միությունից» անջատվեցին յերեք անդամ, վորոնք այսպես ասած «նախաձեռնողների խումբ» կազմեցին և դիմեցին— 1. «Искра»-յի կազմակերպության արտասահմանյան բաժնին, 2. «Սոցիալ-դեմոկրատ» հեղափոխական կազմակերպությանը և 3. «Միությանը»՝ առաջարկելով իրենց միջնորդությունը, հաշտության բանակցություններ վարելու գործում։ Առաջին յերկու կազմակերպությունները միանգամից պատասխանեցին համաձայնությամբ, իսկ յերրորդը—մերժումով։ Ճիշտ է, յերբ մի հոտոր շարադրեց այս փաստերն անցյալ տարվա «միավորող» համագումարում, «Միության» վարչության մեկ անդամը հայտնեց, թե իրենց մերժումն առաջացել եր բացառապես նրանից, վոր «Միությունը» դեռ չեր նախաձեռնողների խմբի կողմից։ Իմ պարտքը համարելով այս բացատրությունը բերելը, յես այնուամենայնիվ իմ կողմից չեմ կարող չնկատել, վոր այդ անբավարար եմ համարում։ Իմանալով յերկու կազմակերպությունների բանակցելու համաձայնության մասին, «Միությունը» կարող եր դիմել նրանց նաև մի ուրիշ միջնորդի միջոցով կամ թե անմիջականորեն։

1901 թվի գարնանը «Р. Дело»-յի դեմ ուղղակի բանավեճով հանդես յեկավ թե՛ «Заря»-ն (№ 1, ապրիլ), թե՛ «Искра»-ն (№ 4, մայիս)։ Վերջինս առանձնապես հարձակվում եր «Р. Дело»-յի «Պատմական շրջադարձի» վրա, վորը («Р. Дело»-ն) իր ապրիլյան թերթիում, հետևապես, գարնան անցքերից հետո արդեն, անկայունություն յերևան բերեց տեսորով և «արյունոտ» կոչերով տարվելու նկատմամբ։ Չնայած այս բանավեճին, «Միությունն» իր համաձայնությունը հայտնեց հաշտության բանակցությունները նորոգելուն՝ «հաշտարարների» նոր խմբի միջոցով։ Վերոհիշյալ յերեք կազմակերպությունների ներկայացուցիչների նախնական կոնֆերենցիան կայացավ հունիսին և ամենամանրամասն «սկզբունքային համաձայնության» հիման վրա պայմանագրի նախագիծ մշակեց, վոր «Միությունը» տպեց «Два с'езда» բրոշյուրում, իսկ Լիգան՝ «Документы об'единительного с'езда» բրոշյուրում։

Այս սկզբունքային համաձայնության (կամ հունիսյան կոնֆերենցիայի բանաձևերի, ինչպես հաճախ անվանում են այդ) բովանդակությունն ամենակատարյալ պարզությամբ ցույց է տալիս, վոր մենք միացման անհրաժեշտ պայման ենք դրել ընդհանրապես ոպորտունիզմի և մասնավորապես ռուսական ոպորտունիզմի բոլոր և ամեն տեսակ արտահայտությունների ամենավճռական բացատրումը։ «Մենք մերժում ենք,—ասում է 1-ին կետը,—պրոլետարիատի դասակարգային պայքարի մեջ ոպորտունիզմ մտցնելու բոլոր փորձերը, փորձեր, վորոնք արտահայտվում են այսպես ասած եկոնոմիզմի, բերնշտայնականության, միլյերանիզմի և այլնի մեջ»։ «Սոցիալ-դեմոկրատիայի գործունեության շրջանի մեջ է մտնում... իդեական պայքարը հեղափոխական մարքսիզմի բոլոր հակառակորդների դեմ» (4,c)։ «Կազմակերպական-ագիտացիոն գործունեության բոլոր վոլորտներում սոցիալ-դեմոկրատիան վոչ մի բոպե չպետք է աչքաթող անի ռուսական պրոլետարիատի մերձավորագույն խնդիրը—ինքնակալության տապալումը» (5,a),... «ագիտացիա վո՛չ միայն վարձու աշխատանքի՝ կապիտալի դեմ ունեցած ամենորյա պայքարի հողի վրա» (5, b),... «չընդունելով... զուտ տնտեսական պայքարի և մասնավոր քաղաքական պահանջների համար մղվող պայքարի ստադիան» (5,c),... «չարժման համար կարևոր ենք համարում այն հոսանքների քննադատությունը, վորոնք չարժման ստորին ձևերի տարրականությունն ու... նեղ սահմանափակվածությունը... սկզբունքի աստիճանի յեն բարձրացնում» (5, d)։ Նույնիսկ միանգամայն կողմնակի մարդը, վոր քիչ թե շատ ուշադրությամբ կարդացել է այդ բանաձևերը, դրանց ձևակերպումից իսկ արդեն կտեսնի, վոր դրանք ուղղված են այն մարդկանց դեմ, վորոնք ոպորտունիստ և «եկոնոմիստ» են յեղել, վորոնք թեկուզ մի բոպեյով մոռացել են ինքնակալությունը տապալելու խնդիրը, վորոնք ընդունել են ստադիաների թեորիան, սկզբունքի աստիճանի յեն բարձրացրել նեղ ծահմանափակվածությունը և այլն։ Ցավ ով թեկուզ քիչ թե շատ ծանոթ է «Աշխատանքի Ազատագրություն» խմբի, «Заря»-յի և «Искра»-յի մղած բանավեճին՝ ընդդեմ «Р. Дело»-յի, նա մի բոպե անդամ չի տարակուսի, վոր այս բանաձևերը կետ առ կետ մերժում են հենց այն մոլորությունները, վորոնց մեջ է ընկել «Рабочее Дело»-ն։ Ուստի յերբ «միավորող» համագումարում «Միության» անդամներից մեկը հայտնեց, վոր «Р. Дело»-յի № 10-ի հոդվածները հետևանք են վո՛չ թե «Միության» նոր «պատմական շրջադարձի», այլ բանաձևերի չափազանց «վերացականության»*),—ապա մի հոտոր լիակատար իրավունք ունի ծիծաղելու դրա վրա։ Բանաձևերը վո՛չ միայն վերացական

*) Այս պնդումը կգտնվեր է «Два с'езда»-յի մեջ, էջ 25։

չեն, պատասխանեց նա,—այլ անհավատալի չափով կոնկրետ են. դրանց վրա մի հայացք գցելը բավական է՝ տեսնելու, վոր այստեղ ինչ-վոր «մեկին վորսացել են»:

Այս վերջին արտահայտությունը համադրմարում բնորոշ մի մի-ջադեպի առիթ ծառայեց: Մի կողմից, Բ. Կրիչևսկին բռնեց «վորսալ» բառի պրչից, վճռելով, թե դա—բերնից թռցված է, վոր մատնում է մեր ունեցած վատ մտադրությունը («թակարդ դնել»), և պաթետիկ կերպով բացականչեց. «Ապա ո՞ւմ, ո՞ւմ են այստեղ վորսացել»:—«Ահա, իրոք, ո՞ւմ», հեղնանքով հարցրեց Պլեխանովը:—«Ցես կողնեմ ընկեր Պլեխանովի անկրահողությանը,—պատասխանեց Բ. Կրիչևսկին,—յես կբացատրեմ նրան, վոր այստեղ վորսացել են «Рабочее Дело»-յի խմբագրությանը (ընդհանուր քրքիջ): Բայց մենք թույլ չտվի՞նք մեզ բռնել» (նկատողություններ ձախից. ավելի ևս վատ ձեզ համար): Մյուս կողմից, «Պայքար» («Борьба») խմբի (հաշտարարների խմբի) անդամը, խոսելով «Միության»՝ բանաձևերի նկատմամբ արած ուղղումների դեմ և ցանկանալով պաշտպանել մեր հռետորին, հայտարարեց, թե «վորսացին» արտահայտությունը, ակներև է, վոր անտպասելիորեն դուրս պրծավ բանավեճի տաք ժամանակ:

Ինչ վերաբերում է ինձ, ապա յես կարծում եմ, վոր այսպիսի «պաշտպանությունը» չի փրկի այն հռետորին, վորը գործ է ածել քննվող արտահայտությունը: Ցես կարծում եմ, վոր «ինչ-վոր մեկին վորսացել են» բառերը «կատակով են ասված, բայց լուրջ են մտածված»: Մենք շարունակ մեղադրում էյինք «Р. Дело»-յին անկայունության, յերերումների մեջ, և այդ պատճառով էլ, բնական է, պարտավոր էյինք ջանալ նրան բռնելու, վորպեսզի այսուհետև նրա յերերումներն անկարելի դարձնենք: Վատ դիտողության մասին այստեղ խոսք անգամ չեր կարող լինել, վորովհետև խնդիրը սկզբունքային անկայունության մասին եր: Ցեվ մենք կարողացանք «բռնել» «Միությանն» այնքան ընկերաբար*), վոր հունիսյան բանաձևերին ստորագրեց ինքը Բ. Կրիչևսկին և դեռ «Միության» վարչության մեկ անդամն էլ:

«Р. Дело»-յի № 10-ի հոդվածները (մեր ընկերներն այս համարը տեսան միայն այն ժամանակ, յերբ յեկել էյին համադրմար, նիստերն սկսվելուց միքանի որ առաջ) պարզ ցույց տվին, վոր ամառվանից

*) Այսինքն՝ մենք ասացինք հունիսյան բանաձևերի ներգծության մեջ, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատիան ամբողջովին միշտ էլ կանգնել է «Աշխ. Ազատագրություն» խմբի սկզբունքների հողի վրա և վոր «Միության» մատուցած ծառայությունն առանձնապես նրա հրատարակչական և կազմակերպական գործունեությունն եր: Այլ խոսքով՝ մենք լիակատար պատրաստակամություն արտահայտեցինք ամբողջ անցյալը մոռացության տալ և «Միության» մեր ընկերների աշխատանքի ոգտակարությունը (գործի համար) ընդունել այն պայմանով, վոր միանգամայն

մինչև աշուն «Միության» մեջ նոր շրջադարձ է կատարվել. եկոնոմիստները նորից են գերակշռություն ստացել, և խմբագրությունը, հնազանդ ամեն մի «հոսանքի», նորից է ձեռնարկել պաշտպանելու «ամենամոլի բերնշտայնականներին», և «քննադատության ազատությունը», սկսել է պաշտպանել «տարերայնությունը» և Մարտինովի բերանով քարոզել մեր քաղաքական ներգործության վոլորտը «նեղացնելու թեորիան» (նկատի ունենալով իբր այն, թե բարդացել է հենց ինքը ներգործությունը): Մի անգամ ևս հաստատվեց Պարվուսի դիպուկ նկատողությունը, թե ոպորտունիստին դժվար է բռնել՝ ինչ ֆորմուլայով էլ վոր ուզում է լինի. նա հեշտությամբ կստորագրի ամեն մի ֆորմուլայի տակ և հեշտությամբ հետ կկանգնի նրանից, վորովհետև ոպորտունիզմը կայանում է հենց փոքրիշատե վորոշ և հաստատուն սկզբունքների բացակայության մեջ: Այսոր ոպորտունիստները մերժեցին ոպորտունիզմ մտցնելու ամեն տեսակ փորձերը, մերժեցին ամեն տեսակ նեղ սահմանափակվածությունը, հանդիսավորապես խոստացան «վոչ մի բոպե չմոռանալ ինքնակալության տապալման մասին», մղել «ագիտացիա վոչ միայն վարձու աշխատանքի՝ կապիտալի դեմ ունեցած ամենորյա պայքարի հողի վրա» և այլն և այլն: Իսկ վաղը նրանք փոխում են արտահայտվելու յեղանակը և դառնում են հնին՝ տարերայնության, դորշ, ընթացիկ պայքարի առաջընթացի, շոշափելի արդյունքներ խոստացող պահանջների դրվատման անվան տակ և այլն: Շարունակելով պնդել, թե № 10-ի հոդվածներում «Միությունը» կոնֆերենցիայի նախագծի ընդհանուր սկզբունքներից վոչ մի հերետիկոսական նահանջ չի տեսել և չի տեսնում» («Два с'езда», եջ 26), «Միությունը» սրանով յերևան է հանում միմիայն տարաձայնությունների եությունը հասկանալու իր լիակատար անընդունակությունը կամ հասկանալ չցանկանալը:

«Р. Д.»-յի № 10-ից հետո մեզ մնում եր միայն մի փորձ անել. ընդհանուր դիսկուսիա սկսել, վորպեսզի համոզվեյինք, թե արդյո՞ք ամբողջ «Միությունը» համերաշխ է այս հոդվածների և իր խմբագրության հետ: «Միությունն» առանձնապես անբավական է մեզնից հենց դրա համար, մեղադրելով մեզ «Միության» մեջ պառակտում

դադարեցվեն այն յերերումները, վորոնց մենք հետապնդում էյինք «վորսալով»: Ամեն մի անաչառ մարդ, կարդալով հունիսյան բանաձևերը, հենց միայն այսպես էլ կհասկանա դրանք: Իսկ յեթե «Միությունն» այժմ, այն բանից հետո, յերբ նա խզում առաջ բերեց դեպի եկոնոմիզմն արած իր նոր շրջադարձով (№ 10-ի հոդվածներում և ուղղումներում), նրա մատուցած ծառայությունների մասին մեր ասած վերոհիշյալ խոսքերի համար մեզ հանդիսավորապես մեղադրում է անինշտությանի մեջ («Два с'езда», եջ 30), ապա այդպիսի մեղադրանքն իհարկե կարող է միայն ժպիտ առաջացնել:

սերմանելու փորձի մեջ, ուրիշի գործին խառնվելու մեջ և այլն: Մեղադրանքները բացահայտորեն անհիմն են, վորովհետև այնպիսի ընտրովի խմբագրության պայմաններում, վորն ամենաթեթև քամուց անդամ «շուռ է գալիս», ամեն ինչ կախված է հենց քամու ուղղությունից, և մենք վորոշում եյինք այս ուղղությունը միակ նիստերում, վորոնցում, բացի միանալու համար հավաքված կազմակերպությունների անդամներից, վոչ վոք չկար: «Միության» անունից հունիսյան բանաձևերի մեջ ուղղումներ մտցնելը մեզնից խլեց համաձայնության գալու հույսի վերջին նշույլն անդամ: Ուղղումները փաստաթղթերով վկայում եյին դեպի եկոնոմիզմը նոր շրջադարձ կատարվելու մասին և այն մասին, վոր «Միության» մեծամասնությունը համերաշխ է «Ռ. Դ.»-յի № 10-ի հետ: Ոպորտունիզմի արտահայտումների շրջանից ընդվում եր «այսպես կոչված եկոնոմիզմը» (իբր թե այս յերեք բառերի «իմաստի անորոշության պատճառով»,—թեև այսպիսի պատճառաբանությունից բղխում է լայն չափերով տարածված մոլորության եությունն ավելի ճշգրտորեն վորոշելու անհրաժեշտությունը միայն), ընդվում եր նաև «միլյերանիզմը» (թեև Բ. Կրիչևսկին պաշտպանում եր դա և՛ «Ռ. Դ.»-յում № 2—3, եջ 83—4, և՛ ավելի ուղղակի կերպով՝ «Vorwärts»-ում*): Չնայած այն բանին, վոր հունիսյան բանաձևերը վորոշակիորեն մատնանշում եյին սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը՝ «ղեկավարել պրոլետարիատի պայքարի ամեն տեսակ արտահայտություններն ընդդեմ քաղաքական, տնտեսական և սոցիալական ճնշման բոլոր ձևերի», դրանով իսկ պահանջելով, վոր պայքարի այս բոլոր արտահայտությունների մեջ պլանաչափություն ու միասնություն մտցվի,—չնայած դրան, «Միությունն» ավելացնում եր նաև միանգամայն ավելորդ բառեր, թե «տնտեսական պայքարը մասսայական շարժման հզոր խթան և հանդիսանում» (ըստինքյան այս բառերն անվիճելի յեն, բայց նեղ «եկոնոմիզմի» դոյության պայմաններում դրանք չեյին կարող կեղծ մեկնաբանությունների տեղիք չտալ): Դա դեռ քիչ է. հունիսյան բանաձևերի մեջ «քաղաքականության» ուղղակի նեղացում եր մտցվում, ինչպես «վոչ մի բոպե» (չմոռանալ ինքնակալությունը տապալելու նպատակի մասին) խոսքերը վերացնելով, նույնպես և հետևյալ խոսքերն ավելացնելով, թե «տնտեսական պայքարը ամենից ավելի լայն չափով կերառվող միջոցն է մասսաներին ակտիվ քաղաքական պայքարի մեջ քաշելու համար»: Հասկանալի յե, վոր այսպիսի ուղղումներ մտցնելուց հետո մեր կողմից բոլոր հոսանքները

*) Այս առթիվ «Vorwärts»-ում բանավեճ սկսվեց նրա այժմյան խմբագրության, Կաուցկու և «Заря»-յի միջև: Մենք չենք ղանա ռուս ընթերցողներին ծանոթացնելու այդ բանավեճի հետ:

մեկը մյուսի հետևից սկսեցին հրաժարվել խոսքից, միանգամայն անուղղակի գտնելով հետագա բանակցություններ վարելն ա՛յն մարդկանց հետ, վորոնք նորից շուռ են գալիս դեպի եկոնոմիզմը և տատանման աղատություն են ապահովում իրենց համար:

«Հենց այն, ինչ վոր Միությունն ապագա համաձայնության ամրապնդության sine qua non*) պայման եր համարում, այսինքն՝ «Ռ.Դ.»-յի ինքնուրույն կերպարանքի և նրա ինքնավարության պահպանումը,—հենց այդ էլ «Искра»-ն դայթակղության քար եր համարում համաձայնության համար» («Два с'езда», եջ 25): Դա շատ անրում համաձայնության համար» («Два с'езда», եջ 25): Դա շատ անճշգրիտ է: «Ռ. Դելո»-յի ինքնավարության վրա մենք յերբեք ձեռք չենք բարձրացրել**): Նրա կերպարանքի ինքնուրույնությունը մենք խոսկապես անպայմանորեն մերժում եյինք, յեթե դրա տակ հասկանանք «ինքնուրույն կերպարանք» թեորիայի և տակտիկայի սկզբունքային հարցերում. հունիսյան բանաձևերն իրենց մեջ կերպարանքի այսպիսի ինքնուրույնության անպայման բացառում են պարունակում հենց, վորովհետև այս «կերպարանքի ինքնուրույնությունը գործնականում մի՞շտ, կրկնում ենք, ամեն տեսակի տատանումներ է նշանակել և այդ տատանումներով մեղանում տիրապետող ու կուսակցական տեսակետից անտանելի ցրվածության աղակցություն ցույց տալ է նշանակել: № 10-ի հոդվածներով և «ուղղումներով» «Ռ. Դելո»-ն պարզ ցույց տվեց հենց կերպարանքի այս ինքնուրույնությունը պահպանելու իր ցանկությունը, իսկ այսպիսի ցանկությունը բնականաբար և անխուսափելիորեն տարավ դեպի խղում և կռվի հայտարարում: Բայց մենք բոլորս միշտ պատրաստ եյինք ընդունելու «Ռ. Դ.»-յի «ինքնուրույն կերպարանքը»՝ նրան վորոշ դրական ֆունկցիաների վրա կենտրոնացնելու իմաստով: Այս ֆունկցիաների ճիշտ բաշխումն ըստինքյան առաջ է դալիս. 1. դիտական ժուռնալ, 2. քաղաքական լրագիր և 3. հանրամատչելի ժողովածուներ ու հանրամատչելի բրոշյուրներ: Այսպիսի բաշխմանը «Ռ. Դ.»-յի կողմից համաձայնվելը միայն կապացուցեր, թե նա անկեղծ ցանկություն ունի վերջնականապես մաքրելու հաշիվները այն մոլորությունների հետ, վորոնց դեմ են ուղղված հունիսյան բանաձևերը, այսպիսի բաշխումը միայն կվերացներ բաղխումների ամեն տեսակի հնարավորությունը և իրոք կապահովեր համաձայնության հաստատունությունը և միևնույն ժամանակ մեր շարժման նոր վերելքի և նրա նոր հաջողությունների համար հիմք կծառայեր:

*) — բացարձակ անհրաժեշտ: Խմբ.:

**) Յեթե ինքնավարության ճնշում չհամարենք միացյալ կազմակերպությունների ընդհանուր դերադույն խորհուրդ հիմնելու առնչությամբ տեղի ունեցած այն խմբագրական խորհրդակցությունները, վորոնց տվեց իր համաձայնությունը հունիսին նաև «Рабочее Дело»-ն:

Այժմ վոչ մի ռուսական սոցիալ-դեմոկրատ չի կարող արդեն կասկածել այն բանում, վոր հեղափոխական ուղղության կապերի վերջնական խզումն ոպորտունիստական ուղղության հետ վո՛չ թե «կազմակերպական» վորևե հանգամանքներից և առաջացել, այլ ոպորտունիզմի ինքնուրույն կերպարանքն ամրապնդելու և Կրիչևսկիների ու Մարտինովների դատողություններով մտքերի մեջ խառնաչփոթություն մրցընել չարունակելու հենց այն ցանկությունից, վոր ունեն ոպորտունիստները:

★

ՈՒՂՂՈՒՄ «Ի՞ՆՉ ԱՆԵԼ»-Ի՞Ն

«Նախաձեռնողների խումբը», վորի մասին յես պատմում եմ «Ի՞նչ անել» բրոշյուրում, եջ 141*), խնդրում է ինձ հետևյալ ուղղումը մրցընել արտասահմանյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին հաշտեցնելու փորձում ցույց տված իր մասնակցության չարադրանքի մեջ. «Այս խմբի յերեք անդամներից միայն մեկը դուրս յեկավ «Միությունից» 1900 թվի վերջին, իսկ մնացածները՝ 1901 թվին, միայն այն բանից հետո, յերբ նրանք համոզվեցին, վոր անկարելի յե «Միությունից» համաձայնություն ստանալ «Искра»-յի արտասահմանյան կազմակերպության և «Սոցիալ-Դեմոկրատ հեղափոխական կազմակերպության» հետ կոնֆերենցիա գումարելու նկատմամբ,—վորի մեջ եր հենց կայանում «Նախաձեռնողների խմբի» առաջարկը: Այս առաջարկը «Միության» վարչությունն սկզբում մերժեց, կոնֆերենցիայից իր հրաժարվելը պատճառաբանելով այն անձերի «անձեռնհասությամբ», վորոնք մտնում են միջնորդ հանդիսացող «Նախաձեռնողների խմբի» կազմի մեջ, ըստվորում ցանկություն հայտնեց «Искра»-յի արտասահմանյան կազմակերպության հետ անմիջական հարաբերությունների մեջ մտնելու: Սակայն շուտով «Միության» վարչությունը տեղեկացրեց «Նախաձեռնողների խմբին», թե նա «Искра»-յի առաջին համարը լույս տեսնելուց հետո, վորի մեջ դիտողություն ե տրված «Միության» պառակտման մասին, փոխել ե իր վորոշումը և չի ուզում «Искра»-յի հետ հարաբերությունների մեջ մտնել: Դրանից հետո ի՞նչպես բացատրել «Միության» վարչության անդամի այն հայտարարությունը, թե «Միության»՝ կոնֆերենցիայից հրաժարվելը առաջացավ բացառապես այն բանից, վոր նա դոհ չեր «Նախաձեռնողների խմբի» կազմից: Ճիշտն ասած, անհասկանալի յե նաև «Միության» վարչության՝ կոնֆերենցիային համաձայնելն անցյալ տարվա

*) Տե՛ս ներկա հրատարակությունը, եջ 205: Խմբ.:

հունիսին. չե՞ վոր «Искра»-յի առաջին համարի դիտողությունն իր ուժի մեջ եր մնում, իսկ «Искра»-յի «բացասական» վերաբերմունքը դեպի «Միությունը» և՛ ավելի պարզ հանդես յեկավ «Заря»-յի առաջին գրքույկի մեջ և «Искра»-յի 4-րդ համարում, վորոնք լույս եյին տեսել նախքան հունիսյան կոնֆերենցիան»:

«Искра» № 19, 1 ապրիլի 1902 թ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1 «Искра» — հեղափոխական մարքսիստների առաջին համառուսական քաղաքական լրագիրը, ստեղծված Լենինի կողմից արտասահմանում, վորը դաղտնի ուղարկվում եր Ռուսաստան: Առաջին համարը լույս տեսավ 1900 թ. դեկտեմբերին: Լենինյան «Искра»-ն անողոք պայքար եր մղում եկոնոմիզմի — ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած ոպորտունիստական հոսանքի և բանվոր դասակարդին թշնամական այլ ուղղությունների դեմ: «Искра»-ն նախապատրաստեց կուսակցության II համագումարը: «Искра»-յի խմբագրության ներսում Լենինը պայքար եր մղում խմբագրության մնացած անդամների — Պլեխանովի, Մարտովի, Ակսելրոդի, Զասուլիչի, Պոտրեսովի ոպորտունիստական տատանումների դեմ, վորոնք ավելի ուշ դլխավորեցին մենշևիզմը: 1903 թվականի աշնանը, այն դանից հետո, յերբ Պլեխանովն անցավ մենշևիկների կողմը, Լենինը դուրս յեկավ «Искра»-յի խմբագրության կազմից: Լրագիրը, պահպանելով իր նախկին անունը, 52-րդ համարից սկսած դարձավ մենշևիկների որդանը: Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի մեջ Լենինյան «Искра»-յի դերի մասին ասվում է. ««Искра»-յի առաջին համարները լույս ընծայելը (1900—1901 թվականներ) հանդիսացավ անցում դեպի մի նոր շրջան — անջատ անջատ խմբերից ու խմբակներից Ռուսաստանի միասնական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն իսկապես կազմելու շրջանը»: — 5:

2 «Рабочее дело» — «եկոնոմիստների» արտասահմանյան որդան, լույս եր ընծայվում «Ռուս սոցիալ-դեմոկրատների միության» կողմից արտասահմանում՝ Կրիչևսկու և Մարտինովի խմբագրությամբ: Լույս տեսավ 1899 թ. ապրիլից մինչև 1902 թ. փետրվարը: — 5:

3 «Рабочая газета» — Կիևի սոցիալ-դեմոկրատների լրագիրը, վորը լույս եր տեսնում 1897 թվականին և վորը ՌՍԴՐԿ I համագումարի կողմից հայտարարվեց կուսակցության կենտրոնական որդան: Լույս տեսավ ընդամենը յերկու համար: Նախապատրաստվող 3-րդ համարի համար Լենինը 1899 թվականին դրեց մի շարք հոդվածներ (տե՛ս Ցերկեր, հ. II, եջ 487—504), բայց լրագրի հրատարակումը վերսկսել չհաջողվեց: — 6:

4 Տրեդ-յունիոններ — անդլիական արհեստակցական միություններ, վորոնք ծագել են XIX դարի 50-ական թվականներին. բաղկացած եյին առավելապես վարպետ, բարձր վարձատրվող բանվորներից: Դտնվելով բուրժուական առաջնորդների ազդեցության տակ, տրեդ-յունիոնները հրաժարվեցին կապիտալիստների դասակարդի դեմ քաղաքական պայքար մղելուց և բանվորական շարժումը վերածեցին լիբերալ բուրժուազիայի կցորդի: — «Տրեդ-յունիոնները նույնիսկ սկզբունքորեն, կանոնադրության հիման վրա, բացառում են ամեն տեսակի քաղաքական գործողություն, հետևաբար նաև բանվոր դասակարդի, վորպես դասակարդի, ամեն մի մասնակցությունը ընդհանուր գործողությանը» (Ենգելս): Տրեդ-յունիոնիզմի դիրքերի վրա եյին կանգնած նաև ռուսական «եկոնոմիստները»: Տրեդ-յունիոնիզմ նշանակում է «բանվորների դավաճանական ստրկացում բուրժուազիայի կողմից» (Լենին): — 7:

5 «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միությունը» արտասահմանում հիմնվել է «Աշխատանքի ազատագրություն» խմբի նախաձեռնությամբ և սկզբում գտնվում էր նրա ղեկավարության տակ:

«Աշխատանքի ազատագրություն» խումբը — առաջին ռուսական մարքսիստական կազմակերպություն, հիմնված 1883 թվականին Շվեյցարիայում՝ Գ. Վ. Պլեխանովի կողմից և Պ. Բ. Ակսելրոդի, Վ. Ի. Զասուլիչի, Լ. Գ. Դեյչի, Վ. Մ. Իգնատովի մասնակցությամբ: Խմբի ծառայությունն այն է, որ նա մեծ աշխատանք տարավ Ռուսաստանում մարքսիզմի գաղափարները տարածելու գծով: ՌՍԴԲԿ II համագումարից հետո խումբը դադարեցրեց իր գոյությունը:—9:

6 Կ.-Դ., կադետները — «սահմանադրական-դեմոկրատական կուսակցության» անդամներ, որ ծագեց 1905 թ.: Լենինն այդ կուսակցությանը 1906 թվականին տվեց այսպիսի բնութագիր. «Կադետները (Կ.-Դ. կամ «ժողովրդական ազատության կուսակցությունը») — լիբերալ-մոնարխիստական բուրժուազիայի գլխավոր կուսակցությունն է: Լիբերալ բուրժուաները տատանվում են ժողովրդի և ջարդարարների կառավարության միջև: Խոսքով՝ նրանք կառավարության դեմ են. գործով նրանք ամենից շատ վախենում են ժողովրդի պայքարից, գործով՝ նրանք ուզում են գործարք կնքել միապետության հետ, այսինքն՝ ջարդարարների հետ, ընդդեմ ժողովրդի»: Կադետները 1917 թ. հանդես եկան գալիս որպես հակահեղափոխության ղեկավար կուսակցություն, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո խորհրդային իշխանության դեմ ուղղված զինված պայքարի կազմակերպիչներն էին:

Բեզզգլավականներ — Ցե. Կոսկովայի, Ս. Պրոկոպովիչի, Վ. Բոգուչարսկու և ուրիշների կիսակադետական խմբի անդամներ, որ հրատարակում էր «Без заглавия» ժուռնալը և «Товарищ» լրագիրը (1906—1907 թ. թ.):—10:

7 Իսկրայական կազմակերպության պառակտումը տեղի ունեցավ II համագումարում՝ 1903 թվականին: Այդ համագումարում կուսակցությունը բաժանվեց երկու թևի՝ մարքսիստական—բոլշևիկյան և ոպորտունիստական—մենշևիկյան:—11:

8 Սոցիալիստ-հեղափոխականներ, կամ, կրճատ, եսերներ,—մանրբուրժուական, հակամարքսիստական կուսակցություն: Ծագել է XX դարի սկզբներին՝ կազմակերպված նարոդնիկական խմբերից: Անհատական տեռորի իր սխալ և վնասակար տակտիկայով այդ կուսակցությունն արգելակում էր բանվորների և գյուղացիների հեղափոխական ակտիվության զարգացմանը և խանգարում էր նրանց մասսայական պայքարին ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի: Եսերներն ակտիվորեն պաշտպանում էին բուրժուական ժամանակավոր կառավարությունը 1917 թվականին և պաշտպանում էին կալվածատերերի ու կապիտալիստների շահերը: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթությունից հետո նրանք տրոցկիստների ու բուխարինականների հետ դաշինք կնքած դավադրություններ էին սարքում ընդդեմ խորհրդային իշխանության, մահափորձեր էին կատարում հեղափոխության առաջնորդների կյանքի վրա և սպիտակ գվարդիականների ու ինտերվենտների հետ մեկտեղ փորձում էին վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը Ռուսաստանում:—11:

9 Այստեղ Լենինը նկատի ունի «Կուսակցության վերակառուցման մասին» իր հոդվածը (տե՛ս Ցերկեր, հ. VIII, էջ 373—381), զետեղված առաջին լեգալ բոլշևիկյան լրագիր «Новая Жизнь»-ի №№ 9, 13 և 14-ում, որը լույս էր տեսնում Պետերբուրգում 1905 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 3-ը: Լրագիրը փակվեց ցարական վոստիկանության կողմից:—13:

10 «Вперед»—առաջին բոլշևիկյան լրագիրը, որը լույս էր տեսնում Ժնևում 1905 թ. հունվար—մայիսին՝ Վ. Ի. Լենինի խմբագրությամբ: Այստեղ Լենինը նկատի ունի իր ծանոթագրությունը Վ. Վորովսկու հոդվածի առթիվ, որը (հոդվածը) պարզաբանում էր Լենինի տեսակետը տարբերությունների ու դիտակցականության հարցի առթիվ և որն ուղղված էր Պլեխանովի դեմ: Ծանոթագրությունը բովանդակությունը Լենինը շարադրում է ստորև, խոսելով ծրագրի հարցերի առթիվ Պլեխանովի հետ ունեցած վեճերի մասին: (Ծանոթագրությունը տպագրված է յերկերի VII հատորում, էջ 169):—15:

11 Տարերայնության և գիտակցականության հարաբերության մասին II համագումարի կողմից ընդունված՝ կուսակցության ծրագրի մեջ ասվում է այսպես. «Իբրև խնդիրը դնելով պրոլետարիատին ընդունակ դարձնել իր մեծ պատմական միսիան կատարելու, միջազգային սոցիալ-դեմոկրատիան պրոլետարիատին կազմակերպում է իբրև ինքնուրույն քաղաքական կուսակցություն, որը հակընդդեմ և կանգնած բոլոր բուրժուական կուսակցություններին, ղեկավարում է նրա դասակարգային պայքարի բոլոր արտահայտումները, նրա առաջ մերկացնում է չահագործողների չահերի անհաշտելի հակադրությունը չահագործվողների չահերին և նրան բացատրում առաջիկա սոցիալական հեղափոխության պատմական նշանակությունն ու անհրաժեշտ պայմանները»:—15:

12 Լոնդոնի համագումարը—ՌՍԴԲԿ V համագումարը, որը կայացավ 1907 թ. ապրիլ—մայիսին: Համագումարին բոլշևիկները ներկայացված էին 105 դելեգատով, մենշևիկները—97: Բոլշևիկների հետևից էին գնում նաև լեհական և լատիշական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների դելեգատները: Հետևանքն այն եղավ, որ բոլշևիկները համագումարում ունեցան կայուն մեծամասնություն: Համագումարը հավանություն տվեց բոլշևիկների քաղաքականությանը որակարգի բոլոր կարևոր բազուկ հարցերի առթիվ՝ բուրժուական կուսակցությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, արհմիությունների մասին յեղած հարցերի առթիվ և այլն:—17:

13 Շտուտգարտի կոնգրեսը (II Ինտերնացիոնալի) կայացավ 1907 թ. ոգոստոսին: Բոլշևիկները Լենինի գլխավորությամբ ակտիվ մասնակցություն էին ունենում կոնգրեսի աշխատանքներին, մեծ ազդեցություն գործելով միլիտարիզմի, արհմիությունների և այլնի մասին նրանց ընդունված վորոշումների ընույթի վրա:—17:

14 «Рабочая мысль»—լրագիր, ամենից ավելի հեռևողական և անկեղծ «եկոնոմիզմի» օրգանը, լույս էր տեսնում 1897 թ. հոկտեմբերից մինչև 1902 թ. դեկտեմբերը: Այդ լրագրի հայացքների քննադատությունը տես Լենինի «Попятное направление в русской социал-демократии» հոդվածի մեջ» (Ցերկեր, հ. II, էջ 529—556):—19:

15 Այստեղ և ստորև նկատի յեն առնվում ուսանողների և բանվորների ցույցերը մի շարք քաղաքներում, որ տեղի յեն ունեցել 1901 թվականի սկզբներին:—21:

16 Այստեղ թվարկվում են II Ինտերնացիոնալի կուսակցություններում պայքարող հեղափոխական և ոպորտունիստական հոսանքները: Լասսալյանականները—1863 թվականին Ֆ. Լասսալի կողմից հիմնված «Ընդհանուր գերմանական բանվորական միության» անդամներ, 1875 թվականին մտան գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ և կազմում էին նրա աջ թևը: Այզենախականները—գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներ, որ (կուսակցություն) հիմնեցին Վ. Լիբկնեխտը, Ա. Բեբելը և ուրիշները 1869 թ. Այզենախում: Պոսսիբիլիստները—ֆրանսական սոցիալիստական կուսակցության ոպորտունիստական թևը. գեդիստներ—նրա հեղափոխական թևը, որի գլուխ էր կանգնած Գեդը: Ֆաբիականներ—«Ֆաբիական ընկերություն», անգլիական լիբերալ ինտելիգենցիայի կազմակերպության անդամներ, որ հանդես էր գալիս սոցիալիզմի դրոշի տակ: Մինիստերիա-

լիստներ—բուրժուական կառավարություններին սոցիալիստների մասնակցության կողմնակիցներ։ Ֆրանսական սոցիալիստ Միլլերանը սոցիալիստներից առաջինը մտավ բուրժուական կառավարության կազմի մեջ։ Բերնշտայնականներ—գերմանական սոցիալ-դեմոկրատ Բերնշտայնի կողմնակիցներ, վորը «քննադատում» ու դուրս հանում եր մարքսիզմը, ամլացնում եր նրա հեղափոխական բովանդակությունը։ «Ռուս քննադատներ»—լեգալ մարքսիստներ,—Ստրուվե, Բուլգակով, Զրոկոպովիչ և ուրիշները, վորոնք դեմ եյին դուրս գալիս մարքսիզմին՝ լեգալ մամուլում։ Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիզմը 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի սկզբներին վերածվեց սոցիալ-շովինիզմի, յերբ սոցիալիստական կուսակցությունների առաջնորդներն աննշան բացառությամբ բացահայտորեն անցան բուրժուազիայի կողմը։ Բոլշևիկներն ամեն ժամանակ անհաշտ պայքար եյին մղում ռուսական և միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած բոլոր ոպորտունիստական հոսանքների դեմ։—30։

17 Ֆր. Ենգելսի առաջաբանը Կ. Մարքսի «Լուի Բոնապարտի բրյումերի 18-ը» բրոշյուրի առթիվ տես հետևյալ գրքում. Կ. Մարքս, Ընտիր յերկեր յերկու հատորում, հ. II, եջ 230—231, 1938 թ.—31։

18 «Заря»—մարքսիստական թեորետիկական ժուռնալ, վորը լույս եր տեսնում 1901—1902 թ. թ. Շտուտգարտում (Գերմանիա)՝ Լենինի, Պլեխանովի, Ակսելրոդի, Մարտովի, Պոտրեսովի և Զասուլիչի խմբագրությամբ։ Լույս տեսավ յերեք գիրք (4 համար)։—33։

19 Բացառիկ որենքը սոցիալիստների դեմ հրատարակվեց գերմանական կառավարության կողմից 1878 թվականին. վերացվեց 1890 թվականին։—35։

20 Կաթեդեր-սոցիալիզմ—բուրժուական քաղաքական տնտեսության ուղղություններից մեկը, վորը ծաղել է XIX դարի յերկրորդ կեսին բուրժուական պրոֆեսուրայի միջավայրում։ Հեղափոխական բանվորական շարժման աճումից, հատկապես 1871 թվականի Փարիզյան կոմունայից վախեցած բուրժուական տնտեսագետները քարոզում եյին սոցիալական ռեֆորմների կիրառման անհրաժեշտությունը և պետության միջամտությունը տնտեսական գործունեության մեջ։ Այսպիսի ճանապարհով կաթեդեր-սոցիալիստները փորձում եյին մեղմացնել և բթացնել դասակարգային հակասությունները։ Այդ հոսանքի ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներն եյին Շմոլլերը, Բրենտանոն, Զոմբարտը և ուրիշները։—35։

21 Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի համագումարը Հաննովերում տեղի ունեցավ 1899 թվականին, Լյուբեկում—1901 թվականին։—36։

22 Այստեղ նկատի յե առնված նարոդնիկական աշխարհայացքը։—38։

23 Այս ժողովածուի մեջ զետեղվել եյին Լենինի (Տուլին կեղծանունով), Պլեխանովի, Ստրուվեյի և ուրիշների հոդվածները։—40։

24 «Credo» («Կրեդո»)—մանիֆեստ, վորը շարադրում եր «եկոնոմիստների» հայացքները։—41։

25 «Vademecum» (բառացի՝ ուղեցույց։—խմբ.)—«Рабочее Дело»-յի խմբագրության համար—Պլեխանովի կազմած՝ փաստաթղթերի ժողովածու «եկոնոմիզմի» մասին։—42։

26 Նկատի յեն առնվում առաջին հերթին սոցիալիստ-հեղափոխականները։—47։

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ակսելրոդ, Պ. Բ. (1850—1928)—«Աշխատանքի ազատագրություն» խմբի անդամ և «Искра»-յի խմբագիրներից մեկը։ Կուսակցության II համագումարում հարեց մենշևիկներին։ Ռեակցիայի տարիներին գլխավորում եր «լիկվիդատորություն»։ Բոլշևիզմի և խորհրդային իշխանության թշնամին։—Տե՛ս 1, 18 ծանոթագրությունները և 47, 67, 87, 98, 113 եջերը։

Աուեր, Ի.—գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ակնառոր անդամ, կաշեգործ-բանվոր, ավելի ուշ դարձավ ոպորտունիստ։—154։

Բակունին, Մ. Ա. (1814—1871)—անարխիստ, Մարքսի չարամիտ հակառակորդը, կազմակերպող աշխատանք եր տանում I Ինտերնացիոնալում։—49։

Բեբել, Ավգուստ (1840—1913)—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և II Ինտերնացիոնալի հիմնադիրներից և ամենահանրածանոթ առաջնորդներից մեկը, բանվորատիպար։ Իր հետագա գործունեության մեջ ցենտրիստական դիրք եր բռնում։—36. 89, 143, 154, 192։

Բելինսկի, Վ. Գ. (1811—1848)—հեղափոխական դեմոկրատ, ակնառոր գրական քննադատ և հրապարակախոս։—48։

Բելտով—տե՛ս Պլեխանով։

Բերնշտայն, Եդվարդ (1850—1932)—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գործիչ։ 1899 թվականին հանդես յեկավ մարքսիզմի ռևիզիայով՝ բուրժուական լիբերալիզմի վոգով։ Բերնշտայնականության սուր և հետևողական քննադատությունը տվել է Լենինը։—Տե՛ս ծանոթագրություն 16 և եջեր 30, 31, 36, 41, 43, 44, 71, 85։

Բուլգակով—սկզբում «լեգալ մարքսիստ», այնուհետև կադետական կուսակցության անդամ, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դարձավ քահանա։—44, 202։

Բրենտանո—բուրժուական տնտեսագետ, վորը քարոզում եր դասակարգերի հաշտություն։—Տե՛ս ծանոթագրություն 20 և եջ 118։

Բ—վ—տե՛ս Սավինկով։

Գեդ, Ժյուլ (1845—1922)—Ֆրանսիայի մարքսիստական կազմակերպության առաջին ղեկավարներից մեկը։ Պայքար եր մղում բանվորական շարժման մեջ յեղած ոպորտունիզմի դեմ։ 1914 թ. իմպերիալիստական պատերազմի սկզբից դավաճանեց իր հեղափոխական անցյալին, դաշինք կնքեց բուրժուազիայի հետ և դարձավ ֆրանսական կառավարության մինիստր։—Տե՛ս ծանոթագրություն 16 և եջ 89։

Գերցեն, Ա. Ի. (1812—1870)—հոչակավոր ռուս հրապարակախոս և քաղաքական գործիչ, հեղափոխական դեմոկրատ, ռուսական ազատ մամուլի առաջին կազմակերպիչը արտասահմանում։—48։

Դյուրինգ, Ե.—գերմանական բուրժուական փիլիսոփա և տնտեսագետ, Մարքսի և գիտական կոմունիզմի կատաղի հակառակորդ. նրա դեմ է ուղղված Ենգելսի «Անտի-Դյուրինգ» գիրքը։—35։

Զասուլիչ, Վ. Ի. (1851—1919)—«Աշխատանքի ազատագրություն» խմբի անդամ, «Искра»-յի խմբագիրներից մեկը: ՌՍԴԲԿ պառակտումից հետո հարեց մենշևիկներին:—Տե՛ս ծանոթագրություն 1, 18 և եջ 158:

Զուբատով—Մոսկվայի պահնորդական բաժանմունքի պետ, այսպես կոչված «վոստիկանական սոցիալիզմի» վոգեշնչողը, կազմակերպում էր բանվորական միություններ՝ բանվորներին հեղափոխական պայքարից հետ պահելու և նրանց ցարական ինքնակալության հենարանի փոխարկելու նպատակով:—41, 63, 136, 137, 138, 141:

Ժելյաբով, Ա. Ի. (1851—1881)—«Նարոդնայա Վոլյա» կուսակցության առաջնորդներից մեկը 1879—1881 թվականներին:—128, 162, 192:

Ի.-ճ, Վ., Իվանշին, Վ.—«եկոնոմիզմի» ներկայացուցիչներից մեկը:—57, 58, 66, 67, 202:

Լասսալ, Ֆերդինանդ (1825—1864)—գերմանական բանվորական շարժման խոշոր գործիչներից մեկը: Մարքսը պաշտպանում էր Լասսալի կողմից գերմանական բանվորներին կազմակերպելու գծով կատարած աշխատանքը և միևնույն ժամանակ վերանայմանորեն քննադատում էր նրա ռեֆորմիստական սխալները:—Տե՛ս ծանոթագրություն 16 և եջեր 27, 35, 63:

Լավրով, Պ. Լ.—60—70-ական թվականների նարոդնիկության ամենաականավոր թեորետիկ:—157:

Լաֆարգ, Պոլ (1842—1911)—Մարքսի հետևորդը և բարեկամը, ֆրանսական սոցիալիստական կուսակցության ղեկավարներից մեկը:—89:

Լոմոնոսով, Մ. Վ. (1711—1765)—հռչակավոր ռուս գիտնական, դյուզացու որդի:—87, 88:

Կատկով—ժուռնալիստ, ծայրահեղ ռեակցիոներ, ինքնակալության կատաղի պաշտպան:—111:

Կարեյեվ—բուրժուական պատմաբան-իդեալիստ, աշխատակցում էր նարոդնիկական և լիբերալ մամուլին:—73:

Կաուցկի, Կարլ—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարներից մեկը, II Ինտերնացիոնալի իդեոլոգ: Իր՝ վաղուց գրած մի շարք աշխատությունների մեջ հանդես էր գալիս որպես մարքսիստ, թեև ոչ-լրիվ հետևողականորեն: «Ցենտրիստական» (ոպորտունիզմի նկատմամբ հաշտողական) դիրք էր բռնում: Բոլշևիկների և մենշևիկների միջև մղվող պայքարում պաշտպանում էր վերջիններիս: Իմպերիալիստական պատերազմի նախորյակին բացահայտ կերպով անցնում և սոցիալշովինիզմի դիրքին, դառնում է մարքսիզմի և պրոլետարական հեղափոխության ստոր դավաճան, խորհրդային իշխանության չարանենդ թշնամին: Մեռավ 1938 թվականին:—61, 89, 163, 210:

Կուսկովա, Յե.—«եկոնոմիստկա», «Credo»-յի հեղինակը, ապա կիսակադետական խմբի ղեկավար, որը հրատարակում էր «Без заглавия» ժուռնալը:—41:

Կրիչևսկի, Բ.—ականավոր «եկոնոմիստներից» մեկը, «Рабочее Дело»-յի խմբագիր:—34, 36, 68, 69, 72, 86, 104, 126, 134, 157, 170, 175, 185, 192, 208, 212:

Հասսելման, Վ.—նախկին լասսալյանական, մտնելով գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, անց էր կացնում անարխո-սինդիկալիստական հայացքներ:—71, 143:

Հերց, Ֆ.—ավստրիական սոցիալ-դեմոկրատ, բերնշտայնական:—44:

Հիրշ—գերմանական լիբերալ բուրժուա, լիբերալ արհեստակցական միության հիմնադիր, քարոզում էր պրոլետարիատի և բուրժուազիայի «շահերի հարմոնիան», բացառում էր դասակարգային պայքարը, արհեստակցական միությունների խնդիրները հանգեցնում էր փոխզիջության դանձարկղների և կուլտուր-լուսավորական կազմակերպությունների ֆունկցիաներին:—59:

Հյոխթերգ, Կ.—գերմանական սոցիալ-դեմոկրատ, ոպորտունիստ:—71:

Մարտինով (Պիկկեր, Ա.)—«եկոնոմիստների» առաջնորդներից մեկը, կուսակցության II համագումարից հետո՝ մենշևիկ: 1923 թ. մտավ Համկ(բ)Կ մեջ:—16, 69, 75, 76, 78, 80, 83, 84, 85, 86, 87, 88, 90, 91, 93, 94, 95, 97, 98, 101, 103, 104, 107, 108, 112, 113, 126, 130, 134, 175, 185, 192, 199, 202, 203, 209, 212:

Մեշչերսկի—իշխան, «Гражданин» սևհարյուրյակային որգանի խմբագիր-հրատարակիչ:—111:

Մեհրինգ, Ֆրանց (1846—1919)—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական թևի ականավոր ներկայացուցիչ, մարքսիստ-պատմաբան, «Սպարտակ» միության հիմնադիրներից մեկը, որից ծագեց գերմանական կոմունիստական կուսակցությունը:—71:

Միլլերան:—Տե՛ս ծանոթագրություն 16 և եջեր 30, 31:

Միխայլովսկի, Ն.—80—90-ական թվականների լիբերալ նարոդնիկության թեորետիկ:—73, 201:

Մյուլբերգեր—գերմանական սոցիալ-դեմոկրատ, Պրուդոնի հետևորդը:—35:

Մոստ, Ի.—գերմանական սոցիալ-դեմոկրատ, հետագայում դարձավ դեպի անարխիզմը:—35, 71, 143:

Նադեժդին, Լ.—արտասահմանյան «Свобода» խմբի ղեկավար, աշխատակցում էր մենշևիկյան հրատարակություններին:—175, 176, 178, 182, 184, 185, 186, 187, 188, 194, 195, 196, 198:

Նայտ, Ռ.—կաթսայագործների անգլիական տրեդ-յունիոնի քարտուղար:—103, 104:

N N—Տե՛ս Պրոկոպովիչ:

Շուլցե-Դելիչ—գերմանական հասարակական գործիչ, մանր բուրժուազիայի իդեոլոգ, վորը քարոզում էր ստեղծել արտադրական կոոպերատիվներ՝ վորպես մանր արտադրողներին և բանվորներին կապիտալի չահագործումից փրկելու միջոց:—63:

Շվայցեր, Ի.—Լասսալի ականավոր հետևորդ:—71:

Շրամմ, Կ.—գերմանական սոցիալ-դեմոկրատ, ոպորտունիստ:—71:

Ոզերով—Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, «զուբատովական»:—136, 137, 138, 141:

Չերնիշևսկի, Ն. Գ. (1828—1889)—«ռուս մեծ գիտնական և քննադատ» (Մարքս), 60-ական թվականների հեղափոխական շարժման ամենաականավոր ղեկավար, «կապիտալիզմի հրաշալի խորը քննադատ էր, չնայած իր ուտոպիստական սոցիալիզմին» (Լենին):—48:

Պարվուս—գերմանական սոցիալ-դեմոկրատ, հարում էր կուսակցության ձախ թևին. ՌՍԴԲԿ II համագումարից հետո պաշտպանում էր մենշևիկներին. իմպերիալիստական պատերազմի ժամանակ—կատաղի չովինիստ և գերմանական իմպերիալիզմի անմիջական ագենտ:—10, 14:

Պլեխանով, Գ. Վ. (1856—1918)—«Աշխատանքի ազատագրություն» առաջին մարքսիստական խմբի հիմնադիր, մարքսիզմի գաղափարների ականավոր պրոպագանդիստ: Իր աշխատությունների մեջ Պլեխանովը թերագնահատում էր գյուղացիության հեղափոխական դերը և, ընդհակառակը, գտնում էր, վոր լիբերալ բուրժուազիան կարող է վորոշ աջակցություն ցույց տալ հեղափոխությանը: Այդ սխալները հասցրին այն բանին, վոր II համագումարից հետո (1903 թ.) Պլեխանովն անցավ մենշևիկների կողմը:—Տե՛ս նաև ծանոթագրություններ 1 և 5 և եջեր 9, 15, 33, 67, 73, 87, 88, 90, 104, 126, 127, 128, 161, 192:

Պոտրեսով, Ա. Ն. (Ստարովեր) (1869—1934)—մենշևիկ, մամուլի մենշևիկյան որգաններում ղեկավարող դեր էր խաղում, «լիկվիդատորության» ղեկավարներից մեկը:

Պատերազմի ժամանակ—սոցիալիստ-չովինիստ: Բոլշևիզմի և խորհրդային իշխանության թշնամի:—Տե՛ս ծանոթագրություն 7 և էջ 37:

Պրոկոպովիչ, Ս.—«Տնտեսագետ», ազատ լիբերալ:—41, 63, 85, 131, 202:

Պրուդոն—Ֆրանսական տնտեսագետ, մանր բուրժուազիայի իդեոլոգ, անարխիզմի տեսաբաններից մեկը, Մարքսի և մարքսիզմի թշնամին:—62:

Ռիստինգհաուզեն—գերմանական սոցիալ-դեմոկրատ, «Прямое народное законодательство» աշխատության հեղինակը:—164:

Սավինկով, Բ.—90-ական թվականներին սոցիալ-դեմոկրատ, 1903 թվականից—ակտիվ եսեր, հետագայում—սպիտակ-գվարդիական դավադրությունների և ապստամբությունների կազմակերպիչ խորհրդային իշխանության դեմ:—124, 126, 149, 150, 152, 154, 160:

Ստարովեր—տե՛ս Պոտրեսով:

Վայտլինգ, Վ. (1808—1871)—գերմանական ուտոպիական սոցիալիզմի ներկայացուցիչ, բանվոր-դերձակ:—62:

Վանեյեվ, Ա. Ա. (1872—1899)—հեղափոխական սոցիալ-դեմոկրատ: 17 սոցիալ-դեմոկրատների թվում ստորագրեց Լենինի կազմած «Բողոքն» ընդդեմ «տնտեսագետների» ծրագրային դոկումենտ «Credo»-յի:—54, 56:

Վասիլյեվ—Մինսկի ժանդարմական վարչության պետ, «զուբատովական»:—136:

Վեբբ, Սիդնեյ և Բեատրիսա—անգլիական քաղաքական և հասարակական գործիչներ, մի շարք աշխատությունների հեղինակներ արհեստակցական շարժման պատմության ու տնտեսական հարցերի վերաբերյալ, լիբերալ «Ֆաբիական ընկերության» հիմնադիրներ:—Տե՛ս ծանոթագրություն 16 և էջեր 83, 163:

Վիտտե—ցարական մինիստր, 1905 թվականին մինիստրների խորհրդի նախագահ:—116:

Վորմս—Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, «զուբատովական»:—136:

Վորոնցով, Վ.—80—90-ական թվականների նարոդնիկության տեսաբաններից մեկը:—59, 69, 72:

Վ. Վ.—Տե՛ս Վորոնցով:

Տկաչեվ—60—70-ական թվականների ռուս հեղափոխական, կողմնակից եր իշխանության զրավման հեղափոխական փոքրամասնության կողմից՝ հասարակության սոցիալիստական փոխակերպման նպատակով:—1875—1876 թվականներին արտասահմանում հրատարակում եր «Набат» ժուռնալը:—194:

Տուլին, Կ.—Վ. Ի. Լենինի կեղծանունը:—39:

Ֆոլմար, Գ.—գերմանական սոցիալ-դեմոկրատ, ռևիզիոնիստ:—31:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՋ

Հրատարակչության կողմից 3
Առաջաբան 5
«За 12 лет» ժողովածուի առաջաբանից 9
ԻՆՉԻՈ՞Ց ՍԿՍԵԼ 19
Ի՞ՆՉ ԱՆԵԼ 27

I. Դոգմատիզմը և «քննադատության ազատությունը» 29
ա) Ի՞նչ է նշանակում «քննադատության ազատություն» 29
բ) «Քննադատության ազատության» նոր պաշտպանները 33
գ) Քննադատությունը Ռուսաստանում 38
դ) Ենդելսը թեորիական պայքարի նշանակության մասին 45

II. Մասսաների տարերայնությունը և սոցիալ-դեմոկրատների գիտակցականությունը 51
ա) Տարերային վերելքի սկիզբը 52
բ) Տարերայնության առաջ խոնարհվելը: «Рабочая мысль» 56
գ) «Ինքնազատագրման խումբը» և «Рабочее дело»-ն 66

III. Տրեդ-յունիոնիստական և սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն . . 75
ա) Քաղաքական ագիտացիան և նրա նեղացումն եկոնոմիստների կողմից . 76
բ) Պատմվածք այն մասին, թե ինչպես Մարտինովը խորացրեց Պլեխանովին 87
գ) Քաղաքական մերկացումներն ու «հեղափոխական ակտիվության դաստիարակումը» 91
դ) Ընդհանուր ի՞նչ կա եկոնոմիզմի և տեռորիզմի միջև 97
ե) Բանվոր դասակարգը վորպես առաջավոր մարտիկը դեմոկրատիայի համար 100
զ) Դարձյալ «զրպարտիչները», դարձյալ «միստիֆիկատորները» 117

IV. Եկոնոմիստների տնայնագործականությունն ու հեղափոխականների կազմակերպությունը 120
ա) Ի՞նչ է տնայնագործականությունը 121
բ) Տնայնագործականությունն ու եկոնոմիզմը 125
գ) Բանվորների կազմակերպությունն ու հեղափոխականների կազմակերպությունը 132
դ) Կազմակերպական աշխատանքի թափը 149
ե) «Դավադրական» կազմակերպությունը և «դեմոկրատիզմը» 155
զ) Տեղական և համառուսական աշխատանքը 164

V. Համառուսական քաղաքական լրագրի «պլանը» 175
ա) Ո՞վ վիրավորվեց «Ինչի՞ց սկսել» հոդվածից 176
բ) Կարո՞ղ է արդյոք լրագիրը կոլեկտիվ կազմակերպիչ լինել 182
գ) Ի՞նչպիսի տիպի կազմակերպություն և մեզ հարկավոր 194

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ 201

Հավելված

«Искра»-ն «Рабочее дело»-յի հետ միացնելու փորձը 205
Ուղղում «Ի՞նչ անել»-ին 213
Ծանոթագրություններ 215
Անվանացանկ 219

Թարգմ. Ց. Խանզադյան
Խմբագիր. Ռ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Ա. Մանուկյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Կ. 2553 հրատ. № 738,
Պատվեր № 199, տիրաժ 10 000
Թղթի չափը 60×92¹/₁₆ (43.680 տպ. նիշ 1 տպ.
մասուլում) 14 տպ. մամուլ 7 թերթ թուղթ.
Հանձնված է արտադրության 2/X 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 16/XI 1939 թ.
Գինը 2 ռ. կազմը՝ շքեղ 1 ռ. 50 կ. հասարակ 1 ռ.

Քաղաքական գրականության Պետական հրատարակչության տպարան,
Երևան, Աշլանովերդյան № 65

23
1.12

ՀՀ Ազգային գրադարան
NL0172642

30.50